

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂՈՒՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՂՆԱԿԱԸ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru

ՏՐԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ
ԱԶԳԱՆՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՆՈՒՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им Р АЧАРЯНА

Т М АВЕТИСЯН

АРМЯНСКАЯ ФАМИЛИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1987

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱԺԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Յ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՆՈՒՆ

Երկրորդ Է ՀՍՍՀ ԳԱ Հր Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու
Ա. Ե. Սարգսյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել զրախոսներ՝ բանասիրական
գիտությունների դոկտորներ Վ Մ. Գրիգորյանը և Ս Մ Սուխասյանը

Ավետիսյան Տ. Մ.

Ա. 791 Հայկական ազգանուն/(Պատ. խմբ.՝ Ա. Ե. Սարգսյան), ՀՍՍՀ
ԳԱ. Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.,
1987.—321 էջ.

Աշխատությունը նվիրված է հայկական ազգանունների տարածամասնակյա և
համաժամանակյա հետազոտությանը Ղատմական քննության և ենթարկված հաջ
անձնանվանագիտությունը և հայկական ազգանունների ձևավորման ընթացքը:
Ուսումնասիրվում են անձնանուն և ոչ անձնանուն ազգանվանակերտ հիմքերը և
տարբեր սկային ազգանունները

Հասցեագրվում է մասնագետներին և ընթերցող լայն շրջաններին:

Ա $\frac{4602010000}{703/02/}$ —86
—87

ԳՄԳ 81.22

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ազգանվան ուսումնասիրությունը ինքնըստինքյան կարևոր լեզվա-
րանական խնդիր է: Երբ խոսքը վերաբերում է հայկական ազգանվանը,
ապա բացի փաստական բնույթի դժվարություններից, հարցը բարդա-
նում է մարդանվանագիտության գոյություն ունեցող ավանդույթների
և դրանք իրենց ամբողջության մեջ հաշվի առնելու անհրաժեշտությամբ:
Միևնույն ժամանակ ավանդորեն ընդունված է, որ հայկական ազգան-
վանական հիմքերի մեջ գերակշռում են անձնանունները և այդպիսով
բառակազմորեն հարցը հանգում է անձնանվան և ազգանվան փոխհա-
րաբերությանը: Անկասկած ազգանվան ձևավորման համար արգասավոր
կաղապարներից մեկը (գուցև և ամենաարգասավորը) անձնանվանա-
կան հիմքերով ձևավորվածն է: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս մեր
տվյալները, այդ դեպքում գործում են մի շարք այլ բառակազմական
կաղապարներ, որոնց թվում ոչ միայն երկտակտ:

Մարդանվանագիտությունը հայ լեզվաբանության քիչ մշակված բնա-
զավառներից է: «Եթե մի կողմ թողնենք անձնանունների զանազան կար-
գի հին հավաքածուները և հատկապես հին հայկազյան բառարանի 2-րդ
չատորում ղետեղված հատուկ անունների բառարանները, ապա կարելի
է, ասել, որ հայկական անձնանունների իսկական գիտական-լեզվաբա-
նական ուսումնասիրությունը փաստորեն սկիզբ է առնում Յ. Հյուբշմանի
և Ֆ. Յուստիի աշխատություններով: Այս և հետագա հեղինակների ուշա-
դրության կենտրոնում գերազանցապես փոխառյալ անձնանուններն են»¹:

Հայկական մարդանվանական համակարգի և նրա զարգացման մի-
տումների առաջին քննություններից մեկին հանդիպել ենք «Մասեաց
աղավնի» հանդեսում²: Նշելով անձնանունների դերը ժողովրդի հոգևոր

¹ Դ. Բ. Չախուկյան, Բնիկ հւյերեն արմատներով կազմված հայկական անձնանուն-
ները, «Պատմա-բանասիրական հանդես», 1984, №4, էջ 32:

² Անոն, մականուն և պատուանուն, «Մասեաց աղավնի», 1856, № 6, էջ 141—145,
№ 8, էջ 193—195, № 12, էջ 305—308:

կյանքում, քնդգծվում է դրանց և ժողովրդի պատմության սերտ ու «դարձանայի» կապը³:

Հ Ահառայանի «Հայոց անձնանունների բառարանը», որ Ն. Ա. Նիկոնովը իրավացիորեն համարում է «Կովկասի անձնանվանագիտության դիսպոսիտիկոնի իրադարձությունը»⁴ հայկական անձնանվանագիտության յուրատեսակ յանրագիտարանն է, ուր քննվում են հայերի կողմից գործածված բոլոր անձնանունները, որոնք վկայված են հայ պատմագրության մեջ, ձևագրվում և վիճագիր արձանագրություններում:

Յուրաքանչյուր բառահոգված ունի ստուգաբանական և պատմական-հանրագիտական ու աղբյուրագիտական-մատենագիտական բաժիններ: Աշխատանքը առանձին արժեք է ձևաք բերում շնորհիվ յուրաքանչյուր անձնանվան համար նշվող բարբառային, իսկ որոշ դեպքերում՝ կոչական տարբերակների:

Իրանական ծագում ունեցող հայկական անձնանունները ուսումնասիրված են Գ. Մ. Նալբանդյանի աշխատանքում⁵: Քննելով մասնավորապես հայկական անձնանունների հին-իրանական շերտը, հեղինակը գտնում է, որ դրանք պետք է կապել պարթևական, հին-պարսկական, Ավեստայի և սկյութա-ալանա-օսեթական ձևերի հետ, որոնք Հայաստան են ներթափանցել մ. թ. ա. IV դ. սկսած:

Վերջին շրջանում լույս են տեսել Գ. Բ. Զահուկյանի երկու նշանակալից հոգվածներ, նվիրված հայկական անձնանվանագիտությանը⁶, որոնցից մեկը հայ թագավորների հիսուն անձնանունների լեզվաբանական և աղբյուրագիտական քննությունն է: Առանձնապես արժեքավոր է հոգվածի երրորդ մասը, ուր ներկայացված են բնիկ հայկական և իրանականից փոխառյալ անձնանունները: Շատ հեղինակներ, և մասնավորապես Հ. Աճառյանը, այդ խմբի անձնանունները համարում էին Մ. Խորենացու ստեղծագործությունը: Մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել Գ. Զահուկյանին ժխտել այդ տեսակետը:

³ Նույն տեղում, էջ 64:

⁴ В. А. Никонов. Состояние и задачи ономастических исследований Кавказа, Вопросы языкознания, 1975, № 4, 111

⁵ Г. М. Налбандян, Армянские ичские имена иранского происхождения (культура и историческое, этимологическое исследование) Автореф. докт. дисс. — Тбилиси, 1971

⁶ Գ. Բ. Զահուկյան, նշվ. աշխատ. և Սովետ. Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվաբան աղբյուրները, «Պատմա-բանասիրական հանդես» 1981, № 3:

Սրկրորդ աշխատանքը նվիրված է հայկական անձնանվանական համակարգում բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունների տեղին և նշանակությանը: Կատարված է նյութի բառակազմական և իմաստաբանական ուսանելի վերլուծություն:

Առանձին արժեք է ներկայացնում Գ. Զահուկյանի անձնանունների պատմական քննության համար առաջարկված շրջանաբաժանումը, որ հիմնված է հայոց լեզվի՝ իր կողմից առաջարկված և հայագիտության մեջ ընդունված և ճանաչում գտած շրջանաբաժանման վրա:

Մեր աշխատանքում որդեգրված է այդ շրջանաբաժանումը, քանի որ մեր ուսումնասիրության համար այն առավել նպատակահարմար է:

Բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունները բաժանվում են 4 դասի՝ 1. պարզ, 2. ածանցավոր, 3. քերականական ձևերից կազմված և 4. բարդ: Նկատելի են նաև հասարակ անունների փոխանցմամբ կազմված հատուկ անունները, որոնք հանգում են կենդանիների անունների, ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառերի, մարմնի մասերի անվանումների, բնության մարմիններին ու Լրեսություններին:

Հայկական ազգանունների «գործող անձ» իմաստային հիմքով ազգանունների քննությանն է նվիրված Ս. Ս. Զիքիայի հոդվածը⁷, որի շրջանները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում մեզ համար, իսկ որ քննել ենք այդ կարգի ազգանունների բավականին սովոր մի դանգված:

Այսպիսով, նվաճումները ակնառու են, սակայն չիչ չեն նաև անելիքները: Հարցերից մեկը, որ հրատապ ուսումնասիրության կարիք ունի, վերաբերում է հայկական ազգանուններին: Խնդիրը բազմաբնույթ է, բանի որ առնչվում է բառագիտական, պատմա-բանասիրական, ազգայրական կարգի ուսումնասիրությունների հետ:

Սույն աշխատանքը նվիրված է հայկական ազգանունների բառադիտական, մասնավոր դեպքերում՝ պատմական և տարածքային ընդդրկման քննությանը: Ուսումնասիրության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել բառակազմական վերլուծությանը, և ոչ անձնանուն իմքերի վերահանմանը, նրանց իմաստաբանական և ձևաբանական դասակարգմանը:

⁷ С. С. Джикия, К изучению армянских фамильных имен тюркского происхождения - Ближневосточный сборник Тбилиси, 1983

ՀԱՅԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանման բանաձևը տվյալ դարաշրջանում որոշակի ազդության, դասի, դավանանքի պատկանող անհատի պաշտոնական անվանման մեջ անձի անունների¹ (անձնանուն, հայրանուն, ազգանուն) դասավորության որոշակի կարգն է:

Ներկայումս Հայկական ՍՍՀ տարածքում հայերի անվանման համար գոյություն ունի պաշտոնապես ընդունված և իրավաբանորեն հաստատված մեկ անփոփոխակ՝ ազգանուն + անձնանուն + հայրանուն, որը, սակայն, կարող է հանդես գալ մի քանի հոմանիշային տարբերակներով: Վերջիններիս առկայությունը պայմանավորված է հանրալեզվաբանական, բարոյադիտական գործոններով: Տարբերակներից մեկը՝ առաջինը, թելադրված է գլխավորապես գործնական նպատակներով ժամանակակից հայերենում անձնանունները, ազգանունները, ինչպես նաև անձի անվանման բանաձևերը հոլովվում են «ի» հոլովմամբ²: Եվ քանի որ բանաձևերը եռաբաղադրիչ առդրության արժեք ունեն, ուստի հոլովման ժամանակ, հենց նույն հայերենի քերականական օրենքներով թեքվում է միայն բանաձևի վերջին բաղադրիչը, իսկ -ի ածանցով ձևավորված հայրանունը թեքման հարացույց չունի, մինչդեռ անձնանուն + հայրանուն + ազգանուն շարադասության դեպքում ամբողջ բաղադրությունը

¹ Նպատակահարմար ենք գտնում ավանդորեն ընդունված անձնանուն եզրույթը նույնությամբ պահպանել, իսկ անձնանունների ամբողջության համար օգտվել անձի անուն բառակապակցությունից

²-ունի ածանցով ձևավորված ազգանունները (Ամատունի, Սրժունի, Արշակունի, Բաղրատունի, Բզնունի, Գնթունի, Գնունի, Խորխոտունի, Շահապունի, Պահլավունի, Սահաունի, Սլիունի, Վահունի, Քաջազնունի, Քաջբերունի) ենթարկվում են «ու» հոլովման:

ենթարկվում է «ի» հոլովման հարացույցին: Այս տարբերակի քաղաքացիութուն ստանալուն և տարածվելուն նպաստել է նաև հանրալեզվաբանական գործոնը: Ինչպես ցույց կտրվի, դարեր շարունակ հայերի անվանման բանաձևերում գերակշռողը եղել է անձնանվան նախադաս դիրքը:

Միևնույն բանաձևի երկու շարադասական տարբերակները ունեն նաև ՍՍՀՄ տարածքում ընդունված դրսևորումներ, որոնց անհրաժեշտութունը կապվում է պաշտոնական միջավայրում հայտնվելու հետ: Նման դեպքերում -ի ածանցով ձևավորված հայրանվան փոխարեն կիրառվում է -ովիչ ածանցով կազմությունը: Այս բանաձևը ևս հեշտությամբ հոլովվում է «ի» հոլովմամբ:

Հայերի շրջանում այսօր կիրառելի են նաև երկբաղադրիչ տարբերակներ, որոնք եռաբաղադրիչ կա՛մ հայրանուն և կա՛մ ազգանուն կազմիչների բացթողման արդյունք են: Ընդ որում, այն դեպքերում, երբ օգտորվում են անձնանուն հայրանուն տարբերակից, հայրանունը ձևավորվում է նույն -ովիչ ածանցով: Երկու դեպքում էլ առկա է հասարակական բարոյագիտական նորմերի ազդեցությունը:

Անուն-հայրանունով կոչելու բանաձևի ներմուծումը և նկատելի տարածումը կապվում է հետևյալ հանգամանքների հետ: Հետհեղափոխական առաջին տասնամյակներում, ի հակադրություն «պարոն»-ով կազմությունների, իբրև միմյանց դիմելու ընդունելի ձև առաջարկվեցին ընկեր (ընկերուհի), ընկեր + անձնանուն և ընկեր + ազգանուն կաղապարները: Եթե նշվածներից վերջինը այս կամ այն չափով շարունակում է գործել անմիջական դիմման իրադրությունում, ապա մյուսները լայն ընդունելություն չարժանացան: Բացը լրացնելու համար սկսեցին օգտվել անձնանուն + հայրանուն կաղապարի նշված տարբերակից, ընդ որում հայրանվան ձևավորման երկու դրսևորումներով՝ -ովիչ և -իչ ածանցներով կազմություններ, հանրային-բարոյագիտական համապատասխան բևեռվածությամբ. -իչ-ով տարբերակը ավելի մտերմիկ երանգ ունի, իսկ -ովիչ-ով կաղապարի պաշտոնականություն է ենթադրում: Ի վերջո, առօրյա խոսքում լայն տարածում ունի նաև միանգամ տարբերակը՝ անձնանուն: Վերջինս մտերմիկ իրադրության մեջ կարող է հանդես գալ նաև իր փաղաքշական և կոչական տարբերակներով՝ Տիգրան — Տիգրանիկ — Տիգո:

Սփյուռքահայություն մեջ միասնական նորմայի բացակայությունը, ազգային, սոցիալական հաճախ միմյանց հակադիր պայմանները պատճառ են դարձել հայերի անվանման բանաձևերի նկատելի բազմազանու-

թյան: Ամենաընդհանուր ձևով իրադրությունը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. բովանդակությամբ ազգային, ձևով՝ տեղական: Տեղականը կապվում է Մերձավոր և Միջին արևելքի երկրների, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Արգենտինայի, Ուրուգվայի ավանդույթների և գրանցման պաշտոնական ձևերի հետ:

Սփյուռքահայ ուսանողների³ անվանման բանաձևերը քննելիս առաջին հերթին նկատվում են բանաձևի հայրանվան արժեք ունեցող բաղադրիչի առանց ածանցի գրանցման դեպքեր՝ Տեր-Պողոսյան Բեդրոս Հովհաննես (Իրաք), Քեշեշյան Գրիգոր Ալեքսանդր (Սիրիա), Սաբունջի-Խաչադրյան Ավեդիս Կարլոս (Ուրուգվայ), Փամբակյան Վահրամ Նազարեթ (Անգլիա), Զերշիյան Օնիկ Վահե (Բուլղարիա), Հակոբյան Ելենա Բաբկեն (Իրան), Կարազյոզյան Վարդերես Խինգանոս (Թուրքիա), Բողոսյան Ղազարոս Հովհաննես (Հորդանան) և այլն: Երբեմն եռաբաղադրիչ բանաձևը իրենից ներկայացնում է անձնանունների գումար՝ Մարգո Միսակ Արշակ, Մանուկ Հայկազ Հակոբ (Իրաք), Սեթի Լիոն Նազարեթ, Նրվարդ Արամ Մադո (Սիրիա): Բերված օրինակները մեզանում ընդունված եռաբաղադրիչի հետ համադրելու դեպքում պետք է ենթադրել, որ առաջինը անձնանունն է, երկրորդը՝ հայրանունը, իսկ երրորդը՝ ազգանունը:

Երկբաղադրիչ առանց ածանց տարբերակները համեմատաբար սակավ են՝ Տաֆտ Զարմայր (ԱՄՆ), Մարտին Ռոմիկ (Իրան), Կարազյոզ Սիրանուշ, Քենդիր Հովհաննես (Թուրքիա), Ալբեր Մանուկ (Իրաք), Ալեքսան Միսաք (Լիբանան) և այլն:

Երեքից ավելի բաղադրիչներով անվանման բանաձևերը հատուկ են բացառապես արաբական երկրների հայերին՝ Բոյրազյան Կրիկոր Եղիշե Հակոբ Հովհաննես (Հորդանան), Նվեր Հակոբ Թովմաս Բողոսյան, Մարգրիտ Յարվանդ Սարգիս Օզոնյան (Իրաք), Քեշիշյան Մերուժան Հակոբ Հարություն (Սիրիա) և այլն: Ինչպես տեսնում ենք ժամանակակից հայ իրականությունը ներկայանում է անձի անվանման բանաձևերի զգալի բազմազանությամբ, որոնց մեջ, այնուամենայնիվ, առանձնացնում և ներկա աշխատանքի ուսումնասիրության առարկա ենք դարձնում Հայկական ՍՍՀ-ում պաշտոնապես ընդունված եռաբաղադրիչ՝ ազգանուն + անձնանուն + հայրանուն բանաձևը:

Աշխատանքի այս մասը նվիրվում է անձի անվանման բանաձևի և նրա առանձին բաղադրիչների քննությանը: Եվ քանի որ աշխատանքն ամբողջությամբ նվիրված է հայկական ազգանուններին, ուստի բաժնի

³ Տվյալները մեզ տրամադրվել են ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության արտաքին կապերի վարչության կողմից:

առաջին գլխում կկատարվի անձի անվանման բանաձևի և նրա անձնանուն, հայրանուն բաղադրիչների քննություն, իսկ երկրորդ գլխում՝ ազգանունների:

ԱՆՁԻ ԱՆՎԱՆՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԲՆՆՈՒԹՅՈՒՆ

Անձնանվանական բանաձևի և նրա առանձին բաղադրիչների նկատմամբ մեր ուշադրությունը պետք է բացատրել գլխավորապես այն հանդամանքով, որ առանց նման կարգի ուսումնասիրության հազիվ թե հնարավոր լինի ազգանունների քննություն սկսել թեկուզ այն պատճառով, որ անձնանվանական բանաձևերում չկա մի երևույթ, որ այս կամ այն կերպ արտացոլված չլինի ազգանունների համակարգում, իսկ ազգանունարանի լեզվաբանական և հատկապես բառակազմական առանձնահատկությունների լուծման բանալին առաջին հերթին պետք է փնտրել անձնանվանական բանաձևերի համակարգում:

Մեր ժամանակների եռաբաղադրիչ բանաձևն իր կազմով, ձևավորմամբ և բաղադրիչների շարադասությամբ կապվում է XIX դ. առաջին տասնամյակների պատմական իրադրության հետ: Այդ շրջանում ուսական իրականության մեջ իր տարածումն էր գտնում եռաբաղադրիչ բանաձևը և Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ շէր կարող անհետևանք մնալ հայերի անվանման բանաձևերի համար: Ուրեմն բանաձևի մուտքը հայ իրականություն պատմականորեն պատճառաբանված էր:

Չնայած գործընթացը բավականին բարդ էր և ոչ միանշանակ, սակայն, պայմանները նպաստավոր էին՝ նախորդող ավելի քան 15 դարերը և դեռ են առանձին բաղադրիչների, ինչպես նաև այդ բաղադրիչների զուգորդումների՝ անձնանուն + հայրանուն, անձնանուն + տոհմանուն, ապա ազգանուն (մանրամասնորեն տես ստորև) ձևավորման ժամանակաշրջան: Կարելի է արձանագրել, որ եռանդամ բանաձևը, լինելով անձի տարբերակման հայտնի միջոցներից ամենանպատակահարմարը, հեղտությունամբ ընդունվեց արևելահայության կողմից:

Ձեռնամուխ լինելով հայերի անվանման բանաձևի քննությանը և ձեռքի տակ ունենալով նյութեր հայկական անձնանվանական համակարգի ավելի քան 15 դարյա պատմության վերաբերյալ, մենք չէինք կարող ուշադրություն չդարձնել անվանման բանաձևերի տիպաբանորեն անկայուն վիճակի վրա, որի հետևանքով առաջացած ձևափոխությունները

կապվում են աշխարհագրական և ազգագրական գործոնների հետ: Սակայն վերլուծության նպատակահարմարությունը, ինչպես նաև նյութի ընձեռած հնարավորությունները թևադրեցին անձնանվանական բանաձևերի քննությունը կատարել սոցիալական տարբերակման սկզբունքով: Այս դեպքում հետևում ենք ՀՍՀ «Դաս»⁴ հոդվածի դրույթներին և առանձնացնում երեք դաս՝ հոգևորական (I), իշխանների (II) և աշխատավորական (III), քանի որ այս կամ այն բանաձևով անձի անվան կրողի սոցիալական վիճակը իր նկատելի կնիքն է դրել բանաձևի ինչպես կազմի, այնպես էլ անդամների փոխհարաբերության վրա: Ավելին, ժողովրդի սոցիալական տարբեր խավերի անվանման բանաձևերը կայունության տարբեր աստիճան են հանդես բերել: Այսպես, եթե հոգևորականության անձնանվանական բանաձևերը ամենակայունն են ու պահպանողականը, ապա նկատելի է ազնվական դասի հարաբերական ազատությունը: Աշխատավորական զանգվածների համար գործունեության ու արտաքին հարաբերությունների սահմանափակ ոլորտի, ինչպես նաև այլ պատճառների բերումով բանաձևի խստիվ պահպանումը առաջին անհրաժեշտություն չի եղել: Այն բացառիկ դեպքերում, երբ մեր ձեռքի տակ եղած աղբյուրները հիշատակում են աշխատավորական խավի որևէ ներկայացուցչի անուն, բավարարվում են, մեծ մասամբ, միայն անձնանվան նշումով: Երբեմն, հետևելով ժամանակի ավանդույթին, անձնանվան հետգործածվում են բանաձևի այլ բաղադրիչներ ևս: Նյութի բնույթը և նրա հստակ ներկայացման պահանջները օրինաչափորեն շրջանաբաժանման անհրաժեշտություն են առաջ բերում:

Այստեղ նպատակահարմար է հետևել հայոց լեզվի պատմության՝ հայագիտության մեջ ընդունված այն շրջանաբաժանմանը, որն առաջարկել է Գ. Բ. Զահուկյանը⁵: Այդ համակարգի մանրամասներին շենք անդրադառնում, քանի որ այն լավ հայտնի է: Ընդունելով այդ շրջանաբաժանումը որպես հիմք և ելնելով քննարկվող նյութի առանձնահատկություններից նպատակահարմար ենք գտնում հետևել մի այլ համակարգի, որը նույնպես առաջարկվել է Գ. Բ. Զահուկյանի կողմից և որը անմիջականորեն առնչվում է հայ անձնանվանագիտության քննության հետ:

Գ. Բ. Զահուկյանը «Բնիկ հայերեն արմատներով կազմված հայ-

⁴ ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 291—292:

⁵ Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:

կալան անձնանունները»⁶ հոդվածում եզրակացնում է, որ քննարկվող նյութը կարելի է ուսումնասիրել հետևյալ սխեմայով՝

1. հնագույն շրջան՝ մինչև V դ.
2. հին շրջան՝ V դ. վերջերից մինչև XI դ.
3. միջին շրջան՝ XII—XVI դդ.,
4. նոր շրջան՝ XVII—XX դդ.⁷:

§ 1. Ըստ մեր տվյալների, հնագույն շրջանը (մինչև V դ.) ներկայացված է անձի անվանման բանաձևի հետևյալ դրսևորումներով⁸:

Աղյուսակ 1

Բաղադրիչ-ների քանակ	Անվանման բանաձև	Գաս	Օրինակներ
1	Ա	III	Այծենիկ, Ղազարոս, Մարիամ, Ղևոնդ, Ստեփան, Քաղես, Տրդատ, Մուշէ, Վաչակ
2	ա) Ա—ՈՒԲ	I, II	Բակուր բղշխ, Գղակ Սարգսյես, Ահարոն եպիսկոպոս, Զւիթս երէց, Վաչէ Մամիշունան, Արշաիր Կամսարական, Վահան Ամատունի
	բ) Ա + ՏԳ	I II, III	Ատոմ Մոկացի, Գէորգ Գանոյ, Ստեփանոս Ունեցի
3	ա) Ա + ՈՒԲ + ՏՏ	II	Անդովկ իշխան Սինեաց, Աբա իշխան Գնունեաց
	բ) Ա + ՈՒԲ + ՀԵ	II	Փառանձեմ դուստր Անդովկայ,
	գ) Ա + ՈՒԲ + ՏԳ	I	Մուշեղ որդի Վասակայ
4	ա) Ա + ՈՒԲ + ՏՏ + ՈՒԲ	II	Կիւրակոս եպիսկոպոս Տայոց Վահան նահապետն Ամատունեաց տոհմին
	բ) Ա + ՈՒԲ + ՈՒԲ — ՏՏ	II	Պարգև իշխանն տանն Ամատունեաց
	գ) Ա + ՈՒԲ + ՀԵ + ՏՏ	II	Շուասոյ որդի Վաչէի Արծրունոյ
	դ) Ա + ՏՏ + ՈՒԲ + ՏԳ	II	Արշաիր Կամսարական իշխան Շիրակայ
5	ա) Ա + ՈՒԲ + ՈՒԲ — ՏԳ + ՏՏ	II	Դրաստամատ ներքինի իշխանն Անդեղ տանն
	բ) Ա + ՏՏ + ՈՒԲ + ՏՏ — ՈՒԲ	II	Մանասոյ Խորխոռունեաց իշխանն Մաղխաղունեան տանն
	գ) Ա + ՈՒԲ + ՀԵ + ՏՏ — ՈՒԲ		Վաչէ որդի Արտաւազգայ ի Մամիկոնեան տոհմէն

⁶ Գ. Բ. Չահուկյան, Բնիկ լայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1984

⁷ Նույն տեղում, էջ 33:

⁸ Համառոտագրությունների բանալին տե՛ս աշխատանքի վերջում:

Երկրորդ դասը ներկայացված է երեք երկբաղադրիչ, երկու եռաբաղադրիչ, չորս քառաբաղադրիչ և երեք հնգաբաղադրիչ, առաջին դասը (հոգևորականությունը)՝ երկու երկբաղադրիչ, մեկ եռաբաղադրիչ, իսկ երրորդ դասը՝ մեկ միաբաղադրիչ բանաձևերով:

Կարելի է նշել մի քանի առանձնահատկություններ.

1. Ներկայացված բոլոր դեպքերում առաջին բաղադրիչը անձնանուն է:

2. Երկրորդ բաղադրիչը կարող է լինել. ա) ուղեկցող բառ (իշխան, որդի, դուստր), բ) -ևան, -ունի, -ական ածանցներով ձևավորված տոհմանուն, գ) -ացի (-ցի) ածանցով ձևավորված տեղանվանական բաղադրիչ:

3. Ուղեկցող բառերին անմիջապես հաջորդող մյուս անձի անուն բաղադրիչները (տոհմանուն, հայրանուն) առանց բացառության դրված են ևզակի սեռական հոլովով, իսկ տեղանուն բաղադրիչը՝ հոգնակի սեռականով:

4. Բանաձևի անդամների թիվը ավելանում է գլխավորապես ուղեկցող բառերի ներմուծման հաշվին, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ծավալուն հայրանուն՝ Շալասպ որդի Վաչէի Արծրունույ, Վաչէ որդի Արտաւազդայ ի Մամիկոնեան տոհմէն: Միևնույն անձը, իրադրությունից կախված, անվանվում է տարբեր բանաձևերի պատկանող անուններով և թվացյալ բազմազանությունը, ինչպես նաև բանաձևերը կարելի է խմբավորել և հանգեցնել մի քանի անփոփոխականների՝ Անդովկ նահապետն Սիւնեաց գաւառին — Անդովկ իշխան Սիւնեաց — Անդովկ Սիւնի կամ Գնէլ տէր գաւառին Անձևացեաց — Գնէլ Անձևացի, իշխանն Շիրակայ—Արշաւիր Կամսարական նահապետն Արշարունեաց—Արշաւիր Կամսարական իշխան Շիրակայ:

Աղյուսակ 2

V—XI դդ.

Բաղադրիչի քանակ	Անվանման բանաձև	Դաս	Օրինակներ
1	2	3	4
1	Ա.	1, III	Յովհան, Ղևոնդ, Արձան, Երեմիա, Յովսեփ, Բակ
2	ա) Ա.՝ ՈՒԲ	1, III	Գնիթ եպիսկոպոս, Սամուէլ քահանա, Աբրահամ սարկաւազ, Արշէ երեց, Կիրակոս մըշակ, Կիրակոս զինվոր

1	2	3	4
	բ) Ա-Տ	II	Ներշապուհ Արծրունի, Խոսրով Գաբեղևան, Վրէն Զինական, Շմառն Անձեացի
	դ) Ա-Ս	II	Աբուսահլ Համազասպ
	դ) Ա-Տդ	I	Աթիկ Բջնեցի, Սահակ Տարոնոյ, Սարգիս Հոռոմոսի, Մովսէս Զարեհավանի, Խոսրով Օշականու
	ե) Ա-Հ	II	Գրիգոր Հմայակեան, Սահակ Վարդանեան, Վարդան Մուշեղեան
3	ա) Ա-ՌԲ-Տ	I	Վահան յազգէն Ամատունեաց
	բ) Ա-ՌԲ-Տդ	I, II	Միքայել պատանեակ Գուգարացի, Թաթիկ Եպիսկոպոս Բասենոյ
	դ) Ա-ՌԲ-Հ	II	Կատրամիդե դուստր Վասակի
	դ) Ա-Տդ ՌԲ	I	Խաչիկ Արշարունեաց Եպիսկոպոս
	ե) Ա-ՌԲ-ՌԲ	I	Գեորգ Իմաստասեր վարդապետ, Յովհաննէս ամուսնացեալ քահանա, Յովհաննէս խաչակիր վարդապետ
4	ա) Ա-Տդ-ՌԲ-ՌԲ	I	Յովսէփ Հնձանցի գերմարտովարդապետ
	բ) Ա-ՌԲ-ՌԲ-ՌԲ	I	Կիրակոս գծակերպ գիտնական վարդապետ

5. Հոգևորականութեան անվանման բանաձևերը առանձին բազմաշանութեամբ աչքի չեն ընկնում: Ներկայացված երկու երկբաղադրիչները հանգում են միակ եռանդամին: Մի դեպքում բաց է թողնված ՌԲ բաղադրիչը, մյուս դեպքում՝ տեղանունը: Ըստ երևույթին հոգևորական դասի անվանման բանաձևերի հարաբերական միօրինակությունը պետք է բացատրել IV—V դդ. իրադրությամբ: Հոգևորականությունը նոր ձևավորվող դաս էր: Այդ բնագավառում գրեթե ամեն ինչ ներմուծվում էր, այդ թվում նաև նրանց անվանման բանաձևերը, ուստի աշխատում էին, ըստ հնարավորին, հարազատ մնալ կանոնականին:

6. Աշխատավորական դասի անվանման բանաձևերը մեկանդամ են, իսկ այն դեպքերում, երբ չանդիպում են երկանդամ բանաձևով անձի անուններ, ապա այն պարզապես տուրք է տվյալ անձի գործունեությանը (համտ. Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 533):

§ 2. Հին շրջանում (V—XI դդ.) առաջին դասի ներկայացուցիչների անվանման բանաձևերը կազմված են մինչև շորս անդամներից: Քաղկեդոնյան պառակտումից հետո հայկական եկեղեցին ձեռք բերեց դոգմատիկ և քաղաքական հարաբերական ինքնուրույնություն: Դա իր մասնավոր արտացոլումը գտավ նաև հայ հոգևորականության անվանման բանաձևերում: Ամենատարածվածը երկանդամ և եռանդամ բանաձևերն են, ապա քառանդամը, հազվադեպ են հանդիպում մեկանդամները: Վերջիններս գլխավորապես երեցներ են՝ Յովհան, Ղևոնդ, Արձան, Երեմիա, Յովսեփ և այլն:

Երկանդամ հետևյալ բանաձևերը կան՝ Ա + ՈւԲ (Եպիսկոպոս, քահանա, սարկավագ, երեց) Գնիթ Լպիսկոպոս, Սամուէլ քահանա, Աբրահամ սարկավագ, Արշէ երեց, Ա + Տղ՝ Աթիկ Բջնեցի և Ա + Տղս՝ Սահակ Տարոնոյ:

Նկատելի է, որ վերոբերյալ և հաջորդ եռանդամ Ա + ՈւԲ (երեց, Եպիսկոպոս) + Տղբ բանաձևերը հարաբերում են ոչ միայն այն պատճառով, որ հաճախ տեքստի մեջ ազատորեն փոխարինում են միմյանց, այլև նշված երկանդամը արդյունք է եռանդամ բանաձևի ՈւԲ բաղադրիչի բացթողման՝ Թաթիկ Եպիսկոպոս Բասենոյ և Թաթիկ Բասենոյ:

Այս շրջանի համար բնորոշը անձնանվան՝ բանաձևի կազմակերպող կենտրոն լինելն է: Անձնանունը մնում է այն միակ բաղադրիչը, որը տարբերակում է անհատին: Սակայն, քանի որ գնալով այն չի բավարարում անձի միարժեք անհատականացմանը, ուստի միջոցներ են փնտրվում անձնանունը հարստացնելու բնորոշիչներով: Վերջիններս կապվում են կրողի սոցիալական, ազգակցական կամ զբաղմունքային առանձնահատկությունների հետ:

Երկրորդ դասի ներկայացուցիչների անվանման բանաձևերը զգալիորեն կարգավորված են, եթև նկատի ունենանք միավորների քանակը բանաձևերում և նրանց շարադասությունը: Գերակշռողը երկանդամ բանաձևն է՝ Ա + Տհ (-ունի, -եան, -ական, -ացի, -ի)՝ Ներշապուհ Արծրունի, Խոսրով Գաբեղեան, Վրէն Զինական, Շմավոն Անձևացի: Այստեղ առանձնանում են -ունի ածանցով ձևավորված տոհմանունները: Ավելին, նկատելի է, որ -ունի-ով արգեն հայրանուններ են կերտվում, որոնք փոխարինում են տոհմանուններին՝ Արտակունի:

Պակաս են եռանդամ բանաձևերը, որոնք կազմվում են նախորդ Ա + ՏՀ բանաձևի մեջ ազգ բառի ներմուծմամբ՝ յազգէն Ամատունեաց, Վահան, Առանձար, Առնակ: Ըստ որում, գրաբարի եզակի բացառական, հոլովաձևը պահանջում է տոհմանուն բաղադրիչի համապատասխան քերականական ձևավորում՝ Ամատունեաց, Առաւելենից և այլն:

Բնորոշիչների որոնման ուղիները համընդհանուր չէին: Աշխատավորական դասի համար բնութագրական են զբաղմունքի անուններից յազմված բնորոշիչները: Ինչ վերաբերում է հոգևորականությանը և իշխող դասին, ապա որոնումները ընթանում էին ազգակցական և հաճախ սոցիալական վիճակի ընդգծման ուղով: Վերջիններս հատկանշական են առանձնապես իշխողների համար, քանի որ նրանք ձգտում էին մի կողմից ընդգծել իրենց հասարակական վիճակը, մյուս կողմից՝ կապը անվանի տոհմի հետ: Այս հանգամանքը, բնականաբար, հանգեցնում էր սովյալ դարաշրջանի համար բնորոշ երևույթի՝ բանաձևի անդամների ավելացում ի հաշիվ տիտղոսների և տոհմանունների զանազան զուգորդումների:

Այս ամենով հանդերձ, սակայն, չի կարելի շնկատել, որ ազգակցական կապը նշող միտումը շարունակում է հետզհետե դարգանալ և տարրերակները մեծ մասամբ հանգում են «ընտանիք, գերդաստան, տոհմ» անփոփոխակին: Թերևս այդ հանգամանքով պետք է բացատրել այս կարգի բաղադրիչների քերականական հատուկ ձևավորումը մյուսների համեմատությամբ:

Ասվածի լույսի տակ իշխող դասի համար որոնման դրսևորումներից պետք է համարել բանաձևերում իբրև գերդաստանային ցուցիչ հայրանվան գործածությունը: Այն ձևավորված է -եան ածանցով՝ Սամուէլ Արտաւազդեան, Գրիգոր Հմայակեան, Սահակ Վարդանեան, Դատ Գարջոյլեան: Ավելին, վկայված է այդ նոր բաղադրիչի մի հոմանիշային կազմություն՝ -եանի փոխարեն -ունի ածանցով՝ Տրդատունի: Այս դեպքում բնական էր Տրդատեան ձևը, քանի որ -ունի-ն տոհմանվանակիրտ ածանց է, իսկ Տրդատը՝ անձնանուն (հայրանուն): Ուրեմն արդեն VI դ. նկատելիորեն ընդարձակվում է -եան-ով կազմությունների ոլորտը՝ տոհմանուն, հայրանունից սերված անձնանուն (որդի Համազասպեայ և Համազասպեան) և հայրանուն, որ իբրև երկրորդ բաղադրիչ դառնում է անձնանվանական բանաձևի անդամ:

Շրջանի վերջում գրեթե չեն հանդիպում IV—VII դդ. իշխանական տների ներկայացուցիչների անձի անուններ, որովհետև աշխարհիկ հայ

Ֆեոդալների դասը աստիճանաբար վերանում էր (հմմտ. АДОНЕ Н., Армения..): Փոխարենը հանդես են գալիս «թագավորներ», որոնց առատությամբ է պայմանավորված շահնշահ բաղադրիչի երևալը անվանման բանաձևերում: Գործընթացի մյուս դրսևորումներից պետք է համարել նոր իշխող դասի երևան գալը ժամանակին հատուկ անվանման բանաձևի բաղադրիչներով: Փոխվում է ոչ միայն վերջիններիս իմաստացին բեռնվածությունը և ձևավորումը, այլև բաղադրիչների քանակը՝ Ապլղարիպ մարզպան որդի Գրիգորոյ իշխանի եւ թոռն Ապուղամրի եւ եղբայր Վահրամայ և Վասակայ (ԴՀՎ, 1), Մանդատորթախուցես ամիրսպասալար շահնշահ Զաքարիա, Վանենի դուստր իշխանաց իշխան Սարգսի, որդոյ Զաքարեի կին Աբասա թագավորի (ԿՂ, Սանահին): Շարունակվում է անձի անհատականացման նոր միջոցների որոնումը: Անձնանվան՝ իբրև կենտրոնական և բնորոշող բաղադրիչի կողքին շատ են տիտղոսները, ամեն անգամ հիշատակվում է ոչ միայն տոհմանունը, հայրանունը, այլև պապանունը, իսկ երբեմն ազգակցական այլ հարաբերություններ արտահայտող բառեր՝ եղբայր, կողակից:

Հոգևորական դասին բնորոշ է երկբաղադրիչ բանաձևը, սակայն այս դեպքում անհատականացումը ընթանում էր բանաձևի անդամների կաթյան փոփոխման հաշվին: Ընդ որում, այն զգալիորեն փոխված է հատկապէս կենդեցական ցածր աստիճանավորների անվանման բանաձևերում՝ Սահակ կրօնաւոր, Տրդատ ճարտարապէտ, Սողոմոն ճգնավոր, Կոնձիկ արեղա, Թէոդորոս սարկաւազ, Գրիգորիկ երեց, Յովհաննէս վարդապետ, Երեմիա Անձրեիկ, Պետրոս Խանթկայորդի, Յակոբ Աքանչլի, Սարգիս Կունդ, ինչպես նաև հետևյալ կարգի բաղադրիչներ՝ իմաստասեր, գերմաքուր, գծակերպ, գիտնական, Խաչիկ⁹, մինչև Նոսկլայի ժողովին մասնակցած եպիսկոպոսների մեծ մասի անձի անունները ձևավորված են Ա + Տղ բանաձևով՝ Բարսէղ Անույ, Բասիլիոս Տփղիսի: Երկբաղադրիչ բանաձևերը տարածվում են նաև աշխատավորական դասի ներկայացուցիչների վրա՝ Կիրակոս զինվոր, Կիրակոս մշակ, Սարգիս բաժրար (նաև Սարգիս Ծիլենց բաժրար), Ըոտրեն ծառա (նաև Ըոտրեն ծառա որդի Դավթի թոռն Յոհանու)¹⁰, Զաքարէ հեթիմ, Ստեփան գծող,

⁹ Վերջինս իբրև Խաչատուր անձնանվան փաղաքական տարրերակ ուշարժան է նախ, որ այդ շրջանում երևում են անձնանվան սարբերակային դրսևորումներ և սպա, որ այդպիսիք հանդիպում են նույնիսկ հոգևորականների մոտ, որոնք, սովորաբար, ավելի էպիսկոպոսական են:

¹⁰ Գեղջուկ է, վանքին ձիթհանք է նվիրել և, ինչպես ընդունված է նվիրատվության արձանագրություններում, նրա անձնանվանական բանաձևը բավականին բազմանդամ է ստացվել: Մի բան, որ հատուկ չէ այս դասի համար:

Մխիթար հյուան, կազմող Սհակ, գրիչ Շապուհ, Աբրահամ ժերունի, Շնորհոր ազբար բարգործ, Դավիթ ջրաղացալան: Ինչպես նշում է Մ. Օրմանյանը, երբ վերջինս հայտնի դարձավ իր գործերով, փոխվեց նաև նրանովանման բանաձևի երկրորդ բաղադրիչի էությունը՝ Դավիթ Ծարեցի:

Բերվող օրինակները առանձին մեկնաբանության կարիք չեն զգում, քանի որ երկբաղադրիչ բանաձևերի երկրորդ՝ ոչ անձնանուն անդամները բնորոշիչներ են այդ ըմբռնման առաջին իմաստով: Նրանք ապահովում են անձի հետագա անհատականացումը և, որ կարևոր է, գրեթե միանշանակորեն նրան հատկացնում համապատասխան դասին:

Երկանդամ բանաձևի զարգացումը հանդեցնում է քոռն բառով ողեկցվող տարբերակի առկայությանը: Առաջին հայացքից թվում է, թե ստորև բերվող օրինակները կարելի է ներկայացնել իբրև եռանդամ բանաձևի սովորական դրսևորումներ՝ Ա + Հ + Պն — Կոստանդ որդի Գրիգորի թոռն Համազասպենց, Մարծպան որդի Սարգսի թոռն Աւագ Համազասպանց, Ճար որդի պատրոն Ումեկին թոռն Ճարին, Սաթ թոռն Սմայատա որդի Արտաւազա և Սինաքերիմ թոռն աւագ Սենաքերիմա, Խուժուրեկ թոռն Խալայշին, Վասակ իշխան թոռն Կուտկանին, Գոհարմելիք թոռն Համազասպանց, Գրիգոր թոռն Խաչենիսենց, Խորիշահ թոռն մեծին Վաչէի: Օրինակները վկայում են, որ եռաբաղադրիչները անցման ձևեր են դեպի նոր տիպի երկբաղադրիչներ, ուր հայրանվանը փոխարինելու է գալիս պապանունը: Այդ մասին է վկայում նաև եռանդամ բանաձևերում որդի և թոռն ուղեկցող բառերի շարադասությունը: Եթե սկզբում սովորական է ...որդի... ...թոռն... շարադասությունը, ապա նկատելի են դառնում... թոռն... որդի... շարադասությամբ բանաձևեր՝ Խուժուրեկ թոռն Խալայշին որդի Մխիթարայ, որդի-ով ձևավորված բաղադրիչի հետագա բացթողմամբ՝ Խուժուրեկ թոռն Խալայշին, Գրիգոր թոռն Խաչենիսենց: Նկարագրված երկբաղադրիչը հիմք է դառնում մի նոր կազմության մեջ բանաձևի, ուր երկրորդ անդամը արտահայտում է ազնակցական հարաբերության նոր որակ: Այն կարելի է բնութագրել իբրև գերդաստանի անուն: Իր ընդգրկման ծավալով այն տոհմանունն չէ, սակայն պապանունն ևս չէ: Այսպես, Սաթ թոռն Սմայատա և Գրիգոր թոռն Խաչենիսենց օրինակների համադրումը կասկած չի թողնում, որ վերջին բանաձևի երկրորդ բաղադրիչը Գրիգորին վերագրում է ոչ թե այս կամ այն անհատի թոռն լինելու հատկանիշը, այլ՝ Խաչենիսենց գերդաստանին պատկանելու: Ազգակցական այս նոր կապի դրսևորմանը նպաստում է հատուկ -ենց, -անց ածանցի առկայությունը: Վերը նշված կաղապարով կազմության՝ գերդաստանի անվան մակարդակին բարձրա-

նալու մասին է վկայում նաև այն, որ քոռն ուղեկցող բառին փոխարինելու է գալիս ազգ բառի ելակի բացառականը՝ յազգէ: Օրինակ, Յամլիկ որդի Սմբատա յազգէ Համազասպանց, Արուս յաթուն յազգէ Ուքանաց:

Այս նոր բաղադրիչը իրեն հատուկ ձևավորմամբ բավականին արագ ընդգրկում է նաև ոչ իշխող դասի ներկայացուցիչներին՝ Մամիկանց Ուքան, Մուծկանց Գրիգոր, Փէճուրանց Մխիթար, Չնէլանց Մելիք: Այս դեպքում փոխվում է բաղադրիչների շարադասութունը: Պետք է նշել, որ նման բանաձևերը անաղարտ կերպով պահպանվել են մինչև օրս՝ գյուղական վայրերում գերդաստանի անուն նշելու համար, իսկ Սյունիքում բարձրացել են ազգանվան աստիճանի:

Երկանդամ բանաձևերում հանդիպում են հայրանվան հանդես գալու անսովոր ձևեր՝ Սամոն որդի Յոհաննէսի տէր Սամուէլի, Գէորգ որդի տէր Աւրպելի Ովանեսի: Այդ բաղադրիչը դադարում է ավանդորեն եկող գրաբարյան «ա» հոլովման հարացույցին ենթարկվելուց և անցնում է «ի» հոլովման: Նրան նախորդող ուղի կամ քոռն բառերը այլևս չեն գրվում: Խնդիրը, սակայն չի սահմանափակվում միայն այդ առանձնահատկութուններով: Նշված բանաձևում, մեր կարծիքով, առկա է երկու մանրակաղապար կամ երկու երկբաղադրիչ բանաձև՝ Սամոն որդի Յոհաննէսի և Յոհաննէս տէր Սամուէլի կամ Գէորգ որդի տէր Աւրպելի և Աւրպել Ովանեսի: Ուրեմն միայն մեկ բաղադրիչը բավարար չէ անձի միանշանակ անհատականացման համար, անհրաժեշտ են նոր բնորոշիչներ: Վերջիններս այս դեպքում անհատականացնում են տվյալ բանաձևով անձի անուն կրողի հորը: Հիշեցնենք, որ այսօր էլ Հայաստանի որոշ գյուղական վայրերում (Իջևան, Նոյեմբերյան) ընդունված է մարդուն կոչել այդ ձևով՝ Գևորգի Վարդանը, Սմբատի Արտաշը:

§ 3. Միջին շրջանը (XII—XVII դդ.) ուշարժան է առաջին հերթին հայկական գաղթօջախներին վերաբերող տվյալներով: Փաստեր կան ոչ այնքան բնաշխարհից, որքան Արիմի, Լվովի, Վենետիկի, Լիվոռնոյի, Սեբվիզի, Ճուրճովի գաղթօջախներից, ինչպես նաև ռուսական կայսրության կենտրոններից և հատկապես Մոսկվայից:

Այս շրջանում Վենետիկի հայկական գաղթօջախը, շնայած ոչ այնքան մեծաքանակ լինելուն, զգալի դեր է կատարել, ինչպես տեղի, այնպես էլ հայկական տնտեսական ու մշակութային կյանքում: Հայտնի է, որ վենետիկցի հայերը առևտրական լայն հարաբերութիւնների մեջ էին ոչ միայն Միջին և Մերձավոր արևելքի, այլև Եվրոպայի երկրների հետ:

Գաղութիւնը ձևավորվել էր ի հաշիվ Անիի և Զուղայի և, բնականաբար, հայկական այս երկու կարևոր կենտրոնների ավանդույթները որոշ ժամանակ դեռ կենդանի էին այդ գաղթօջախներում: Ավանդույթների պահպանման, իսկ սկսած 17-րդ դարից նրանց աստիճանաբար կորցնելու փաստը հաստատվում է նաև հայերի անվանման բանաձևերի միջոցով: Այսպես, Վենետիկում XVI դարում դեռևս տարածված են հետևյալ բանաձևերը՝ Գեորգ որդի Յովհաննու, Մարտիրոս որդի Պետրոսի, Գեորգ որդի Յակոբայ, Գեորգ որդի Թեոդորի Կեսարացույ, Ստեփան որդի Գեորգայ, Յովհաննիսի որդի Յակոբ (այս բանաձևը ամենատարածվածն է) և այլն: Սակայն XVI—XVII դդ. սահմաններում երևում են հետևյալ ձևերը՝ Ալեքսանդր Սիմոն, Մկրտիչ Պարսկահայ, Պետրոս Ոսկան, Դոմինիկոս Ատանայ Հայ, Յակոբ Մէրտինցի Հայ որդի Յովհաննու, ինչպես նաև Անտոն Սուրիան կոչեցեալ Հայ Antonio Suriano detto l'Armeno..., որդի Հայույն Հովսեփայ de Yseppo de l'Armeno, իսկ մի փոքր ավելի ուշ հիշատակված Գեորգ որդի Թեոդորի Կեսարացույ որդույ Գեորգայ-ի զավակներն արդեն հետևյալ անուններն են կրում՝ Իզապել կամ Եղիսաբեթ, Պաւլա Դոմինիկա, Սիմոն Յակովբ, Զեչիլիա Լուչինա:

Իշխանական տների (այս հասկացության դասական ըմբռնմամբ) անուններ այլևս չեն հանդիպում: Բարձր դաս ասելով, ի նկատի պետք է ունենալ գլխավորապես գյուղական մեծատուններին, ինչպես նաև ոչ միայն բնաշխարհում, այլև գաղթօջախներում և նրա սահմաններից դուրս զգալի կշիռ ձևով բերած առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներին: Այստեղ գործ ունենք հայերի, բայց ոչ միշտ անվանման հայկական բանաձևերի հետ, սակայն նկատի ունենալով վերջիններիս մեծ նշանակությունը հասարակական կյանքում ընդհանրապես և անձի անվանման բանաձևերի ձևավորման համար մասնավորապես, մենք մանրամասնորեն անդրադառնում ենք նրանց անվանման բանաձևերի բնութայնը:

Արտաքին կապերի բազմապանությունը պատճառ էր դառնում նրանց անվանման բանաձևերի անկայունության և ճկունության: Հայտնի էրվելով հասարակական նոր միջավայրում, նրանք, մեծ մասամբ, հարմարվում էին նոր պայմաններին: Ահա մի քանի օրինակ՝ Հախնազարի որդի Հայկազն իշխան կամ Հայկազն Հախնազարեան, Նիկողոս Թորոսեան կամ Թորոսովիչ որդի Հակոբ Թորոսովիչի, Ամիրխան Խանենց, Մարգար Յղնացի, Սեաւ Զաբար, Սէֆեր Խանճի, Պէկլէր էքմէքչի, Գրիգոր Քերեստեճի, Պողոս Ասեւօղլու, Հակոբ Կարնեցի, Ղուլիկենց կամ Ղուլիկեան, Խաչատուր Կարնեցի Առաքելեան, Ազուլեցի մահդասի Պետ-

րոս որդի խոջա Պողոսի, Զուղայեցի մհդեսի Յակոբ վաճառական, Պրստիկ աղա Շահի խասենց, Մարգար Շահրիմանենց, Սսեցի խօճա Սաֆար որդի խօճա Հալապլիի, Կեսարացի խօճա Պուտակ Գաթրճեանց, Կեսարացի խօճա Փանոս Աբելենց և այլն: Սերտորեն կապված լինելով արտաքին աշխարհի հետ հասարակության ունևոր խավի ներկայացուցիչների անվանման բանաձևերը արտացոլում են նաև այդ առնչությունները: Հանդիպում են երկուսից վեց անդամների բանաձևեր: Անձնանվանը ուղեկցում են հետևյալ կարգի բաղադրիչներ՝ տոհմանուն—Թորոսովիչ կամ Թորոսեան, էսանենց, Ղուլիկենց կամ Ղուլիկեան, Առաքելեան, Շահի խասենց, Շահրիմանենց, Գաթրճեանց, Աբելենց և այլն:

Ռուսական միջավայրում հայտնված Սպահանի վաճառականների (նախկին ջուղայեցիներ) անվանման բանաձևերից 16-ը կազմված է Ա+ՏՀ բանաձևով՝ Աստվածատուր Միրիթենց, Աղափիրի Շահխաթունենց, Ապով Լուսիկենց և այլն, մեկը՝ Ա+Մկ Ակուբջան Ուստաբաշի և ավելի քան 2 տասնյակ Ա+Հյ բանաձևով՝ Կասպար Անդրիև, Բագդասարկա Իլլին, Գրիշա Արաստակեսով, Արիտունկո Գրիգորև և այլն և Գրիգոր որդի Հախնազարի կամ Հախնազարեան, Պետրոսի որդի Պողոս, խօճա Սաֆար որդի խօճա Հալապլիի, պարոն Մելիք Մելիքպէկ որդի պարոն Մելիք Ածապովին թոռ պարոն Թումապէկին (ԳՀՎ, 4):

Արևմտյան հատվածում, հատկապես Պոլսում, այս խավի ներկայացուցիչների անվանման բանաձևերը մեծ մասամբ կազմվում են զբաղմունքի հետ կապված զանազան բառերից ՈւԲ (-չի, -ճի, -չի) բառակազմությամբ՝ Սէֆեր խանճի, Պլկլէր էքմեքչի, Գրիգոր Քերեստեճի, Հարութին Եաղճի և այլն:

Եվ վերջապես, ամենաավանդական դարձած բանաձևը, որ դեռևս որոշ չափով տարածված է այս խավի համար՝ Մարգար Յղնացի, Կարենցի, Աբուլեցի, Զուղայեցի, Սսեցի, Հալեպցի, Կեսարացի և այլն:

Եղած նյութը գալիս է վկայելու, որ աշխատավորական դասի անվանման բանաձևերի մեջ գերակշռող Հյ+որդի+Ա բանաձևն է՝ Թումի որդի Զաքար, Ուսուփի որդի Սանոս, Ասատուրի որդի խաչիկ և այլն: Թվում է, թե այս բանաձևը բաղադրիչների քանակով, ինչպես նաև որդի նոմենի առկայությամբ քիչ է փոփոխության Լնթարկվել նախորդ դարերի համեմատությամբ, սակայն փոփոխությունները խիստ զգալի են՝ փոխվել է բանաձևի հիմնական անդամների շարադասությունը, ասենք Զաքար որդի Թումայ-ի փոխարեն ունենք Թումի որդի Զաքար: Փոխվել է ոչ միայն շարադասությունը, այլև քերականական ձևավորման էությունը՝ գրաբարյան սեռականին փոխարինելու է եկել աշխարհաբարյան սեռա-

կանք: Հանդիպում են նաև այս ձևի որոշ տարբերակներ՝ որոնք գոյանում են գլխավորապես «որդի» բառը այլ համարժեքներով փոխարինելու հետևանքով՝ Առատամի տղա Սարգիս, Շեթի տղա Թորոս և այլն: Տարբերակ ենք համարում նաև բանաձևի ծավալուն տեսակը, որը նույնպես մեծ տարածում ունի՝ Աբրահամ որ է որդի էվազի, Արութին որ է որդի Ակոբի, Խոսրովդուլաս որ է դուստր Ագուլեցի խոճա Ղուլու և այլն:

Երբեմն անվանման բանաձևի մեջ որդի, դուստր բառերին զուգահեռ գործածվում են «կողակից», «որ է բաժին», որոնք, բնականաբար, ազգակցական այլ հարաբերությունների կրողներ են, օրինակ Փանոսի կողակից Հուրիխան, Աշխատող Ղարիպ որ է բաժին Թումանին, Ըսպահանայ երևանցի Նիկողոսի Վելիխան և այլն:

Եթե ոչ նախորդ բանաձևերից ավելի, ապա նրան հավասար տարածում ունի ՏՀ (-ենց, -ոնց, -ունց) + Ա. բանաձևը՝ Քարենց Զաբար, Ֆարմանենց Հերապետ, Գուլաթխօջենց Նազար, Կրտանենց Յակոբ, Բաբամենց Մարգարե, Զաղարենց, Ումիտենց, Ներկարարենց, Շօքենց, Շէթենց:

Աշխատավորական խավի ներկայացուցիչների անվանման բանաձևերի կազմության մեջ նկատվում են նաև հետևյալ երևույթները՝ անձնանվանը նախորդում է տեղանվանական ծագում ունեցող բաղադրիչ՝ Արտավելցի Մանուկ, Աստապատեցի Միքայել, Զուղայեցի Սրապիոն, Սպահանցի Մխիթար, Տփխիւեցի Գրիգոր, Սէրկէվլեցի Յենկիպար, Գոմերկցի Սուլմոն, ուր, ինչպես տեսնում ենք, անդամների շարադասության փոփոխությունը այս դեպքում ևս հանգեցրել է էական տարբերությունների:

Բանաձևի կազմում հանդիպում են նաև զբաղմունքի հետ կապված զանազան բառեր՝ ուստա Գրիգոր, Միրիջան, Աւաք, վարպետ Մարգար, նալբանդ Յակոբ, նավավար Խաչիկ, չիթչի Փիլիպոս, դարպինդ Մկրտիչ, արաղ վարդան, մաղազործ Բայրամ, զուռնաչի Հակոբ, ներկարար Երամ և հենց նույն շրջանում՝ ներկարարենց էվան, Դարփինտենց Շահավերտի:

Զգալի տարածում ունեն մականվանական ծագում ունեցող տոհմանունները՝ Մուլիկենց Ատոմ, Քաչալենց Իսրայել, Բեղլվենց Սրիպիոն, Խեէնց, Անմոռենց և այլն: Իսկ անվանման բանաձևի համար այս շրջանում ամենահատկանշականն այն է, որ գրեթե բոլոր բաղադրիչները ներկայանում են իբրև գրականի ժողովրդախոսակցական տարբերակներ՝ Տոանկուլենց Արութին, Ուսուփի որդի..., Ֆարմանենց Հէրապետ, Անդ-

որիազի որդի Սուքիաս և Ընդրիասի որդի..., Ասատրի որդի..., Սիամոնի որդի Մուքել:

Այս շրջանը ներկայացված է նյութի բազմազանությամբ և առատությամբ: Ասվածը հավասարապես վերաբերում է թե՛ բնաշխարհին, և թե՛ գաղթօջախներին: Հայկական առաջին գաղթօջախները, որ սկսեցին ձևավորվել հատկապես Անիի թագավորության անկումից հետո, XIV—XVI դդ. ծաղկում ապրեցին: Այդ գաղթօջախների նշանակալից ներդրումը տվյալ երկրի առևտրի և արհեստների բնագավառում, հնարավորություն տվեց տեղի հայերին ինքնավարման զգալի իրավունքներ ձեռք բերել:

Թերևս այդ է պատճառը, որ հայերը մի քանի դար պահպանում էին իրենց ազգային ինքնուրույնությունը որ, անկասկած, պետք է երևար նաև անվանման բանաձևերի մեջ:

Լիվոնոյի գաղթօջախը ազդեցիկ ու մեծ է եղել և, թերևս, դրա շնորհիվ բավականին երկար է գոյատևել, հասնելով մինչև XIX դարի վերջերը և XX դարի սկզբները: Ասվածը ապացուցվում է նաև այն բանով, որ հայերի անվանման բանաձևերը և՛ Վենետիկի համեմատությամբ, և՛ ընդհանրապես երկար ժամանակ պահպանել են ազգային նկարագիրը: Անվանման բանաձևերի առաջին վկայություններին հանդիպում ենք XVII դարում: Ըստ որում, դրանց տեղանվանական բաղադրիչների օգնությամբ կարելի է պարզել, թե հայկական ո՞ր վայրերի հաշվին է ձևավորվել Լիվոնոյի գաղութը՝ Սսեցի Խօճա Սաֆար, Կեսարացի Խօճա Փանոս, Պոլսեցեան Հակոբ Զէլէպի որդի Խօճա Պայրամշահի, Եվդոկիացի Խօճա Ալեքսան որդի Խօճա Ղազարի, Զմիւռնիացի Խօճա Սարգիս որդի Խօճա Պօղոսի, Զուղայեցի Մանուել հոգևոր որդի Հայրապետի, Ղափանցի մահտեսի Պօղոս որդի անաջողակ Մատուրին, Դաստակեցի Խօճա Պեք որդի Պաղտոյի և այլն:

Լիվոնոյի հայությունը անվանման բանաձևերի հարցում հարազատ է մնում ազգային նկարագրին: Ահա մի քանի օրինակ՝ Յովակիմ Թորոսեանց, Յովհաննես Զաքարեանց, Յակով Մանասեանց, Գրիգոր Ալեքսանդրեան, Թադէոս Զանաբեան, Գէորգ Զաքարեան: Պատկերն ամբողջացնելու համար բերվածներին ավելացնենք նաև այլ տոհմանուններ՝ Աբրահամեան, Աւագեան, Աւետիսեան, Գէորգեան, Եազրճեան, Թերզեան, Նարկիզեան, Պոլսեցեան:

Վենետիկի հայերի անվանման բանաձևերը, ինչպես վկայված է Ալիշանի մոտ, ներկայանում են իբրև բնիկ հայկականի և տեղական ազդեցության զուգակցում: Վերջինս ավելի նկատելի է սկսած XVI դ.: Աչքի է

ընկնում նաև հետևյալ ընդհանուր երևույթը՝ անվանման բանաձևերի մեջ հաճախ են օգտագործվում Հայ, Պարսկահայ, Սուրեան բաղադրիչները: Ըստ որում, վերջինիս մասին Ալիշանը նշում է, որ այն չպետք է կապել Սիրիայի հետ, քանի որ իտալացիները Արևելքից ներգաղթածներին այդպիսի մի ընդհանուր անվանում էին տալիս¹¹: Ահա մի քանի օրինակ՝ Ղազար Պարսկահայ, Խաչատուր Հայ (Դավրիժեցի), Գևորգ որդի Հայոյն Յովսեփայ:

Վենետիկի հայկական գաղութի կազմավորման մասին գաղափար տալու համար բերում ենք Ալիշանի հետևյալ տողերը. «Հայ անուանց մեջ՝ աւելի ծանօթագոյն 500 առնելով, գրեթե կէսն Զուղայեցիք կամ Սիսականք են (Սիւնեաց աշխարհ, Գարապաղ) ասոնց այլ կեսն հատկապես Հին և Նոր Զուղայեցի գրուած են, 50 մի Ղափանցի կոչուին, 70 այլ Սիւնեաց նահանգի 25 այլեւայլ գեղերու անուամբ: Իսկ միւս |250| կիսոյն 60 մի՛ յայլեւայլ քաղաքաց Մեծ Հայոց են, 50 Փոքր Հայոց, ի Պոնտոսի և Կիլիկիոյ, 40 մի ի Փոքր Ասիոյ, 40 մի յԱսորոյ... և այլն¹²»:

Այնուհետև Ալիշանը բերում է վենետահայության մի շարք տոհմանուններ՝ Աբելեան, Աղամեան, Ալեքսանեան, Ազատեան, Պողոսեան, Գասպարեան, Գարագաշ, Գէրաբ-Միրման Երիշանենց, Թէոդորեան, Ծարով, Հայրապետեան, Մանուկեան, Մարտիրոսեան, Մինասեան, Յակովբեան, Շահումեան, Շէհրիմեան, Զօլագեան, Սեղբոսեան:

Հետաքրքիր ենթահամակարգ են կազմում նաև եվրոպայում, հատկապես Ռուսաստանում հայտնված հայերի անվանման բանաձևերը: Այս փաստերը ուշարժան են նախ այն պատճառով, որ վեր են հանում հայկական բանաձևերի հնարավոր տարբերակները այլ լեզվական միջավայրերում և՛ ցույց են տալիս այդ տարբերակների ազդեցության հնարավորությունը հայերի անվանման ձևավորվող բանաձևերի վրա:

Էզովի գիրքը¹³ այս առումով մի շարք հետաքրքիր տեղեկություններ է պարունակում: Այսպես, Աղաճան Յավրի որդի կամ Եավրի որդի Աղաճան բանաձևը հայտնվում է ռուսական, ապա և եվրոպական միջավայրում և հետևյալ ձևերն է ստանում. Aghadjai fils d'Éav', Yauri Agadjan, Иавры де Агадьянь, ինչպիս նաև՝ Բաղդասարի որդի Թաղէոս—Bagdasar de Tation, Thateos fils d'Bagdasar, Багдазарь Та теи,

¹¹ Տեղին է հիշել մի այլ համանման փաստ թուրքիայում Պարսկաստանից 1 ընդհանրապես այդ կողմերից եկածներին կոչում էին աջամներ Այստեղից էլ հայկական Աջամյան Աճեմյան ազգանունը

¹² Ղ Ալիշան, Հայ Վենետ, Վենետիկ, 1896, էջ 498:

¹³ Г Эзов, Сношение Петра Великого с армянским народом СПб 1898

Ասատուրի որդի Սարուխան - Astatur de Sarokan, Saroukan fils d'Asdadur, *Ինչպիս նաև* Emir beg fils de Mardiros, Melkhon fils de Bagdasar, Емир де Филиппов Емр Филиппов *և այլն: Ահա և Իւրաջել Օրիի շքախմբի հայ անդամները՝* Awet di Murat, Martin di Gaspar Awet di Sarkis, Awet Nazareth, Agadjan Yohannes, Azaria Macarewitz *և այլն: Ռուսական միջավայրում հայտնված հայերի անվանման բանաձևերի մեջ առաջին հերթին աչքի է ընկնում տեղանվանական հիմքով կազմությունների բացակայությունը: Ռուսական անձնանվանական համակարգում տեղանունները շատ բիշ դեր են խաղացել: Ասվածը հաստատվում է նաև այսօրվա ռուսական ազգանունների օրինակով, ուր այդպիսի հիմքով կազմությունները բավականին փոքրաթիվ են:*

Հանդիպում են բնիկ հայկական ձևեր՝ Աստվածատուր Մխիթարենց, Պատիկ աղա Շահի Խասենց, Մարգար Շահրիմանենց *և այլն: Բերվածների կողքին ռուսերեն տառադարձության ժամանակ կատարված սխալների հետևանքով առաջացած տարբերակներ, որոնք արդյունք են նաև բանավոր խոսքից կատարված գրառման՝ Ավանեսով Սարգիս, Յակուբ Ավեղիկով, Մարտիրոս Ազինց, Հոանես Զևարկալենց, Կուզաս Զեմալենց, Օսկան Զաիրունց, Ուսեփ Նանենց, Ուհանես Ասկանդարով, Արաբեսյնակ Խարաբես/ Մատվեև, Ուհան Իվանով, Կազար Կալչուստով, Կալչուցկ Կիրիլով, Արչուտչուկով /Արեսուկով/ Սարգիս: Մի այլ խումբ են կազմում բանաձևերի բաղադրիչները տեղական պայմաններին հարմարեցված տարբերակները. օրինակ՝ Ավանեսով Սարկիս մի այլ տեղ գրվում է Կիրիլկո Օվանեսովիչ *և Սարկիս Ուվանեսով, Իվան Ալիխանով, Գրիգորեյ Գիուլենց, Պյոտր և Բողդան Ամիրեվ, Կասպար (Կասպեր, Կաշպարկո) Անդրեև, Բագդասարկա Իլչին, Սաֆարկա Վասիլև, Գրիշկա Արիտոմկո, Ալավերդեյկա, Իվանիսկա, Մնացականկա *և այլն: Ըստ որում, նման ձևերը մեծ թիվ են կազմում: Ինչպես ցույց են տալիս ռուս անունագետները, ռուսական ավանդույթը նման ձևեր հատկացնում էր հասարակության շունեքո խավերին: Իբրև ապացույց կարելի է նշել արդեն հիշատակված սպահանցի վաճառականների անվանման բանաձևերում նման տարբերակների բացակայությունը: Ընդհակառակը՝ այս դեպքում պահպանվել են նրանց տոհմանունները՝ Շահրիմանենց, Շահխաթունենց, Միրիթենց, Լուսիկենց, Նանենց *և այլն: Մյուս դեպքերում անվանման բանաձևերի երկրորդ բաղադրիչը կազմված է -ОВ, -ЕВ ածանցների օգնությամբ՝ Սարկիս Ավանեսով, Յակով Ավդեև, Կասպար Այվազով, Արուտենկո Գրիգորև, Դավիթ Բագրամով, Բուզուս Ուզանով, Առաքել (Ռաքել) Պետրով.****

Այս շրջանը աչքի է ընկնում Տրանսիլվանիայի և մասնավորապես Դեոլայի կամ Արմենվարոշի և Նդիսաբեթուպոլիսի հայկական գաղթօջախների ծաղկման և հայկական ոգու բարձրացման գործընթացով: Քաղաքի հայ համայնքը հսկայական գործ է արել ինքնահաստատման և ինքնապահպանման ուղղութեամբ: Նրա ներկայացուցիչների անվանման բանաձևերի կառուցվածքը, բաղադրիչների ձևավորումը և նրանց միջև եղած իմաստային փոխհարաբերությունները աչքի են ընկնում ազգային ավանդույթի նկատմամբ հարազատութեամբ: Օրինակ, զուտ հայկական այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ հայրանման կազմությունը սեռականի -ի-ով և -ու-ով՝ Լուսիկ Ղազարի և Սաբոյ Դրաստաչու, գերդաստանի անունների կազմությունը -եանց, -ունց ածանցներով՝ Թորոսեանց, Շիմիլովցունց, Սագերիչեանց: Բանաձևի նկատմամբ տրամաբանությունը վեր էր կանգնած սոցիալական տարբերակումից և նախադրյալներ էր ստեղծում անհատի տարբերակման համար ընդհանրապես, անկախ նրա սոցիալական պատկանելությունից: Անվանման բանաձևերը մեծ մասամբ երկանդամ են: Զգալի թիվ են կազմում նաև եռանդամները: Իբրև բացառություն ներկայացված են մի քանի քառանդամ բանաձևեր:

Երկանդամ բանաձևերը կազմվում են հետևյալ բաղադրիչներից.

1. Ա+Հյ (-ի) — Գրիգոր Ներսեսի, Կաշբար Մելքոնի, Խաչեղես Գրէշունի, Մանուկ Ասլանի, Նիկոլ Վարդիկի և այլն:
2. Ա+Տղ (-ի) — Դավիթ Շամլցիի, Ասվատուր Մետիաշցու.
3. Ա+ՈւԲ (զբաղմունքի անուն) — Ասվատուր Կօշկարի, Օվանես Թուրչիի, Սաբոյ Դրասդաճու, Դօտերաշ Ոսգերիչի:

Ներկայացված երեք դեպքերում իբրև երկրորդ բաղադրիչ օգտագործված է հայրանունը՝ սեռական հոլովով: Մի դեպքում առկա է հոր անձնանունը, մյուս դեպքում՝ ծննդավայրը կամ մոտ նշանակությամբ մի այլ տեղանուն և երրորդ դեպքում՝ զբաղմունքի անունը: Նշված բաղադրիչները անցնում են անձնանվանական ավելի բարձր՝ տրհմանվան կարգին, ազգանուն դառնալու հետագա միտումով՝ Ղազար Օհանեանց, Լուսիկ Ոսգերիչեանց, Դօտեր Վարդիկեանց, Մելքոն Կաշբարեանց, Նիկոլ Ճիրախեանց: Բայց վերջիններիս կողքին դեռևս մեծ թիվ են կազմում Տոնիկ Նիկոլի, Անտո Խաչգոյի, Մարտիրոս Տօնիկի, Օվանես Նորսեսի, Սհակ Օհանի ձևերը:

Տրանսիլվանիայի Սիբվիզ, Ճուրճով և մյուս հայաշատ քաղաքներում հայություն անվանման բանաձևերը մեծ մասամբ երկանդամ են,

որոնց կրկրորդ բաղադրիչը կազմված է -եան (Խաչատուր Պիննաթեան), -ի (Մարտիրոս Օվանի, Յակոբշա Միտզոյի), -եանց (Յոհաննես Լուսիկեանց), -ենց (Սիմոն Շիմայենց) ածանցներով: Նախապատվութունը տրվում է -ի ածանցով ձևավորված հայրանվանը՝ ի հակադրութուն մյուս ածանցներով կազմութուններին: Ավելի բազմազան են եռանդամ բանաձևերը՝ Ա+Հյ+Տհ—Մանուկ Գրիգորեան Ազոնց և Յոհաննես Գրիգորի Ազոնց՝ հայրանվան կազմության երկու տարբերակներով: Նույն անձի համար (համառ. Գովրիկյան, էջ 73) հանդիպում են Վարդան Բաբոյկեան, իսկ մի փոքր ավելի ուշ՝ Վարդան Հարութիւնի Բաբոյկեան կամ Սիմոն Թորոսեան ի տոհմէ Զուածեղեան մի այլ տեղ՝ Սիմէոն Թորոսի Զուածեղեան օրինակները: Եռանդամ բանաձևերի մեջ երևում են նաև տեղանվանական բաղադրիչներ՝ Տէր Ստեփան Մելիքսեղեկեան Ուրմանցի, Երանոս Սերադցի Խաչիկի, Տօնիկ Վարդանի Ուրմանցի: Երբեմն եռանդամները գոյանում են մականվանական բաղադրիչի հաշվին՝ Յօհան Քոստա Սհակեան, Յօհան կախ Յուսեփի, Նիկողայոս Մանուկի Հոռոմն:

§ 5. Նոր շրջան: XVIII դարը և հատկապես նրա երկրորդ կեսը Աստրախանի հայկական գաղթօջախի ձևավորման ու ծաղկման շրջան պետք է համարել: «Շարունակ կրկնվող ներգաղթի և բնական աճի շնորհիվ Աստրախանի հայկական գաղութի հայ բնակչության թիվը XVIII դարի կեսերին՝ դարասկզբի համեմատությամբ, ավելացավ շուրջ 10 անգամ և հասավ մոտ 2000-ի»¹⁴: Գաղութը ձևավորվում էր գլխավորապես Ղարաբաղից և Զանգեզուրից արտագաղթողների հաշվին:

Աստրախանի հայութունը օգտվում էր անվանման բանաձևերի երկու տարբերակներից՝ հայկական և ռուսական: Անվանման բանաձևերի հայկական տարբերակը ձևավորվում էր որդի (դի¹⁵) մասնիկի օգնությամբ՝ Հայրասպետ որդի Աֆղանտիլի, Յավրի որդի Ավետիկի, ինչպես նաև՝ Սարգիս դի Յոհաննի, Պետրոս դի Վարդան, Հարութիւն դի Դավիթի, Երեմիայ դի Հարութիւնի, թվով՝ ավելի քան 140: Հանդիպում է նաև կրկբաղադրիչ այն բանաձևը, որի երկրորդ մասը կազմում է -եան

¹⁴ Պատմաբանագիրք Աստրախանի հայոց, Երևան, 1967, էջ ԺԲ

¹⁵ Որդի > դի մեկնարանության օգտին են խոսում հետևյալ փաստերը
 ա) ինչպես վկայված է, Աստրախանի հայերը ռազմիկ են մյուսներից, եվրոպայի հետ ոչ մի կապ չեն ունեցել:
 բ) Աստրախանը զուտ տախկան Լո և մնացել էր այդպիսին
 գ) այդ մասնիկին հաջորդող հայրանունը զրվում Լո սեռականով, այսինքն՝ դառնում է հատկացուցիչ, ինչպես և որդի նամնի դեպքում

ածանցով՝ Նդիազար Գրիգորեան, Հարութին Դավթեան, Գրիգոր Կանպանեան և այսրանը: Մեզ թվում է, որ անվանման նման բանաձև կրելը որոշ արտոնության նշան է, քանի որ այդպես են ստորագրել դատավորը և Հարութին Դավթեանը, որոնք մի քանի անգամ իբրև գրագետ անձնավորություններ ստորագրել են ուրիշների փոխարեն ևս: Երևում են ուսական ազդեցության նշաններ՝ Վարդան Պիրիկով, Հակոբջան Խալդարով, Հարութին Զաքարով, Զախար Դավիթով և այլն, ինչպես նաև նախորդ երկուսի բաղադրությամբ ստեղծված ձևեր՝ Ահօնդ դի Բունեաթով. Յակոբ դի Մնացական Թութուշով:

Այդ շրջանի Աստրախանի հայերի անվանման բանաձևի ուսական տարբերակը համընկնում է ուսաների շրջանում տարածվող անվանման բանաձևերին՝ Աթաբեկ Բազդասարով, Կևորկ Նիկիտին, Պոգոս Մոսեսով, Գուգաս Սազակով և այլն: Պետք է ենթադրել, որ Աստրախանի հայերը չեն փոխարինել չարաբերությունների համար կրում էին անվանման բանաձևի լայկական տարբերակը, իսկ ավելի լայն ոլորտում՝ ուսականը, օրինակ, Բաբիջանի որդի Թաթևոս և Թաթևոս Բաբաջանով, Աթաբեկ դի Բադասար և Աթաբեկ Բազդասարով: Քանի որ արդեն խոսվեց այլալեզու միջավայրում հայերի անվանման բանաձևերի մասին, ուստի երևույթը սերկայացնենք՝ Ռուսաստանի մյուս վայրերում հայերի անվանման բանաձևերը քննելով:

XVIII դ. հատկապես առաջին կեսի հայ ազգային-ազատագրական շարժումները ընդգծված ուսական կողմնորոշում ունեին: Ինչպես վկայում են վավերագրերը, դարի առաջին տասնամյակներում աննախադեպ լայնության հասան հայ-ուսական չարաբերությունները և որ կարևոր է, որոնք ընդգրկում էին բազմազան ոլորտներ՝ տնտեսական, քաղաքական, առևտրական, մշակութային, ռազմական: Կազմավորվեց Հայկական էսկադրոնը, որի մի քանի հարյուրի հասնող մարտիկները զգալի ավանդ ունեն հայկական ազատագրական պայքարի մեջ:

Ռուսական բանակի կազմի մեջ մտնող Հայկական էսկադրոնի մարտիկներն ու աստիճանավորները, բնականաբար, պաշտոնական ցուցակներում գրանցվում էին այդ երկրում ընդունված անվանման բանաձևերի օրինակով՝ Яков Мирзаов, Иванис Цатуров, Турус Иванисов, Керк Гулласаров, Богдасар Макартичов, Костянд Таргулеов, Абет Манацаканов, Эвум Мирзаов:

էսկադրոնի զինվորները, երկար տարիներ ուսական միջավայրում ստանվելով, հետագայում կարող էին այս կամ այն կերպ փոփոխություններ մտցնել իրենց անվանման բանաձևերի մեջ. փաստերը ցույց են

տալիս ¹⁶, որ այդպես էլ եղել է: Հետագայում անվանման բանաձևի բաղադրիչները ուսականացվել են ոչ միայն ձևով, այսպես, Թորոս Յովհաննեսյանը գրանցվել էր որպես Турјс Иваницов և չի բացառվում (մենք ստույգ ավյալներ չունենք), որ հետագայում փոխակերպվեր օրինակ, Тарас Иванов ի:

Վաճառականները, որ դեպքից-դեպք էին հայտնվում Ռուսաստանում և ստիպված էին գրանցվել զանազան պաշտոնական վայրերում, այնքան էլ չէին մտահոգվում և այս հարցում խստապահանջ չէին: Իհարկե, այստեղ ևս ընդհանուր առմամբ նկատվում են այն երևույթները, որոնք հատուկ էին էսկադրոնի զինվորների ցուցակին՝ բանավոր տարբերակի գրանցում, հնչյունական զուգահեռ ձևերի առկայություն և այլն, սակայն այս դեպքում կաշկանդվածություն որևէ նորմայով գրեթե չի զգացվում՝ տարբերակները ավելի շատ են: Այլ կերպ ասած՝ զինվորական գրագիրը ավելի զդուշ է եղել, քան զանազան մաքսատների մանր չինովնիկը: Բերենք օրինակներ՝ Кевант Васкенов, Ариютюн Тарасов (Торосов), Ариджан Арабетов, Хачик Иваницов (Аванесов), Иван Павлов, Манул Вартанов, Парсель Григорьев, Мелюкагаов, Агазадоров, Магдасы Хогчатуров сын Дмитрий, Ойдин Аракилов և այլն: Իսկ ահա թե ինչ տեսք տանն մեյիքների անվանման բանաձևվերը՝ հայերեն և ուսերեն տարբերակներում՝

Պաղդայարի որդի Թաթևոս—Багдасароглы Статов

Հէկազի որդի Փիլիպոս—Егезоглу Филипов

Նարինակի որդի Շահինազար—Нарибеоглы Шахназар

Եավրի որդի Աղայճան—Авриоглы Агача

Կարելի է ենթադրել, որ բարձր դասի ներկայացուցիչները բանաձևի երկրորդ տարբերակ էլ են ունեցել: Իհարկե, սրոշ վերապահումներով, կարելի է պնդել, որ Պաղտասարի որդի Թաթևոս և Багдасароглы Статов հավասարաթեք միավորներ են, սակայն պետք է հիշել, որ խոսվում է ոչ թե այդ միավորների իմաստային կամ այլ կարգի հարաբերության, այլ այն մտայնության մասին, որ արդյունք էր ժամանակի և հանգամանքների: Հետաքրքիր է, որ երբեմն որդի նոմենը, որի միջադաս դիրքը շատ սովորական է, վերջադաս դիրք է ստանում, ըստ Էռնեստ Երվանտ-ՕՅՍ-ի արժեքով: Այսպես, վերոհիշյալ ժողովածուի 2-րդ մասի էջ 312—313-ում բերված են 23 լեհահայերի ցուցակի հայերեն և ուսերեն տարբերակները: Բերենք մի քանի օրինակներ՝

¹⁶ А. Н. Хачатрян, Армянское войско в XVIII в., Ереван, 1968.

Գրիգոր Ստեփանի որդի — Григорей Иванов
 Յօհան Յօհանի որդի — Иван Иванов
 Սահակ Յովսեփի որդի — Исак Осипов
 Մխիթար Հարութենի որդի — Махатар Артемов
 Աւաք Ազիզի որդի — Авак Азизов
 Մսր Աւաքի որդի — Масырь Аваков
 Հարութիւն Տօլուխանի որդի — Артем Долуханов

§ 6. XVIII դ. Երևանը և նրա շրջակայքը նկարագրված վայրերի՝ շամեմատությամբ բավականին պահպանողական են: Եվ զարմանալի չէ, քանի որ բնակչությունը դեռևս պարսկական տիրապետության տակ էր և առնչությունները արտաքին աշխարհի հետ խիստ աննշան էին:

Վաղարշապատցիների անձնանվանական բանաձևերը կազմված են Ա + որդի + Հյ, Ա + Տղ (-ցի) կաղապարով՝ Սահակ որդի Մկրտչի, Օհան Արզրումցի: Ասվածի մասին են վկայում նաև «Կալվածագրեր» ժողովածուի վավերագրերը¹⁷, ուր գերակշռում է առաջին բանաձևը, որի հետ մեկտեղ հանդիպում են հետևյալ ձևերը՝ Զուռնաչի Հակոբ, Մսրենց Անա-Խալիս, Մելիք Մահտեսի Ալում, Յևաղիջի Խաչատուր, ուստա Դավիթ, Մարութի Ուհանես, ինչպես նաև մի քանի քաղմանդամ ձևեր՝ Չալտոնց Շառամենց Վարաքի Գրիգորի որդի Արսէր, Քալաբալենց Գրիգորի որդի մաշկակար էլում, Սիւմոնի որդի Պալի Խուչազենց, Մուխրաթաղեցի Պահալիսի որդի մղտսի Գրքիկ և այլն: Հատկանշական է, որ բերված օրինակները արտացոլում են քաղաքային արհեստավորական խավի ներկայացուցիչների անվանումները և դրանով պայմանավորված ուղեկցող բառերի հիմաստային որոշակիությունը: Վերջիններիս առկայությունը արտացոլում է քաղաքային բնակչության սոցիալական անժօրինակությունը: Ընդ որում, բնակչության այս խավը, գտնվելով ուսական կայսրության մեջ տարածվող ձևերի ազդեցության տակ, միևնույն ժամանակ հող նախապատրաստեց եռանդամ բանաձևի հետագա արմատավորման համար՝ այլերի մեջ:

Հանդիպում են այդ շրջանի համար արտասովոր հետևյալ դեպքերը՝ Գրիգոր Հովակիմեան, էոաքել Խաչատուրով, Հարութիւն Մարտիրոսով, Կարապետ Օվանեսով, Զուղայեցի Ալավերդիով: Քանի որ նորման դեռևս հասունացած չէր, Երևանի և նրա արվարձանների բնակչության անվանման մեջ աչքի է ընկնում սման պայմանների համար բնորոշ ուղեկցող

¹⁷ Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արևիվային վավերագրեր, կազմ. Հ Արրա Նամյան, Երևան, 1941

բառերի բազմազանությունը և բանաձևերի անկայունությունը: Եթե հայաշատ մյուս վայրերում որդի բառը միջադաս դիրքով գերակշռություն էր ստանում, Աստրախանի հայությունը օգտագործում էր այդ բառի դիտարբերակը, իսկ լեհահայոց համար որդի-ն ետադաս դիրքում մասնիկի արժեք է ստանում, ապա Երևանում և նրա շրջակայքում զգալի տարածում ունեին դուստր, կողակից, բաժին, հայր, մայր, քույր, մերձավոր բառերը՝ Աղամալ հայր Կարբեցի Մկրտչի, Աղուտ մայր Լոյսի, Անախաթուն քույր Պարսիսի որ է բաժին Ալիխանի, Ասլեր մերձավոր Լոյսի, Ավետ ամուսին Նազուխանի, Մաքուր կողակից տէր Կարապետին: Նրման կաղապարների հանդես գալը ինչ-որ չափով պայմանավորված է արձանագրությունների բնույթով, բայց սա միակ բացատրությունը չէ, քանի որ առաջին անգամը չէ, որ տապանագրերից օրինակներ են բերվում: Այստեղ կարևորը լեզվական այն իրադրությունն է, որ առկա էր XVII դարի վերջում և XVIII դարի սկզբներին քաղաքային խոսակցական լեզվի սահմաններում:

§ 7. Արևմտյան Հայաստանում, ըստ մեր ունեցած տվյալների, անվանման բանաձևերի մեջ գերակշռում են երկբաղադրիչները, որոնց երկրորդ բաղադրիչը կազմված է կամ -եան կամ -ճի, (-չի, -ջի) ածանցներով: -եան ածանցով կազմությունները հատկանշական են քաղաքային բնակչությանը և գլխավորապես հոգևորականներին ու մտավորականությանը՝ Մանուկ Տորսունեան, Աբրահամ Ղարաօղլանեան, Առաքել Շահամիրեան, Հարություն Պենկլեան, Զաքար Նորատունկեան, Եղիա Մարտիրոսեան, Հովհաննես Սիմոնեան, Մովսես Շիրինեան և այլք: Բանաձևի այս դրսևորումը արգասավոր է և տարածվելու նկատելի միտում է ցուցաբերում:

Երկանդամ բանաձևերում հանդիպում են նաև երկրորդ բաղադրիչը -ցի (-ացի)-ով ձևավորված տարբերակներ՝ Հարութին Օրթագեղցի, Ղազար Մոկացի, Աստվածատուր Ֆահրապատցի, Ղազար Ակնեցի, Մանուկ Բալուցի:

Եռանդամ բանաձևերը կազմված են հիմնականում վերոհիշյալ երկու տարբերակների համադրությամբ՝ Հարություն Մուրատեան Ապուշխցի, Անտոն Աստվածատուրեան Բերիացի, Եղիա Կիւլապեան Գաղատացի, Պետրոս Ալեքսանեան Կամարակապցի, Աբրահամ Արծիւեան Այնթապցի:

Թուրքական ազդեցության հետևանքներից էր բանաձևի -օղլու բառ-ածանցի օգնությամբ կազմված երկրորդ բաղադրիչը՝ Մաղաքիա

Սամուէլօղլու, Պետրոս Ուզունօղլու, Հայրապետ Տիւկերօղլու, Միքայել Զուռնաճիօղլու, Ստեփան Նալպանտօղլու, Հերոնիմոս Ծգնավորօղլու, Հակոբ Սվաճիօղլու, Մուրատ Մուրատօղլու: Արհեստավորներին և քաղաքային աշխատավորութեան մյուս ներկայացուցիչներին նույնպէս հատուկ են երկանդամ բանաձևեր, ուր երկրորդ բաղադրիչը ձևավորվում է -ճի (-չի, -ջի) ածանցով՝ Ստեփան Պասմաճի, Հովհաննէս Սահաթ-ճի, Եսայի Փեշտիմայճի, Սերոբէ Օթուրաքչի, Քերոբէ Գուլումճու: Հանդիպում են նաև Մեծմատնէան, Կապուտիկէան, Խոզարածեան մականվանական ծագում ունեցող ազգանուններ (հմմտ. նաև միևնույն անձը նշող Զուպանյան-Հովուէան կրկնակ ազգանունը):

§ 8. Քննարկվող հարցի լուսաբանման առումով կարևոր նշանակութիւն է ունեցել Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ, որի հետևանքներից մեկը Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից դաշի թվով հայերի վերարձակեցումն էր Արևելյան Հայաստան: Անվանման բանաձևերի միասնականացման բնագավառում տեղի ունեցող տեղաշարժերը ընդգրկեցին նաև ժողովրդի այդ հատվածները: Մեր ունեցած աղբյուրները թելադրում են XIX դ. բաժանել երեք ենթաշրջանի՝

1. 20-ականի վերջերից մինչև 40-ական թվականների կեսերը, երբ այլերի դանդաղացումն մասը հարմարվում էր նոր պայմաններին:

2. 40-ականի կեսերից մինչև 70-ական թվականները. հայերի անվանման եռանդամ բանաձևը անցնում է ձևավորման գործընթաց և շրջանի վերջում երևան է գալիս ազգանունը իբրև նոր մարդանվանական երևույթ:

3. 70-ական թվականներից մինչև դարի վերջը: Արմատավորվում է և հասարակութեան կողմից լայն ընդունելութեան արժանանում եռարտադրիչ բանաձևը: Նկատվում է -եան և -եանց ածանցների որոշակի «մասնագիտացում»: Առաջինը՝ հայրանուն, երկրորդը՝ ազգանուն կաղմկու համար: Նույն ժամանակ, կասկած ազգանվան հաստատման և իրավաբանական վավերացման հետ, վերջինս աստիճանաբար սկսում է ձևավորվել -յան ածանցի օգնութեամբ: Ազգանունների պարտադիր և դանդաղացումն ձևաբերում: Ազգանունը աստիճանաբար դառնում է իրավական փաստ:

Անցնենք յուրաքանչյուր շրջանին վերաբերող նյութերի քննութեանը:

Առաջին շրջանում Երևանի և նրա արվարձանների բնակչութեան անվանման բանաձևերում հատկապէս մինչև 20-ական թվականների կեսերը նկատելի են դեռևս նախորդ դարին հատուկ բանաձևերի գործածու-

թյուն՝ Պարսամի որդի Ազարի, Գիրումի որդի Բարդամ, ինչպես նաև Մուրատի Ակօբճան, Պապի Վարդանի որդի Սարգիս և այլն:

Երևում են երկանդամ և եռանդամ բանաձևեր: Երկանդամների երկրորդ բաղադրիչները գլխավորապես հայրանուններ են -եան և երբեմն -օվ ածանցներով՝ Հարութին Յոհաննիսեան, Սահակ Մելիքեան, Բարսեղ Գեղամեան և Ավետիս Ճանիբեկով, Ըստեփան Գալուստով, Գրիգոր Մանուչարով, Սահակ Մանդրոսով, Ազալո էնակօլօփով: Բանաձևի նոր բաղադրիչի տեղը այնքան էլ հաստատուն չէ՝ «Ես Մկրտիչս վկայ Մարութեան», «Ես Գալուստս Ազամեան վկայ», Ավետեան թարգի Յակոբ, իսկ որ ավելի հետաքրքիր է, որոշ դեպքերում այդ երկու ածանցները բաշխվում են որպես հայրանվան և ազգանվան ածանցներ՝ Աղամալ Գրիգորեան Եղիզարով, Շաղկուլի Շահնազարեան Գուլազով, Յուսեփ Սարուխանեան Մանուչարով: Արհեստավորների համար հաճախ, ինչպես և մինչ այդ, բավարարվում են արհեստի և անձնանվան նշմամբ՝ զարգար Պողոս, գդակկար Սարգիս, ոսկերից (չ) Կոստանդ, զազազ Միքայել և այլն: Ըստ Կարինից ունեցած մեր տվյալների արձանագրվում է բանաձևի և նրա բաղադրիչների բազմազանություն՝ Գէորգ Պաղղասարեան Պայպուրտցի, Մեռկել Եօքսիլյեան, Թումաս Արաբկերցի Քեօսեան, Հարութին Գիւմուշխանցի, էզնատոս Փսօեան, Ղազար Ստեփոեան, էզեկ Թիւթիւնճի, Սողոմեան Կարապետ Մանուելօղլեանց:

Նոր պայմանների բերումով -եան-ով կազմված բաղադրիչը օրինաչափորեն վերջադաս դիրք ունի: Ներսիսյան դպրոցի շրջանավարտների և բարեկարգության կոմիտեի անդամների վերաբերյալ նյութերում անվանման բանաձևի երկրորդ բաղադրիչները ունեն հետևյալ տեսքը՝ Աբովեան, Նազարեանց, Արարատեան, Շերմազանեան, Հովնանեան, Մադաթեան, Արդութեան, Ղորղանեան, Մնացականեան, Աբիսողոմեան: Նույնիսկ 1831 թ. այդ դպրոցի ուսուցիչների ցուցակի մեջ երկրորդ բաղադրիչները կազմվում են նույն սկզբունքով՝ Շահնազարեան, Տէր-Ալեքսանդրեան, Մանդինեան, Պողոսեան, Սարգսեան: Պատկերը կրկնվում է Երբ ժանոթանում ենք 40-ական թվականներին արտասահմանում կրթություն ստացած մի շարք գործիչների անվանման բանաձևերի երկրորդ բաղադրիչների հետ՝ Ռուսինեան, Շիշմանեան, Վահանեան, Նեվրուզեան, Արամեան, Տավուտեան, Նազարեթեան: Սա ժամանակի հրամայական պահանջն էր, սակայն որոշ կազմություններ՝ Գէորգ Պաղղասարեան Պայպուրտցի դեռևս խոչընդոտում էին նշված միտումին: Այս առումով ուշարժան է հետևյալ փաստը: Կալկաթայի հայկական գաղթօջախում

արձանագրված Աւետ Զնթլումեանը կամ Զնթլումեան Աւետը միևնույն ժամանակ կրում է նաև Զընթլում Աւետ Խօջիջանեան, Աւետիս Հովհաննեսի Զընթլում Աւետեանց անվանումները¹⁸: Նոր միտումները որոշ ուշացումով արձագանք էին գտնում նաև Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայերի շրջաններում, սակայն սահմանափակ արգասավորութամբ: Կ. Պոլսում շրջանառության մեջ գտնվող անվանման բանաձևերում նկատելի են համանման միտումները¹⁹: Ըստ որում, բերվող փաստերը նկատելի լույս են սփռում Արևմտահայաստանում դարի վերջին բառորդում ձևավորվող ազգանունների հիմքերի վերհանման խնդրի վրա: Բանաձևերը երկանդամ են: Քաղաքային արհեստավորության համար օրինաչափ էր Ա+Զբ (-ճի, -ճու) բանաձևը (հմմտ. ստորև նույն օրինաչափությունը Երևանում)՝ Գույումճու, Գաբամճի, Ալաճաճի, Ճեվահիրճի, Սրմաքեշ, Տողրամճի, Քիւրքճի, Սօֆճի, Ճիզմեճի, Օթուրաքշի, Պոսմճի, Քերևտեճի, Զիլինկիր, Բազարճի, Սահաթճի, Սէտեֆշի, Մինթաճի, Պարխանճի, Գազեզ, Թերզի, Պերպեր, էնքսերճի, էսկիճի, Միսաճի Գազանճի, Միստճի, Ֆինճանճի, որոնք հետագայում դարձան ազգանվանակերտ հիմքեր:

Եթե շարունակենք մեր դիտումները գաղթօջախների շրջանակներում, ապա Տրանսիլվանիայի հայության մոտ նկատվում է բանաձևերը մի կողմից տեղական կաղապարով կազմելու, մյուս կողմից ինչ-որ լատիով ազգային նկարագիրը պահպանելու միտում: Օրինակ, Հակոբ Բըլըկլիու, Վարդան Փոփովիչ, Կարապետ Իմրրիլյանու, Աստվածատուր Ռոմաշքա, Մարտիրոս Բադրուբանեան, Աւտվածատուր Նուրիճանեան: Այստեղ ականատես ենք լինում արդեն նկատված երևույթին: Վարդան Փոփովիչ կաղապարը վկայում է երկբաղադրիչ բանաձևի պահպանման միտումի մասին: Վերջինս իրավաբանորեն արմատավորվում էր բնաշխարհում և, բնականաբար, իր ազդեցությունն ուներ այլ հայաշատ վայրերում: Սակայն միևնույն անձը տեղական պայմաններում ընդունում է այդ վայրերի համար բնորոշ բանաձևի երկրորդ բաղադրիչ՝ Փոփովիչ: Հմմտ. նույնպես՝ Բըլըկլիու, Իմրրիլյանու, Ռոմաշքա: Հանդիպում են բանաձևերի երկրորդ բաղադրիչը առանց ցուցիչի օգտագործելու դեպքեր ևս՝ Կարապետ Անուշ, Հակոբ Մելիք, Թադեոս Թոսուն, Իևողոր Պալասան, ինչպես նաև Մանուկ Իվանթօղլու, Գաբրիել Աջեմօղլու: Վերջին օրինակները վկայում են, որ Տրանսիլվանիայի հայության

¹⁸ ԲՄ, 1960, 5, էջ 534:

¹⁹ ԲՀԱ, 1961 թ 1:

որոշ ներկայացուցիչներ հետևում էին ոչ միայն բնաշխարհի, այլև պոլսահայությանը հատուկ միտումներին: Այսպիսով, գլխավոր գիծը, որ ձևավորվեց նկարագրված շրջանում, հետևյալն էր՝ բանաձևի այն անդամը, որը ձևավորվում էր -եանց, -եան, -ճի (-ջի, -չի), օղու ածանցների միջոցով, բնորոշվում էր երկու առանձնահատկությամբ՝

1. այն ծառայում էր անձի անունը անհատականացնելու և 2. անձնանվան նկատմամբ գրավում էր ետադաս դիրք: Նշված առանձնահատկությունները ուղի էին հարթում ավելի կատարյալ՝ եռանդամ բանաձևի արմատավորման համար: Եռաբաղադրիչ բանաձևը հիմնականում դրսևորվում էր Արևելյան Հայաստանում և Ռուսաստանի հայաշատ վայրերում, չգտնելով, սակայն, իր վերջնական ձևավորումը՝ Մովսես Զաքարեան Արղութեանց, Խաչատուր Լազարեան Եղիազարեանց, Վասիլ Հովսեփեան Բեհբուդեանց, Գեորգ Մելիքսեթեկեան Խուպովեանց, Ինչպես նաև Խուպով և սրանց հետ զուգահեռ՝ Սիմէօն Սարգիսեան Իվանով, Ստեփան Նահապետեան Սմայաթով:

Երկրորդ շրջանի սկզբում ակնհայտ էր բանաձևի երկանդամ կառուցվածքը: Բաղադրիչներից մեկը անձնանուն էր, իսկ մյուսը՝ մասնավորող իմաստով ածանցյալ անդամ՝ Գրիգոր Ալեքսանդրեան, Մանուկ Ծաղիկեան և այլն: Երկբաղադրիչ բանաձևը ուշադրության է արժանանում հետևյալ նկատառումներով.

1. Սոցիալական տեսակետից այն շեղոք էր այդ պատճառով համընդհանուր:

2. Բանաձևի երկբաղադրիչ կազմը, այնուամենայնիվ, բավարար չէ անձի միարժեք անհատականացման համար:

3. Բանաձևի երկրորդ բաղադրիչի ածանցումը թելադրվում էր բառագուգորդման պայմաններով և ծառայում էր պատկանելության իմաստ դրսևորելու համար: Վերջինս կարող էր տարբեր իմաստային բեռներվածություն ունենալ՝ պատկանելություն ըստ տոհմի, գերդաստանի, վայրի, գործունեության բնույթի: Ածանցումն իր հիմքում ուներ երկու չհատվող սկզբունքներ. ա) բարբառային և բ) մասնագիտական-ժարգոնային (վերջինս, այնուամենայնիվ, սոցիալական պատճառաբանվածություն ևս ուներ):

Նշված նկատառումներից առաջինը տարածվում էր ամբողջ հայության վրա: Մեր տվյալներով («Կոունկ»-ի 1861—1863 թթ. բաժանորդների ցուցակ, «Զամբո»-ին նպաստ տվողների ցուցակներ և այլն) երկանդամ բանաձևերը կիրառվում են հետևողականորեն: Եթե կան տար-

բերականեր, ապա դրանք զուտ շարադասական են՝ Գրիգոր Խաչատուրեանց, Ներսես Կրասիլնիկեանց և Սվեչնիկեանց Կարապետ:

Նույն երևույթը նկատվում է նաև գաղթօջախներում՝ Յովհաննես Կավթանճեան, Աստուածատուր Սարըպետրոսեան (Լիվոնո), Մանուկ Գալուստովիչ, Իվան Գլուշկևիչ (Մոզիլյով-Պոդոլսկ), Յակոբ Յովասափեան և Այվազեան Գրիգոր (էրզրում):

Երրորդ բաղադրիչը, որ ծառայում էր անձի լիակատար անհատականացմանը, դեռևս ձևաբանորեն և իմաստաբանորեն հաստատուն չէր: Այս հանդամանքի դրսևորումները նույնպես հատկանշական էին ամբողջ հայության համար: Երրորդ բաղադրիչը ուներ և՛ ձևաբանական, և՛ իմաստաբանական տարբերակներ:

Ձևաբանական տեսակետից մենք հանդիպել ենք երրորդ բաղադրիչին հատուկ հետևյալ ածանցներին՝ -եան, -եանց, -ով, -ովիչ, -սկի:

Իմաստաբանորեն երրորդ բաղադրիչները հիմնականում տոհմանուններ և տեղանուններ են:

Երբեմն ոչ-անձնանուն բաղադրիչները գործածվում են իբրև բնորոշիչներ՝ բեկ, մելիք, աղա, միրզա, վարդապետ, քահանա, նկարիչ, որոնցից առաջինը մեր դիտարկված ժամանակահատվածում գրվում է միայն անձնանվան, երկրորդը՝ հայրանվան վրա, իսկ մյուսները միջադաս են և ի տարբերություն նախորդների գրվում են առանց գծիկի:

Քննարկվող դեպքերը անմիօրինակ են երբորդ բաղադրիչի ճշգրիտ սահմանման առումով.

ա) Եռանդամ բանաձև, որի սահմաններում դուգորդվում են -եան և -եանց ածանցներով կազմությունները: Այստեղ կարելի է անվերապահորեն պնդել, որ զուգորդման երկրորդ բաղադրիչը ձևավորվում է եան ածանցի օգնությամբ, իսկ երրորդ՝ բնորոշիչ բաղադրիչը՝ -եանց-ի: Օրինաչափական է, որ երկանդամ բանաձևի բաղադրիչները սերտ ամբողջություն են կազմում, իսկ բնորոշիչը կարող է այդ ամբողջության նկատմամբ զբաղեցնել աջ կամ ձախ դիրք: Օրինակ՝ Գրիգոր Աբրահամյան Շատիեանց, Վասիլ Տեր-Ստեփանոսեան Եղիանց, Արտեմ Սիմոնեան Պետրոսեանց և Յովհաննիսեանց Ներսես Գեորգեան, Այվազեանց Յովհաննես Թումասեան, Պուշկարեանց Յարութին Կարապետեան, Աբազյանեանց Մկրտիչ Աբազյանեան և այլն:

բ) Երրորդ՝ բնորոշիչ բաղադրիչի նշանակությունն ու տրամաբանությունը նույնն է, ինչ որ ա) կետում: Նկատվող տարբերակները վերաբերում են ոչ թե բնորոշիչ բաղադրիչի էությունը, այլ պայմանավորված

են տեղային (բարբառային) առանձնահատկություններով: Աչքի են ընկնում տեղական պայմաններին հարմարվելու դրսևորումները, որոնք մասնավոր դեպքերում ներկայացված են զուգահեռ ածանցումներով՝ բնիկ և փոխառյալ՝ Գեորգ Մելիքսեդեկեան խուպովեանց կամ խուպով: Հայտնի է, որ հասարակական պայմանների ճնշման տակ այս դեպքում ունենք Պոռշյան—Գուբով—խուպով—խուպովեանց անցումը: Գտնում ենք, որ նման դեպքերի շարքը պետք է դասել նաև Սիմեոն Սարգիսեան Իվանով և Յովսեփ Արտեմիչ Խեչումեանց օրինակները: Բերված փաստերը ցույց են տալիս, որ անվանակազմական ածանցների փոխառությունը վերաբերում է բանաձևի երրորդ, նույնպես և երկրորդ բաղադրիչներին: Հմմտ. նաև Գրիգոր Իվանով Խինգանոսով, Ֆեոդոր Խրիստափորով Գալուստովիչ: Որոշ դեպքերում բավականին դժվար է որոշել բանաձևի ազգային բնույթը, ընդհուպ մինչև կրողի ազգային պատկանելությունը: Այսպես, Գրիգորի Նիկոլայևի Չաեկովսկի օրինակը դասվում է հայկականների շարքը զուտ արտալեզվաբանական տվյալների հիման վրա: (Այս անձի անունը տեղ է գտել այն անվանի հայերի շարքում, որոնք ստորագրել են կաթողիկոսին ուղղված մի նամակ 1874 թ.):

Տեղական պայմանների դրսևորումներ են նաև Արևմտահայաստանում արձանագրված դեպքերը՝ Ստեփան Վաղոեան ի Իշխան, Գրիգոր Պողոսյան ի Բեգեռիչ, Գաբրիել Առաքելեան Սեբաստացի, Մարգուանցի Քիրեմիճեան Յակոբ:

Մեզ հայտնի դեպքերից միայն մեկում երրորդ բաղադրիչի ձևավորումը համընկնում է երկրորդի հետ՝ Դավթեան Մարգար Դավթեան (Ագուլիս): Ըստ երևույթին այն կապվում է տվյալ անձնավորության առանձնահատկությունների հետ, քանի նա հանդես է գալիս նաև Դուրգարեան Մարգար Դավթեան անվան տակ:

Ինչ վերաբերում է երկրորդ բաղադրիչին, ապա, ինչպես նկատել ենք, իր ձևավորման առումով այն նկատելի հետևողականություն է հանդես բերում՝ նրան բնորոշ է -եան ածանցով կազմված լինելը: Ընդ որում, այդ ձևավորումը հատուկ է թե՛ բնաշխարհին, և թե՛ Արևմտյան Հայաստանին և գաղթօջախներին: Առանձին շեղումները նորմայից պատճառաբանված են տեղական պայմաններով: -եան-ով և -եանց-ով ձևերի գործառական տարբերակումը նույնպես հետևողական բնույթ ունի: Արևելյան Հայաստանում և Ռուսական կայսրության սահմաններում -եան-ը օրինաչափորեն երկրորդ բաղադրիչ է կերտում, իսկ -եանց-ը՝ երրորդ: Մեզ հանդիպել է միայն մեկ դեպք, որ հակասում է ասվածին: Այս ան-

դամ և՛ երկրորդ և՛ երրորդ բաղադրիչները ձևավորված են -եանց ածանցի օգնությամբ: Հնարավոր է երկու մեկնաբանություն: Այն կամ վրիպակ է և կամ շեղում նորմայից՝ Սերգեյ Յովհաննիսեանց Աթայեանց:

Գիտարկվող շրջանը, ըստ երևույթին, վճռական լեզավ երկանդամ բանաձևի (անձնանուն + հայրանուն) վերջնական ձևավորման համար: Ասվածը վերաբերում է ոչ միայն և ոչ այնքան հարցի սոցիալական կողմին, որքան բառակազմական՝ երկրորդ բաղադրիչի համար «մասնագիտանում» է -եան ածանցը, մինչդեռ երրորդ բաղադրիչի ածանցման և բանաձևում նրա տեղի հարցը իրավաբանորեն և ձևաբանորեն մնում էր անորոշ և չնորմավորված:

Հետագա ընթացքը հիմնականում կապված էր նշված բաղադրիչի յերի որոշման հետ: Ինչ վերաբերում է XIX դ. վերջին շրջանին, ապա այդ հաստատվածում մի նոր քայլ կատարվեց երրորդ բաղադրիչի կայունացման գործընթացում:

Ըստ մեր ունեցած նյութերի, երկանդամ բանաձևի երկրորդ բաղադրիչը, այս շրջանից սկսած, քաղաքային բնակչության և գլխավորապես մտավորականության շրջանում բացառապես ազգանվան իրավունք ձեռք բերեց (համտ. Գրիգոր Արծրունու թաղման արարողությանը ժամանած պատգամավորների ցուցակը, «Մշակ», 1892 թ., № 147): Հանդիպում ենք նաև -եանց-ով ձևավորված բաղադրիչների: Նրանք բնութագրվում են երկու առանձնահատկությամբ.

1. Կիրառվում են -եան-ով երկրորդ բաղադրիչի բացթողման պայմաններում:

2. Նրանց աղբյուրը գավառական ծագում ունի: Այսպես, -եանց-ով ձևավորված բաղադրիչներ են կրում Զաքաթալայի, Աբասթումանի, Աշտարակի, Ագուլիսի ներկայացուցիչները:

Նշված հակադրությունը կարող է հիմք ծառայել եզրակացնելու, որ երրորդ բաղադրիչը, որը -եանց-ով ձևավորվելու որոշակի միտում է անդես բերում, եռանդամ բանաձևի ազգանուն բաղադրիչի նախատիպ է: Ստեղծվեց բավականին բարդ իրավիճակ: Մի կողմից հաստատունությամբ բնութագրվող երկանդամ բանաձև -եան-ով ձևավորված անդամով, մյուս կողմից -եանց-ով ձևավորվելու միտում՝ Պողոս Յովսեփեան Ղուկասեան, Թամարա Աւետիսեան Յովհաննիսեան: Նշված երկակիությունը ընդգրկեց նաև XIX դարի առաջին երկու տասնամյակները: Ըստ երևույթին անհրաժեշտ էր պետական միջամտում (օրինակ, անձնադրերի առկայություն), որպեսզի գործընթացը վեջնականապես ավարտվեր և հանգեր Հայկ. ՍՍՀ-ում գործող եռաբաղադրիչ բանաձևին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ազգանունն հարույթը հայերենում ինքնուրույն կազմություն է: Այն ձևավորվել է անցյալ դարի երկրորդ կեսին, երբ մեզանում դեռևս կենդանի էին «ազգ» արենակցական խմբի ավանդույթները: Ինչպես նշում է է. Տ. Կարապետյանը (... «Ազգ» բառը հայերենում ունենալով շատ իմաստներ (ժողովուրդ, տոհմ, ցեղ, աեսակ, սեռ և այլն), ժամանակի ընթացքում մտավ շրջանառության մեջ ... մերձավոր արենակցական կուլեկտիվ իմաստով...)¹:

Նույն հեղինակը ընդգծում է նաև, որ վերոհիշյալ ըմբռնման համար կիրառվել են նաև տոհմ, ազգատոհմ, ցեղ, տուն բառերը, որոնք անվանման հայկական բանաձևերում նկատելի հոմանիշություն են հանդես բերում, երբև՛ն փոխարինելով միմյանց:

§ 1. Ընդհանուր անձնականագիտության կողմից որևէ ժողովրդի մոտ ազգանունն ունենալու հին փաստեր չեն արձանագրվում, Ա.—Ֆ. Պոտտի վկայությամբ Արևմուտքում ազգանունները սկսեցին համընդհանուր տարածում ստանալ XIV դ. սկսած²: Ազգանվան առաջին օրինակներ, սակայն, երևում են դեռևս XI դ. Հյուսիսային Իտալիայում, որտեղից աստիճանաբար տեղափոխվում են Ֆրանսիայի հարավ, ուր առաջինը ազգանուններ են ձեռք բերում ավատատերերը, քանի որ ժառանգական հողատիրությունը պահանջում էր նաև ժառանգական անուն: Ազգանվան ընդունումը շարունակում են բուրժուաները: Գերմանիայում և Անգլիայում ազգանունն ընդունելու սովորությունը տարածվեց Ֆրանսիայից: Մասնավորապես Գերմանիայում ազգանունների լայն տարածումը կապվում է XII—XIII դդ. հետ, սկզբում՝ խոշոր առևտրական կենտրոններում: Այսպես, XIII դ. վերջերին Ստրասբուրգի բուլոր բնակիչները ազգանուն էին կրում, իսկ Մայնի-Ֆրանկֆուրտում,

¹ Э. Т. Карапетян, Родственные группы «азг» у армян, Ереван, 1966, էջ 19.

² В. А. Никонов, Имя и общество, М., 1974, էջ 159

և թե 1312 թ. դեռևս բյուրգերների 66% -ը ազգանունն չէր կրում, ապա 10 տարի անց, արդեն՝ 34% -ը: Այնուհետև ազգանունները տարածվում են դեպի հյուսիս, շարունակելով ընդգրկել առաջին հերթին բարձր դասի ներկայացուցիչներին, որովհետև որոշ հետազոտողների կարծիքով գերմանացի գյուղացիների կողմից ազգանունների ընդունումը շարունակվում էր նույնիսկ XIX դ.:

Ազգանունը Անգլիա է թափանցել նորմանների միջոցով: Ճիշտ է Ռիսին գտնում է, որ ազգանունները երևացել են այնտեղ և մինչև նորմանները, սակայն դրանք ժառանգաբար չէին անցնում: Առաջին ժառանգական ազգանունները երևում են XI դ. երկրորդ կեսին, իսկ գործընթացը ավարտվում է XV դ. սկզբներին: Ուելսում և Շոտլանդիայում ազգանունները շարունակում են ձևավորվել ընդհուպ մինչև XVIII դ. վերջերը: Եվրոպական մյուս երկրներում՝ Դանիա, Շվեդիա, Հունգարիա, Չեխիա, Լեհաստան ազգանունները սկիզբ են առնում XIV—XV դդ., իսկ դրանց զանգվածային ընդունումը հասնում է մինչև XIX դ. սկզբները: Ճապոնիայում ազգանունը սահմանվել է 1868 թ. հակաֆեոդալական հեղափոխությունից հետո: Թուրքիայում և Իրանում՝ մեր դարի 20—30-ական թվականներին, Եգիպտոսում՝ 50-ական թվականներին, Թունիսում՝ 1959 թ.³:

Հետազոտությունները ցույց են տվել, որ «Ռուսական ազգանունների ձևավորումը կատարվել է առավելապես XVI—XVIII դդ.: Սակայն որոշ ազգանուններ ավելի վաղ ծագում ունեն, մյուսները ծագել են միայն XIX դ.»⁴: Վ. Ա. Նիկոնովը գտնում է, որ. «Ազգանունների, իբրև անձնատնվանական կարգի, ձևավորումը երկարատև գործընթաց է: Ռուսաստանում այն ձգվեց վեց հարյուրամյակ»⁴: Այնուհետև ներկայացնում է ազգանունների ձևավորման շրջանաբաժանումը. «... Իշխանական և բոյարական ազգանունների համար՝ XIV—XVI դդ., ազնվականների համար՝ XV—XVII դդ., առևտրականների՝ XVII—XIX դդ., գյուղացիության համար՝ XVIII—XIX դդ.»⁵: Ուկրաինական ազգանունների ձևավորումը սկսվել է XVI—XVII դդ. և հիմնականում կայունացել XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին⁵: Այսպիսով, ազգանունների ամենավաղ փայտությունները կապվում են XI դ. հետ (Իտալիա), իսկ գործընթացի ավարտը՝ XVIII—XIX դդ. հետ (Գերմանիա, Ուելս, Շոտլանդիա, Դանիա, Շվեդիա, Հունգարիա, Չեխիա, Լեհաստան, Ռուսաստան, Ուկրաինա):

³ В. А. Никонов, До фамилий Антропонимика, М., 1970 էջ 85.

⁴ В. А. Никонов, Имя и общество, М., 1974, էջ 179—180

⁵ նույն տեղում, էջ 167—170:

§ 2. Հայկական ազգանունը կարելի է սահմանել իբրև արական արե-նակցական կապով միավորված մարդկանց ընդհանուր անուն: Հայկա-կան ազգանունների ձևավորման ընթացքին հետևելիս Լլնում ենք այն բանից, որ ազգանունը պետք է համապատասխանի ժառանգաբար անց-նելու և հանրայնորեն չեզոք լինելու պայմաններին:

Ազգանունների ձևավորման և գործառույթյան պատմությունը ցույց է տալիս, որ նշված գործոններից մեկը կամ մյուսը, իսկ երբեմն նաև երկուսը հաճախ խախտվում են:

Մ. Օրմանյանը և Հր. Աճառյանը ուշադրություն են դարձնում այն փաստի վրա, որ VI դ. ներսես Բ Բագրևանդացու թուղթը ստորագրող-ների մի մասը «... փոխանակ իւր նախարարական ցեղին՝ պարզ հայ-րանունով յիշուած են»⁶: «VI դ. հայերը պարսիկներից վերցնում են հոգ-նակի ան, Լան (յան) մասնիկը և դարձնում են նրանց նման ազգա-նուն»⁷:

Մեջբերումները վկայում են, որ սոցիալական գործոնին զուգընթաց առկա է նաև ձևաբանականը: Նշված հեղինակների մոտ երկանդամ բա-նաձևի անձնանվանական բաղադրիչը տարբեր մեկնաբանություն է ստանում՝ հայրանուն և ազգանուն: Մեր համոզմամբ այստեղ խնդիրը զուտ եզրույթային չէ: Միևնույն միավորին տարբեր անվանումներ տա-լը բխում է նրա էությունից: Հանդես գալով իբրև տարբերակիչ, այդ բաղադրիչները բառակազմորեն ևս բազմազանություն են հանդես բե-րում: Տոհմին, հայրանվանը, տեղանվանը, տիտղոսին, կոչմանը դիմե-լիս հետապնդվում էր մեկ նպատակ՝ անձի անհատականացում: Ինքը՝ երկրորդ բաղադրիչ կրողը, այն չէր նույնացնում հայրանուն, առավել ևս ազգանուն ըմբռնման հետ: Մայրահեղ դեպքում այդ բաղադրիչը կոչ-ված էր ընդգծելու կրողի հանրային վարկը:

Մեր խնդիրներից մեկն ենք համարում ուսումնասիրել հարցի այն կողմը, որը վերաբերում է անվան բառակազմությանը, մնալով նախորդ գլխում ընդունված շրջանաբաժանման սահմաններում:

Խնդրի լուծման ընթացքում հիմք ենք ընդունել հետևյալ երկու սկզբունքները.

1. Անվանումը յուրաքանչյուր դեպքում (տվյալ անձի համար) ունի մեկ հաստատուն տարր՝ անձնանուն:

⁶ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, Կ. Պոլիս, 1912, էջ 549.

⁷ ՀԱՆՐ, հ. 6, էջ 359.

2. Տարբերակիչների բառակազմական ձևավորումը բնութագրվում է արգասավորության տարբեր աստիճաններով:

Այս սկզբունքների հետևողական կիրառումը հնարավորություն է տալիս վեր հանել հայկական մարդանվանական համակարգի զարգացումը:

§ 3. Ստորև ներկայացվող աղյուսակը, որ ընդգրկում է V—VII դդ. տվյալները, կազմված է հիշատակված դրույթներին համապատասխան: Օգտվել ենք հետևյալ աղբյուրներից.

«Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901:

Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971.

Ուսումնասիրվող միավորների վերաբերյալ պատկերի լիակատարությունը ապահովելու նպատակով հաշվի են առնված նաև «Գահնամակի» տարբեր վարկածներում պարունակվող նյութերը: Օրինակները ճշտվել և համեմատվել են Հր. Աճառյանի, Մ. Օրմանյանի և Հայկական սովետական հանրագիտարանի տվյալների հետ:

Աղբյուրները թույլ են տալիս պնդելու, որ մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն են ընձեռում ներկայացնել երևույթի ամբողջական պատկերը:

§ 4. Նկարագրությունը ամբողջացնելու համար ներկայացնում ենք նաև Ներսես Բ Բագրևանդացու «Թուղթը» ստորագրողների ցուցակը (աղյուսակ 4): Աղյուսակ 1-ի նյութերը, ըստ էության արտացոլում են քննարկվող շրջանի անձնանվանական համակարգի կանոնավորված երևույթները: Այս ենթադրությունը թելադրված է նշված աղբյուրների ցանկով: Գոնե Ն. Ադոնցը ելնում է այն դրույթից, որ իր կողմից դիտարկվող փաստերը ժամանակին հատուկ նորմատիվ երևույթներ են: Այս ամենը մեզ իրավունք է տալիս ենթադրելու, որ աղյուսակի տրվյալները միարժեք կերպով ներկայացնում են ժամանակաշրջանի մարդանվանական համակարգը: Աղյուսակ 1-ը կազմված է հետևյալ սկզբունքներով:

Ա. Տվյալները բերվում են ըստ տոհմային պատկանելության, սրտնցից յուրաքանչյուրը ներկայացված է արաբական թվանշաններով: Հայկական այբուբենի տառերով առանձնացվում են տոհմի առանձին ներկայացուցիչները:

Բ. Աղյուսակն ունի հինգ սյունակ և մեկ ծանոթություն:

Գ. Առաջին սյունակը, ինչպես և նախորդ դեպքերում, հատկացված է բանաձևի անփոփոխակ բաղադրիչին, որը օրինաչափորեն և հետևողականորեն անձնանուն է:

Գ. Հաջորդ շորս սյունակներում ներկայացվում են բնորոշիչները, ըստ բառակազմական ձևույթների:

Ե. Վերջիններս դասավորված են ըստ արգասավորության նվազման:

Զ. Ծանոթությանը հատկացված սյունակը ընդգրկում է այն ամենը, ինչ դուրս է մնում երկբաղադրիչ բանաձևի սահմաններից:

Աղյուսակը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները:

§ 5. Առաջին և ամենագլխավոր եզրակացությունը վերաբերում է անփոփոխակի առկայությունը՝ առանց բացառության: Այդ միավորները բառակազմական առումով հիմնականում պարզ են: Բնականաբար խոսքը վերաբերում է համաժամանակյա կտրվածքին: Տարժամանակյա մոտեցումը կարող է տալ այլ արդյունքներ, ինչպես ածանցման, նույնպես և ստուգաբանական տեսանկյունից: Նման մոտեցումը այս փուլում մեր նպատակներից դուրս է: Սյունակի վիճակագրական քննությունը տալիս է հետևյալ արդյունքը՝ պարզ — 5, ածանցավոր — 4, բարդ — 1:

Տէր-Տիրոց անցումը գնահատելու համար հետևում ենք Գ. Բ. Զահուկյանի մեկնաբանությանը⁸:

Բառակազմորեն բաղադրյալ ձևերի շարքը կարելի է դասել՝ Համազասպեան (Մամիկոնէից), Թաթուլ (Դիմաքսեան), Տիրոց (Բագրատունի), Բաբիկ (Ռոփսենից), Աստվածատուր (Հավենունի) դեպքերը: Նըշվածներից Համազասպեանը բնորոշ չէ քննարկվող շրջանի համար, մեր կարծիքով պետք է դիտվի իբրև նոր երևույթ հայերենի անվանակազմության համար, երբ հայրանունից -եան ածանցի օգնությամբ արական անձնանուն էր կազմվում (իզական անձնանվան համար կիրառվում էր -ուհի ածանցը): Հմմտ. «Արդ, ուրեմն վերստին կամի Համազասպեան... զՀամազասպուհի զքոյրն իւր տալ սմա կնութեան»:

Թաթուլ անձնանունը, ըստ Աճառյանի, ունի Թաթ-ուլ բառակազմական ընթացքը, ուր առկա է -ուլ փաղաքշական մասնիկը: Հմմտ. նաև Բաբ-իկ կազմությունը: Վերոբերյալ փաղաքշական մասնիկները և հատկապես նրանցից -իկ-ը իմաստային նկատելի բեռնվածության հետևանքով (ըստ երևույթին, տոհմի կրտսեր, սիրելի զավակին առանձնացնելու նպատակով) հետագայում լայն կիրառություն ունեցավ (այդ մասին տե՛ս փաղաքշական ազգանվանակերտ հիմքերին նվիրված բաժնում): Դժվար է պնդել, որ տվյալ համաժամանակյա կտրվածքում այդ ածանցներով կազմությունները իմաստաբանորեն և

⁸ Գ. Բ. Զահուկյան, Բնիկ հայերեն արմատներով..., էջ 34:

բառակազմորեն օրինաչափ էին: Մեր ձևաբի տակ եղած փաստերի սակավությունը հնարավորություն չի տալիս ավելի հեռու գնացող եզրակացությունների հանգել:

Աստվածատուր անձնանունը քրիստոնեության մուտքով պայմանավորված բառա-(անվանա-) պատճենում է: Նման պատճառաբանությունամբ կարելի է բացատրել նաև տէր-Տիրոց կազմությունը: Նշենք, որ անվանապատճենման և անվանակազմության նման միտումները հետագա դարերում բավականին նշանակալից են դառնում:

Առաջին սյունակի փաստերի մանրամասն քննությունը չենք շարունակում, քանի որ դրանք հանգամանորեն քննված են Գ. Բ. Ջահուկյանի «Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները» հոդվածում: Եթե ասվածին կարելի է որևէ բան ավելացնել, ապա այն վերաբերում է տվյալ շրջանում իրանական նշանակալից ազդեցությունը (հմմտ. ն. Ադոնց, Հր. Աճառյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Մ. Նալբանդյան), որը դրսևորվում է անձնանունների (Ներշապուհ, Մեհրուժան, Շաասպ, Ապրսամ, Խորեն և այլն) առկայությամբ: «V դ. և ավելի վաղ գործածված անձնանունների մեջ մեծ թիվ են կազմում իրանական ծագում ունեցողները»⁹: Պատճառը ոչ միայն հայկական պետական կազմավորումների, ինչպես նաև Արտաշեսյան և Արշակունյան հարստությունների իրանական ծագումն է, այլև հայ-իրանական սերտ ու բազմակողմանի շփումները (հմմտ. Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. I, Երևան, 1940): Հայոց անձնանունների համակարգում իրանական շերտը խոր արմատներ ունի, որի դրսևորումներից մեկն էլ այն է, որ նրանք ընկալվում են իբրև ածանցապես պարզ կազմություններ: Հետագա զարգացման ընթացքում այս հանգամանքը, թերևս, պատճառ դարձավ, որ այդ կարգի միավորները գործառեին իբրև մարդանվանակերտ ավելի բարձր մակարդակի միավորների (մասնավորապես ազգանունների) սերման հիմքեր:

§ 6. 2-4 սյունակները բավական հստակ արտացոլում են նկարագրվող շրջանի հայկական անվանական համակարգի ածանցավոր կազմությունների արգասավորության պատկերը: Աղբյուրներում արձանագրված են -ունի, -եաց, -եան, -էից, -եցի, -ացի, -եց, -աց,

⁹ Գ. Բ. Ջահուկյան, Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանուններ — «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 4, էջ 33:

-ական ածանցներով կազմութիւններ: Տվյալները հանգեցնում են այդ ածանցավոր կազմութիւնների խմբավորման անհրաժեշտութեանը:

Խմբավորման հիմքում ընկած է միևնույն անձի անվանման դեպքում զույգ ձևերի հնարավորութիւնը: Ածանցավոր կազմութիւնների յուրաքանչյուր զույգ՝ -ունի/-եաց, -եան/-էից, -եց (ի)/-աց (ի) հետևողականորեն և անպայմանորեն պահպանվում է: Զույգի միավորների խաչաձևումը մի այլ զույգի որևէ միավորի հետ գործնականորեն անհնար է: Յուրաքանչյուր զույգի առաջին բաղադրիչը պատկանելութեան իմաստով ածանց է, իսկ երկրորդը՝ այդ կազմութիւնների հոգնակի բացառականի թեքույթ: Այս երևույթը առանձնակի ուշադրութեան է արժանանում, քանի որ ժամանակի ընթացքում նկատվում են անվանագիտական համակարգի զարգացման առումով հետևյալ երկու երևույթները.

1. Աստիճանաբար աղոտանում, և ի վերջո, դադարում է հարաբերակցութիւնը զույգի միավորների միջև:

2. Միավորներից յուրաքանչյուրը գործառու է որպես ավելի բարձր մակարդակի միավոր կերտող ածանց: Ավելին, հետագայում մարդանվանական բանաձևի կայունացման գործընթացում նրանցից յուրաքանչյուրը ձեռք բերեց իր մասնագիտացումը:

Աղյուսակում ածանցների բաշխման պատկերը հետևյալն է՝

-ունի	-եաց	-եան	-էից	-եցի, -ացի	-եց -աց	ական
42	17	21	6	7	3	2

Յուրաքանչյուր զույգի երկրորդ տարբերակները իրենց արգասավորութեամբ նկատելիորեն զիջում են առաջիններին: Ըստ երևույթին արգասավորութեան նման պատկերը արտացոլում է սոցիալական գործոնը՝ բացի երկու դեպքից, երբ նշված տարբերակներով բաղադրիչ են կրում այն անձինք, որոնք ցուցակում հանդես են գալիս առաջին տեղում, այլ կերպ ասած՝ տոհմի նահապետները: Ժամանակի ընթացքում նկարագրվող ածանցների արգասավորութեան պատկերը փոխվում է: -ունի -եաց զույգը իր տեղը զիջում է -եան-էից զույգին: Եռանդամ բանաձևի ընդհանրանալուն զուգահեռ աստիճանաբար շեղոքանում է նաև սոցիալական գործոնը: Ասվածի նախնական դրսևորումներից պետք է համարել, թերևս, որ -եան-ով բաղադրիչը գերակշիռ է դառնում:

Հևտագա ամբողջ քննութիւնը հաստատում է այս ենթադրութիւնը, յատկապէս, եթէ ի նկատի ունենաք նորմատիվ գործընթացը:

Աղյուսակ 1-ը վկայում է, որ քննարկվող շրջանում գործառում է, շիմնականում, երկանդամ բանաձևը, ուր առաջին բաղադրիչը անձի անվանում է, իսկ երկրորդը՝ տարբերակիչ: Ինչպէս տեսանք, վերջինս կարող է նշանակել տոհմի և տեղի նկատմամբ ունեցած հարաբերութիւն: Ընդ որում, արդեն այս փուլում նկատվում է այդ բաղադրիչի ընդհանրացման միտում ամենաարգասավոր ածանցների կիրառութեան հաշվին Բացի այդ, որոշ դեպքերում բնորոշիչը, ինչպէս ցույց տրվեց, նաև սոցիալական տարբերակվածութեան դրսևորող է: Սակայն երկանդամ բանաձևի նկարագրված կաղապարը երբեմն խախտվում է ի հաշիվ ոչ կանոնավոր ձևերի:

Այդպիսի տարբերակիչների քննութիւնը հանգեցնում է այն եզրակացութեան, որ վերջիններս երկակի բնույթ ունեն: Նախ դրանք -եաց ածանցով կազմութիւններ են, որոնք բանաձևում հանդէս են գալիս ալէ ուղեկցող բառի հետ միասին (տե՛ս աղյուսակ 1), երկրորդ՝ նաև այնպիսի կազմութիւններ, որոնք աղյուսակում առանձին սյունակ չեն զբաղեցնում՝ Առավելեկնից տէր, Ընծայնույ, Ուրծայ և այլն:

Նկատվում է, որ տոհմանուն+(-եաց)+տէր կաղապարով կազմութիւնները կարող են հանդէս գալ նաև առանց տէր բաղադրիչի՝ Վահան Ամատունեաց և Մանգեն Ամատունեաց տէր, Վասակ Սիւնեաց և Արտաշիր Սիւնեաց տէր: Այս զուգահեռութիւնը ենթադրել է տալիս, որ ալէ ուղեկցող բառը կամընտրովի բնույթ ուներ և կարող էր բաց թողնվել: Այս ենթադրութեան օգտին է խոսում նաև այն յանգամանքը, որ քննարկվող շրջանում (ի տարբերութիւն հետագա շրջանների) այդ բաղադրիչը բնորոշիչ դեր չի կատարում և ավելի շատ սոցիալական բեռնվածութիւն ուներ:

Գործառական տեսակետից սեռականի -ա(յ), -ի, -ո(յ) թեքույթները անձնանվանական համակարգում չլին տարբերվում վերը նկարագրված անվանակերտ մասնիկներից: Տարբերութիւնը հանգում է, տվյալ դեպքում, արգասավորութեան աստիճանին: Քննարկված թեքույթները և արգասավոր, և ոչ-արգասավոր, վերջին հաշվով, միևնույն իմաստն են դրսևորում՝ պատկանելութիւն (տոհմին կամ վայրին):

§ 7. Մինչ այս դիտարկվում էին այնպիսի երևույթներ, որոնք արտացոլում են հայկական անձնանվանագիտութեան գլխավոր միտումները: Ավելորդ չենք համարում քննել նաև այնպիսի տվյալներ, որոնք

նույն շրջանի համար շեղումներ են կանոնականից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ներսես Բագրևանդացու «Թուղթը» ստորագրողների ցուցակին: Այս դեպքում ևս բանաձևերը երկբաղադրիչ են բացառությամբ Համազասպ (Գուգվառամևան ի տանէ Մամիկոնից, Գարշոյր Հայոց մաղխազ, Սամէղ ի (յ) Արտաւազդան սպարապետ դեպքերի): Այն գրված է «առ Պարսս» և, ըստ երևույթին, նամակի հեղինակները ձգտել են ստորագրությունները համապատասխանեցնել հասցեատիրոջ գրելաձևին: Երկանդամ բանաձևերի երկրորդ բաղադրիչները, որ ձևավորված են -եան (-ան) ածանցի օգնությամբ հայագիտության մեջ, ինչպես նշվել է, տարբեր կերպ են մեկնաբանվել: Այսպես, Մ. Օրմանյանը գրում է, որ «Թուղթը» ստորագրողների մի մասը պարզ հայրանունով է հիշված, մինչդեռ Հր. Աճառյանը նույն կապակցությամբ նշում է, որ հայերը պարսիկներից վերցնում են -ան, -եան (-յան) մասնիկը և դարձնում են նրանց նման ազգանուն:

Դիտարկվող ցուցակի (աղյուսակ 2) 30 ստորագրություններից 21-ը կազմված են անձնանուն + (-եան, -ան) կաղապարով, ուր հանդես է գալիս նաև ի-ն, որ ըստ Հր. Աճառյանի պարսկական իզաֆետն է: Եվ եթե այդ նախորդի երևան դալը օրինաչափ է անձնանուն + ի + անձնանուն (-եան, -ան) կաղապարի դեպքում, ապա անսովոր է Մերշապուհ ի Շինական, Համազասպ ի Զինականեան և Արշոտ ի Վարազտիրոցեան կաղապարի համար, եթե մանավանդ նկատենք, որ այն դեպքերում, երբ երկրորդ բաղադրիչը անձնանուն չէ, ի-ն բացակայում է՝ Աստուածատուր Վանանդայ տէր, Գնեալ Գնունի, Վարազ Գաբեղեան, Գրիգոր Աբեղեան, Վարդան Վահեունի: Մեր կարծիքը մոտ է Մ. Օրմանյանի կողմից հայտնված տեսակետին: Երկրորդ բաղադրիչը՝ ի + երկրորդ բաղադրիչ (-եան, -ան), հարաբերում է հոր անձնանվանը: Այն դեպքերում, երբ իզաֆետը նախորդում է ձայնավորով սկսվող անձնանվան՝ յԱրտաւազեան, յԱրտաշեան, հայերենի ձևահնչույթաբանական օրինաչափությամբ կատարված է ի > յ անցումը:

§ 8. Ըստ Գ. Բ. Զահուկյանի հայկական անձնանվանական համակարգի շրջանաբաժանման, մենք ձեռնամուխ ենք լինում հին շրջանի (V—XI դդ.) նկարագրությանը:

Աղբյուրների ընձեռած փաստերը, ըստ էության, ընդգրկում են 3 կարգի երևույթներ:

Ամենաներկայացուցչական ու ծավալունը այն երևույթներն են, որ արտացոլում են այդ փուլի համար կանոնիկ վիճակը: Երևույթների

մյուս խումբը կազմում են ազդեցության հետևանքով շրջանառություն մեջ եղած անձնանունները: Առանձնացվում են նաև իգական անվանման բանաձևերը:

Այս դեպքում ևս դիմում ենք ներկայացման աղյուսակային եղանակին, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս դիտարկել ուսումնասիրության առարկան և համադրել նախորդ փուլի երևույթների հետ: Ստորև բերվում է աղյուսակ 5-ը: Առաջին իսկ հայացքից նկատելի է, որ անվանման բանաձևը ավելի բազմանդամ ու բազմազան է: Աչքի են ընկնում հետևյալ առանձնահատկությունները.

1. Բանաձևի տարբերակիչ բաղադրիչի ձևավորման հնարավորությունները ընդարձակված են: Նրանք ներկայացված են թեքույթների ավելի մեծ քանակով:

2. Ուղեկցող բառերի իմաստային ընդգրկումները նկատելիորեն ընդլայնված են:

3. Որոշակիորեն ընդգծվում են բանաձևի եռանդամության ուրվագծերը: Ընդ որում, ոչ միայն և ոչ այնքան ուղեկցող բառերի, որքան անձի անուն բաղադրիչների հաշվին:

Նկատի ունենալով վերը նշված հանգամանքները, քննարկենք աղյուսակի տվյալները:

Արգասավորությանը անդրադառնալիս երևում է, որ անցումները ավելի սահուն են: Եթե նախորդ շրջանում մենք նկատեցինք -ունի-ով կաղապարի ակնհայտ գերակշռությունը, ապա այս դեպքում նման ընդգծված առավելություն արձանագրել չենք կարող: Գրեթե հավասարաչափ են բաշխված տարբեր թեքույթներով կազմությունները:

-ւցի, -ացի, -ցի	-ունի	-եան	սեռ. թեքույթներ	-ից, -աց
17	16	9	19	15

Եթե նախորդ փուլում օրինաչափական էր սոցիալական կողմի ընդգծման համար օգտվել նույն հարացույցին պատկանող տարբեր միավորներից, ապա այստեղ ընդգծումը ձեռք է բերվում ի հաշիվ այլ կարգի բաղադրիչներով բանաձևի բարդացման: Այս հանգամանքի մասնավոր դրսևորումներից մեկը այլատիպ ուղեկցող բառերի առկայությունն է:

Օրինաչափորեն բանաձևի առաջին և հիմնական բաղադրիչը անձնանունն է, իսկ մյուսները հանդես են գալիս տարբերակիչների դերով:

Երկանդամ բանաձևի դեպքում իբրև բնորոշիչ կարող են հանդես գալ (ըստ նվազող արգասավորության) -(ա, և) ցի, -ունի, -եան թեքույթներով անունները: -(ա, և)ցի թեքույթը մասնագիտացված է տեղանվանական, -ունի-ն բացառապես տոհմանվանական բաղադրիչների համար: -եան թեքույթը երկրորդ բաղադրիչ է կազմում անձի անուններից (ամենայն հավանականությամբ հայրանունից): Երկու օրինակներում -եան-ով կազմությունը այլ դրսևորում ունի: Մի դեպքում այն տոհմանուն է, որ ավանդորեն կազմվում է միայն -եան ածանցով՝ Մամիկոնեան, մյուս դեպքում այն ավելացել է Անձեաց բառաձևին՝ Անձեացեան: Երկանդամների դրսևորումներից մեկն էլ կապվում է -աց-ով տոհմանուն բաղադրիչի հանդես գալու հետ՝ Դաւիթ Ռշտունեաց, Յակոբ Սիրնեաց:

Մեր նյութերում իբրև երկրորդ բաղադրիչ վկայված են սեռականի սարքերի դրսևորումներով տեղանվանական հիմքից սերված տարբերակիչներ՝ Խոսրով Օշականու, Իսմայել Գառնոյ, Յովնան Սեւանի: Վերջիններս իմաստային որոշակիություն ունեն՝ ներկայացնում են բանաձևի տեղանուն բաղադրիչին համապատասխան վանքերի վանահայրերին՝ Դաւիթ Երևանու, Սարգիս Հոռոմոսի:

Մարդանվանագիտական նյութերում սեռականով ձևերի բազմազանությունը, հարացույցի անմիօրինակությունը արտացոլում են լեզվական օբյեկտիվ իրադրությունը:

Այս երևույթը մեզ կհանդիպի ընդհուպ մինչև նոր փուլի սկիզբը: Ինչպես այս, նույնպես և հաջորդ աղյուսակի տվյալները արձանագրում են ի-ով հոլովման դեպքեր, սակայն վերջինիս գերակշռության մասին ո՛չ այս և ո՛չ էլ հաջորդ շրջանում դեռևս խոսել չենք կարող:

Նկարագրված դեպքերից որոշակիորեն տարբերվում են այն երկբաղադրիչները, որոնց տարբերակիչը շեղվում է արդեն դիտարկված օրինակներից: Խոսքը Հայկազն անձի անվան մասին է, որ, ինչպես հայտնի է¹⁰, կրում էին Բյուզանդիայի նշանավոր հայերը՝ Վարդան Հայկազն, Արշաիր Հայկազն, Լեւոն Հայկազն: Ամենայն հավանականությամբ նման տարբերակիչ կրելը որոշակի նպատակներ էր հետապնդում, որոնցից, թերևս, ամենակարևորը ազգային պատկանելությունն ընդգծելն էր: Նման ազգեցույթյան դեպքի կհանդիպենք նաև ստորև:

Եռանդամ բանաձևը ներկայացված է ընդամենը երեք օրինակով: Ընդ որում, այդ բանաձևով անուններ կրողները Բագրատունեաց տոհմի երեք հաջորդող սերունդների ներկայացուցիչներ են՝ Աշոտ Սահա-

¹⁰ Հմմտ շր. Աճառյան, ՀԱՆԲ, հ.հ. Ա, Ե.

կեան Բագրատունի, Սմբատ Աշոտեան Բագրատունի, Աշոտ Սմբատեան Բագրատունի: Չնայած այս բանաձևի օրինակները սակավաթիվ են, ոչ ներկայացուցչական, այնուամենայնիվ, ուշադրութուն են գրավում բաղադրիչների շարադասութեամբ, ուր երկրորդ բաղադրիչը հայրանուն է: Բուն քառանդամ բանաձևեր, այսինքն՝ այնպիսիք, ուր առկա են անձի չորս անուններ, արձանագրված չեն: Բազմանդամութունը ձևաբան չէ, բերվում ուղեկցող բառերի գոյութեամբ:

§ 9. Ուղեկցող բառերի ընդհանուր պատկերը ներկայացնելու համար, դրանք նույնպես տրվում են աղյուսակի տեսքով (աղյուսակ 5):

Այս աղյուսակի քննութունը սկսենք անձնանուն՝ ուղեկցող բառ (ՈւԲ) կաղապարի վերլուծութեամբ: Կաղապարի մեջ իբրև երկրորդ բաղադրիչ հանդես են գալիս զինուոր, մշակ, կրօնաւոր, ճարտարապետ, ճրգնաւոր, արեղա, սարկաւազ, երեց, վարդապետ, գիտնական, իշխան բառերը:

Ինչպես երևում է թվարկումից, բոլոր ՈւԲ այս կամ այն կերպ կապվում են կրողի գործունեութեան, աշխատանքի և զբաղմունքի (բացառու-

Աղյուսակ 6

Աղղակցութեամբ ցուցց տվող բառեր	Զբաղմունք, տիտղոս, կոչում, աստիճան, պաշտոն	Հասարակ. մեջ ունեցած տեղը	Ծանոթ.
<p>տղգէ տղգի յուտար կին բտանէ կտունէ</p>	<p>կալիսկոպոս, իշխան կիրապաղատ, ճարտարապետ արեղա, երեց վարդապետ գիտնական կոմսաձագ Ասողիկ վանահայր իմաստասեր խաչակիր մարզպան իշխանաց իշխան</p>	<p>զինուոր, մշակ կրօնաւոր ճգնաւոր ամուսնացեալ տիկին</p>	<p>սլաւոսնակ գերմաքուր վայելչաբան</p>

(Սյամբ վերջին դեպքի) հետ: Համակարգը, անկասկած, ընդհանուր միտումի արտացոլումն է, երբ բանաձևի երկրորդ բաղադրիչը տարբերակիչ է, սակայն անձի անուն չէ: Մյուս առանձնահատկութունը կապվում է այն բանի հետ, որ հնագույն շրջանում ուղեկցող բառերի նման կիրառութեան գրեթե չենք հանդիպում և, ապա՝ նրանք որոշակիորեն արտացոլում են հին շրջանի հայկական հասարակական կառուցվածքը: Դա-

սակարգային շերտավորվածութեան դրսևորում պետք է համարել այն, որ նման երկբաղադրիչ բանաձևով անուններ են կրում հասարակութեան ստորին դասի ներկայացուցիչները: Քննարկվող շարքում ուշադրութեամբ է գրավում իշխան Ութ: Վերջինս մեծ մասամբ եռաբաղադրիչ անձնանուն + տոհմանուն + Ութ բանաձևի անդամ է: Տվյալ դեպքում մենք հանդիպում ենք կամ ոչ պաշտոնական անվանման հետ, կամ հնարավոր է ենթադրել, որ առկա է «իշխանի» մականուն արժեքով կիրառութեամբ: Նման օրինակների մենք կհանդիպենք նաև ավելի ուշ: Երկանդամ + Ութ բանաձևով անուններում իբրև կրորդ բաղադրիչ հանդես են գալիս տիտղոս, կոչում նշանակութեամբ բառեր՝ Կոմիտաս Մամիկոնեից կալիսկոպոս, Գրիգոր Մոկաց իշխան, Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոս, Գրիգոր-Դերևնիկ Արծրունեանց իշխան, Սամուել Կոմսաձագ Դերջանցի, Խաչիկ Արշարունեանց եպիսկոպոս, ինչպես նաև գործունեութեան կամ ազգակցական կապերի դրսևորման օրինակներ՝ Սմբատ յազգէ Բագրատունեաց, Միքայէլ պատանեակ Գուգարացի, Սողոմոն Սագաստանցի ճգնավոր, Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի:

Մի ենթադրութեամբ ևս: Որոշակիորեն պնդել դժվարանում ենք, սակայն թույլ ենք տալիս մեզ կարծել, որ վերը նշված կրկնյինները տիպաբանորեն ընդհանրական են: Ընդ որում, ընդհանրականութեամբ էրկակի բնույթ ունի. վերաբերում է ինչպես անվանման բանաձևի կառուցվածքին, այնպես էլ բուն անվանման դասային պատկանելութեանը: Ասվածը ավելի է համոզում, երբ անդրադառնում ենք բյուզանդական աղբյուրներին: Բյուզանդական վարքագրութեանները, որոնք վերաբերում են նկարագրվող դարաշրջանին, ինչպես նաև Սամոսատացու բանաստեղծական ժառանգութեան մեջ հաճախ հանդիպում ենք գործող անձանց, որոնք անվանված են ըստ վերը բերված անձնանվանական բանաձևերի: Հեշտութեամբ կարելի է որոշել յուրաքանչյուր անհատի ինչպես գործունեութեան բնույթը, այնպես էլ դասակարգային և տոհմային պատկանելութեանը: Այստեղ մենք հանդիպում ենք ջրաղացպանի, քարտաշի, ձրկնորսի, ճգնավորի, մենակցացի և այլն: Ավելի բնորոշ է հայկական իրականութեան համար ազգակցութեամբ ցույց տվող դուստր, կին, կողակից, եղբայր, թոռն, ի տանէ, ի տոհմէ բառերի առկայութեամբ անձնանվանական բանաձևերում:

Ազգակցական կապը նշելու համար որդի բառի օգտագործումը, մեծ մասամբ, արաբական, կասեինք, արևելյան ազգեցութեան հետևանք է: Հին շրջանում, հատկապես նրա վերջին փուլում (IX—XI դդ.) Հայաստա-

նըն իր վրա կրում էր Արևելքից եկող սոցիալական, տնտեսական և քաղաքական նկատելի ազդեցություն: Խնդրո առարկա նյութի սահմաններում մեր ուշադրությունը դրավում է որդի-ով բանաձևերի արգասավորությունը: Այս շրջանում երևույթի ձևաբանական դրսևորումը դեռևս նորմատիվ բնույթ չէր ստացել: Մասնագիտացված թեքույթի բացակայության պայմաններում ազգակցություն նշող բաղադրիչը ազատ դրսևորում ուներ, այդ թվում՝ նկարագրական, որի դեպքում գործառու էին ազգակցություն ցույց տվող այլ եղրույթներ: Կանոնականի բացակայության հետևանքներից է մասնավորապես որդի-ի ընկալումը իբրև ածանց՝ Տուտևորդի, Խանթկայորդի, Ալաւկայորդի, Թոքակերորդի: Մեր նյութերում վկայված են դեպքեր, երբ ածանցակերպի գործառույթով հանդես են գալիս որդի բառի հոմանիշները՝ Ջուլհակաձագ, Կոմսաձագ, Հոնասարատղա:

Նշանակալից ազդեցության պայմաններում վերջին օրինակները վաւոյում են բառակազմական սեփական ձևերի որոնման մասին:

Նախորդ դեպքերում, եթե -ունի, -եան և այլ ածանցական միջոցներ անհատին հարաբերում էին տոհմի և վայրի հասկացությունների .ևս իսկ հայրանվան հետ հարաբերումը իր որոշակի ձևավորումը չէր ստացել, ապա այս օրինակներում հայրանվան և արական գծով արեւակցական կապի հարաբերումը արտահայտվում է որդի բառի և նրա հոմանիշների օգնությամբ: Նպատակային նույն ուղղվածությունն ունեին «ազգակցական կապ» իմաստով մյուս ուղեկցող բառերը:

Անհատի տարբերակման հաստատուն եղանակների բացակայությունը պատճառ էր դառնում այլ՝ անձնանվան հետ չկապվող միջոցների օգտագործման համար: Օրինակ, զինուոր, մշակ, կրօնաւոր, ճգնաւոր, մենակեաց, ամուսնացեալ, տիկին:

Ճգնաւոր, մենակեաց ՈւՅ տիպական են ամբողջ քրիստոնեական Միջնադարի համար: Ամուսնացեալ ըմբռնումը իբրև մարդու և նրա անմիջական սոցիալական միջավայրի հարաբերության դրսևորում, նույնպես կարելի է դասել ընդհանրականների շարքը (օրինակ, ուղղափառ եկեղեցու շրջանակներում):

Մինչ այս մեր ուշադրության կենտրոնում էին անվանման այն բանաձևերը, որոնք հատկանշական էին զարգացման հիմնական միտումի համար: Սակայն որոնումների ընթացքում հանդիպում են նաև այնպիսի փաստեր, որոնք արտացոլում են երևույթի ոչ հաստատուն վիճակը: Խոսքը վերաբերում է բազմանդամ բանաձևերին, որոնք, անկասկած, արտացոլում են Միջնադարին հատուկ ամբողջ համակարգի ծավալու-

նությունը: Նման դեպքերում, սովորաբար, դիմում էին բնորոշող միջոցի, որի հիմնական նպատակն էր ընդգծել տոհմի ազնվականութունը, ինչպես նաև այս կամ այն տարածքի նկատմամբ ունեցած իրավունքները: Ավատատիրական հասարակարգին հատուկ այդ երևույթի արտացոլումներից մեկը Հայաստանում ձևավորվել է հետևյալ կարգի օրինակներում՝ Աբլխարիփ հայոց մարզպան որդի Գրիգոր իշխանի որդոյ Ապուղամրի յազգէ Պալհաունի ի տանէ Արշակունեաց, կամ նույն անձի համար՝ Ապլղարիպ մարզպան որդի Գրիգորոյ իշխանի եւ թոռն Ապուղամրի եւ եղբայր Վահրամայ և Վասակայ, Վանենի դուստր իշխանաց իշխան Սարգսի որդոյ Զաքարեի կին Աբասա թագավորի, Շապուհիկ իշխանաց իշխան որդի Գարբանիելի ի տոհմէ Պալհաունի յազգէ Արշակունեաց:

Զնայած բերված օրինակների բազմանդամությանը, այնուամենայնիվ, նրանք շեն խախտում բանաձևի կազմակերպման ընդհանուր տրամաբանությունը: Այն լավ երևում է շարահյուսորեն միմյանց հետ կապված զույգերի քննության ժամանակ:

Հարակից զույգ հանգույցներից յուրաքանչյուրը համապատասխանում է իշխանական տներին հատուկ անվանման բանաձևերին: Այլ կերպ ասած, շնայած թվացյալ բարդությանը, շենք հանդիպում որևէ դեպքի, որը խախտեր ձևաբանական կամ շարահյուսական համակարգը իր ամբողջության մեջ: Զույգ հանգույցներից յուրաքանչյուրը տեսականորեն կարող է դառնալ տվյալ անհատի անվանման բանաձև այս կամ այն կոնկրետ իրադրության մեջ՝ Աբլխարիփ մարզպան, Աբլխարիփ յազգէ Պալհաունի, Վանենի կին Աբասայ և այլն: Բանաձևերում, ինչպես և պետք է սպասել, գազաթնային դիրքը պատկանում է անձնանվանը: Նույնիսկ այն դեպքերում, երբ այն փոխառյալ է, հանգույցների միջև եղած հարաբերությունները և հանգույցները զբաղեցնող միավորները ենթարկվում են հայերենին հատուկ ձևաբանական և շարահյուսական օրինաչափություններին: Բերված ծառերից գազաթնային դիրքը զբաղեցնում են փոխառյալ անձնանուններ և արդեն երկրորդ մակարդակի հանգույցները զբաղեցված են հետևյալ կերպ. ձախից առաջինը՝ տիտղոս (մարզպան, իշխանաց իշխան), երկրորդ հանգույցը զբաղեցնում են ազգակցական առաջին կարգի հարաբերության ցուցիչներ (որդի, դուստր): Եթե նույն մակարդակում հանդիպում են այլ միավորներ, ապա նախ նրանք համադաս են նախորդին և ապա ցույց են տալիս ազգակցական հարաբերության հաջորդող աստիճաններ: Աջ հանգույցաշարքերը ցույց

են տալիս կրողի տոհմային կապերը (յազգէ Պալհաւունի, յազգէ Արշակունեաց, ի տոհմէ Պալհաւունի, ի տանէ Արշակունեաց և այլն):

Նշված իրողութիւնների կողքին բանաձևերում հանդես են գալիս նաև գնահատողական իմաստով բառեր, որոնք, ըստ երևույթին, անհատական վերաբերմունքի դրսևորումներ են և ավելի շատ մոտենում են մականուններին: Խոսքը վերաբերում է գերմաքուր, վայելչաբան, գծծակերպ բաղադրիչներին:

§ 11. Աղյուսակ 7-ը արտացոլում է միջին շրջանի (XII—XVI դդ.) իրողութիւնները:

Վերլուծութիւնը սկսենք Լրկբաղադրիչ բանաձևից, ուր առկա է անձնանուն + բնորոշիչ կաղապարը: Բնորոշիչի կազմութիւնը համար ամենաարգասավորը -ենց, -անց, ածանցներն են (ինչպես նաև մեկ դեպք -ոնց ածանցով՝ Թորոս Թափրոնց):

Այս շրջանում երկանգամ Սարգիս Միլենց, Գէորգ Անդրիասանց, Մամիկանց Ուբան, Փեճուրանց Մխիթար կազմութիւնների Լրկբորդ բաղադրիչների համար հիմք են ծառայել գլխավորապես անձնանունները՝ Աղրիասանց, Տրբանց, Ասլան-Մելիքենց, ինչպես նաև (ավելի քիչ) մականունները՝ Միլենց, Մուծկանց: Դիտարկվող ածանցյալների համար տեղանվանական հիմքեր այս շրջանում մեզ չեն հանդիպել:

Աչքի է ընկնում ազատ շարադասութիւնը: Ընդ որում, մեր կարծիքով, -ենց (-անց)-ով կազմութիւնների Լտադաս դիրքով հանդես գալիս վկայում է երկու առանձնահատկութիւն մասին՝

1. Նման դեպքերում հնարավոր է մի երրորդ բաղադրիչի առկայութիւն, օր., Սարգիս Միլենց բաժրար.

2. Այդ կազմութիւնները դեռևս չեն բարձրացել տոհմանվանական բնորոշիչի մակարդակի: Ետադաս դիրքով նման կազմութիւնները ցույց են տալիս պատկանելութիւն այս կամ այն տոհմին, գերդաստանին: Մինչդեռ նախադաս դիրքում այդ կազմութիւնները դառնում են բուն բնորոշիչներ և տոհմանվան արժեք ունեն: Հմմտ. օրինակ, Սարգիս Միլենց և Չնելանց Մելիք: Ավելացնենք, որ վերջին կաղապարը աստիճանաբար մեծ տարածում գտավ և նույնիսկ մեր օրերում գյուղական վայրերում տոհմանուն, գերդաստանի անուն նշելու թերևս միակ միջոցն է:

Ըստ արգասավորութիւնը հաջորդը -ացի (-եցի, -ցի) ածանցն է որն ավելանում է տեղանվանական հիմքերին: Այն բնորոշիչներ է կազմում հոգևորական դասի ներկայացուցիչների, այդ թվում նաև նախնականների համար: Ընդգծվում է հետևյալ օրինաչափութիւնը: Բարձ-

ըստտիճան հոգևորականության դեպքում քննարկվող ձևերի հիմքերը տարածական ավելի մեծ ընդգրկումներ ունեն՝ Սսեցի, Կիլիկեցի, Խաչենցի, Խլաթեցի, մինչդեռ վարդապետների, նահատակների դեպքում այդ հիմքերը, մեծ մասամբ, այս կամ այն բնակավայրի, վանքի անվանումներ են՝ Տեղերցի, Խիզանցի: Շարահասությունը հաստատուն է՝ անձնանուն + տեղանուն (-ացի, -եցի, -ցի):

Աղյուսակի սյունակներից մեկը զբաղեցնում է այն դեպքերը, երբ բնորոշիչը ձևավորված է սեռական հոլովի թեքույթներով: Նման բնորոշիչների կրողները, մեծ մասամբ հոգևորականներ են: Բոլոր դեպքերում, բացի Բարսեղ Անույ օրինակից, սեռական հոլովը ձևավորված է -ի թեքույթով: Այս դեպքում առկա է, մեր կարծիքով, հետաքրքիր երևույթ՝ ՈւԲ բացթողում: Մեր ձևքի տակ գտնվող աղբյուրներից հայտնի է, որ միևնույն անձը կոչվել է՝ Ստեփանոս Տարսոնի և Ստեփանոս Տարսոնի եպիսկոպոս: Այլ կերպ ասած, եպիսկոպոս բաղադրիչի բացթողումը հանգեցնում է այն բանին, որ փոխվում է տարբերակիչի և անձնանվան շարահյուսական հարաբերությունը: Եթե Լուանդամ բանաձևի դեպքում ունեինք անձնանուն + եպիսկոպոս + տեղանուն (Ստեփանոս եպիսկոպոս Տարսոնի), ապա երկանդամ դրսևորման դեպքում տեղանուն բաղադրիչը շարահյուսորեն կախման մեջ է մտնում առաջին անդամից՝ Ստեփանոս Տարսոնի:

Աստիճանաբար ձևավորում է այն միտումը, ըստ որի տեղանվան սեռականը դառնում է անձնանուն բաղադրիչի տարբերակիչ, իսկ ՈւԲ՝ ֆակուլտատիվ: Շարահյուսական հարաբերությունների այս ձևափոխությունները սկզբունքային նշանակություն ձևք բերեցին երկանդամ բանաձևի հաստատման առումով: Նկատված երևույթը այստեղ նոր միայն ուրվագծվում է և նրան բնորոշ է երկու սահմանափակում՝ 1. առայժմ ընդգրկում է սոցիալական նեղ խումբ (հոգևորականություն), 2. քննվող երկանդամը այս փուլում դեռևս եռանդամի ՈւԲ բաղադրիչի բացթողման արդյունք է:

Մենք քննարկեցինք դիտարկվող փուլին բնորոշ բոլոր երկանդամ կազմությունները: Ներկա աղյուսակի համադրումը նախորդների հետ թույլ է տալիս եզրակացնելու, որ անվանակերտ ածանցների արգասավորությունը ըստ փուլերի տարբեր է: Այս տեսանկյունից ուշադրություն է գրավում -եան /-եանց ածանցի գործառությունը: Հնագույն փուլում այդ ածանցը հանդես էր գալիս նախարարների համար իբրև տարբերակիչ կերտող անձնանվանական միավոր (Մամիկոնեան, Դիմաքսեան):

Նախարարական տների քայքայման հետ միասին՝ խաթարվեց հայկական անձնանվանական համակարգի զարգացման բնականոն ընթացքը, երբ տոհմանվանական կաղապարների հետագա տարածումը պետք է ընդգրկեր նորանոր եղանակներ և, դրա հետ կապված, անցներ ժողովրդի մյուս խավերին և աստիճանաբար բարձրանար ազգանվան մակարդակին: Ըստ երևույթին, ասվածի հետևանքը եղավ -եան-ով ձևերի արգասավորության աստիճանական անկումը:

Ազգակցություն իմաստով ուղեկցող բառերի (որդի, դուստր, թոռն) կիրառումը անվանման բանաձևերում շարունակում են նկատելի տարածում ունենալ: Նման բաղադրիչներ ունեցող բանաձևերը կարելի է բաժանել երկու խմբի՝ 1. երկանդամ որդի, թոռն, դուստր բաղադրիչներով բանաձևեր և 2. բաղմանդամ բանաձևեր:

Քննարկենք առաջին դեպքը, երբ «ազգակցություն» իմաստով բառը, ըստ կուլթյան, կատարում է այս կամ այն տոհմին պատկանելություն ցույց տվող ձևակի դեր: Հիշեցնենք, որ նախորդ փուլում որդի բառի տմանիչները երբեմն հանդես էին գալիս անձնանվանական հիմքին միաձուլված (Չուլհակաձագ, Հոնաւարատղա, Տուտէորդի): Քանի որ անձի անվանման այս եղանակը հակիրճ էր և հստակորեն նշում էր հայրանուն, լայն կիրառություն գտավ և՛ վիմագիր արձանագրություններում, և՛ պաշտոնական և գործնական փաստաթղթերում: Այն նպատակահարմար էր նաև անձի միարժեք անհատականացման առումով: Բանաձևի նման ձևակերպումը մոտ էր անուն-հայրանունով անհատին կոչելու այն հիմնական միտումին, որը հետագայում իրականացավ ածանցավոր կաղմության տեսքով: Տիպաբանորեն բնորոշ այս եղանակը իրեն զգացունել տվեց ամբողջ Միջնադարի գործնական ոլբրտում: Ինչ վերաբերում է բաղմանդամ բանաձևերին, ապա նրանք մի կողմից արտացոլում են անձի առավել անհատականացման ձգտումը, մյուս կողմից, նույնպես Միջնադարի համար բնորոշ՝ անվանման ամբողջ համակարգի ճյուղավորումը:

Բաղմանդամ բանաձևերը կարելի է ներկայացնել հետևյալ կառուցատիպերով՝

1. Անձնանուն + որդի + հայրանուն սևո. հ. + թոռն + պապանուն

¹ Հմմտ. «Ակած 628 թ, երբ պարսիկները վերջնականապես հրաժարվեցին նրաւից (Հայաստանից—Տ. Ա.) սկսվում է նախարարությունների արշակունյան տարբերակի քայքայման ընթացքը: Արարների դաժան և սկզբում թշնամական քաղաքականությունը նախարարությունների նկատմամբ նպաստեց քայքայմանը: 702 թ. նախիջևանյա աղետը կայծակնահար արեց նախարարությունները և խարույկների ու կախաղանների բաժին դարձրեց հայ բարձր դասի ծաղիկը» (Н Адонц, Армения... , էջ 236):

սեռ. հ. Սաթ որդի Արտաւազդայ թոռն Սմպատայ, Խոթլուբէկ երդի Մխիթարայ թոռն Խալայշին:

2. Անձնանուն + Ութ + հայրանուն սեռ. հ. + պապանուն սեռ. հո-
լովով՝ Սամոն տէր Սամուելի Յոհաննէսի:

3. Անձնանուն + հայրանուն սեռ. հ. + Ութ + պապանուն սեռ. հո-
լովով՝ Գրիգոր Ովանէսի տէր Աւրպէլի:

4. Անձնանուն + Ութ + պապանուն սեռ. հ.՝ Սինաքերիմ թոռն աւագ
Սենաքերիմա, Խորիշահ թոռն մեծին Վաչէի:

5. Անձնանուն + որդի + պապանուն սեռ. հ.՝ Դավիթ թոռն Վասակայ:

6. Անձնանուն + որդի + հայրանուն սեռ. հ.՝ + թոռն + տոհմա-
նուն՝ Կոստանդ որդի Գրիգորի թոռն Համաղասպենց:

7. Անձնանուն + տոհմանուն + տեղանուն՝ Գրիգոր Մերենց Խլա-
թեցի, Գորգի Խոշալանց Իւրնջեցի:

8. Անձնանուն + տեղանուն + որդի + հայրանուն սեռ. հ., առ-
կայացման ցուցիչով՝ Սարգիս Անկեղակոթեցի որդի Զավիկին:

9. Անձնանուն + թոռն + տոհմանուն՝ Գոհարմելիք թոռն Համա-
ղասպենց, Գրիգոր թոռն Խաչէնիսենց:

10. Անձնանուն + որդի + Ութ + հայրանուն սեռ. հ. + թոռն
+ պապանուն սեռ. հ.՝ Գոնցե որդի պարոն Խոսրովկայ թոռն Յասանայ:

11. Անձնանուն + որդի + հայրանուն սեռ. հ. + թոռն + պապա-
նուն սեռ. հ.՝ Պենա որդի Սմբատա թոռն Լիպարիտի, Զումի որդի Յաշո
թոռն Յասանայ:

12. Ութ + անձնանուն + որդի + հայրանուն սեռ. հ. առկայաց-
ման ցուցիչով + թոռն + պապանուն սեռ. հ. առկայացման ցուցիչով՝
Պարոն Ղասում որդի մելիք Թանդրիղոսլին թոռն մելիք Ղուկասին

13. Անձնանուն + Ութ + հայրանուն առկայացման ցուցիչով +
թոռն + պապանուն առկայացման ցուցիչով՝ Զաքարիա որդի պարոն
Ազիզբեկին, թոռն Գամրիկելին:

14. Պապանուն սեռ. հ. + հայրանուն սեռ. հ. + անձնանուն՝ Դա-
վութի Հոռոմի Մուրաթ:

15. Ութ + անձնանուն + որդի + հայրանուն սեռ. հ.՝ + թոռն
+ Ութ + պապանուն սեռ. հ.՝ Ամիրսպասալար Աղբուղա որդի Շահըն-
շահի թոռն մեծին Վաչէի:

16. Անձնանուն + Ութ + որդի + հայրանուն սեռ. հ. + տոհմա-
նուն՝ Վաչէ իշխանաց իշխան որդի Սարգսի Վաշուտանց:

17. Անձնանուն + Ութ + տոհմանուն + որդի + հայրանուն սեռ.
հ.՝ Համլիկ յազգէ Համաղասպանց որդի Սմբատայ:

18. Անձնանուն + ՈւՒ + ՈւՒ + տոհմանուն՝ Արուս խաթուն յազգէ Ուրանանց:

19. Անձնանուն + դուստր + հայրանուն սեռ. հ. + ՈւՒ + տոհմանուն + -եանց ածանցով՝ Խաթուն դուստր Յասանայ յազգէ Դեսուճևանց:

20. ՈւՒ + տեղանուն + ՈւՒ + պապանուն սեռ. հ. + հայրանուն սեռ. ՚. առկայացման ցուցիչով + անձնանուն՝ Թոփչի Զուղայեցի մահատեսի Սարի Նիկողոսին որդի Աստվածատուր:

21. Անձնանուն + ՈւՒ + պապանուն սեռ. հ. (առկայացման ցուցիչով) + ՈւՒ + հայրանուն սեռ. հ. (առկայացման ցուցիչով)՝ Դավիթ աբեղա Իոռն պարոն Աղին որդի պարոն Սօլաղին:

22. Անձնանուն + դուստր + ՈւՒ + հայրանուն սեռ. հ. (առկայացման ցուցիչով)՝ Տատլուղան դուստր պարոն Դավթին + կենակից + Փիրհամղա աղին:

23. ՈւՒ + ՈւՒ + ՈւՒ + անձնանուն՝ Մանդատորթախուցես ամիրսպասալար՝ շահնշահ Զաքարիա:

Չնայած անձնանուն, հայրանուն, ՈւՒ, պապանուն և տոհմանուն բաղադրիչների հարաբերությունների բազմազանությունը, ինչպես նրանց միջև եղած շարահարաբերական կապերի, նույնպես և նրանց շարահարաբերական իմաստով, այս համակարգը աստիճանաբար իր տեղը զիջում է կլկանդամին: Վերջինս ավելի հստակ է դառնում ինչպես բաղադրիչների ձևավորման, նույնպես և նրանց միջև եղած շարահարաբերական կապերի աստիճանով:

§ 12. Ներկայացնում ենք աղյուսակ, ուր արտացոլված են XVII—XIX դդ. սկզբների նյութերը: Աղյուսակը, ըստ էության, արտացոլում է եռաբաղադրիչ բանաձևի վերջնական ձևավորմանն ու տարածմանը նախորդող փուլը: Եռաբաղադրիչ բանաձևի ձևավորման ակտիվ ընթացքը սկսվում է XIX դ. կեսերին: Բնականաբար այն բոլոր երևույթները, որոնք անմիջականորեն նախորդել են այդ փուլին յուրօրինակ նախապատրաստություն էին նշված բանաձևի կազմավորման համար: Եվ պատահական չէ, որ ներկայացվող աղյուսակի նյութերը արտացոլում են այն արգասավոր երևույթները, որոնք հատկանշական էին անձի անվանման հայկական համակարգին: Աղյուսակի ընդհանուր դիտարկումը ցույց է տալիս, որ ածանցման հաշվին աստիճանաբար ակտիվանում են լատինական կաղապարները: Այսպես, աղյուսակում ավելի հաճախական է դառնում -եան(ց) ածանցի գործառությունը: Հիշեցնենք, որ նախորդ աղյուսակում վերջինիս արգասավորությունը անհամեմատ ավելի

նվազ էր: Ընդ որում, այդ ածանցի տարածումը առանձնապես սկսվում է XVIII դ. և շարունակում է լայնորեն կիրառվել XIX դ.: Ըստ Երևույթին փաստը պետք է բացատրել այն հանգամանքով, որ վերլուծական (բաղադրիչի կիրառմամբ) և նկարագրական բանաձևերը, որոնք մեծ տարածում ունեին XII—XVII դդ. աստիճանաբար իրենց տեղը զիջում են առավել հստակ ածանցավոր կազմություններին: Այդ միտումը գերակշռող է դառնում ոչ միայն -եան(ց), այլև այնպիսի անձնանվանակերտ ածանցների, ինչպիսիք են -ենց, -ցի և որոշ դեպքերում նաև փոխառյալ -ով ածանցի շնորհիվ: Նշված ածանցները հետևողականորեն սլահավանում են հայրանվանական, ինչպես նաև արական արենակցական կապի ավելի ընդարձակ հարաբերությունների գաղափարը: Դրանցով կազմությունները տարբերակիչներ են և, մեծ մասամբ, ներկայացված են գործնական բնույթի վավերագրերում: Մեր ձեռքի տակ են գտնվում վաղարշապատցիների պաշտոնական ցուցակներ, Երևանի և նրա շրջակայքի գյուղերի կալվածագրեր ու առովաճառքի վերաբերյալ արձանագրություններ: Կարելի է ցանկը շարունակել, սակայն բերված աղբյուրները թույլ են տալիս մեզ պնդելու, որ մշակվում է գործնական փաստաթղթերին հատուկ յուրօրինակ նմուշ, որը բավարարում է երկու պայմանի՝ անձի անհատականացում և բանաձևի հստակութուն:

Վերը բերված համադրական ձևերին համանիշ է որդի բաղադրիչով վերլուծական բանաձևը, որը շարունակում է նկատելի տարածում ունենալ: Նրանք իմաստային առումով համընկնում են, քանի որ որդի բաղադրիչը գործնականում նույն բևեռավածությունն ունի, ինչ որ թվարկված արական արենակցական կապի նշանակությամբ անձնանվանակերտ ածանցները:

Քննարկվող շրջանում վերլուծական բանաձևերի «ազգակցական կապ» նշանակությամբ բաղադրիչները տարբեր դրսևորումներ ունեն: Որդի բաղադրիչին զուգահեռ հանդես են գալիս նաև կին, կողակից, տղա, դուստր, ազգալ, յազգլ միավորները:

Ինչպես լեզվական մյուս դրսևորումների դեպքում, այս պարագայում ևս լեզուն չի հանդուրժում ոչ պատճառաբանված համանշտություն: Ընդհանուր միտումին համապատասխան յուրաքանչյուր զուգահեռ ձև պետք է գտնի իր տեղը կամ ոճական և կամ բառափոխաբանային առումներով: Եթե նախորդ շրջաններին նույնպես հատուկ էր անձնանվանական նման կարգի համանշտություն, ապա այն կարելի էր բացատրել նախ ձևավորված ավանդույթի բացակայությամբ և ապա անձի անհատականացման հասարակական գործոնի ոչ կարևորությամբ: Տվյալ դեպքում

քննարկվում է այն փուլը (հատկապես XVIII—XIX դդ. կեսերը), երբ արտաքին հարաբերությունների իրենց ոլորտն են ներքաշում ոչ միայն առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներին, այլև ժողովրդի լայն զանգվածներին: Հասարակության մյուս խավերի հանրային գործունեության ծավալումը պահանջում էր մի կողմից անձի անհատականացման որոշակի միջոցի ընտրության և մյուս կողմից՝ ընտրված ձևի, ըստ հնարավորին, խստորեն պահպանում: Լեզվական առումով ասվածը դրսևորվում էր հոմանշային շարքի հնարավորություններից որևէ մեկի ընտրությամբ: Բնականաբար, այս գործընթացը երկարատևություն էր ենթադրում, որի սահմանները ավելի էին երկարաձգվում մեր ժողովրդի պատմությանը բնորոշ քաղաքական, աշխարհագրական և այլ կարգի գործոնների զգալի ազդեցության հետևանքով: Վավերագրերը վկայում են, որ Հայաստանի որոշ վայրերում գերակշռում են -եան(ց)ով բանաձևերը, մյուս վայրերում՝ վերլուծական բանաձևերը, իսկ երբեմն (XVIII դ. սկսած ավելի հաճախ) նկատվում է նման կազմությունների մրցակցություն:

Նախորդ աղյուսակների հետ համեմատությունը թույլ է տալիս նկատել նաև, որ ավելի են նվազում նկարագրական բանաձևերը: Այդպիսիք դեռևս հանդիպում են՝ Սուրբ դասի Փարշն մաղագործ Բայրամի որդի Յարուֆին, Երևանցի Ղազազ Սըհակ որ է որդի ջուղակցի Միքակելին որ և և ինքն է հայր տիրացու Միքայելին, Յրեանցի անյիշատակ սուկերիճ Կոստան որ է որդի Մարութին: Եթե նախորդ փուլերում բանաձևի անդամների թվի ավելացումը հիմնականում հետապնդում էր մեկ նպատակ՝ անձի անհատականացում, ապա այս շրջանում նման խնդիրը, կարծես թե, երկրորդ պլան է մղվում իր տեղը զիջելով հանրային ինքնահաստատմանը: Բանաձևերի բազմազանության և բազմանդամության պայմաններում, երկանդամ բանաձևը հետևողականորեն ուղի է հարթում և տարածվելու նկատելի միտում հանդես բերում, առաջին հերթին սպաստակահարմարության պատճառով:

Հայկական անձնանվանագիտական համակարգի զարգացման առումով նոր շրջանում առանձնանում է XVIII դ. վերջի և XIX դ. առաջին քառորդի միջև ընկած ենթաշրջանը: Նշված ժամանակահատվածում տեղի է ունենում համանշային հնարավորությունների աստիճանական նվազում և հաջորդ շրջանին բնորոշ միտումների ձևավորում:

Ասվածի առումով առանձնապես հետաքրքիր է եռանդամ բանաձևի կառուցվածքը: Եռանդամ բանաձևի անհրաժեշտությունը կապվում է նախ հանրային պահանջմունքների հետ, քանի որ այն ավելի լիարժեք

լ անձի անհատականացման տեսանկյունից: Եվ պատահական չէ, որ քննարկվող ժամանակահատվածում ուղիներ են փնտրվում այդ բանաձևի նպատակահարմար տարբերակի ընտրության ուղղությամբ: Երկանդամ՝ անձնանուն + զբաղմունքի, արհեստի անուն կաղապարով բանաձևը նույնպես նման որոնումների գրսևորումներից է: Այսպես, չիթչի Փիլիպոս, դարպինտ Մկրտիչ, կազմող Բագրատ, զուռնաչի Յակոբ, դարգար Պողոս օրինակների ոչ անձնանուն բաղադրիչները երկակի ֆունկցիա էին կատարում՝ լինելով տարբերակիչ, միևնույն ժամանակ ցույց էին տալիս տվյալ անհատի հասարակական դիրքը: Այս երևույթը տիպաբանորեն ընդհանրական է, քանի որ նման կարգի տարբերակիչները ազգանվանակերտ հիմքեր դարձան՝ (հիշենք նաև անգլիական Թեյլորը, հունգարական Վարզան և Պապպը, վրացական Մճեղիշվիլին և այլն):

Աղյուսակի ընձեռած փաստերը հնարավորություն են տալիս մեզ եզրակացնելու, որ դեռևս հազվադեպ հանդիպող եռաբաղադրիչ բանաձևերը իմաստաբանորեն համապատասխանում են մեր օրերում ընդունված եռաբաղադրիչներին՝ անձնանուն + հայրանուն + ազգանուն.

1. Ա + Տղ (-ցի) + ՄԿ (-յան) — Թումաս արաբկերցի Քէօսեան
2. Ա + Տիտ. + Տղ (-ցի) — Մահտեսի Կարապետ Ղարսցի
3. Ա + ԶԲ + Ա (-եան) — էզիկ թիւթիւնճի Սողոմոնեան
4. Ա + ԶԲ + Տղ (-ցի) — Կարապետ վարժապետ Վանցի
5. Ա + Ա (-եան) + Ա (-ով) — Ստեփան Նահապետեան Սմայաթօվ
6. Ա + Ա (-իչ) + Ա (-եանց) — Ալեքսանդր Նազարիչ Մելիքեանց

Առանձին բաղադրիչների իմաստաբանական և ձևակազմական քննությունը ցույց է տալիս նրանց անմիօրինակությունը: Նկատվում են երեք կարգի բանաձևեր՝ 1. առկա է միայն անձնանունը, իսկ երկրորդ և երրորդ բաղադրիչները, որոնցից առնվազն մեկը ձևավորված է անվանակերտ ածանցով, իրենց հիմքում ունեն տեղանուն և կամ տիտղոս ու զբաղմունքի անուն բաղադրիչներ (2,3,4): Բանաձևերից մեկը (1) իր կազմում ունի անձնանուն, տեղանուն և մականվանական հիմքով բաղադրիչ, որը ձևավորված է -եան ածանցի օգնությամբ: Երրորդ դեպքում (5, 6) բանաձևը բաղկացած է անձնանուն, հայրանուն, ազգանուն բաղադրիչներից: Ընդ որում, երկու դեպքում առկա է փոխառյալ ձևակազմությունը. հայրանվան համար՝ Նազարիչ, ազգանվան՝ Սմայաթօվ: Այս շրջանում փոխառյալ հայրանվան օրինակները խիստ սակավադեպ

են ազգանվան համեմատությամբ: Երևույթը հակված ենք բացատրել նրանով, որ հայրանվան կազմության ավանդույթները հայերենում բազմադարյան պատմություն ունեն և փոխառությունը դիպվածային է, մինչդեռ ազգանունը իմաստաբանորեն ու ձևակազմորեն նոր Երևույթ էր և, բնականաբար, որոշ շրջանում փոխառչալ ձևերը արդարացված են: Ամփոփելով ասվածները մինչև XIX դ. առաջին տասնամյակները ընկած ժամանակահատվածի մասին, նշենք, որ գերակշռողը երկբաղադրիչ բանաձևն է, իսկ եռաբաղադրիչները դեռևս սակավ են:

§ 13. Աղյուսակ 9-ը արտացոլում է XIX դ. 40—60-ական թթ. պատկերը: Նյութերը քաղված են մամուլից, ինչպես նաև տարբեր կարգի վավերագրերից (բաժանորդների, նվիրատվությունների ցուցակներ և այլն) և վերաբերում են բնաշխարհին, վարչական կենտրոններին (Թիֆլիս, Բաքու, Մոսկվա), ինչպես նաև հայաշատ մյուս վայրերին (Աստրախան, Նոր-Նախիջևան, Գանձակ, Շուշի, Ղզլար, Ախալցխա, Շամախի, Ստավրոպոլ և այլն):

40—60-ական թթ. փուլի առանձնացումը թելադրված է այն բանով, որ այդ տասնամյակների ընթացքում վճռական տեղաշարժ է նկատվում մարդանվանական համակարգի և նրա առանձին միավորների միօրինականացման ուղղությամբ: Վերջնականապես ավարտվում է անձի անունների շարքից վերլուծական բաղադրիչների դուրս մղման և համադրական ձևերի հաստատման գործընթացը: Անմիջապես աչքի է ընկնում յանց ածանցի արգասավորությունը: Այդ ֆոնի վրա Հովհաննես Խունուսյանց օրինակը արդեն պետք է եզակի և դիպվածային համարել:

Զնայած վերը նշված միօրինակությանը, դժվար չէ նկատել, որ բանաձևի -եանց-ով բաղադրիչի հիմքերը բառակազմորեն բավականին բազմազան են, և ըստ էության, ներառում են իրենց մեջ հայկական մարդանվանական համակարգի ամբողջ նախընթաց պատմությունը: Այս փուլում -եանց-ը նույնանշային բնույթի ածանց է, քանի որ այն կցվում էր ինչպես անձնանուններին, նույնպես և տեղանուններին, մականուններին, տիտղոսներին, ուղեկցող բառերին: Նույնանշության հիմնական դրսևորումներից պետք է համարել այն, որ անձնանվան հետ զուգորդվելու դեպքում գծագրվում էր այն միտումը, ըստ որի հետագայում այդ կազմությունը վերածվում է հայրանվանական կարգի տարբերակիչի, իսկ մնացած դեպքերում՝ ազգանվանական: Համապատասխանաբար ընթացում էր -եանց և -եան ածանցների մասնագիտացումը: Ասվածները հեշտությամբ լուսաբանվում են աղյուսակ 10-ի տվյալներով: Աղյուսակը

Անձնանուն	տեղանուն	մականուն	զբաղմունքի անուն	ուղեկցող բառ
Հովհաննիսեանց Մկրտչեանց Աղաճեանց Հարությունեանց Շահմուրադեանց Վարդանեանց Աբամեանց Հայտեանց Վահանեանց Աղամալսանց Բորիսեանց Ջալալեանց Մարութսանրե- դեանց Կոստանդեանց Շահնազարեանց Պուտաղեանց Աանեանց Մեհրապեանց Հաչրապետեանց Սերգեյանց Խեմուրեանց Մնացականեանց Արիստղոմեանց	Երևանցիանց Կյանչեցիանց Մասիաշեանց Իզմիրեանց Շամբուտեանց Ջարդեղեանց Լուսի Շահվե- դեանց	Կլորիկեանց Ռատիշեանց Լարակոզեանց Մարրեանց	Արարաջեանց Բժշկեանց Նորասանճեանց Սվեչնիկեանց Խաղախորդեանց Մեքուրնութեանց Ֆարրիկանտեանց	Եպիսկոպոսեանց Նրեցփոխեանց Իշխանեանց Խանաղեանց

կազմված է պատահական ընտրանքի սկզբունքով, ուստի կարելի է ենթադրել նրա ներկայացուցչության մասին: Այստեղից բխում է այն հիմնական եզրակացությունը, ըստ որի երկբաղադրիչ բանաձևի հիմնական բնորոշիչը ունի անձնանվանական հիմք: Ինչ վերաբերում է մյուսներին, ապա նրանք բաշխված են գրեթե հավասարապես, տեղանվանական բնույթի հիմքերի աննշան գերակշռությամբ: Պատահական չէ նաև ուղեկցող բառերով հիմքերի առկայությունը: Ավելացնենք, որ նման կազմությամբ միավորներ ավելի շատ հատուկ են բնաշխարհի ծայրամասերին ընդհուպ մինչև մեր դարի 20-ական թթ. վերջը: Նկատելի է նաև ուղեկցող բառերի կողմից ածանցների ընդունման օրինաչափությունը, որի հետևանքով հենց նկարագրվող փուլում է, որ ձևավորվել են Պրոտոպուովեանց, Երեցփոխեանց, Եպիսկոպոսեանց տիպի բաղադրիչները:

Մեր ունեցած նյութերը վկայում են երկբաղադրիչների քանակական գերակշռության մասին եռաբաղադրիչների նկատմամբ մոտավորապես 2/1 հարաբերությամբ: Եռաբաղադրիչ բանաձևերի դեպքում առաջին եր-

կաւ բաղադրիչները անպայմանորեն անձնանվանական հիմքեր ունեն: Ինչ վերաբերվում է երրորդ բաղադրիչին, ապա այն ինչպես և երկբաղադրիչ բանաձևի դեպքում առավելապես անձնանվանական բնույթ ունի: Սակայն հնարավոր են նաև փոքր թվով շեղումներ այդ օրինաչափությունից՝ Գանջեցիանց, Բրոդօբօբեանց, Մելիք-Ղարակեղեանց:

Եռաբաղադրիչ բանաձևի օրինակները լավագույնս ներկայացնում են -եանց և -եան ածանցների մասնագիտացման պատկերը: Դեպքերի ճնշող մեծամասնությունը ներկայացված է թե՛ մեկ և թե՛ մյուս ածանցներով: Հենց այս փուլում է, որ ճշտվում են այդ ածանցների մարդանվանակերտական գործառությունները՝ -եան-ը հայրանվան, իսկ -եանց-ը ազգանվան համար: Իբրև սպասույց նման մասնագիտացման նշինք, որ -եանց-ով միավորների կողքին, երբեմն -եան-ով միավորները փոխարինվում են հոմանիշ, ալլալեզու մասնիկներով կերտված միավորներով՝ Հովսեփ Աբտեմիշ Խերումեանց, Սիմոն Ստեփանիշ Գանջեցիանց, Ալեքսանդր Նազարիշ Մելիքեանց: Մյուս կողմից սպասվելիք -եանց-ով կազմությունը փոխարինված է -ով ածանցով կազմությամբ՝ Սյամեն Սարգիսեան Իվանով, Ստեփան Նահապետեան Սմայաթով: Նկատելի են անմիօրինակության այլ դեպքեր ևս՝ Դավիթեան Մարգար Դայիթեան, Մկրտիչ Առաքելեան Մեհրապեան: Նկատված տարբերությունները կարելի է բացատրել կամ տեղական ազդեցությամբ և կամ մնայու է այն էրևույթներով: Հարցի վերջնական լուծումը պահանջում է փոստերի առատություն:

§ 14. XIX դ. 70-ական թթ. մինչև դարի վերջ: Նշված շրջանում նախադրյալներ են ստեղծվում մշակելու այն լեզվական կաղապարները, որոնք հիմք են դառնում հաջորդ դարի սկզբի անձնանվանական համակարգի ձևավորման համար: Նախադրյալները վերաբերում են բանաձևի տանձին բաղադրիչների բառակազմությանը, սակայն այս ենթաշրջանում առանձին ածանցների մասնագիտացումը դեռևս ընթացքի մեջ է: Գործառութի անավարտ լինելու մասին է վկայում ազգանվանակերտ ածանցների՝ -եանց, -եան, -ունի (հազվադեպ՝ -ով) մրցակցությունը:

XIX դ. վերջին տասնամյակների վերաբերյալ նյութերը քաղված են պաշտոնական ցուցակներից և մամուլից («Մշակ», «Արձագանք»), վերաբերում են Արևելահայաստանին և Կովկասի գրեթե բոլոր հայաշատ վայրերին՝ Թիֆլիս, Բաքու, Շուշի, Գանձակ, Ախալցխա, Գորի, Ախալքալաք, Շուլավեր, Սղնախ, Մոզզոկ, Զաքաթալա, Դուշեթ, Բաթում, Թե-

լավի, Ղուրա, Ինչպես նաև Ռուսաստանի մյուս հայաշատ վայրերին՝ Քիշինև, Նոր-Նախիջևան, Աստրախան, Սարատով, Սիմֆերոպոլ:

Ամենուրեք նկատվում է -եանց և -եան ածանցների համանշու-
թյուն: -եանց-ով կազմությունների ակնառու գերակշռությամբ (տե՛ս
աղյուսակ 10): Համանշության փաստերը ընդգծվում են դարի վերջին
տասնամյակներում: Ընդ որում, դժվար է նշել այն վայրը, ուր կարելի
է նկատել համանիշ ածանցներից որևէ մեկի գործառական մասնագի-
տացումը: Համանշությունը հաստատվում է այն փաստերով, որ նույնիսկ
XIX դ. վերջին տասնամյակում միևնույն անձը կարող էր անձնանվան
կողքին կրել և -եանց-ով և -եան-ով տարբերակիչներ: Մենք հիմքեր
չունենք նշելու այն շափանիշները, որոնք ընկած են այս տարբերակնե-
րից որևէ մեկի ընտրության հիմքում: Կարելի է ենթադրել, որ այս հար-
ցում որոշակի դեր էր խաղում կոնկրետ իրավիճակը: Վերջինս կարևո-
րություն է ստանում ներկայացվող աղբյուրի պաշտոնականության կա-
պակցությամբ: Որքան պաշտոնական է աղբյուրը, այնքան մեծ է հավա-
նականությունը, որ իբրև ազգանվանակերտ ածանց հանդես է գալիս
-եան-ը: Այսպես, «Մշակի» խմբագրությունը այդ շրջանի նյութերում,
որոնց թվում հայտարարություններում, հետևողականորեն դիմում է
-եան-ով ածանցյալներին: Նկատվածը դեռևս օրինաչափական չէ և
առավել ևս օրենք չէ: Մեր նյութերը օրինակներ են տալիս, որոնք հա-
կասում են ասվածին: Ուրեմն, խոսքը վերաբերում է ընդհանուր միտու-
մին:

Քննարկվող ենթաշրջանում -եան-ով ածանցյալը միևնույն ժամա-
նակ իր մեջ կարող էր խտացնել վերը նշված երկու գործառությունները:
Գրիգոր Արծրունու թաղման պատգամավորների ցանկում նշված է Առա-
քել Բաբախանեսանը (Լևոն), մինչդեռ նրա հայրանունն է Գրիգորի: Մյուս
կողմից Թիֆլիսի քաղաքագլխի մահախոսականում Գրիգոր Երևմիայի
Արծրունին անվանվում է Գրիգոր Երեմեան (տե՛ս «Մշակ», 1892 թ.,
№ 147): Երկանդամ բանաձևի -եան-ով ածանցյալը կարող է զուգորդ-
վել նաև տեր ուղեկցող բառով (Արշակ Տեր-Գրիգորեան, Ջալալ Տեր-
Գրիգորեան): Դժվար է ցույց տալ, թե այդ բաղադրիչը որ կարգին է
պատկանում՝ հայրանվան, թե ազգանվան: -եան-ի նկատված համա-
նշությունը դարձավ լեզվաբանական այն հիմունքը, ըստ որի շափանիշ-
ներ մշակվեցին մասնագիտացնելու -եան-ով և -եանց-ով ածանց-
յալների գործառությունները: Առաջ ընթանալով նշենք, որ մասնագի-
տացման ընթացքը տրամաբանական ավարտ չունեցավ: Ի վերջո՝

-եան-ը դարձավ զուտ ազգանվանակերտ ածանց (-եանց-ի արգասա-
վորության նվազմամբ), հայրանվան համար ստեղծելով ածանցման
հատուկ կաղապար:

Վերը ասվածները, սակայն չեն վերաբերում այն դեպքերին, երբ
եան, -եանց ածանցներին նախորդում են այլալեզու հիմքեր, ուր
ածանցյալի ազգանվանական բնույթը անառարկելի է: Խոսքը վերաբե-
րում է Կարաբլեանց, Կրասիլնիկեանց, Սերեբրակեանց, Պուտովեանց,
Սորոլեանց, Ֆարրիկատեանց և նման օրինակներին:

Պատկերը ամբողջացնելու համար նշենք, որ երկբաղադրիչ բանա-
ձևերում, ի տարբերություն եռաբաղադրիչների, փոխառյալ -ով և
(ով)իչ ածանցներով բաղադրիչներ մեր նյութերում չեն հանդիպում:

Քննարկվող ենթաշրջանում երեքից ավելի բաղադրիչներով բանա-
ձևերը խիստ դիպվածային են:

Եռանդամների ամբողջության մեջ առավել ցայտուն են դառնում
վերը նկատված երևույթները, կապված -եանց և -եան ածանցների
անկայունության հետ: Այն բնութագրվում է վերը նկատված օրինաչա-
փությամբ, որը հանդում է հետևյալին: Տեսականորեն հնարավոր շորս

I	II	III
1 անձնանուն	-եան	-եանց
2 անձնանուն	-եան	-եան
1 անձնանուն	-եանց	-եան
1 անձնանուն	-եանց	-եանց

տարբերակներից՝ իրականացված են 1-ը և 2-ը: Օրինակ՝ Եփեմիա Սար-
գրսեան Սուրենեանց, Գրիգոր Ղազարոսեան Բերբերեանց և Մարիամ Յով-
տանիսեան Ամբարդանեան, Սերովբէ Գյորգեան Ջանեան: Նկարագրվող
ենվաշրջանում ըստ մեր նյութերի առավել արգասավոր է անձնանոն +
(-եան) + (-եանց) կաղապարը: Ի տարբերություն երկանդամ բա-
նաձևի, ուր, ինչպես նշվել է, -եան-ով բաղադրիչը իր մեջ խտացնում է
երկու բնորոշիչների՝ հայրանվան և ազգանվան գործառությունները,
եռաբաղադրիչ բանաձևում -եան — (-եանց) կաղապարի սահմաննե-
րում -եան-ով ածանցյալը հետևողականորեն հայրանուն է նշում: Աս-
վածի համար իբրև ապացույց կարելի է բերել այն դեպքերը, երբ
եան-ով ածանցյալը փոխարինված է այլալեզու համանիշ -իչ ածան-

ցով կազմությամբ՝ Մինաս Եփրեմիչ Եփրեմեանց, Խոսրով Բողղանիչ Արզումանեան:

Չնայած նկարագրվող ենթաշրջանը անմիջապես նախորդում է այն տարիներին, երբ ձևավորվեց և իրավաբանորեն վավերագրվեց այսօրվա եռանդամ բանաձևը, այնուամենայնիվ ժամանակակից ազգանվանակերտ -յան ածանցը այդ փուլում նկատելիորեն բազմիմաստ էր և առավելապես հայրանվանակերտ ածանցի գործառություն ուներ: Արդեն այս շրջանում քիչ թե շատ հաստատուն եռանդամ բանաձևը միարժեք չէր (նույնահունչ մասնիկներով երկու բազմությունների առկայության պատճառով): Նույնահնչությունը նոր ուղիներ փնտրելու անհրաժեշտություն էր առաջացնում: Հավանաբար դրանով պետք է բացատրել այն ոչ հաճախակի դեպքերը, երբ -յան-ով հայրանունը փոխարինվում էր -(ով) իչ-ով կազմություններով, իսկ -յանց-ով ազգանունը երբ -ով ածանցով կազմություններով: Առաջին դեպքի համար օրինակներ բերվել են: Նշենք մի փաստ, որ լուսաբանում է վերջին երևույթը: Երևանի քաղաքային վարչությունը հրավիրում է Տաճկահայաստանից գաղթած Մկրտիչ Վարդանովին, Խաչատուր Սիմոնովին, Մելքոն Յովհաննեսովին (ընդամենը՝ 7 դեպք)¹¹: Եռանդամ բանաձևով օրինակների մեջ առանձնանում են այն միավորները, որոնք ձևավորված են անձնանուն — (-եանց) — տեղանուն (-ցի) կաղապարով՝ Յովհաննէս Գալ-տեանց Ալալքալաքեցի, Ալետիք Խոջամիրեանց Ազուլեցի, Անդրեաս Հայրապետեանց Շուշեցի (15 դեպք): Կարծում ենք, որ այս անգամ գործ ո՞նենք նույնպես ոչ արգասավոր կազմությունների հետ: Այս կամ այն անհատը, հայտնվելով մեծ քաղաքներում (տվյալ դեպքում՝ Թիֆլիս, Աստրախան) ձգտել է ընդգծել իր տեղային պատկանելությունը:

§ 15. Մեր կողմից քննարկվող հարցերը յուրօրինակ դրսևորումներ ունեն հայկական գաղթօջախներում: Այստեղ գործընթացը կատարվում է երկու կարգի գործոնների ազդեցության պայմաններում: Մի կողմից՝ ազգային ինքնությունը պահպանելու ձգտում, մյուս կողմից՝ տեղական ներգործության առկայություն: Քանի որ գաղթօջախների աշխարհագրական և ժամանակային ընդգրկումը բավականին ծավալուն է և բազմազան, ուստի ծագում է խնդիրների մի համակարգ, որը հատուկ ուսումնասիրության կարիք ունի: Մենք անդրադառնում ենք այդ հարցերին մեր ունեցած նյութերի ընձեռած հնարավորության սահմաննե-

¹¹ Տե՛ս «Մշակ», 1892, № 35

յում: Գաղթօջախների անձնանվանական համակարգի գիտական ուսումնասիրությունը ավանդույթներ չունի և, հետևաբար, շրջանաբաժանման փորձեր չեն արվել: Եվ դա պատահական չէ, քանի որ ինքը ուսումնասիրության նյութը տվյալ պայմաններում վերջնական շրջանաբաժանման դժվար է ենթարկել: Ելնելով վերը ասվածից, ուսումնասիրության ընթացքում մենք աշխատեցինք գտնել այլ օբյեկտիվ չափանիշներ մեր ունեցած նյութը, ըստ հնարավորին, ամբողջական ներկայացնելու համար:

Առկա աղբյուրները ըստ հավաստիության սկզբունքի բաժանվեցին երեք խմբի՝

1. Աղբյուրներ, որոնց հեղինակները տեղաբնակ հայեր են, ուստի նրանց հաղորդած տվյալներին կարելի է հավատ ընծայել:

2. Աղբյուրներ, որոնց հեղինակները տեղաբնակներ են, բայց ոչ հայեր և գրառումները կատարվել են տվյալ անձի անունը կրողների ներկայությամբ: Այս դեպքում հնարավոր են օբյեկտիվ պատճառներով պայմանավորված շեղումներ մի կողմից, իսկ մյուս կողմից չի բացառվում կրողի միջամտությունը:

3. Աղբյուրներ, որոնց հեղինակները ոչ-հայեր են և գրառումները կատարել են այլ աղբյուրների հիման վրա: Այս դեպքում գրառումներում չեն բացառվում սկզբունքային անճշտությունները:

Նյութի քննությունը ցույց տվեց, որ անկախ տարածքային պատկանելությունից տվյալները կարելի է բաժանել երեք կարգի: Առաջին դեպքում առկա է այնպիսի անվանում, ուր բանաձևի յուրաքանչյուր բաղադրիչ բնութագրվում է հայերենին բնորոշ բառակազմական առանձնահատկություններով:

Երկրորդ դեպքում բանաձևի բոլոր բաղադրիչները հարմարեցված են տվյալ լեզվական միջավայրին: Այն մասին, որ վերջիններս վերաբերում են հայկական ծագում ունեցող անձի, դատում ենք կողմնակի աղբյուրներից:

Մեր ունեցած տվյալները ներկայացնում ենք աղյուսակի ձևով.

Աղյուսակ 12

XVII դ.

I կարգ	II կարգ	III կարգ
1	2	3

Գավիթ Շամօլօվցի
Սհատճի Գրիգոր

Տրանսիլվանիա

1	2	3
<p>էրկան Խաչում Գաղթուաին Ազսենտին որդի Լուսիկ Վարդան Հունանեան</p>	<p>Գրիգոր Կիրաք-Միրման Լիվսոն</p>	
<p>Սուլթանում Հովհաննիսեանց Պետրոս Փանոսեանց Յովհաննան Սարգիսեան Քովմաս Ամիրզատեանց Բարթողիմեոս Մանուելեանլ Գավիթ Զաքարեանց Յովհան Արնիխանց</p>	<p>Գևորգ Ապրո Չելիպի Վարդան Ա.Իրխան Խրիստոֆոր Տոմանովիչ Լվո.լ</p>	<p>Նիկոլայ Կրիշտոֆովիչ Յան Գոլուբովիչ</p>
	<p>Զախարիաշ Կասպարովիչ Յուխնո Տոմանովիչ Կրիշտոֆ Զախարիաշովիչ Սիմոն Կիևովովիչ Սիմոն Վարտերիշովիչ Ավեդիկ Բերնատովիչ</p>	<p>Իվաշկո Սաեֆանովիչ</p>
	<p>Քորոս Գարբուրաշ Ստեֆան Դերկասպարովիչ Ըոգդան Նորշեշովիչ Ասվադուր Կիելկովիչ Ռուսաստան</p>	
	<p>Ավանեսով Սարկիս (Կիրիլկո Ովանեսով, Սարկիսկո Ովանիսով) Արդուլով Սիմոն Սիլանկա Ավանիսով</p>	<p>Յակով Ավդեե</p>
	<p>Միխայիլ Ավդոկիմով Ազաջան Ավեդիկով Յակով (Յագուպ, Եզուպ) Ավեդիկով Կասպար Ալվազով</p>	<p>Զախարի Սարազով</p>
<p>Աստվածատուր Միրիթենց Պատիկ աղա Շահի Խասենց Աղափիրի Շահխաթունենց Մարգար Շարիմանենց Զաքար Հերանենց Մարտիրոս Ազինց</p>	<p>Իվան Ալիխանով Գրիգորեյ Գյաուզենց Հոանես Զեարկալենց Կուզաս Զեմալենց</p>	

1	2	3
<p>Ազափիրի Զախրունց Ակորջան Ուստաբաշի Ապով Լուսիկենց Ուսեֆ Նանենց</p>	<p>Ուահանես Ասկանդարով Արաբետ Մատվեն Ուզան Իվանով Կասպար (Կասպեր, Կաշպարկո) Անդրեն Քաղաասարկա Իլլին Մակար Առաքելով Գրիշկա Արաստակեսով Արիտունկո Գրիգորեվ Արյուայուկով (Արետուկով) Սերգիս Ասկանինով (Ասկանին) Մուսես Ալավերդեյկա Միկիտին Դավիթ Բոգումով Կազար Կալյուստով Կալյուցկ Նիկոլա Կիրիլով Ուքանկա Կիրյակոսով</p>	<p>Իվան } Միշկա } Լեոնտե Օսիպ }</p>
<p>Միրզաբեյ Լուկասով Գրիգորիյ Լուսիկով Արապետ Մարտինով Արաբետկո (Արաբետ, Խերաբետ) Մատվեն Խաչիկ (Խաչինկա) Միխայլով Առաքել (Առակիմ, Ռաբել) Պետրով Պոգոգով Յակով (Յանկա)</p> <p>Իվաշկո Տավակալով Քանրիվերան Բոգդան Ասո- վաժատուր Սայթանով Բուզուս Ուզանով Ֆրանկուկա Առաբետով Ուկրաինա Ավեդիկ Պոպովիչ Կամ Վասկելիչ</p>	<p>Մտեփան Ռամադամսկի</p> <p>Լազար Կոստեիչ Գեորգի Գրեգորովիչ Լազար Ավգուստինովիչ Պավլովա Ռուսկա Պյոտր Գրեգորովիչ</p>	

1	2	3
<p>Գևորգ որդի Յովհաննես Տեր-Հովհաննես Տերզնցի Կարապետ Բաղիշեցի Գևորգ որդի Յակոբայ Ստեփանի որդի Գևորգ Նաև Գևորգ Գևորգեան Սարուխան որդի Յակովբայ Մելգոն որդի Յովհաննու Յովսևի որդի Գրիգորի Գարրիելի որդի Կիրակոս Աղաճանի որդի Գևորգ Յովհաննիսի որդի Ճանիրելի Յակոբ Գալուստեան (Մե- ղապարտ) Խօճայ Սեֆեր որդի Գևորգայ Առաքել Բոպիկ Վարդան Յովնանեան Յակովբ Մարգարեան Գասպար Տերվիշեան Ասուատուր որդի Սիմոնի Հաճի Օհան Յարույնի որդի Յովհաննիսեան Մատուր Տեովլէթեարի որդի Յով- հաննես</p>	<p>Իվաշկո Կևորովիչ Ստեցկո Խոզդիգերովիչ Րաբտուլովեյ Ներսեսովիչ Ասվազուր Մինյազյովիչ Ահաստան Գաբրիել Բոզոսովիչ Դեր-Սիմոնովիչ Թորոսովիչ Ասլանովիչ Մուրադովիչ Ներսեսովիչ Մխիթրովիչ Վենետիկ Գևորգ Գոքիլիոյ Պետրոս Ոսկան Մարտիրոս Լորենցոյորդի Պետրոսի Խաչատուր Հայ (Դավրիժեցի) Անտոն Սուրբան Հայ Գևորգ որդի Հայոյն Յով- սեփայ Սիմոն Յակովբ Ստեփան Պետրոս Յակոբ Մէրտինցի Հայ որդի Յովհաննու Դոմինիկոս Ատանայ Հայ Մարկոս Մուրատ որդի Յա- կովբայ Աղեքսանդր Սիմոն Սկրտիչ Պարսկահայ Դադար Պարսկահայ</p>	<p>Իվաշկո Ստեֆանովիչ Սիմոն Վարենկո Իվաշկո Բերնատովիչ Բերնարդ Բերնացկի Ավգուստինովիչ Կապրուսովիչ Մատիաշևիչ Զախնովիչ Յրանչևոյ Մատթեոս Անտոն Պալա Դոմինիկա Զելիլիա Լուչինա</p>

1	2	3
<p>Կեկանա (Ղևոնդ) Վասկանով</p> <p>Գրիգոր Ներսեսի Խաչիկ Օսքերիշի Խազոր Օհանի Զադիկ Օվանեսի Իսայ Տիրացու</p>	<p>Լվով</p> <p>Գրիգորեյ Պետրով Արուսյուն Տարասով (Տորոսով) Արրամ</p> <p>Մանուկ } Վարդան Սաֆար } Ապկար Բաբանով Ախվերդի Ավասով Մինաս Տերյանով Ավետ Աղազարով Կասպար Ավակով Խաչիկ Իվանիսով (Ավանեսով) Մարկիս Ավետով Արիջան Արաբետով Մոսկով Զախարով Ավետ Ամիրբե Կասպիր Արվելով Ավետ Միրյուզով Մնացական Գրիգորեյ Սաֆար Վասիլև Գրիգորի Թոփչենց Նազարեյ Մանուկով Փիրի Մանացականով Բաբաջան Գրասիմով Օրդին Արակիլով Արտեմով Մխիթար</p> <p>Տրանսիլվանիա</p> <p>Պետրոս Քելի Վարդան Իսիջուց Ամիրա Խնկանոս Մարտիրոս Բազրուսյան Յանկո Խնկանոս Նիկոլ Շոմլցի</p>	<p>Պավել Գավրիլով Բուդեբ Սեմյոնով Միկոլայ Խրիստոֆորով Պյոտր Գավրիլով Իվան Միկոլայեյ Անդրեյ Սեմյոնով Ստեպան Միկոլայեյ Սեմյոն Լազարեյ Իվան Վլասով Սավա Սերգեև</p> <p>Իլիաս Իլլին</p> <p>Դանիլո Յակովլև</p> <p>Իվան Պավլով</p> <p>Բողդան Կոնստանտինով</p> <p>Լուկա Իլև</p> <p>Պիրով Նիգուշ</p>

1	2	3
<p>Մհակ Տիրացուի</p> <p>Նիկոլ կոլորիկ Աստվածատուր կոշկարի Ղազար Օհաննանց Քուման Ջատիկեանց Մարտիրոս Մանուկի Ջատիկ Իսահակեանց</p> <p>Լուսիկ } Օսգերիչեանց Ասվատուր }</p> <p>Սիմոն Խաչերեսի Գապտե- պովեանց Վարդան Լուսիկի Իսաչե- լանց Արրահամեան Աղեքսանդրեան Արմենեան Աւագեան Աւետիսեան Գեորգեան էնազրճեան Քերզեան Մարտիրոսեան Նազարեան Նարկիզեան Շեհրիմանեան Պերպերեան Պոլսեցեան Սալվաթորեան</p>	<p>Տոնիկ տիագոն</p> <p>Նիկոլ Ճիրախի</p> <p>Իվոնո</p> <p>Աստուխան</p> <p>Աթաբեկ Բաղդասարով Սարգիս Անդրեյասով Պյոտր Խոշումով Պարսամ Օժիժամով Քաթոս Բարաջանով</p> <p>Կևորկ Նիկիտին Մակար Պետրոսով Ջախար } Մոսեսով Պողոս }</p> <p>Սարապիոն Մինասով Գուկաս Սազակով Գրիգորի Միսաարմյանով Խոլզատ Գրիգորե</p>	<p>Յակով Նիկիտին Օսիպ Գրիգորե Գավրիլա Սերգեե</p> <p>Արտեմի Անտոնով</p>
<p>Նղիազար Գրիգորեան Պողոս դի Յարուսիւնի Պետրոս դի Վարդան</p>		

1	2	3
<p>Յակոբ դի Տեր- Ոսկանեան Յարութիւն Գավիթեան Բարիջանի որդի Քաթէոս Ըստեփան Սարգիս Շահինեանց</p> <p>Խաչատուր Պիննաթեան Սարգիս Զատիկի Աւագեան Միքայել Զատիկի Աւագեան Տէր Սիմոն Թորոսեան</p> <p>Մարտիրոս Գանտրեան</p> <p>Յակոբ Լուսիկեան Զիֆթայենց Տէր Ստեփանոս Տէր Մելիքսե- ղիկեան Ուրմանցի Տէր Յօճան Քօսայ Սհակեան</p> <p>Վարդան Բաբայեան Խաչատուր Եագուպիեան Լիզաբեդացի</p> <p>Յօճանես Գրիգորի Ազոնց Լուսիկ Գրիգորեան Ազոնց Մանուկ Գրիգորեան Ազոնց Մանուկ Աբրահամեան Յօճանես Խաչատուրեան Մարտիրոս Օվանի Յօճանես Յակոբշայի Ստեփան Աբրահամեան Իսայ Մանուկի Խաչատուր Յակոբշայի Աստվածատուր Ղազարի Ակսենտին Աբրահամեան Լուսիկ Մամու Յօճանեսի Դավիթ } Սերազցի Երանոս } Խաչիկի Լուսիկ } Խաչիկ Դօտերի Յովիանենց</p> <p>Խաչիկ Խաչիկի Վրժարենց Յօճանես Խաչիկի Ոսկերիչենց</p>	<p>Յակոբ Պալասանկա Մինաս դի Յակոբջան Խալզարով</p> <p>Սիրվիգ, ճուրճով Տէր Յօճանես որդի Գրեչունի Լուսիկեանց</p> <p>Աղաշա Պիրով Օվանես Մամանց Աղաշա Տիրացու Ստեփան Աբրահամենց</p> <p>Օգսենտիոս Վրժարենց Պօջանցի</p> <p>Ստեփան Սազալուի Ակոփեան</p> <p>Կրրով Ղազար Օճանեան</p> <p>Յակոբ Գապտեպով</p>	

1	2	3
<p>Սիմոն Շիմայենց Յակոբըայ Միտզոյի Տօնիկ վարդանի Ուրմանցի Աստվածատուր Խալթնճի Նիկողոսյոս Մանուկի Հոռոմն Մխիթար Կոշկար Լուսիկ Ոսկերիչեան } Իպաշֆա- Նիկոլ Ճիրախի } լովցի</p>	<p>Մոսկվա</p> <p>Մարկոս Տուրուսով Կալուստ Իվանիսով Եսազուլր Արտեմյևով Պետրոս Սարկիսով Ագիշ Գասպարով Լազար Խրիստոֆորով Ախիջանենց-Ախիջանով Անտրիասևով Սյուրվար Ապկարով Դիլյակ Պյոտր Կասպարով Խաչատուր Յակոպով Յակով Սիրզանով Իվանիս Մատուրով Ժիլյար Մուսևսով Վարդան Մարգարով Արանճ Փիրյումով Գրիգորի Ոսկայով Ժագան Զուրաբով Մագաթ Մարգարով Եղիազար Վարդանով Ալիսազ Կիրյակոսով Պյոտր Սարկիզով Կեորկ Գուլասարով Գաբրիել Էյվազով Տարսևան Մինազով Սիմոն Կասպարով Սիսակ Սարուխանով Լարտան Սախակով Կաբրիել Մանուկով Տուրուս Պետրուսով Սագակ Մատուրով Արետ Մանացականով Էվում Միրզանով Յակով Պապանով Մանասար Էփրումով Ալեքսանդր Էփրումով Բոգդասար Մակարտիչով Կոստյան Թարգուլևով Օվանիս Խատենով Իսազան Պուգոսով</p>	

1	2	3
	<p align="center">Մոզիլյով-Պոդոլսկ</p> <p>Գրիգորի Իվանով Խինգանոսով</p> <p>Տէօդոր Խրիստափոսով Գալուստովիչ Գալիտան Նիկոլաև Վարդանով Ստեփան Կարապետովիչ Գալստան Գարիտոնով Կարապետովիչ Մանուկ Պետրով Գալուստովիչ Գրիգորի Նիկոլաև Սերայի Անտոն Շեմսնով Մանուկիչ</p>	<p>Իվան Ֆէոդորով Գլուշկևիչ</p> <p>Անտոն Խարիտոնով Պօպիլ Գրիգորի Նիկոլաև Չայնկովսկի</p>

Աղյուսակի առաջին սյունակի տվյալները համապատասխանում են յայկական մարդանվանական համակարգի ձևավորման ընդհանուր պատկերին: Ներկայացված բոլոր տիպերի համար իբրև անփոփոխակ լանդես է գալիս անձնանունը, որի հետ իբրև տարբերակիչներ կարող են կիրառված լինել՝ հայրանուն (Յովանճան Սարգիսեան), տեղանուն (Դաւիթ Շօմօլովցի), զբաղմունք (Մխիթար կոշկար): Մեր շրինակներում լանդիպում ենք բառակազմական լայն հնարավորությունների մասին վկայող, ինչպես նաև հայկական ավանդույթների լայն կիրառության դեպքերի հետ:

Առաջին կարգի օրինակների շարքը կարելի է դասել -ևան, -եանց ածանցներով բազմություններ (XVII դ.): Այս կաղապարի սահմաններում նույնպես, ինչպես և բնաշխարհում նկատվում է հայրանվան և ազգանվան սահմանների ոչ հստակություն: Այսպես, Յունանեան, Մանուկևանց, Զաքարեանց, Սարգիսեան, Տեր-Ոսկանեան տարբերակիչների համար դժվարանում ենք նշել նրանց տեղը բանաձևում՝ հայրանուն են, թե աղգանուն:

Այստեղ մենք հանդիպում ենք այնպիսի ածանցների, որոնք տարածված էին հայկական մարդանվանագիտության մեջ ընդհանրապես:

Դրանց թվին են պատկանում -եանց, (-ենց, -ինց, -անց), -ի, -ցի, -եան, -եանց:

Համեմատութիւնը նախորդ աղյուսակների հետ ցույց է տալիս, որ իսպառ բացակայում են -ունի, -(ա)կան ածանցներով կազմութիւնները: Տարածքային ցրվածութիւնը հնարավորութեան չի տալիս ներկայացնելու այս կամ այն ածանցի արգասավորութիւնն ըստ տարածքի ու ժամանակի: Ըստ երևույթին, նման վիճակը արդշունք է ոչ այնքան նյութի սակավութեան, որքան արտացոլում է օբյեկտիվ իրականութիւնը: Այս դեպքում քիչ դեր չի կատարել նաև տեղական ազդեցութիւնը, որը տարածվում է ամենուրեք և ըստ ժամանակի գնալով ավելի զգացնել տալիս (տե՛ս ստորև): Աղյուսակի առաջին սյունակի քննութիւնը ցույց է տալիս, որ գերակշռում է երկանդամ բանաձևը և վայրի և ժամանակի առումով: Ուշադրութիւն ենք դարձնում այդ բանի վրա, քանի որ XVI—XVII և անգամ XVIII դդ. բնաշխարհում տարածված բանաձևը նման հետևողական երկանդամութիւն դեռևս հանդես չէր բերում: Դյուրին է այս հանգամանքը մեկնաբանել տեղական ազդեցութեամբ: Ավելի հստակ պնդման համար անհրաժեշտ են տիպաբանական կարգի հետազոտութիւններ, որոնք մեր խնդիրներից դուրս են, ուստի բավարարվենք ասվածով:

Երկանդամ բանաձևի գերակշռութիւնը զուտ վիճակադրական բնույթ ունի: Վերջիններիս կողքին հանդիպում ենք մեծ բազմազանութեամբ բնութագրվող երևույթների՝ բազմանդամ բանաձևից մինչև եռանդամ: Բազմանդամների շարքն ենք դասում այն օրինակները, ուր բանաձևի բաղադրիչները չեն կարող մեկնաբանվել հայկական անձնանվանական բառակազմութեան ավանդույթներով: Օրինակ, մինչ այս մեզ չեն հանդիպել դեպքեր, երբ բանաձևի բաղադրիչները զուգորդված են իրենց ուղիղ ձևերով: Նման երևույթի մենք ականատես ենք լինում Վենետիկին, Լիվոռնոյին վերաբերող դեպքերում՝ Ալեքսանդր Սիմոն, Մկրտիչ, Ղազար Պարսկահայ, Պետրոս Ոսկան, Սիմոն Յակովբ, Գրիգոր Կիրաք-Միրման, Գէորգ Ապրո Չելէպի, Վարդան Ամիրխան:

Այս վայրերի համար հատկանշական չեն Մելգոն որդի Յովհանու, Յովհաննեսի որդի Հակոբ, Զաքարիայի որդի տեր Յովհաննես օրինակները, որոնք, սակայն, ինչպես ցույց է տրվել վերևում, տարածված էին բնաշխարհում: Նման երևույթների շարքը կարելի է դասել նաև այն կազապարը, ուր իբրև ազգակցական հարաբերութիւն կրող հանդես է

գալիս դի մասնիկը¹² (Պետրոս դի Վարդան, Յակոբ դի Տեր-Ոսկանեան, Ըստեփան դի Սարգիս Շահինենց): Երկանդամ բանաձևի դրսևորումներից մեկում երկրորդ տարբերակիչ բաղադրիչը ակնհայտորեն հայրանուն է, որ ձևավորված է, մեծ մասամբ, -ի ածանցի օգնությամբ՝ Գրիգոր երեսեի, Խաղար Օհանի: Վերջինիս մասնավոր դրսևորումներից պետք է դիտել այն դեպքը, երբ իբրև երկրորդ բաղադրիչը հանդես է գալիս ոչ թե հոր անձնանունը, այլ նրա զբաղմունքի անունը, որ նույնպես ձևավորված -ի ածանցով՝ Խաչիկ Օսքերիչի, Սհակ տիրացուի, Ասվա-ծատուր Կոշկարի:

Երկանդամ բանաձևի սահմաններում իբրև երկրորդ բաղադրիչ հանդես էն գալիս նաև մականվանական միավորներ՝ էրկան Խաչում, Սհատի Գրիգոր, Ակոբջան Ուստաբաշի, Իսայ տիրացու, Նիկոլ Կոլորիկ, Աստվածատուր Խաթնճի, Մխիթար կոշկար: Այդ կարգի միավորները հետադարձում անձնանվանական ավելի զարգացած միավորի վերածվելու նկատելի միտում են հանդես բերում՝ Օսգերիչեանց, էազրճեան, Թերզեան, Պերպերեան և այլն:

Ուղուրլյանի աշխատության մեջ հանդիպում ենք հետևյալ ձևակերպմանը. «...Իրաքանչիւր ընտանեաց անուանքն դնեմք աստէն կարու» Իբրև ասվածի առաջույց բերում է հետևյալ օրինակները, որոնք տերաբերում են XVII դ. (Լիվոնո)՝ Աբրահամեան, Աղեքսանդրեան, Արժևեան, Աւագեան, Նարկիզեան, Շեհրիմանեան, Պերպերեան, Պոլսեղեան, Սարվաթորեան, Թերզեան:

Չի բացառվում, որ -եան-ով ածանցյալները, որ գնահատվում էին իբրև երկանդամ բանաձևի հայրանվանական կամ անձնանվանական միավոր, հանդես են գալիս տոհմանվան իմաստով: Այս դեպքում ևս հստակ սահմանադատում անցկացնելու համար անհրաժեշտ քանակություններ տվյալներ շունենք:

Բանաձևի հայկական դրսևորման եռանդամ տարբերակները քանակական և բառակազմական առումներով հաստատուն չեն: Ըստ երևույթին քանակական և բառակազմական գործոնները փոխադայմանավորյալ են: Իբրև հետևանք պետք է նշել հատկապես երրորդ բաղադրիչի ձևավորման իմաստային ձևաբանական բազմազանությունը:

¹² Դի մասնիկը կարելի է դիտել իբրև ֆրանսերենից փոխառություն, ինչպես նաև որդի→դի անցման արդյունք: Հարցի լուծման համար անհրաժեշտ են լրացուցիչ տվյալներ և նրանց ուսումնասիրություն:

Նուանդամ բանաձևի առաջին երկու բաղադրիչները ընդհանուր առմամբ արտացոլում են երկանդամ կազմութունների արդեն նկարագրված տրամաբանությունը, իսկ ինչ վերաբերում է երրորդ բաղադրիչին, ապա այն կարող է լինել՝

1. բուն անձնանվանական ծագում ունեցող, որ ձևավորված է -եան (Սարգիս Զատիկի Աւագեան) և -ի (Դավիթ Սեբաղցի Խաչիկի) ածանցներով,

2. տոհմանվանական բնույթի՝ -ենց (Յակոբ Լուսիկեան Զիֆթայենց) և -ոնց (Յոհանես Գրիգորի Ազոնց) ածանցներով,

3. տեղանվանական բնույթի՝ -ցի (Տեր Ստեփանոս տէր Մելիքսեդեկեան Ուրմանցի, Խաչատուր Եագուպեան էլիզաբեդցի):

4. «Զբաղմունքի անուն» նշանակությամբ հիմնով, որը ձևավորված է -ւնց ածանցով՝ Յոհանես Խաչիկի Ոսկերիչենց:

Իբրև մականվանական երրորդ բաղադրիչ կարելի է ներկայացնել նաև Հոռոմն օրինակը՝ Նիկողայոս Մանուկի Հոռոմն:

Երկրորդ կարգի երևույթների շարքն ենք դասել այնպիսի դեպքեր, ուր բանաձևի անդամներից առնվազն մեկի հիմքը հայկական ծագում ունի և բաղադրիչներից առնվազն մեկը ձևավորված է տվյալ վայրի լեզվական բառակազմական օրինաչափություններով: Բնականաբար լեզվական յուրաքանչյուր միջավայր իր կնիքն է դրել բաղադրիչների ձևավորման վրա: Ասվածը, ինչպես և սխտք էր ենթադրել, վերաբերում է երկրորդ բաղադրիչին, շնայած առաջին՝ անձնանուն բաղադրիչը ևս երբեմն կարող է կրել տեղական ազդեցության կնիքը: Նկատելի է, որ այս երևույթները նույնպես հիմնականում երկանդամ են:

Երկրորդ բաղադրիչի փոփոխության ամենաբնորոշ դրսևորումը կապվում է ածանցման հետ: Ռուսաստանի հայկական գաղթավայրերում, բնականաբար, երկրորդ բաղադրիչը ձևավորված է -ով, -եվ, -ին ածանցներով՝ Սարգիս Ավանեսով, Արիտունկո Գրիգորեվ, Բագդասարկա Իլլին, լեհական և ուկրաինական գաղթավայրերում՝ -ովիչ, -եվիչ ածանցներով՝ Սիմոն Կիևիորովիչ, Պյոտր Թաթեսեվիչ: Ռոմանական լեզուներում զարգացած ածանցման համակարգի բացակայության հետևանքով ուսմանոխոս երկրներում հանդիպում են օրինակներ, որոնց բաղադրիչների ձևավորումը մոտ է հայկական զրո ձևույթով կազմություններին՝ Պետրոս Ոսկան, Սիմոն Յակովբ, Ստեփան Պետրոս:

Հանդիպում են դեպքեր, երբ բանաձևի բաղադրիչը մասնիկի արժեք է ձեռք բերում, ընդգծելով կրողի հայկական, իսկ ավելի լայն՝ արևելյան

ծագումը՝ Խաչատուր Հայ, Անտոն Սուրեան Հայ, Յակոբ Մէրտինցի Հայ, Գեմինիկոս Ատանայ Հայ, Մկրտիչ Պարսկահայ:

Նկատվում են բանաձևի առաջին՝ անձնանուն բաղադրիչի հարմարեցման դեպքեր համապատասխան լեզվական միջավայրին: Հարմարեցումը որոշ դեպքերում դրսևորվում է բառապատճենմամբ՝ Խրիստոֆոր, Իվան, Բոգդան, Յակով: Սլավոնական գաղթավայրերում անձնանունները երբեմն ձևավորված են -կո, -կա ածանցներով: Ինչպես վկայում են սլավոնական և մասնավորապես ռուսական ա մարդանվանագիտական ուսումնասիրությունները այդ ածանցները ընդգծում էին կրողի սոցիալական ոչ լիարժեքությունը՝ Կիրիլկո Ովանևսով, Կաշպարկո Անդրեև, Բադդասարկա Իլլին, Գրիշկա Արաստակևսով: Հանդիպում ենք հայերեւին ոչ հատուկ հնչման դեպքերի, որոնք մեծ մասամբ կապվում են երկրորդ բաղադրիչի ձևավորման հետ: Լեհական միջավայրում առկա է « > 2 անցումը այն դեպքերում, երբ ս-ն հայերենում շեշտակիր վանկի լերջին բաղաձայնն է, իսկ լեհերենում նախաշեշտ վանկի բաղաձայնն է՝ Զաքարիաս-Զաքարիաշ, Ներսես-Նորսէշ-Նորշեշ, Վարդերես-Վարդերեշ: Երկու անցմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ կոնկրետ կիրասության պայմաններում հնչյունափոխված հիմքերին ավելանում էին ևս 1 բևեռ նոր վանկեր, որոնցից առաջինը իր վրա էր կրում շեշտը, իսկ վերջինը շեշտազուրկ էր՝ Զաքարիա-Զաքարիաշ-Զաքարիաշովիչ, Ներսես-Նորսէշ-Նորշեշովիչ, Վարդերես-Վարդերեշ-Վարդերեշովիչ:

Առկա են նաև ձայնեղ-խուլ և խուլ-ձայնեղ անցման դեպքեր՝ Կասպար-Կասպարովիչ, Գէորգ-Կիևվորովիչ, Կիեյկովիչ, Պողոս-Բոգոսովիչ, Տեր-Սիմոն-դեր-Սիմոնովիչ, Ղևոնդ-Կեվանտ, Աբգար-Ապկար: Ինականաբար միևնույն գաղթավայրի սահմաններում զուգահեռ ձևեր չենք գտնում (կա միայն մեկ բացառություն՝ Մնացական Գրիգորեվ—Լվով): Երկու կարգի երևույթները դժվար է բացատրել միայն տեղական ազդեցությամբ, մանավանդ որ նման անցումները օրինաչափ են հայերենի արևմտյան և արևելյան բարբառների փոխհարաբերության պայմաններում:

Ռուսական լեզվական միջավայրում նկատելի է օ-ա անցումը միայն ռուսական բարբառների ազդեցության տակ՝ Ավանիսով, Ոսկան-Ասկանինով, Թորոս-Տարասով, Ոսկան-Վասկանով: Արևմտյան վելիկոռուսական ազդեցության դրսևորումներից պետք է համարել ե, օ-ու անցումը՝ Պողոս-Պուգուսով, Եփրեմ-էփրումով, Թորոս-Տուրուսով, Օհան-Ուզանով: Նման կարգի օրինակներ կարելի է առնվազն կրկնապատկել,

սակայն, մեր կալծիքով, բերվածները բավական են ցույց տալու համար այն փոփոխությունները, որ կրում էին հայկական անձի անվան դրսևորումները այլալեզու միջավայրում: Մյուս կողմից այդ նույն օրինակները գալիս են հաստատելու, որ հայկական անձի անուն և հայերի անձի անուն ըմբռնումների որոշակի տարբերակումը խիստ անհրաժեշտ է: Վերջնական հարմարեցման գործընթացը լավագույնս երևում է աղյուսակի երրորդ սյունակի տվյալներով: Այդ սյունակի տվյալները վերաբերում են հայերին (կասկածների հիմք չունենք, քանի որ աղբյուրները հավաստի են): Հիշենք թեկուզ Մոգիլյով-Պողոլսկ քաղաքի անվանի հայերի 1871 թ. ուղերձը հայոց կաթողիկոսին¹³: Կարելի է նշել վերջնական հարմարեցման հետևյալ ուղիները՝

1. Տվյալ անձի անունների հարմարեցումը տեղական պայմաններին՝ Ստեֆանովիչ, ըստ երևույթին Ստեփանեան, Սարաղով—Սահրաղյան, Ֆրանչեսգոյ Մատթէոս Անտոն: Ասվածի դրսևորումներից մեկն էլ կանոնական հիմքերով ազգանունների հարմարեցումն է տեղական պայմաններին՝ Մկրտիչ—Նիկիտին, Գրիգոր—Գրիգորև, Սարգիս—Սերգեև, Հակոբ—Յակովլև, Պօղոս—Պավլով, Գաբրիել—Գավրիլով:

2. Հայր պարզապես յուրացնում է տեղական որևէ ազգանվան ձև՝ Գոլուբովիչ, Ավդեև, Լեոնտև, Ավգուստինովիչ, Վարենկո, Բերնատովիչ, Բերնացկի, Պալա Դոմինիկա, Լազարև, Իլլին, Վլասով, Գլուշկեիչ, Զայեկովսկի:

Հարցի մանրամասն քննությունը մեր խնդիրներից դուրս է, քանի որ աշխատանքը նվիրված է հայկական մարդանվանական համակարգին: Հայերի մարդանվանական համակարգի քննությունը առանձին ուսումնասիրության առարկա է և դուրս է լեզվաբանական ուսումնասիրությունների ոլորտից:

¹³ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, 3, էջ 138:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Գ

ԱՆՁՆԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՎԱՆԱԿԵՐՏ ՀԻՄՔԵՐ

Հայ մարդանվանագիտության պատմությունը վկայում է, որ անձնանունը միշտ եղել է ազգանունների սերման գլխավոր աղբյուրներից մեկը¹: Եվ պատահական չէ, որ հայկական ազգանունների անձնանվանական հիմքերի մեջ ներկայացված են մեր անձնանունների ծագումնաբանական, կառուցվածքային, տարբերակային և գործառական բոլոր շերտերը՝ բնիկ և փոխառյալ, պարզ և բաղադրյալ, մեծ հաճախականություն ունեցող և սակավ հաճախական, նախաքրիստոնեական և ևտքրիստոնեական շրջանների, անձնանվան գրական և ոչ գրական տարրերակներ և այլն: Անձնանվանական հիմքերի ուսումնասիրությունը նպատակահարմար է սկսել անձնանվան անփոփոխ կամ բառարանային ձևից, որ ներկայացված է ՀԱՆԲ-ում որպես գլխաբառ: Այն դեպքերում, երբ անձնանվանական որևէ հիմք ներկայացված չի եղել ՀԱՆԲ-ում, օգտակար ենք այլ աղբյուրներից՝ վիճագիր արձանագրություններ, հիշատակարաններ և այլն:

1. ԱԶԳԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԾՆԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Անձնանուն ազգանվանակերտ հիմքերի ծագումնաբանական դասակարգում ասելով հասկանում ենք այն աղբյուրը կամ այլ կերպ՝ փոխատու լեզուների վերհանումը, որոնցից այլևայլ պատճառներով և տարբեր ժամանակներում հայերին են անցել այդ անձնանուն-հիմքերը: Ծագումնաբանական հետևյալ շերտերն ունենք՝ բնիկ, իրանական, իրևական, հունական, արաբական, թուրքական և այլն: Աշխատենք ներկայացնել նշվածներից յուրաքանչյուրը:

ԻՐԱՆԱԿԱՆ ՇԵՐՏ: Այս շերտի մեջ առանձնացվում են այն բոլոր անձնանունները, որոնք առկա են մեր ազգանուններում իբրև անձնան-

¹ Հայկական բոլոր ազգանունները նշանակիր են, բացառություն են կազմում Աբով, Գանիկ-Բեկ, Քալանթար, Քելեկ, Քոչար ազգանունները, որոնց մասին կիսովի ավելի ուշ:

վանական հիմք: Բնականաբար այս շերտը ժամանակային և գործառական առումով բավականին բազմատարր է: Այս հարցերին կանգրդադառնանք ավելի ուշ: Պարզապես ավելացնենք, որ սկզբունքը խստորեն պահպանած լինելու ձգտմամբ, հետևողականորեն այս շերտի մեջ ենք դասել նաև անձնանունների այն խումբը, որ, ինչպես հայտնի է, իրանյան լեզուները վաղ միջնադարում դադարել են օգտագործելուց և պահպանվել է միայն հայոց մեջ:

Հայկական ազգանվանական հիմքերի անձնանուն շերտի իրանական ենթաշերտի վերհանման հարցը քննելիս օգտվում ենք Գ. Մ. Նալբանդյանի «Իրանական ծագում ունեցող հայկական անձնանուններ (կոպտուր-պատմական և ստուգաբանական հետազոտություն) աշխատությունից»²: Հայկական անձնանունների մոտ մեկ քառորդի (մոտավորապես 1200) համակողմանի ուսումնասիրության հիման վրա, հենվելով նախորդ նվաճումների, մասնավորապես Յուստիի, Հյուբշմանի, Թիրջաքյանի և հատկապես Աճառյանի աշխատությունների վրա, Գ. Նալբանդյանին հաջողվել է մի ամբողջական աշխատանք գրել, ուր մեզ համար հատկապես արժեքավոր են իրանական փոխառությունների ժամանակագրության որոշումը: Այսպես, հին-իրանական շերտում նշվում են մարական, հին-պարսկական, Ավեստայի և սկյութա-ալանա-օսեթական ենթաշերտերը: Քննվում է նաև հայկական անձնանունների միջին-իրանական շերտը, որը կապվում է պարթևական ձևերի հետ, հատկապես պարսիկ և հայ Արշակունիների ժամանակաշրջանում: Մասնավորապես այս շրջանին է վերաբերում Աճառյանի հետևյալ միտքը. «Հատկապես այն բաները, որոնք մեր լեզվական զգացողությամբ ավելի հարազատ հայերեն բառեր են համարվում, փոխ է առնված հին արշակունի կամ պարթևական շրջանին, և ոչ Սասանյան»³: Բնականաբար, ասվածը հավասարապես տարածվում է նաև անձնանունների վրա, օրինակ Անուշ, Բաբկեն, Խորեն, Սուրեն, Հրահատ, Վարազդատ, Արտակ, Վասակ, Վարդան, Քաջիկ, Շավարշ, Արտաշես, Կարեն, Շահեն, Արիստակես, Գուրգեն, Դրաստամատ, Դեղ, Վաչագան, Պերճիկ, Պերճուհի, Վիրապ և այլն:

Ի նկատի ունենալով վաղ իրանական շերտի կարևորությունը հայկական անձնանվանական ամբողջ համակարգի և մասնավորապես անունարանի ձևավորման գործում, ինչպես նաև ավելորդ կրկնություն-

² Գ. Մ. Նալբանդյան, *Армянские личные имена иранского происхождения*, автор докт. дисс., Тбилиси 1971

³ Հր. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Երևան, 1940, էջ 235:

ներից խուսափելու նպատակով, նրան կանդրադառնանք փոխառյալ-յուրացված անձնանվանական հիմքերը քննելիս: Այդ շերտին բնականաբար կվերադառնանք նաև հիմքերի ժամանակագրական դասակարգման մասին խոսելիս:

Հայկական ազգանունների անձնանուն հիմքերի շարքում առանձնացվում է նոր-իրանական ենթաշերտը, որի անձնանունները, սակայն, նախորդների կենսունակությունն ու արժեքը չունեն: Նման պնդման համար մենք Լինում ենք նախ այն բանից, որ այս շերտի փաստերից շատ քչերն են պահպանվել հայերի անունարանում և ապա՝ ավելի ուշ, երբ մենք կանդրադառնանք բնիկ—յուրացված շերտին կտեսնենք, որ այս ենթաշերտի իրողություններից շատ քչերն են, որ կդասվեն այս վերջիններիս շարքում:

Այս ենթաշերտի մասին խոսելիս, ամենից առաջ պետք է նշել «գյուլ»—վարդ բաղադրիչ ունեցող անձնանվանական հիմքերը, որի առկայությունը ընդգծված բանաստեղծականություն է հաղորդում ինչպես անձնանվանը, նույնպես և նրանցից սերված ազգանվանը՝ Գյուլբահար՝ (գարնան վարդ) — Գյուլբահարյան, Գյուլան (վարդեր) — Գյուլանյան, Գյուլբայազ (սպիտակ վարդ) — Գյուլբայազյան, Գյուլզադե (վարդածին) — Գյուլզադյան, Գյուլխաս (ընտիր վարդ) — Գյուլխասյան, Գյուլնազար (վարդահայաց) — Գյուլնազարյան, Գյուլնազ (վարդանազ) — Գյուլնազյան⁴, Գյուլշատ(դ) — (վարդ—ուրախ) — Գյուլշատյան⁵, Գուլակ (փոքր վարդ) — Գուլակյան⁶, Գուլամբար (վարդի շտեմարան) — Գուլամբարյան, Գյուլամբարյան, Գուլգուլյան (կրկնավոր բարդություն) — Գուլգուլյան, Գուլի (վարդագույն) — Գուլիյան⁷, Գուլքան (վարդահանք) — Գուլքանյան, Թազագուլ (նորավարդ) — Թազագուլյան⁸:

Այս խմբի առանձնահատկություններից մեկն այն է, որ, երբ գյուլ բաղադրիչը նախադաս է, ապա մեծ մասամբ հանդես է գալիս փոխատու լեզվին հարազատ քմայնացած ու-ով, իսկ իբրև երկրորդ բաղադրիչ հիմնականում՝ ապաքմայնացած տարբերակով:

⁴ Ձի բացառվում նաև Գյուլնազարյան-Գյուլնազյան անցումը:

⁵ Գյուլագ իրանական ձևի և հայերեն շատ բառի բաղադրկության հետևանքով ունենք գ > տ հնչյունափոխությունը:

⁶ Հնարավոր է նաև Կուլակսզյան—Կուլակյան Գուլակյան անցումը:

⁷ Հնարավոր է նաև Ղուլիյան-Գուլիյան այլալեզու անցումը:

⁸ Հայկական անունարանում վկայված է այս անձնանվան հայկական զուգահեռ՝ Նորավարդ, ինչպես նաև Բազագուլ, Բախազուլ, Բաղդագյուլ ձևերինը՝ Այգավարդ:

Իմաստային առանձնահատկությամբ նախորդ խմբի մոտ են նաև Դիլ «սիրտ» բաղադրիչով կազմութունները՝ Դիլան (սրտեր) — Դիլանյան, Դիլբար (սրտագրավ) — Դիլբարյան, Դիլդար (գեղեցիկ), Դիլդիլ (կրկնավոր) — Դիլդիլյան, Դիլդութի (սրտատուփ) — Դի(ու)լդության, Դիլար (սրտեր) — Դիլարյան, Դիլբանդ (սիրտ կապող, գրավող) — Դիլբանդյան:

Նկատելի են նաև անձի ներքին և արտաքին հատկանիշների հետ կապվող անձնանվանական հիմքերը՝ Խանփերի (խանի գեղեցկուհի) — Խանփերյան, Նուբար (նոր պտուղ) — Նուբարյան, Զիլֆի (խոպոպիկ) — Զիլֆիյան, Խուբլար (գեղեցիկներ) — Խուբլարյան, Փարիխան (հմայք) — Փարիխանյան, Նարին (նուրբ) — Նարինյան, Խոշ (անուշ) — Խոշյան, Խոշար — Խոշարյան⁹, Խանդան (ուրախ, ժպտերես) — Խանդանյան, Առուշան (լուսավոր, փայլուն) — Առուշանյան:

Բուսական և կենդանական աշխարհի, բնական երևույթների հետ կապվող հատկացություններ՝ Զինար(սոսի) — Զինարյան, Օշին (ծոթրին) — Օշինյան, Մանգուն (ծաղիկ) — Մանգունյան, Խալաֆ (անուշահոտ ուտենի) — Խալաֆյան, Զինչին (զանգակածաղիկ) — Զինչինյան, Մենեգիշ (մանուշակ) — Մենեգիշյան, Սելվինազ (նազող նոճի) — Սելվինազյան, Լալախան (կակաչ խան) — Լալախանյան, Լալազար (կակաչների բազմություն) — Լալազարյան, Բահար (զարուն) — Բահարյան, Փերուզ (թանկարժեք քար) — Փերուզյան, Սիմիկ (արծաթ) — Սիմիկյան, Զուհար (գուհար) — Զուհարյան:

Պատվանուններ և պաշտոնանուններ՝ Զահանգիր (աշխարհակալ) — Զահանգիրյան, Սարգար (զորապետ) — Սարգարյան, Թարխան (վեզիրից բարձր պաշտոնյա) — Թարխանյան, Խանբաբ (թագավորահայր) — Խանբաբյան, Խանզադե (իշխանածին, ազնվական) — Խանզադյան, Խոնդ(տեր) — Խոնդյան, Շահզադե (թագավորածին) — Շահզադյան, Խանդամիր (տեր ամիր) — Խանդամիրյան, Միրաբ (իշխանիկ) — Միրաբյան, Շահամիր — Շահամիրյան, Շահնազար (թագավորի հայացքին արժանացած) — Շահնազարյան, Շահվալադ (արքայորդի) — Շահվալադյան, Շահվերդ (արքայատուր) — Շահվերդյան:

Առանձնանուն են իսլամի հետ կապվող մի շարք անձնանուններ, որոնք դարձել են հայկական ազգանվանակերտ հիմքեր: Զի բացառվում, որ վերջիններս հատուկ լինեն նաև մյուս մուսուլման ժողովուրդներին, մասնավորապես արաբներին, թուրքերին և այլն: Ահա այդ մի քանի ազգանունները՝ Նովրուզ, Նեվրուզ (մուսուլմանական ամանորը) — Նով-

⁹ Զի բացառվում են Խոշորյան-Խոշարյան այլալեզու անցումը:

բուզյան, նեվրոզյան, հուզավերդ (աստվածատուր) — հուզավերդյան, հուզադուլ (աստծո ծառա) — հուզադուլյան, հուզաբաշխ (աստծո նվեր) — հուզաբաշխյան¹⁰, Փիրվերդի (ծերատուր) — Փիրվերդյան, Փիրան (ծեր) — Փիրանյան, Փիրիջան (սիրելի ծեր) — Փիրիջանյան, Փիրում (իմ սուրբը, ժերունին) — Փիրումյան, Փիրդալեմ — Փիրդալեմյան, Բայրամ (մուսուլմանական տոն) — Բայրամյան, Բախտամ (իմ աստված) — Բախտամյան: Մենք ավելի քան համոզված ենք, որ այս խմբի անձնանունները հայերին տրվել են միայն այն ժամանակ, երբ պարսիկների կամ մյուս մուսուլմանական ժողովուրդների մոտ այն շատ սովորական անձնանուն է եղել, այլապես բնիմաստի հասուկ գիտակցման պայմաններում նման անձնանունները ոչ մուսուլմաններին տալը խիստ կասկածելի էր, հենց թեկուզ շարիաթի օրենքն էլ ունի:

Օագունով նոր-իրանական են նաև Դարման (դեղ, ճար) — Դարմանյան, Նիյազ, Նիազ (խնդրանք) — Նիյազյան, Նիազյան, Արմազան (նվեր) — Արմազանյան, Արզան (արժանիք) — Արզանյան, Մանանդ (նման) — Մանանդյան, Մալխաս (ընտիր ապրանք, ունեցվածք) — Մալխասյան, Եղիգար (հիշատակ) — Եղիգարյան, Ումիդ (հույս) — Ումիդյան, Քաթան (կտոր, գործվածք) — Քաթանյան, Մարդան (մարդ) — Մարդանյան, Թազա (նոր) — Թազայան, Ֆարման (հրովարտակ) — Ֆարմանյան, Սահրազ (սահմանադիր) — Սահրազյան, Միանսար (ալիակալի թագ) — Միանսարյան և այլն:

Նոր-իրանական ենթաշերտի մեջ ենք դասում նաև որոշ խառը կազմակերպություններ, մասնավորապես՝ պարսկերեն-արաբերեն — Ֆիդան (բողբոջ) — Ֆիդանյան, հեր — իերյան, Մուշկամբար (բալասան — անուշահոտ ծաղիկ) — Մուշկամբարյան, Դինար (դրամի շափ) — Դինարյան, Աղանուր (լույս աղա) — Աղանուրյան, պարսկերեն-թուրքերեն՝ Շահգելդի (շահը եկավ) — Շահգելդյան, Շահգիդան (նախորդի հակառակը) — Շահգիդանյան, Գյուլում (իմ վարդը) — Գյուլումյան, Նանագյուլ, Նանագուլ — Նանագյուլյան, Նանագուլյան, Բալագյուլ (փոքր վարդ) — Բալագյուլյան և վերջապես պարսկերեն-հայերեն՝ հոցա + (-իկ) — հոցիկյան, հան + անուշ — հանանուշյան, վարդի + գյուլ — վարդիգուլյան և այլն:

Նախորդ բոլորից տարբերվում է Ֆրանգուլ — Ֆրանգուլյան հիմքը, որ բառացիորեն նշանակում է եվրոպական վարդ:

¹⁰ Խուզաբաշխ և բաշխ բաղադրիչով ձևերի բաղադրության պատճառով այժմ մեղանում տարածված է նաև Խուզաբաշխյան ազգանունը:

Հունական և հին հրեական-հունական շերտեր

Իր պատմական արժեքով իրանականին չի դիշում հունական շերտը։ Այստեղ ենք դասում ինչպես բուն հունական ազգանվանակերտ անձնանունները, նույնպես և եբրայականը, հոմեականը և այլն, քանի որ, ինչպես հայտնի է, վերջիններս մեզ են անցել գլխավորապես հունարենի միջնորդությամբ։

Հունական շերտը նշանակալից է առաջին հերթին իր տարածվածությամբ և արգասավորությամբ։ Սակայն այս մասին ավելի ուշ։ Եվ այսպես, հունական ենթաշերտը ներկայանում է, ինչպես իր բնիկ, նույնպես և հայացված տարբերակներով։

Ընդ որում, տվյալ դեպքում բնիկ ենք համարում այն ձևերը, որոնք առանց որևէ հնչյունական կամ այլ կարգի փոփոխության ներկայացված են իբրև ազգանվանակերտ հիմքեր՝ Եմափիոսյան, Թևոդորոսյան, Նիպիոսյան, Սիրանոսյան, Արսենյան, Մարկոսյան, Մարտիրոսյան, Պետրոսյան, Սոֆյան, Ագապյան¹¹, Անափիոսյան, Անդրեասյան, Բասիլեոսյան, Թադևոսյան¹², Մարինոսյան, Եփրանոսյան, Զադինոսյան, Զաքեոսյան¹³։

Հունական—հայացված ենթաշերտը ներկայանում է մի շարք դեպքերով՝ հունարենի անձնանուններին հատուկ վերջավորությունների՝ գլխավորապես—ՕՅ-ի անկում՝ Γρηγόριος—Գրիգոր-Գիրգորյան, Σωκράτης—Սոկրատ-Սոկրատյան, Γεώργιος—Գևորգ-Գևորգյան, Πατρικίος—Պատրիկ-Պատրիկյան, Ἀλέξανδρος—Ալեքսանդր-Ալեքսանդրյան, Προκοπίος—Պրոխոր-Պրոխորյան¹⁴, Γεωργίου—Գերասիմ-Գերասիմյան, Ἀναστασιος—Անաստաս-Անաստասյան, Ἀθανάσιος—Աթանաս-Աթանասյան, Βύζαντος—Բյուզանդ-Բյուզանդյան, Μαριανός—Մարյան-Մարյանյան, Νάσσατος—Նարզիդ-Նարզիդյան, Κόρυλλος—Կյուրիդ-Կյուրիդյան, Μακρίος—Մակար-Մակարյան, Στεφάνος—Ստեփան-Ստեփանյան, Χριστοφορος—Քրիստափոր-Քրիստափոր-

¹¹ Քանի որ հունարենում կան Ἀγάτιος արական և Ἀγά- իգական անձնանունները, ապա, եթե արականի հետ ենք կապում այս փաստը պետք է տեղադրենք հնչյունափոխված կամ հայացված խմբի մեջ, իսկ եթե իգականի, ապա այս խմբի մեջ դասելը արդարացվում է։

¹² Թադևոս-Թադևոս անցումը հայկական և ավելի ուշ շրջանի երևույթ է։ Աճառյանի մոտ բոլոր վկայությունները Թադևոս ձևով են։

¹³ Զակբեոս-Զաքեոս ձևում կը->ք տարնմանական անցումը ևս հայկական ուշ շրջանի երևույթ է։

¹⁴ Զի բացառվում ռուսական Προχορ ձևից փոխառված լինելու փաստը։

Յան և ալլն: Վերջին երկուսը Φύλακος - Փիլիպոս-Փիլիպոսյան և Փոլոս - Փանոս-Փանոսյան ձևերի հետ ներկայացնում են նաև $\Phi > \phi$, իսկ Քրիստափոր-Քրիստափորյան ձևը նաև $\chi > \psi$ հնչյունափոխությունը:

Վաղ շրջանում հունարենից կատարված փոխառությունների համար օրինաչափ էր նաև $\chi > \eta$ հնչյունափոխությունը: Վերջինս ներկայացված է հետևյալ փաստերով՝ Λέων-Λεωνίτης - Լեոնդ-Լեոնդյան և այս նույն անձնանվան ուշ շրջանի փոխառություն՝ Λέων - Լեոն-Լեոնյան, Λουκάς - Լուկաս-Լուկասյան, Αλέξανδρος - Լադարոս-Լադարոսյան¹⁵, Βαρθολομαίος - Բարդուղիմեոս-Բարդուղիմեոսյան, Νικόλαος - Նիկողոս-Նիկողոսյան, Παύλος - Պողոս-Պողոսյան, Αλέξάνδρος - Աղեքսանդր-Աղեքսանդրյան, Θάλασ - Թաղիանոս-Թաղիանոսյան:

Ստորև բերվող զեպքերը ևս հունական անձնանունների հայացման օրինակներ են Իωάννης - Զովհաննես-Զովհաննիսյան, Δεσυχός - Սուքիաս-Սուքիասյան, Βασίλειος - Բարսեղ-Բարսեղյան և Վասիլյան, Լεոդաս - Երանոս-Երանոսյան - Σεβαστή - Սևաստ-Սևաստյան, Լեբնիդոս - Ռեթևուս-Ռեթևոսյան, Γώργος - Թովմաս-Թովմասյան, Σεργίω - Սրապիոն-Սրապիոնյան և ալլն:

Հունական ենթաշերտին անդրադառնալուց հետո, մեր կարծիքով, նպատակահարմար է խոսել նաև մի այլ ենթաշերտի մասին, որի միավորների՝ հայկական անձնանունների շարքում տեղ գտնելու հարցում մեծ դեր է կատարել հունարենը, այլ կերպ՝ հունարենի միջնորդությամբ այլ լեզուներից, մասնավորապես եբրայերենից և ասորերենից մեզ անցած անձնանունների ենթաշերտի մասին: Հայտնի է, որ պատմական ուռչակի հանգամանքների բերումով մեզանում տարածվեց Աստվածաշնի հունարենից թարգմանված տարբերակը և պատահական չէ, որ հատկապես Հին կտակարանում հիշատակված հատուկ անունների մի մասը մեզ հասան հունարենի միջոցով: Եթե ասվածին ավելացնենք նաև V դարի կեսերից սկիզբ առած և ավելի քան երկու դար տևած հունաբան դպրոցի գործունեությունը, ապա պարզ կդառնա եբրայական անձնանունների հունարենի միջոցով մեզ անցնելու հիմքերը:

Ստորև բերում ենք եբրայա-հունական այն անձնանունները, որոնք դարձել են ազգանվանակերտ հիմքեր՝ Սեդրակյան, Թորգոմյան, Սողոմոնյան¹⁶, Սահակյան, Իսահակյան, Սամվելյան, Սեթյան, Ամբակուն-

¹⁵ Դադարոս Դադար-Դադարյան անցումը հայկական է:

¹⁶ Արդեն նշված $\chi > \eta$ հնչյունափոխությամբ, իբրև ավելի ուշ շրջանի և լեզվական այլ ազդեցությունների արգասիք, ունենք նաև Սողոմոնյան ազգանունը:

յան, Բարաքա(թ)յան¹⁷, Մանասյան, Եղիազարյան, Երեմյան, Զաքարյան, Սամսոնյան, Իսմայելյան, Մեսիայան, Մովսիսյան, Ռուբենյան, Դանիելյան, Ռաֆայելյան, Միսակյան, Միքայելյան, Զորաբաբելյան, Սաղաթելյան, Սենեքերիմյան, Մամբրելյան, Մաղաբյան, Հակոբյան, Հովսեփյան, Հովնանյան, Հովնաթանյան, Հովասափյան, Հովակիմյան, էմմանուելյան և այլն: Եփրեմյան, Շմավոնյան և Փենեսյան ազգանունների անձնանուն հիմքերի մասին խոսելիս Աճառյանը նշում է, որ ծագմամբ եբրայական լինելով, այս անձնանունները մեզ են հասել եբրայերենի և հունարենի միջև ունենալով համապատասխանաբար ասորերեն և եգիպտերեն միջնորդ լեզուները, այլ կերպ Եփրեմի և Շմավոնի համար ունենք եբրայերեն—ասորերեն—հունարեն—հայերեն, իսկ Փենես-ի համար՝ եբրայերեն—եգիպտերեն—հունարեն—հայերեն անցումները:

Աճառյանը եգիպտերենի հետ է կապում նաև Մինասյան ազգանվան հիմքը, նշելով, որ «նշանավոր է Մինաս եգիպտացի հայրը, որի վկայաբանությունը մտած է Յայսմաուրբի մեջ և որի անունով հայ և հույն ևկեղեցիներ կան շինված»¹⁸:

Չնայած, ինչպես ցույց տրվեց վերևում և, ինչպես վկայում են փաստերը, եբրայերենի և հայերենի միջև նշանակալի է եղել հունարենի միջնորդ դերը, սակայն, հայերենում կատարվել են անմիջական եբրայական փոխառություններ և պետք է նշել, որ դրանք փոքրաթիվ լինելով, այնուամենայնիվ, մեծ նշանակություն են ունեցել: Բավական է նկատել, որ նրանց մի զգալի մասը այսօր գիտակցվում է իբրև բնիկ հայկական և շատ սիրելի է ժողովրդի ամենալայն խավերին: Ահա այդ օրինակները՝ Դավթյան, Գաբրիելյան, Աբրահամյան, Սիմոնյան, Ադամյան, Թամարյան, Ահարոնյան, Եսայան, Աբելյան, Բենիամինյան, Ասբանազյան, Աբիսողոմյան, Ամասյան, Նազարեթյան, Գամաղելյան, Գեղեոնյան:

Անձնանուն ազգանվանակերտ հիմքերի շարքում առանձնանում է նաև ասորական Լնթաշերտը: Սա ևս նախորդի նման մեծաքանակ չէ, սակայն, ինչպես կարելի է նկատել բերվող փաստերից, շարունակում է կազմել մեր անունարանի հիմքը՝ Աբգարյան, Գագիկյան¹⁹, Մարութ-

¹⁷ Մեր կարծիքով այստեղ տեղի է ունեցել եբր.-հուն, Բալաքիա անձնանվան և թուրքերեն բարաքաթ բառերի բաղարկային հնչյունափոխություն

¹⁸ Հր. Աճառյան, ՀԱՆԲ, հ. Գ, էջ 340:

¹⁹ Աճառյանը գրում է. «ԳԱԳ, ստ. ասորեստանյան անուն է. Շատ ավելի սովորական է նրա փաղաքական Գագիկ ձևը». ՀԱՆԲ, հ. Ա, էջ 428—29:

յան, Սանասարյան, Բաղդասարյան, Մարուքյան, Պարսամյան, Շամիրյան, Մարթայան, Հորդանանյան, Աբասյան²⁰, Սարգսյան: Այս վերջին ազգանվան և հատկապես նրա հիմքի մասին հարկ ենք համարում առանձին խոսել, քանի որ մեր ամենատարածված անձնանուններից է: Բավական է նկատել, որ Աճառյանը բերում է 510 վկայություն²¹: Ժողովրդի մեջ այսօր էլ տարածված են նրա տարբերակները՝ Սաքո, Աքե, Սերգի, Սաքուկ և այլն և, որ կարևոր է, այս անձնանվան գրեթե բոլոր տարբերակներով կազմված ազգանուններ ունենք, որոնց մասին կխոսենք ավելի ուշ:

Արարական շերտ: Հայկական ազգանունների անձնանուն հիմքերի շարքում արաբական տարրը զգալի տեղ է գրավում: Քանակով այն զիջում է իրանականին, բայց մի փոքր ավելի է հունականից և եբբայականից միասին վերցված և նույնիսկ անզեն աչքով կարելի է նկատել, որ իր արգասավորությունը և հետագա դարերում թողած իր ազդեցությունը նկատելիորեն դիջում է նախորդներին:

Արաբական շերտում առանձնանում են մի քանի ենթաշերտեր, որոնցից առաջին հերթին կուղերիք նշել նախորդ շերտերի և հատկապես հունականի «արաբականացված» տարբերակները՝ Աբելյան, — Իսկանդար-Իսկանդարյան, եբբ. Seth - հուն-Σηθ — Սեթ-Սելիդյան, եբբ. Յեօ-Մո-Տոօրօն — Սուլեյման-Սուլեյմանյան, եբբ. Eliyya — էլիադ-էլիադյան, եբբ. Mšeh — հուն — Μωης — Մուսահլ-Մուսալեյյան, եբբ. Yōsēi — հուն. Ιωσηφ — մաստֆ-Յուստֆյան, եբբ. Ya'qob, հուն. — Γαββ — Յաղուբ-Յաղուբյան, եբբ. māšīa, հուն. — Μεσίας — Մասեհ-Մասեհյան և այլն:

Առանձնանում են նաև մի խումբ անձնանուններ, որոնց զուգահեռները առկա են հայերենում: Նրանց մի մասը առկա էր մեր լեզվում մինչև արաբական ազդեցությունը՝ Երանյակ, Երջանիկ և Սաղաթ, Մասուտ, որոնցից էլ Սաղաթյան, Մասուտյան կամ Կատարյալ և Թամամ-Թամամյան: Ազգանվանակերտ անձնանուն հիմքերի արաբական շերտի մեջ, ի տարբերություն վերը նշվածների, ընդգծվում են այնպիսիք, որոնց հայկական զուգահեռները նույնպես կան, բայց վկայված են արդեն սովելի ուշ շրջանից՝ Բախտավոր և Նասիբ-Նասիբյան հայերեն ձևի առաջին վկայությունը վերաբերում է XVII դ., Փոլսան և Բաղալ-Բաղալյան (XIV դ.), Մաղիկ, Դեղ և Բալասան (XIII դ.), Ազնիվ և Քարիմ-Քարիմյան, Քարամ-Քարամյան (XVI դ.), Լույս, Լույսպարոն, Լուսխաթուն, Լուսաբեր, Լուսանուշ, Լուսեղեն, Լուսեր և Նուրում-Նուրումյան

²⁰ Այս անձնանունը մեզ է հասել հունական միջնորդությամբ:

²¹ Հր. Աճառյան, *Եզվ. աշխ.*, էջ 402:

(XII և հետագա դարեր), Լուսին և Ղամար—Ղամարյան, Գամեր—Գամերյան (XV դ.) և այլն:

Այս շերտի հայկական-արաբական և արաբական-հայկական պատճենումների վերաբերյալ մեր դիտողությունները արվում են որոշ վերապահումներով, քանի որ ուղղակի վկայությունները բացակայում են: Մյուս կողմից հնարավոր չէ աչքաթող անել այդ փաստերը: Չի բացավում նաև, որ այս դեպքում զործ ունենք ոչ այնքան լեզվական փոխազդեցությունների, որքան մարդկային մտածողության ընդհանրությունների հետ և ոչ միայն նշված, այլև ուրիշ լեզուների համար, քանի որ, ինչպես հայտնի է, երջանիկ, կատարյալ, պարզ, մաքուր, քաջ, ծեր (իմաստուն), ավետել, ավագ, գեղեցիկ, բախտավոր, ծաղիկ, ազնիվ, լույս իմաստներով անձնանուններ գոյություն ունեն բազմաթիվ այլ լեզուներում ևս:

Արաբական շերտի մնացած փաստերի մասին խոսելիս առաջին հերթին պետք է նշել, որ ազգանվանակերտ հիմքերի իմաստային դրսևորումները մեծ մասամբ բարձր ոճի իրողություններ են: Քիչ են իսլամի հետ կապված անձնանունները, չեն հանդիպում նաև իմաստային բացասական երանգավորում ունեցող փաստեր:

Այսպես, ազգանվանակերտ անձնանուն հիմքերի մոտ կեսը արտահայտում են մարդու ներքին և արտաքին բարեմասնություններ՝ Նարիմանյան²²-ըստասիրտ, Մանսուրյան-հաղթական, Քամալյան-Քամամյան-կատարյալ, Քահիրյան-մաքուր, Նադիրյան-հազվագյուտ, Ղամալյան, Կադիֆյան, Հասանյան, Նոանյան-գեղեցիկ, մարդկային հուսկանիչներ՝ էտիբարյան-հարգանք, Շաղավաթյան-գութ, Մուրադյան և սրա հնչյունափոխված տարբերակը՝ Մուրագ-Մուրադյան-փափագ, Հասրաթյան-կարոտ, շրջապատող աշխարհ՝ Ջավահիրյան-գոհար²³, Սադաֆյան-փայլուն խեցի, Մարջանյան-բուստ, Մադանյան-հանք, Շարբաթյան-օշարակ, Ղումաշյան-կերպաս, Գովլաթյան-կայք, ունեցվածք և այլն, բնություն, բուսաշխարհ՝ Ղամարյան-Գամերյան-լուսին, Սահարյան-արշալույս, արևածագ, Շամիլյան-Քեաբեից փշող քամի, Բալասանյան-անուշահոտ ծաղիկ, Դանգուլյան, Դանդուլյան-վարդը արշա-

²² Շարագրանքը չժանրաբանելու նպատակով հիմքերը չենք առանձնացնում, համարելով, որ դրանց առանձնացման հնարը հայտնի է՝ ազգանվանակերտ ածանցին նախորդող հատվածը:

²³ Հայտնի է, որ ունենք այս բառի հնչյունափոխված տարբերակով անձնանուն՝ սրբանից ազգանուն՝ Ջուհար-Ջուհարյան, ինչպես նաև հայացված տարբերակով՝ Գոհար-Գոհարյան:

լույսին, Նորիգրւյան-Լուսավարդ, պատվանուն և զբաղմունք՝ Խաչիֆ-
յան-ուսուցիչ, վարպետ, Թարջիմանյան-Թարգման, Շեխյան-ծերունի, Ի-
մաստուն, Սայադէան-որսորդ, Խաչիլյան-բարեկամ, Ավդալյան-ճգնավոր,
Ամիրջյան-իշխան, Սողբաթյան-ընկերակցութիւն, Սաֆարյան-ճամփոր-
դութիւն, -ում («իմ» -ս) ածանցով կազմված հետեւյալ ձևերը՝ Նարում-
յան-իմ լույս, Հախումյան-իմ աստված, Շահումյան-իմ թագ, ինչպես
նաև արաբական իրականութեան զանազան կողմերը արտացոլող մի
շարք դեպքեր՝ Խտրյան, Խորջյան-իսլամի մարգարեներից մեկի անունը,
Ռամազյան-ռամազանի հետ կապվող անձնանուն, Զամանյան, Շաբան-
յան, Սաֆարյան-ամսանուններ, Ղուրբանյան-զոհ, Սանամյան-կուռք,
Խոնդալյան-խոնդ (տեր) և Ալի. Նասիբյան-բախտ, Մսրյան-Եգիպտոսի
արաբական անվանումը և այլն: Այս շերտում առանձնանում են Աբլա-
բուդյան, Ումրշատյան, Խերանյան ազգանունների Ումրշատ, Խերան և
Աբլաբուդ հիմքերը:

Արաբական տիրապետութեան շրջանում հայերը յուրացրին հայ-
րերին ավառ արու զավակի անունով վերանվանելու արաբական սովո-
րույթը, որը, սակայն արաբական տիրապետութեան վերացումից հետո,
բավականին արագ մոռացվեց: Եվ զարմանալի է, որ այդ երևույթի ար-
ձագանքները պահպանվել են և ավելին՝ այդ կաղապարով կազմված
ձևը՝ Աբլաբուդ դարձել է նույնիսկ ազգանվանակերտ հիմք:

Խերանյան ազգանունը իբրև հիմք ունի արաբական հեյրան-հիա-
ցած, զարմացած բառի բարբառային տարբերակը, Ումրշատյան ազգա-
նունը կազմված է արաբական Ումբր-կյանք անձնանվան (որից՝ Ումբրը-
յան) և հայերեն շատ բառի բարդութեամբ:

Առանձնանում են Մհլամյան, Միրազիդյան, Ալումյան, Բաղիյան,
Գումանյան, Հուրիխանյան ազգանունների հիմքերը, իբրև արաբերենի և
պարսկերենի իրողութիւններով կազմված ձևեր՝ Հուրի + խան, Ալ + ում,
Միր + ազիդ, ինչպես նաև այնպիսի արաբական անձնանուններ, որ մեզ
են անցել պարսկերենի միջնորդութեամբ՝ Մհլամյան-սպեղանի, Գուման-
յան-հույս, սպասելիք և Բաղիրջան-մնացական²⁴ և այլն:

Թուրքական շերտ: Այս շերտի մասին խոսելիս ուզում ենք առաջին
հերթին նկատել, որ հայկական ազգանուններում թուրքական տարրի
տեսակարար կշռի վերաբերյալ սխալ պատկերացում կա և այն անի-
րավացիորեն ուռճացված է:

Այժմ, երբ մեր ազգանվանակերտ հիմքերը որոշակի սկզբունքով

²⁴ Աճառյանը նշում է, որ վերջին դեպքը Սխական 293 ր մեկնաբանել է իբրև Բաղ-
դասարի ժողովրդախոսակցական տարբերակ. ՀԱՆԲ, հ Ա, էջ 378:

դասդասված են, մեզ իրավունք ենք վերապահում պնդելու, որ հայկական ազգանվանական անձնանուն հիմքերի ամբողջության մեջ ծագումով թուրքականները զիջում են մյուս շերտերին: Ասվածը ավելի հիմնավորված կլինի, երբ քիչ ուշ անդրադառնանք ազգանվանակերտ անձնանուն հիմքերի՝ գործառական առանձնահատկություններին:

Սակայն, եթե վերադառնանք վերը նշված թյուրիմացությանը, ապա, մեր կարծիքով, հիմնական պատճառը պետք է փնտրել թուրքերենի համեմատաբար ավելի մատչելի լինելու մեջ, մի հանգամանք, որ հնարավորություններ է ստեղծում արաբական, ինչպես նաև իրանական ու շրջանի փոխառությունները ևս ստուգաբանել թուրքերենով, արհեստականորեն մեծացնելով վերջինիս դերը մեր անունարանում, չնայած, ինչպես հայտնի է, ճիշտ հակառակը պետք է արվի, քանի որ «Իր զարգացման ամբողջ պատմության ընթացքում թուրքերենը կրել է տարբեր համակարգի ունեցող լեզուների և առաջին հերթին թեքական արաբերենի և վերլուծական պարսկերենի ազդեցությունը:

Օգուզա-սելջուկյան լեզուների վրա արաբերենի ուժեղ ազդեցությունը սկսվեց նրանց կողմից իսլամի ընդունման հետ՝ IX—X դդ.: Պարսկերենի ազդեցությունը ուժեղացավ XI դ. սելջուկյան ցեղերի Պարսկաստան ներթափանցելու և XII դ. Անատոլիայում սելջուկների պետության կազմավորման հետ:

Արաբերենի և պարսկերենի հետ թուրքական լեզուների, այդ թվում օգուզա-սելջուկյան լեզուների հետ սերտ փոխազդեցությունների արդյունքը եղավ մեծ թվով փոխառությունների ներթափանցումը, որոնք վերաբերում էին լեզվական բոլոր մակարդակներին՝ սկսած բառապաշարից և հնչյունաբանությունից, ավարտված ձևաբանությամբ և շարահյուսությամբ»²⁵:

Արդ, եթե համեմատենք թուրքական տարրը մյուսների՝ մասնավորապես արաբականի հետ և հիշենք մեր լեզվի վրա արաբական ազդեցության տևողությունը և ժամանակաշրջանը մի կողմից և թուրքական ազդեցության տևողությունն ու ժամանակաշրջանը մյուս կողմից, ապա կնկատենք, որ վերջինս ավելի երկարատև էր և գործում էր նաև բուն ազգանունների ձևավորման ընթացքում, բայց այս ամենով հանդերձ թուրքական շերտի կշիռը բավականին աննշան է:

Ինչպես և պետք էր սպասել, թուրքական անձնանունները ընդհան-

²⁵ Из истории турецкого языка, Турецко-русский словарь, авторы А. Н. Баскаков, Н. П. Голубева, А. А. Кямилава, К. М. Любимов, Ф. А. Салимзянов, Р. Р. Юсипова, М., 1977, էջ 5:

րապես և հայկական ազգանվանակերտ հիմք դարձածները մասնավորապես, բավականին պարզ ստուգաբանություններ ունեն և իմաստային պարզունակ խմբեր են կազմում: Նկատելի են ընտանիք, ընտանեկան և մարդկային հարաբերություններ արտահայտող՝ Խանության, Խաթունյան-տիկին, Օղլումյան-իմ որդի, Աթաշանյան-հայր-չան, Բաբայան, Բարասյան, Դեղևյան, Բաբամյան-հայր և -ս, մ քերականական մասնիկներով դրսևորվող այլևայլ հարաբերություններ՝ Անախասյան, Անախաթունյան, Նանության-մայր և հարակից ըմբռնումներ, Դադաշյան և Ղարդաշյան-եղբայր, Բալայան և Յավրիյան-ընտանիքի կրտսերի հետ կապվող ըմբռնումներ, Եգանյան-եղբորորդի կամ քեռորդի, Բալաբաշյան-փոքր քույր կամ կին, Եթարյան-բավական, իբրև ընտանեկան որոշ իրադրության դրսևորում և այլն:

Պատվանուններից ձևավորված անձնանուններ-Բեգումյան, Խանչարյան, Փաշայան, Աղամյան, Աղասյան, Բեգլարյան, Խանբեկյան, որոնց մեջ առկա-ում(-մ), -ս, -լար քերականական մասնիկները, ինչպես նաև կրկնավոր կանբեկյան ձևը առավել ընդգծում են հիմքի իմաստը: Բնականաբար նշանակալից տեղ են զբաղեցնում մակդիրային ծագմամբ անձնանունները.

ա) արտաքինի հետ կապվող՝ Ասմարյան-թուխ, Թորամանյան-թըմ-լիկ, գնդիկ, Գյոզալյան և Գյուկչակյան-գեղեցիկ, Ղարագյոզյան-սևակն, Չաղարյան, Ճաղարյան-խաժակն, Ալագյոզյան-կապուտայտ, Բալապյոզյան-փոքր աչք, ինչպես նաև Սարիբեկյան, Սարիմելիքյան, Սարիբալլան և Սարումյան, որոնց մեջ իմաստային ծանրաբեռնվածություն կրողը Սարու(ը)-դեղին բաղադրիչն է: Ի դեպ, այս բաղադրիչին մենք պետք է անդրադառնանք բաղադրյալ ազգանվանական հիմքերի մասին խոսելիս, ուր մասնավորապես առկա են Սարիգույումչյան, Սարբպետլոսյան ձևերը: Ավելին, թուրքական կաղապարով կազմված Հայաստանի և Թուրքիայի տեղանուններում ևս հանդիպում են այդ բաղադրիչով ձևեր: Դժվարանում ենք բացատրել դեղին գույնի նկատմամբ ընդգծված հետաքրքրությունը:

բ) Ներքինի հետ կապվող՝ Կորխմազյան, Քալաշյան-բաջ, անվախ, Քրմանյան-ամուր, Դիլաքյան-ցանկալի, Աղբալյան-անբիծ, Աբգալյան-անհոգ, Օթարյան-գեղգեղուշ, Նազուլյան-Նազումյան-նազելի, Ուղուրյան-բարեհաջող, Փառլաղյան-փայլուն, պարզ, լուսավոր, Թուրշյան-թթու, Թուլակյան-համեստ, Արղուլյան-թիկունք, կոնակ:

գ) Բուսական և կենդանական աշխարհի, բնության հետ կապվող՝

Ղափլանյան-վազր, Տողանյան, Լաչինյան, Թաուանյան-բազե, Ասլանյան-առյուծ, Ջեյրանյան-եղնիկ, Ազգու-ամառային վարդ, էլշակյան-ժողովրդի ծաղիկ, Քիշմիշյան-չամիչ, Քիրազյան-կեռաս, էլմայան-խրնձոր, Չիչակյան-ծաղիկ, Ինջիղուլյան-մարգարտածաղիկ, Բուլաթյան-ամալ, Բուդաղյան-ծիլ, ոստ, Ղարազուլյան-սև ծաղիկ, Գյունաշյան-արեգակ, Մախչանյան-կիսալուսին, Յաղմուրյան-անձրև, Այգունյան-լուսին և արեգակ, Դումանյան-մշուշ:

դ) Կրոնի հետ կապվող՝ Յաղիլյան-ճակատագրված, Վերմիշյան-տրրված, Թարվերդյան-աստվածատուր, Դոնդուլյան-դարձավ:

ե) Արտաքին աշխարհի իրեր՝ Մախմուրյան-թավիշ, Ալմաստյան-ադամանդ, Ալթունյան-ոսկի, Իփակյան սևտաքս, Նաբաթյան-սառնաշաքար, Թամիրյան, Դամիրյան, Թեմուրյան, Թիմուրյան, Թեմիրյան-երկաթ²⁶, Ջիլավյան, Ջլավյան-սանդ:

Անդրադառնանք ազգանունների հետևյալ խմբին՝ Խանդուլյան, Ղուլյան, Ղուլիյան, Ղուլարյան, որոնք, Աճառյանի դիպուկ բնորոշմամբ, որ տրված է Խանդուլի անձնանվան վերաբերյալ, կարելի է կոչել «ստրկական»: Մենք առիթ չենք ունեցել զբաղվելու թուրքական անվանագիտությամբ, սակայն, համոզված ենք, որ նրանց անունարանում այս կարգի անձնանունները մեծ տարածում ունեն և զլխավորապես կապվում են իսլամի հետ, ուր բավականին շատ են նման կազմությունները՝ Աբդ-ալ-Իսլամ, իսլամի ստրուկ, Աբդ-ալ-դին, հավատի ստրուկ, Աբդ-ալ-բարաքաթ, բարօրության ստրուկ և այլն: Սակայն, եթե նման «ստրկական» անձնանունները մուսուլմաններին տալը, այնուամենայնիվ հիմնավորված է, ապա ոչ մուսուլմանների համար այն ըմբռնվում է իր բուն իմաստով: Ի դեպ, այս երևույթը ավելի ցցուն է դառնում մականվանական ազգանունների մեջ, որոնց դեռ առիթ կունենանք անդրադառնալու: Այստեղ ավելացնենք հետևյալը. տարբեր ժողովուրդների անվանագիտության պատմությունը վկայում է, որ գոյություն ունի սուբյեկտիվ և նույնիսկ հասարակական բացասական վերաբերմունքի հատուկ ձև, որը դրսևորվում է անձնանվան կրճատման որոշակի եղանակների, հատուկ ածանցների միջոցով: Անվանագիտության մեջ այն իր հատուկ անվանումն է ստացել՝ пейоратив, որ մենք թարգմանում ենք իբրև նվաստանուն:

Արդ, ծանոթ լինելով հայկական անձնանունների համակարգին, կարող ենք պնդել, որ նման երևույթներ մեր անձնանուններում բացառ-

²⁶ Չի բացավում, որ բերվածների մի մասը 2-րդ կազմություն լինի -չի-ով ձևերից:

վում են, բնիկ հայկական մականուններում՝ նույնպես, իսկ եթե հանդիպում են Ախմախյան, Աղվեսյան, Ածղահարյան և այլ օրինակներ, ապա դժվար չէ նկատել, որ դրանք զավեշտի դյակորումներ չեն, այլ ժողովրդական հումորի, մինչդեռ ընդգծվում է այլալիզու և հատկապես թուրքալիզու մականվանական ազգանունների սարկաստիկ գունավորումը:

Եթե թուրքերենի վրա արաբական և իրանական ազդեցության փաստերը անժխտելի են, ապա այն պետք է իր արտացոլումը գտնի նաև այս դեպքում: Թուրքական շերտի մեջ առանձնանում են նաև արաբա-թուրքական, իրանա-թուրքական ազգանվանակերտ անձնանուն հիմքերը: Իրանա-թուրքական՝ Մեծյումյան, Բայանդուրյան, Քանանյան, Բաթմանյան, ինչպես նաև բառակաղմորեն իրանա-թուրքական՝ Ենգիբարյան, ուր ենգի թուրք՝ նոր և բար պարսկերեն՝ պտուղ: Բար. հմմտ. պրսկ. նուրբար: Արաբա-թուրքական՝ Սալվարյան, Նադարյան, Դիվանյան, Զեյնալյան: Ղորղանյան ազգանվան հիմքի ծագումը Աճառյանը կապում է ժողովրդներն զուրղան-զառնուկ բառի հետ, որը ամենայն հավանականությամբ մեղ է հասել թուրքերենի միջոցով: Ըստ երևույթին, այս նույն ս զով են անցել նաև Մաղալյան-մոնղոլ, Թաթարյան և Սելջուկյան ժողովրդանունները (Լպոնիմները):

Այլ լեզուներ: Վերը նշված շերտերից զատ ազգանվանակերտ անձնանուն հիմքերի շարքում հանդիպում են նաև ուսական, վրացական, լատինական, ֆրանսիական, գերմանական անձնանուններ:

Այսպես, վրացական ենթաշերտը ներկայացված է Ավթանդիլյան, Լուարսաբյան, Լիպարիտյան, Նացվալյան, Քալիյան ձևերով: Բերվածներին նացվալ-նացվալյան հիմքը կասկած չի հարուցում, իմաստն է «պարզ»՝ Բալին՝ նույնպես, քանի որ վրացերեն նշանակում է կին և օգտագործված է իբրև անձնանուն գլխավորապես թիֆլիսահայություն մեջ: Լուարսաբ անձնանունը Աճառյանի մոտ չկա, սակայն մեղ հայտնի է, որ վրացիների մեջ շատ տարածված անձնանուն է: Ավթանդիլի ծագման մասին Աճառյանը նույնպես ոչինչ չի ասում, բերում է մի քանի հիշատակություն, որոնցից առաջինը թվագրված է 1609 թ.: Ավթանդիլը վրացական էպոսի՝ «Վազրենավորի» գլխավոր և ժողովրդին սիրելի հերոսներից մեկն է, իսկ անձնանունը դարևո շարունակ տարածված էր վրացիների մեջ, ուստի, եթե նույնիսկ ծագումը ոչ վրացական համարենք, տալա վրացերենից մեղ անցած լինելու հանգամանքը, մեր կարծիքով, կուսկած չի հարուցում: Այլ է վիճակը Լիպարիտյան ազգանվան հիմքի վերաբերյալ: Աճառյանը այն համարում է վրացական, սակայն գտնում է,

որ «...ո՛չ վրացերենով կարելի է լինում մեկնել նրա ծագումը և ո՛չ էլ վրացիք այժմ գործածում են»²⁷: Միևնույն ժամանակ ավելացնում է, որ հայերը սկսել են օգտագործել XIII դարից և այժմ էլ գործածական է: Մեր կարծիքով այս դեպքում ևս մենք գործ ունենք այն հատուկ անձնանունների հետ, որոնք փոխատու լեզվում այլևս չեն գործածվում և պատմության համար պահպանվել են հայերենի միջոցով:

Առանձնանում են նաև եվրոպական լեզուներից կատարված հին և նոր փոխառություններով աղգանունները՝ Ալիսյան, Անժելյան, Բարբարյան, Սալվադորյան, Ալբերտյան, Կոպերնիկյան, Գարիբալդյան, ինչպես նաև Սուսանյան և Զաբելյան: Վերջին երկուսը ծագումով ֆրանսիական լինելով, այժմ անկասկած, անցիկ են «հայացվածների» շարքը, այսօրվա մեր անունարանում գրավելով իրենց առանձին տեղը:

Անձնանուն հիմքերի շարքում երևում են նաև ռուսական աղղեցության հետևանքներ՝ Եգորյան, Վառվառյան, Պասկեիչյան, Արտեմյան, Մոսկովյան, Իվանյան: Մի քանի խոսք վերջին երկուսի մասին: Մոսկով անձնանունը թվում է, թե ուշ շրջանի իրողություն պետք է լինի և արևելահայ իրականության հետ կապվող, սակայն փաստերը վկայում են, որ արդեն XVIII դարում այս անձնանունը գոյություն ուներ հայոց մեջ և ոչ միայն արևելահայոց, այլև՝ արևմտահայոց: Ընդ որում այդ ձևին պետք է վերագրել ոչ թե տեղանվանական, այլ ժողովրդանվանական (էպոնիմ) ծագում, քանի որ, ինչպես նշվում է Ակինյանի աշխատության մեջ «հին հայկական տեքստերում ուկրաինացիները անվանում էին ռուսներ, ռուսները՝ մոսկովիտներ...»²⁸:

Ինչ վերաբերում է Իվան-Իվանյանին, ապա պետք է ասել, որ ռուսական կայսրության որոշ հայաշատ վայրերում այս ձևը հայերեն Հովհաննեսի պարզեցված տարբերակն է և, ինչպես նշում է Յա. Դ. Իսակիչը, ուկրաինացիների մոտ Իվան, Ավեդիկ, Թորոս (Тарас) անձնանունների երևան դալը պայմանավորված էր հայկական աղղեցությամբ²⁹:

Աղղանվանակերտ հիմքերի մեջ գոյություն ունեն ծագմամբ լատինական անձնանուններ ևս: Սրանց առանձնահատկությունը այն է, որ մեզ անցել են միայն հունարենի միջնորդությամբ: Ընդ որում Բերնարդ-

²⁷ Հր. Անտոյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 430:

²⁸ Ն. Ակինյան, Միմեոն դարի կենցաղայն ուղեգրություն, Վիեննա, 1936:

²⁹ Я. Д. Исаевич, К характеристике армяно-украинских связей... «Պատմա քանասիրական հանդես», 1963, № 2:

Ֆերնարդոս-Ֆեռնարդոսյան, Սիլվեստր-Սիլվեստրոս-Սեղբոսյան դեպքերում հայերենը վերցրել է հունականացված տարբերակները - ուս ածանցով, իսկ մնացած դեպքերում որևէ ձևաբանական ցուցիչ չկա, ուստի առաջնորդվում ենք Աճառյանի տվյալներով: Ահա այդ օրինակները՝ Կոնստանտին-Կոնստանտինյան³⁰, Վարոս-Վարոսյան, Մերկուրիոս-Մերկերյան³¹, Անտոն-Անտոնյան և Գայանե-Գայանյան: Աճառյանը իրավացիորեն զարմանք է հայտնում, «որ հին շրջանում այս անունը մեր մեջ գործածական եղած չէ»³², չնայած հայկական անունարանի հնագույն փաստերից մեկն է: Այս կապակցությամբ անունագիտությունը նշում է, որ որևէ անձնանվան տարածմանը նպաստող մի շարք գործոններ կան. նախասիրություն, բարեհնչունություն, հաճախ նաև հոգևելիչարանական այլևայլ հանգամանքներ: Այժմ մենք կարող ենք առանց վարանելու պնդել, որ ՀԱՆԲ-ն գրեթե Գայանե անձնանունը այնքան տարածված չէր, ինչպես մեր օրերում:

Եվ սրա պատճառն այն է, որ վերջին մի քանի տասնամյակում մեր ժողովրդի մեջ ընդգծված միտում է նկատվում օգտվել իգական այնպիսի անձնանուններից, ուր առկա է -նե հնչյունակապակցությունը՝ Գայանե, Մարինե, Կարինե և այլն: Ավելին, եղած ավանդական անձնանունները վերակառուցվում են այդ ոգով՝ Արփենիկ, Արփեն, Արփիկ և Արփինե, Զարուհի-Զարինե և այլն: Ուրեմն մեզ համար ամենանվիրական, ամենուրանաստեղծական անձնանուններից մեկը (Գայանե) վերակենդանացավ միայն այն ժամանակ, երբ վերը նշված գործոնների համատեղ անդեմ գալու նախադրյալներ ստեղծվեցին:

Բնիկ և փոխառյալ-յուրացված շերտ:

Անվանագիտությունը տարբերում է բնիկ և փոխառյալ անուն ըմբռնումները: Բնիկ է համարվում տվյալ լեզվի նախնական, ամենահին անձնանունների շերտը: Փոխառյալ շերտի մեջ որոշակիորեն ընդգծվում է փոխառյալ-յուրացված ենթաշերտը, որը բնութագրվում է հետևյալ երկրպ. «Անուն, որը տվյալ լեզվում ընկալվում է իբրև բնիկ. այն փո-

³⁰ Համապատասխան տեղերում ցույց կտրվի, որ այս անձնանվան հայացված, կրթական, կոչական տարբերակները ևս դարձել են անձնանվանական հիմքեր:

³¹ Գոյություն ունի նաև այս ազգանվան հնչյունափոխված տարբերակը՝ Մերգելյան:

³² Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 443

խառող լեզվի կողմից կարող է յուրացվել բառակազմորեն, ձևաբանորեն, հնչյունաբանորեն»³³: Վերջինս Լրբեմն կոչում են հարմարեցված (адаптированный) անուն:

Բնիկ ենթաշերտ:

Ընդունելով, բնիկ ըմբռնման վերը նշված բնորոշումը գտնում ենք, այս դեպքում պետք է ընդլայնել նրա սահմանները և ավելացնել տվյալ լեզվով ստոգարանվելու, մեկնաբանվելու հնարավորությունը: Առաջարկում ենք հետևյալ աշխատանքային սահմանումը. «Բնիկ են կոչվում նախնական, ամենահին և տվյալ լեզվով ստուգաբանվող և մեկնաբանվող հիմքերը»: Ինչպես դժվար չէ նկատել այս դեպքում ժամանակային սահմանափակում չի դրվում. այս ենթաշերտում տեղ կգտնեն ինչպես մեր ժողովրդի վաղնջական անցյալից եկող անձնանունները, նույնպես և վերջին մեկ-երկու դարերի ընթացքում ձևավորված անձնանունները: Իմաստային-ժառանգաբանական սահմանափակում ևս չի դրվում, քանի որ այստեղ են դետեղվում, ինչպես ավանդական հայկական Հայկ-Հայկյան, Նավասարդ-Նավասարդյան, Նաիրի-Նաիրյան, նույնպես և հստակ ստուգաբանությամբ առանձնացող՝ Խաչերես-Խաչերեսյան, Տիրատուր-Տիրատուրյան և այլն: Ավելին, տվյալ դեպքում հաշվի չենք առնում նաև այս կամ ազգանվանակերտ հիմքի ձևավորման դրդապատճառները՝ քրիստոնեության հետ մուտք գործած, քրիստոնեության մուտքից հետո ստեղծված կամ պատճենված և այլն: Նման հարցերին կանդորադառնանք առանձին:

Ինչպես վերը նշեցինք, բնիկ ենթաշերտի ընդերքում կարելի է տարբերել ազգանվանակերտ հիմքերի այնպիսի խումբ, որը ուղեկցում է մեզ և որի գլխավոր շարժիչներին մեկը պետք է համարել բոլոր ժամանակներում և բոլոր հայերի կողմից սեփական համարելը: Այդպիսի հիմքերը թվով քիչ են. սակայն, ինչպես կհամոզվենք բերվող օրինակներով, մնայուն են: Ավելին, նկատվել է, որ ազգային ինքնագիտակցության յուրաքանչյուր նոր զարթոնք ուղեկցվում է այս կարգի անձնանունների նկատմամբ ընդդժված հետաքրքրությամբ՝

Հայկ-Հայկյան, Արմեն-Արմենյան, Արարատ-Արարատյան, Արամ-Արամյան, Արամայիս-Արամայիսյան, Հայկազ-Հայկազյան, Գեղամ-Գեղամյան, Արմենակ-Արմենակյան, Արաքս-Արաքսյան, Վարազ-Վարազյան, Արգամ-Արգամյան, Ատոմ-Ատոմյան, Կարապետ-Կարապետ-

³³ Н. В. Подольская, նշվ. աշխ., էջ 58.

յան, Մեսրոպ-Մեսրոպյան, Սերոբ-Սերոբյան, Քերոբ-Քերոբյան, Գարեգին-Գարեգինյան, Մամիկոն-Մամիկոնյան, Պոռշ-Պոռշյան, Զավրակ, Զավար-Զավարյան, Առանձար-Առանձարյան և այլն:

Այս ենթաշեղքերը իր մեջ ներառում է ազգանունների բավականին ստվար մի խումբ, որոնց հիմքերը բնութագրվում են հայերենով ստուգաբանվելու և մեկնվելու հատկանիշով: Ասվածը ավելի ճշտելու դեպքում հնարավոր է ասել, որ այս խմբի նկատմամբ հետևողականորեն կարելի է իրատեղ ներքին վերականգնման մեթոդը, որը, ինչպես հայտնի է, բավարարվում է միայն տվյալ լեզվի ընձեռած հնարավորություններով ու փաստերով: Այս խմբի ընդերքում որոշակիորեն առանձնանում են ձևափոխ և իմաստային խմբեր:

Այսպես, առանձնանում են -իկ¹ (-ուկ, -ակ), ածանցով կազմովյալ ներքին Նուսիկ-Նուսիկյան², Թանգիկ-Թանգիկյան³, Թուխիկ-Թուխիկյան⁴, Լուսիկ-Լուսիկյան, Ծովիկ-Ծովիկյան, Յողիկ-Յողիկյան⁵, Քաղցրիկ-Քաղցրիկյան, Աստղիկ-Աստղիկյան, Հայրիկ-Հայրիկյան, Չուսիկ-Չուսիկյան, Գուխիկ-Գուխիկյան, Շաղիկ-Շաղիկյան, Նուշիկ-Նուշիկյան, Կլորիկ-Կլորիկյան, Պապիկ-Պապիկյան, Գառնիկ-Գառնիկյան, Մեղրիկ-Մեղրիկյան⁶, Փոքրիկ-Փոքրիկյան, Պարոնիկ-Պար-

¹ Անձնանունների -իկ ով տարբերակների՝ իբրև ստգանվանակերտ հիմքի մասին առանձին կիսովի Այստեղ ներկայացվում են այն հիմքերը, որոնք ՀԱՆԲ-ում ներկայացված են իբրև ինքնուրույն ձևեր

² Զնայած ՍՃատյանը Եղնիկ անձնանվան դիմաց կատարում է «այժմ շատ սակավ» (ԱՆԲ, հ. Բ, էջ 97) և ոչ մի խոսք չասելով Եղն անձնանվան մասին, սակայն մենք գտնում ենք, որ Եղն-իկ բառակազմական կաղապարը գործել է և դիտակցվել է: Այս պնդման համար իբրև հիմնական փաստարկ բերում ենք XVIII դարի նշանավոր բաղադրական գործիչ Եղյան-էզովի առհմանունը

³ Ունենք նաև Թանգեր անձնանունը և Թանգերյան ազգանունը:

⁴ Մեր անուևարանում վկայված է նաև Թուխայրյան ազգանունը:

Պեղա ևն Լաև Շողեր-Շողերյան և Յողեր Յողերյան ձևերը:

⁵ ԱՃատյանը այս անձնանվան ձևավորման համար նշում է մի քանի ուղի՝ մեղր լատից, հուն. γελυ «մեղր» բառից և Մեղրի տեղանունից: Ըստ որում վերջինիս համար բերելով «ձնաւ և կին մի ի Մեղրի և անուանեցին գանուն նորա Մեղրիկ»՝ կայսրիկյանը Մենք միակ հնարավորը համարում ենք առաջինը, քանի որ՝

ա) Հայոց մեջ -իկ-ով կազմություններ կան միայն անձնանուններից, տեղանունի նման կաղապարով կազմության չենք հանդիպել: Տեսականորեն հնարավոր է տեղանուն անձնանուն և նոր միայն -իկ-ի ավելացում:

բ) Մեր ազգանունարանում վկայված է նաև Մեղրոյան ձևը, որը սերվել է Մեղր-Սեղր-Սեղրոյան ուղիով:

գ) Ունենք նաև Մեղերյան ազգանունը:

րոնիկյան, Լանջիկ-Լանջիկյան, Խաչիկ-Խաչիկյան, Խոստիկ-Խոստիկյան, Գերենիկ-Գերենիկյան, Վարդիկ-Վարդիկյան, Զոնիկ-Զոնիկյան, Եղնուկ-Եղնուկյան, Ըղձակ-Ըղձակյան, Առնակ-Առնակյան, Ծառուկ-Ծառուկյան, Սկիիկ-Սկիիկյան, Կապուտիկ-Կապուտիկյան, Յուլակ-Յուլակյան և այլն:

Անձնանուն ազգանվանակերտ հիմքերի դերով հանդես են գալիս նաև հայերենի հետևյալ ածանցներով կազմությունները՝ -ում՝ Համբար-ձում-Համբարձումյան, Մկրտում-Մկրտումյան, Ավետում-Ավետումյան, Խաչում-Խաչումյան³⁴:

-ական՝ Մնացական-Մնացականյան, Պատվական-Պատվականյան, Սիրական-Սիրականյան, Տոնական-Տոնականյան:

-ավոր՝ Թագավոր-Թագավորյան, Շատվոր-Շատվորյան, Շնորհավոր-Շնորհավորյան:

-ան՝ Փախչան-Փախչանյան, Նաղան-Նաղանյան:

ան-Անպետ-Անպետքյան, Անշափ-Անշափյան³⁵

ինչպես նաև -ուիցուն,-ուստ,-յան,-իք,-իչ,-ուլ,-վետ,-ո,-ուն ածանցներով՝ Հարուիցուն-Հարուիցունյան, Գալուստ-Գալստյան, Գալստյան-Գալստանյան, Ավետիք-Ավետիքյան, Մկրտիչ-Մկրտչյան, Թաթուլ-Թաթուլյան, Սիրավետ-Սիրավետյան, Դշխո-Դշխոյան, Կթուն-Կթունյան:

Զևային ենթախմբի մեջ առանձնանում են -եր հոգնակերտով հետևյալ հիմքերը՝ Շողեր-Շողերյան, Թանգեր-Թանգերյան, Ծամեր-Ծամերյան, Խաչեր-Խաչերյան, Տոներ-Տոներյան, Վարդեր-Վարդերյան³⁶, Յողեր-Յողերյան:

Քերականական ձևերից առաջացած անձնանունների շարքը պետք է գասել նաև Ավետիք-Ավետիսյան, առաքեալ-Առաքել-Առաքելյան, դուռն-դրամբ-Դրամբյան, կատարեսլ-Կատարելյան, մնալ-Մնացական-Մնացականյան, գալ-Եկավ-Եկավյան, նանա-Նանաս-Նանասյան և Պապ-Պապի-Պապիյան, իբրև կոչականի մասնավոր դրսևորումներից մեկը³⁷:

³⁴ Չպետք է շփոթել այլալեզու ում ածանցի հետ՝ Վարդում, Բեզում և այլն: Հայերենի -ում-ը ինչպես այս, այնպես էլ հասարակ անունների դեպքում օրինաչափորեն ավելանում է բայարմատներին՝ սերելով բայանուններ:

³⁵ Այս երկու ձևերի իմաստային կողմը մի կողմ թողնելով նշենք, որ ք-ի հավելումը ազգանվան մեջ բաղադրային հիմք ունի: Անշափ անձնանունը ՀԱՆԲ բացակայում է մինչդեռ Հ. Աբրահամյանի «Կալվածագրերում» վկայված է՝ Նարիմանի որդի Անշափ կամ մի այլ տեղում՝ Անշափ Անդենևնց Թիֆլիզցի որդի Նարիմանի:

³⁶ Հնարավոր է նաև Վարդերեսյան-Վարդերյան անցումը:

³⁷ Չի բացառվում, որ այստեղ գործել է նաև արտահայտչականության գործոնը, քանի որ միավանկ հիմքերի դեպքում ձայնավորի հավելման երևույթներ ուրիշ դեպքում ևս նկատվել են:

Վերջապես, այստեղ պետք է դասել նաև հայերենի բառակազմության օրենքներով սերված երկարմատ այն կազմությունները, որոնց երկու բաղադրիչները հստակորեն գիտակցվում են: Ավելին, հենց այս խումբի սահմաններում նրանցից գրեթե յուրաքանչյուրը մասնակցում է մեկից ավելի դեպքերի սերմանը՝ Հազարապետ-Հազարապետյան, Տոնապետ-Տոնապետյան, Հայրապետ-Հայրապետյան, Մայրապետ-Մայրապետյան, Վարդերես-Վարդերեսյան, Խաչերես-Խաչերեսյան, Խաչատուր-Խաչատրյան, Տիրատուր-Տիրատուրյան, Աստվածատուր-Աստվածատուրյան, Քրիստափոր-Քրիստափորյան, Մեծատուր-Մեծատուրյան, Սիրադեղ-Սիրադեղյան, Թուխմանուկ-Թուխմանուկյան, Թուխայր-Թուխայրյան, Հրաչ-Հրաչյան, Հրայր-Հրայրյան, Արևշատ-Արևշատյան, Շատարև-Շատարևյան, Բարիլույս-Բարիլույսյան, Բարելույսյան, Քաջաջ-Քաջաջյան, Վարդգես-Վարդգեսյան, Խաժակ(ն)-Խաժակյան, Նորատունկ-Նորատունկյան, Նորարև-Նորարևյան, Նորամիր-Նորամիրյան:

Բնիկ ենթաշերտի անձնանուն հիմքերը, ինչպես նշվեց, ստուգաբանվում և մեկնվում են հայերենով: Նրանք օժտված են իմաստային բավականին հստակ նկարագրով: Կարելի է առանձնացնել իմաստային .ևտևյալ դաշտերը³⁸.

ա) Անհատի արտաքին և ներքին հատկանիշներ. Քաջաջ-Քաջաջյան, Խաժակ(ն)-Խաժակյան, Վարդգես-Վարդգեսյան, Քաջիկ-Քաջիկյան, Հրայր-Հրայրյան, Դեղ-Դեղյան, Թուխայր-Թուխայրյան, Հրաչ-Հրաչյան, Փախչան-Փախչանյան, Թուխմանուկ-Թուխմանուկյան, Դշխո-Դշխոյան, Սիրավետ-Սիրավետյան, Նազան-Նազանյան, Առնակ-Առնակյան, Կլորիկ-Կլորիկյան, Ազատ-Ազատյան, Քաղցրիկ-Քաղցրիկյան, Գյուտ-Գյուտյան, Թուխիկ-Թուխիկյան, Թանգիկ-Թանգիկյան, Երկաթ-Երկաթյան, Պարթև-Պարթևյան, Սիրուն-Սիրունյան, Պերճ-Պերճյան, Փարթամ-Փարթամյան, Թանկ-Թանկյան, Խելոք-Խելոքյան, Ումիկ-Ումիկյան, Հուսիկ-Հուսիկյան, Խոստիկ-Խոստիկյան, Խումար-Խումարյան, Զանազան-Զանազանյան, Զարդար-Զարդարյան, Սիրական-Սիրականյան, Պարզ-Պարզյան:

բ) Բնություն, բնական երևույթներ. Յուլակ-Յուլակյան, Վարդազար-Վարդազարյան, Վարդերես-Վարդերեսյան, Շաղիկ-Շաղիկյան, Աստղիկ-Աստղիկյան, Շողիկ-Շողիկյան, Յողիկ-Յողիկյան, Շողեր-Շողերյան, Մո-

³⁸ Ինքնին հասկանալի է, որ նման բաժանումը որոշ պայմանականություն ունի: Հետևաբար հստակեցումը կարող է շատ հեռուն տանել և շեղել հիմնական ուղուց:

վիկ-Մովիկյան, Մովինար-Մովինարյան, Փայլակ-Փայլակյան, Լուսին-Լուսինյան, Արեգ-Արեգյան, Արև-Արևյան, Գարուն-Գարունյան³⁹, Մովան-Մովանյան, Լուսիկ-Լուսիկյան, Ցողեր-Ցողերյան:

գ) Կենդանական աշխարհ. Արծիվ-Արծիվյան, Արծվել-Արծվելյան, Գառնիկ-Գառնիկյան, Դոխիկ-Դոխիկյան, Ճուտիկ-Ճուտիկյան, Ելնիկ-Ելնիկյան, Եղուկ-Եղուկյան, Դեղձոն-Դեղձոնյան, Կաքավ-Կաքավյան, Հեղնար-Հեղնարյան, Սիրամարգ-Սիրամարգյան, Բազև-Բազևյան, Վարուժան-Վարուժանյան, Սոխակ-Սոխակյան, Մարախ-Մարախյան:

դ) Բուսական աշխարհ. Հասմիկ-Հասմիկյան, Պտուղ-Պտուղյան, Սոս-Սոսյան, Մասուր-Մասուրյան, Մանուշակ-Մանուշակյան, Մաղիկ-Մաղիկյան. Մեխակ-Մեխակյան, Բարունակ-Բարունակյան, Շուշան-Շուշանյան, Ռեհան-Ռեհանյան, Շամամ-Շամամյան, Նարինջ-Նարինջյան, Նուշիկ-Նուշիկյան, Մառուկ-Մառուկյան, Մարգ-Մարգյան, Վարդիկ-Վարդիկյան, Կոկոն-Կոկոնյան, Կթուն-Կթունյան, Վարդեր-Վարդերյան:

ե) Ընտանեկան և մարդկային այլ հարաբերություններ: Նանաս-Նանասյան, Պապի-Պապիկյան, Մնացական-Մնացականյան, Շատվոր-Շատվորյան, Պապիկ-Պապիկյան, Հայրիկ-Հայրիկյան, Ըղձակ-Ըղձակյան, Լաճ(ջ)-Լաճիկյան, Փոքրիկ-Փոքրիկյան, Թոռ(ն)-Թոռնյան, Թոռնիկ-Թոռնիկյան, Փոխան-Փոխանյան, Անդրանիկ-Անդրանիկյան, Ավագ-Ավագյան, Մանուկ-Մանուկյան, Մամա-Մամայան, Նանա-Նանայան, Խիզան-Խիզանյան, Արեշատ-Արեշատյան, Շատարեյան, Մանկիկ-Մանկիկյան, Բարիլույս-Բարիլույսյան, Բարելույսյան, Թագվոր-Թագվորյան, Շնորհավոր-Շնորհավորյան: Հայտնի է, որ հայոց մեջ Անդրանիկ, Ավագ, Մնացական, Փոխան ինչպես նաև Հերիք (եթև այն Հերիքնազի կրճատված տարբերակը չէ), Բավական⁴⁰ անձնանունները նորածիններին տրվում էին խիստ որոշակի պայմանների դեպքում:

զ) Պատվանուններ. Ծերուն-Ծերունյան, Պառավ-Պառավյան⁴¹, Պատվական-Պատվականյան, Իշխան-Իշխանյան, Սեպուհ-Սեպուհյան:

է) Գունանուններ. Կապույտ-Կապուտիկ-Կապուտիկյան, Սևի-Սևիյան, Սևիկ-Սևիկյան, Սևիկ-Սևիկյան, Կանաչ-Կանաչյան, Ճերմակ-Ճերմակյան:

ը) Արտաֆին աշխարհի առարկաներ. Վեմ-Վեմյան⁴², Վահան-Վահանյան, Գոհար-Գոհարյան, Մանյակ-Մանյակյան, Շաքար-Շաքարյան,

³⁹ Հնարավոր է նաև Հարունյան ազգանվան այլալեզու տարբերակ լինելը:

⁴⁰ Վերջին երկուսը իրրև ազգանվանակերտ հիմք վկայված չեն:

⁴¹ Իբրև Ծերուն, Մեր, Հավորիկ անձնանունների հոմանիշ:

⁴² Իբրև հունական τέτονος-բար, վեմ անձնանվան հայկական պատճենը:

Կորկոտ-Կորկոտյան, Մեղրիկ-Մեղրիկյան, Մեղեր-Մեղերյան, Քնար-Քնարյան, Զմրուխտ-Զմրուխտյան, Ոսկան-Ոսկանյան, Սաթուն-Սաթունյան, Պարույր-Պարույրյան:

Նշված իմաստային խմբերից դուրս են մնում հետևյալ անձնանուն-հիմքերը՝ Ռուս-Ռուսյան, Կովկաս-Կովկասյան Շատին-Շատինյան, Հազարապետ-Հազարապետյան և Նավասարդ-Նավասարդյան:

Եվ վերջապես նախորդներին հակադրվում են Անպետք(ք)-Անպետքյան, Անշափ-Անշափյան ձևերը: Առաջինի ձևաբանության մասին արդեն խոսել ենք: Այստեղ պարզապես ավելացնենք, որ, մեր կարծիքով, այս դեպքում գործ ունենք «քշով, բավարարվող, ժուժկալ» իմաստի հետ, որը հետագայում -ք-ի հավելմամբ աստիճանաբար մոռացվել է, իսկ ազգանունը ձևաք է բերել ընդգծված բացասական իմաստ: Անշափ-Անշափյանի դեպքում, ըստ երևույթին, գործ ունենք մեծ-հսկա-ահագին-անշափ հոմանշային շարքի հետ և բացասական երանգի պատրանքը ստեղծվում է ան-ժխտականի պատճառով:

Հատուկ ոճական և պատմական գունավորում ունեն Նավասարդյան, Նշանյան, Հարովթյունյան, Առաքելյան, Ավետիքյան և Ավետիսյան, Աստվածատուրյան, Քրիստոսատուրյան, Տիրատուրյան, Ավետումյան, Մկրտչյան, Մկրտումյան, Գալստյան և Գալստանյան, Համբարձումյան, Հայրապետյան, Մեծատուրյան, Խաչերեսյան, Խաչատրյան, Վարդերեսյան, Կարապետյան, Թագվորյան, Եկավյան, Նավակատիկյան, Տոնապետյան, Մխիթարյան, Խաչերյան, Տոներյան, Տոնականյան, Կատարելյան, Մայրապետյան, Զոնիկյան, Ավետումյան, Մարգարյան, Կանթեղյան, Զատիկյան, Սաղմոսյան, Խաչումյան և մի քանի այլ ազգանունների հիմքերը:

Բնիկ անձնանուն-հիմքերի և նրանցից սերված ազգանունները ներկայացնելուց հետո, անհրաժեշտ ենք համարում մի քանի դիտողություններ անել:

1. Ուսումնասիրելով ազգանվանակերտ հիմքերի այս շերտը, համոզվեցինք, որ հայկական անձնանունները ընդհանրապես համակողմանի ուսումնասիրության կարիք են զգում: Դրա համար բոլոր նախադրյալները կան, որոնցից ամենակարևորը Աճառյանի կապիտալ աշխատությունն է, անվանագիտության մեջ մի աննախադեպ երևույթ իր ծավալով, ստուգաբանական ընդգրկումներով և վերջապես վկայություններով:

2. Քննվող ենթաշերտի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանց հիմքում ընկած են հասարակ անուններ: Ավելին,

դրանք մեր լեզվի զարգացման բոլոր փուլերում ակտիվ բառապաշարի իրողություններ են եղել և, թերևս հենց այդ պատճառով, օժտված են միայն հայերենով բացատրված լինելու հնարավորությամբ:

3. Մյուս, ոչ պակաս կարևոր առանձնահատկությունն այն է, որ այս ազգանվանակերտ անձնանունները միշտ նվիրական և նշանակալից են եղել մեր ժողովրդի համար հատկապես ինքնագիտակցության զարթոնքի և վերելքի շրջաններում, իբրև վերջինիս առաջին և ակնառու դրսևորումներից մեկը և միշտ ուղեկցել են մեզ: Ասվածը ապացուցելու համար բերենք հետևյալ փաստը: Բոլորովին վերջերս անհրաժեշտություն առաջացավ ունենալ ճշգրտված, գիտականորեն հիմնավորված հայկական և այսօր իբրև հայկական գիտակցվող անձնանունների ցուցակ⁴³: Գոհունակությամբ արձանագրում ենք, որ ներկայացված անունարանում այս շերտը ներկայացված է գրեթե ամբողջությամբ:

4. Ընդհանուր առմամբ անձնանուն ազգանվանակերտ հիմքերում արական անձնանունները իգականի նկատմամբ եռապատիկ գերակշռություն ունեն: Բնիկ ենթաշերտի դեպքում՝ ևս:

5. Բնիկ ենթաշերտի համեմատությունը, ինչպես քննարկված, նույնպես և այլ լեզուների ազգանվանակերտ հիմքերի հետ մեզ իրավունք է տալիս պնդելու.

ա) Բացասական իմաստով և ոչ մի դեպք չունենք: Անշափյանի և Անպետ(ք)յանի մասին արդեն խոսվել է:

բ) Գերակշռում են մարդու արտաքինի ու ներքինի հետ կապված միայն դրական իմաստային երանգով անձնանունները:

գ) Բնության, բնական երևույթների անունները, բուսանունները աչքի են ընկնում իրենց ընդգծված բանաստեղծականությամբ՝ Յողիկ, Շողեր, Ծամեր, Յոլակ, Շաղիկ, Շուշան, Արևգ, Հասմիկ, Ծառուկ և այլն:

Կենդանիների անունները զուտ փոխաբերություններ են, մակդիրային արժեք ունեն՝ Արծիվ, Գառնիկ, Դեղձուն, Սիրամարգ, Բազե, Վարուժան, Սոխակ, Հեղնար և այլն:

Եվ իբրև մակդիր նույնպես ոչ մի բացասական երանգ չունեն: Առաջ անցնելով նշենք, որ մականվանական հիմքով ազգանուններում ևս բնիկ շերտը նույն բնութագիրն ունի:

⁴³ Այն պատրաստել է տողերիս հեղինակը և մոտ ժամանակներս համապատասխան մեկնաբանություններով և առաջաբանով լույս կտեսնի «*Имячные имена народов СССР*» ժողովածուում:

Փոխառյալ-յուրացված ենթաշերտ: Փոխառյալ-յուրացված ենթաշերտի աշխատանքային սահմանումը վերևում տրվել է: Հենվելով այդ սահմանմանը, մենք յուրացված կամ հայացված լինելու առաջին և գլխավոր շափանիշը համարում ենք զուտ լեզվական, իմա, հնչյունաբանական և ձևաբանական գործոնը և նոր միայն՝ հոգելեզվաբանականը: Պետք է խոստովանել, որ ընտրության ժամանակ նշված գործոնների ետևառաջությունը փոխվում է, սակայն ընտրություն կատարելը դեռևս գործի կեսն է: Կատարված ընտրությունը հիմնավորելու համար հստակ շափանիշ է պետք, որի դերը կարող են կատարել հնչյունաբանական և ձևաբանական շափանիշները:

Իբրև լրացուցիչ ապացույց օգտվում ենք նաև ՀԱՆԲ-ի առաջին վկայության ժամանակից և այդ վկայությունների քանակից: Ասվածը լուսաբանելու համար բերենք մեր կարծիքով, ամենացայտուն օրինակը՝ Նով-հաննիսյան-Նովհաննես. սերվել է 'Xωαννης δևից, առաջին վկայությունները կապվում են III—IV դդ. հետ. բերվում է մոտ 1400 վկայություն, ունի մի քանի տասնյակ տարբերակ և այլն:

Փոխառյալ յուրացված ենթաշերտի սահմաններում առանձնանում են մի քանի խմբեր:

Կրանական ազգանվանակերտ անձնանունների այն խումբը, որի մասին բոլոր հետազոտողները նշում են հետևյալ առանձնահատկությունները. ծագմամբ իրանական լինելով, հայ-իրանական սերտ փոխհարաբերությունների ընթացքում անցել են հայերին: Պարսիկների յոդմից իսլամի ընդունումից հետո մոռացվել են և պահպանվել են միայն հայոց մեջ: Այդ անձնանունները մեծ մասամբ արական են, կապվում են մեր ժողովրդի պատմության ամենանշանակալից իրադարձությունների և պատմական շատ նվիրական դեմքերի հետ:

Ներկայացվող անձնանունները յուրացված են և՛ լեզվաբանորեն և՛ լեզվահոգևբանորեն: Այս խումբը ներկայացնում ենք ըստ յուրացված լինելու աստիճանի, շափանիշը համարելով ժողովրդական լայն զանգվածների շրջանում տարածվածությունը՝ Արտաշես-Արտաշեսյան, Արշակ-Արշակյան, Տիգրան-Տիգրանյան, Վարդան-Վարդանյան, Ներսես-Ներսեսյան, Անուշավան-Անուշավանյան, Երվանդ-Երվանդյան, Գուրգեն-Գուրգենյան, Մուշեղ-Մուշեղյան, Շավարշ-Շավարշյան, Արիստակես-Արիստակեսյան, Միհրան-Միհրանյան, Հմայակ-Հմայակյան, Սմբատ-Սմբատյան, Գասպար-Գասպարյան, Սուրեն-Սուրենյան, Համազասպ-Համազասպյան, Վարդ-Վարդյան, Վաչե-Վաչեյան, Բագրատ-Բագ-

րատյան, Տրդատ-Տրդատյան, Արշավիր-Արշավիրյան, Խոսրով-Խոսրովյան, Վահրամ-Վահրամյան, Վաղարշակ-Վաղարշակյան, Մհեր-Մհերյան, Վասակ-Վասակյան, Վրթանես-Վրթանեսյան, Արշամ-Արշամյան, Մեհրաբ-Մեհրաբյան, Վոամ-Վոամյան, Արբակ-Արբակյան, Պապ-Պապյան, Պապա-Պապայան, Զարե-Զարեկյան, Տիրիթ-Տիրիթյան, Տիրան-Տիրանյան, Վահրիճ-Վահրիճյան, Սանդուխտ-Սանդուխտյան, Նուբար-Նուբարյան, Բախտավոր-Բախտավորյան, Մանկասար-Մանկասարյան, Արամազդ-Արամազդյան, Զրվանդ-Զրվանդյան: Բերված շարքի հոգելիզվաբանական պայմանավորվածությունը շատ ավելի ցայտուն է դառնում, երբ համեմատում ենք Արտաշես-Արտաշեսյան, Արշակ-Արշակյան և Արամազդ-Արամազդյան, Զրվանդ-Զրվանդյան օրինակները: Ի դեպ, իրենց ժամանակագրությամբ վերջիններս զգալիորեն գերազանցում են Արտաշես-Արտաշեսյան, Արշակ-Արշակյան օրինակներին, սակայն, ինչպես դժվար չէ նկատել, գնալով ներկայացվող ցուցակում տեղ գրավելու հավանականությունը փոքրանում է և վերջին մի քանի օրինակները այստեղ են զետեղվել նկատելի պայմանականությամբ, մինչդեռ Արտաշես-Արտաշեսյան և Արշամ-Արշամյան օրինակների միջև ընկած փաստերը միջին հայի շափանիշով շատ հաճախ և իրավացիորեն կդասվեն բնիկների շարքը:

Մի այլ լեզվահոգևբանական շափանիշ նույնպես կուզեինք առաջ քաշել, այն է՝ բերվածներից կոչական տարբերակների կազմության հնարավորությունը, որ, մեր կարծիքով, հայ անձնանվանագիտական ամբողջ համակարգի կարևոր երևույթներից և անձնանվան յուրացման հիմնական շափանիշներից է: Այստեղ մենք կնշենք վերը բերված խմբի անձնանուններից համապատասխան ածանցների օգնությամբ անձնանվան կոչական տարբերակներ սերելու հնարավորությունը: Վերջիններից սզգանուն կազմելու ընդհանուր պատկերը կներկայացնենք այդ հարցին նվիրված համապատասխան բաժնում: Եվ այսպես, նշված խմբից առանձնանում են հետևյալ անձնանուն-ազգանվանակերտ հիմքերը ըստ կոչական տարբերակ կազմելու հնարավորության՝ Արտաշես-Արտո⁴⁴, Արշակ, Արշավիր, Արշամ-Արշո, Վարդան, Վարդ-Վարդո, Ներսես-Ներ-

⁴⁴ Երբեմն անձնանունից կոչական կազմելու մեր լեզվում ընդունված կանոնով տարբեր, սակայն սկզբնական նույն հնչյունակազմով անձնանուններ կարող են նույն արդյունքը տալ՝ Արտաշես և Արտավազդ՝ Արտո, Արշակ և Արշավիր՝ Արշո և այլն:

սո, Մուշեղ-Մուշե, Մուշո, Շավարշ-Շավո, Տիգրան-Տիգո, Միհրան, Մեհ-
րաբ-Միրո, Մհո, Հմայակ, Համաղասպ-Համո, Սմբատ-Սումբո, Գաս-
պար-Գսպե, Գսպո, Սուրեն-Սուրո, Գուրգեն-Գուգո, Վաշե, Վաչագան-
Վաշո, Վշե, Երվանդ, Երո, Բագրատ-Բագո, Զարե-Զարո, Վաղարշակ,
Վաղինակ-Վաղո, Մելքոն-Մլքե, Մլքո և այլն: Կարելի է իբրև շափանիշ
նշել նաև անձնանունների կրճատված և փաղաքշական տարբերակների
կազմության հնարավորությունը ևս, սակայն մենք գտնում ենք, որ ե-
ղածների մեջ ամենահատկանշականը, այնուամենայնիվ, մնում է կոչա-
կան տարբերակը:

Հին հրեական խմբի օրինակների առաջին կարևոր առանձնահատ-
կություններից մեկը նրանց մեծ մասի հունարևոյ միջնորդվածու-
թյունն է. Այսպես, մոտ շորս տասնյակ դեպքերից ավելի քան կրեք քա-
տորդը մեզ են անցել հունարենի միջնորդութամբ: Այս դեպքում ևս
փաստերը ներկայացնելու ենք ըստ յուրացվածության աստիճանի՝ Հա-
կոր-Հակոբյան, Մարիամ-Մարիամյան, Սիմոն-Սիմոնյան, Սահակ-Սա-
հակյան, Հովսեփ-Հովսեփյան, Դանիել-Դանիելյան, Մովսես-Մովսես-
յան, Սողոմոն-Սողոմոնյան, Մինաս-Մինասյան, Հովակիմ-Հովակիմյան,
Սեդրակ-Սեդրակյան, Եփրեմ-Եփրեմյան, Եսայի-Եսայան, Զաքար-Զա-
չարյան, Եղիազար-Եղիազարյան, Սամսոն-Սամսոնյան, Միսակ-Միսակ-
յան, Սաղաթել-Սաղաթելյան, Սամվել-Սամվելյան, Ռուբեն-Ռուբենյան,
Միքայել-Միքայելյան, Երեմ-Երեմյան, Թորգոմ-Թորգոմյան, Իսահակ-
Իսահակյան, Հովասափ-Հովասափյան, Մամբրե-Մամբրեյան, Հովնա-
թան-Հովնաթանյան, Ռաֆայել-Ռաֆայելյան, Շմավոն-Շմավոնյան, Սե-
նեքերիմ-Սենեքերիմյան:

Հին հրեական խմբի մոտ մեկ քառորդը մեզ է հասել առանց հու-
յական միջնորդության: Ըստ որում, սրանցից առանձնանում են Հաբել-
Աբել տարբերակները, որոնցից առաջինը Հաբել-Հաբելյան, մտնում է
յննարկվող շարքի մեջ, իսկ Աբել-Աբելյանը նախորդ՝ հին-հրեական-
ունական շարքի մեջ:

Բուն հին-հրեական շարքը ներկայացված է հետևյալ փաստերով.
Դավիթ-Դավթյան, Գաբրիել-Գաբրիելյան, Աբրահամ-Աբրահամյան,
Ահարոն-Ահարոնյան, Թամար-Թամարյան, Բենիամին-Բենիամինյան,
Լևոթ-Ենոթյան, Ասքանազ-Ասքանազյան:

Այս խմբի համար ևս նախորդ շափանիշը կիրառելու դեպքում,
Լստանանք հետևյալ պատկերը՝ Դավիթ-Դավո, Դվո, Դավե, Գաբրիել-
Գաբո, Գբե, Աբրահամ-Աբրո, Աբրե, Թամար-Թամո, Բենիամին-Բենո,
Ասքանազ-Ասքո, Ասկո, Սենեքերիմ-Սենո, Ռաֆայել-Ռաֆո, Հովնաթան,

Հովակիմ, Հովնան, Հովսեփ, Հովասափ-Հովո, Հովե, Իսահակ-Իսո, Երեմ-
 Երո, Միքայել-Մքե, Մքո, Մուխո, Մխո, Ռուբեն-Ռուբո, Սամվել-Սմո,
 Սամո, Սաղաթել-Սաղո, Գանիել-Գանո, Միսակ-Մսե, Մսո, Սամսոն-
 Սմո, Սմե, Եղիազար-Եղո, Զաքարիա-Զաքո, Զաքե, Եսայի-Իսո, Սեդ-
 րակ-Սեթո, Մինաս-Մնե, Մնո, Սողոմոն-Սողո, Մովսես-Մոսո, Մոսո,
 Սահակ-Սհո, Հակոբ-Հակո և այլն: Նշվածներից առանձնանում է Սիմոն-
 Սիմոնյան օրինակը՝ Սիմոն-ը հին-հրեական Շմավոն-ի հայացված
 տարբերակն է:

Հունալեզու շատ նշանակալից խումբ է, որի մեծ մասնող անձնանուն
 հիմքերի մեծ մասը նույնպես միջին հայի մակարդակով կարող է դաս-
 վել բնիկների շարքը: Բավական է ասել, որ այստեղ են դրվում այն-
 պիսի անձնանուններ, ինչպիսիք են Հովհաննես, Գրիգոր, Գևորգ և
 այլն: Այս խմբի անձնանուն հիմքերը առանց բացառության հնչյունա-
 բանորեն յուրացված են, սակայն ձևաբանորեն՝ ոչ չիշտ, քանի որ մի
 շարք դեպքերում պահպանված են հունարենին հատուկ վերջավորու-
 թյունները՝ -ոս, -աս, -ես, -ոն՝ Պետրոս-Պետրոսյան, Մարտիրոս-Մար-
 տիրոսյան, Փանոս-Փանոսյան, Ղազարոս-Ղազարոսյան, Նիկողայոս-
 Նիկողայոսյան, Պողոս-Պողոսյան, Սուքիաս-Սուքիասյան, Երանոս-Երա-
 նոսյան, Թադևոս-Թադևոսյան, Իրանես-Հովհաննիսյան, Թոմաս-Թով-
 մասյան, Ղուկաս-Ղուկասյան, Անդրեաս-Անդրեասյան, Սերաֆիոն-Սրա-
 պիոնյան: Իսկ այս օրինակներում յուրացումը կատարվել է նաև -ոս
 վերջավորության անկման հաշվին՝ Մակարիոս-Մակարյան, Կիրիլլոս-
 Կյուրեղյան, Աթանասիոս-Աթանասյան, Ալեքսանդրոս-Ալեքսանդրյան,
 Գևորգիոս-Գևորգյան, Գրեգորիոս-Գրեգորյան, Խրիստաֆորոս-Քրիստա-
 փորյան, Ստեֆանոս-Ստեփանյան, Բասիլեոս-Բարսեղյան: Ինչպես նշե-
 ցինք, հունական անձնանուն-հիմքերը օրինաչափ կերպով հնչյունաբա-
 նորեն յուրացված են՝ լ-ի դիմաց ղ՝ Լազարոս-Ղազարոս, Նիկոլայոս-
 Նիկողայոս, Նիկողոս, Պաուլոս-Պողոս, Լուկաս-Ղուկաս, Կիրիլլոս-Կյուրեղ,
 Բասիլեոս-Բարսեղ: Լեոն-Ղեոնդ⁴⁵. Ֆ-ի դիմաց փ՝ Ստեֆանոս-Ստեփանոս,
 Խրիստաֆորոս-Քրիստափոր, Ֆանոս-Փանոս: Հունարեն թեստայի դիմաց
 Թ՝ Θαδδαῖος - Թադևոս, Θωμάς - Թոմաս, Ἀθανάσιος - Աթանաս, ինչպես նաև
 հնչյունական մի շարք այլ երևույթներ՝ բաղաձայնների հավելում՝
 Թոմաս-Թովմաս, Լեոն-Ղեոնդ, վերջին դեպքում դ-ի հավելումը կապ-
 վում է սեռականի Λέοντες ձևի հետ, երկհնչյունի պարզեցում՝ Ἰωαννης
 -Հովհաննես, Երենայոս-Երանոս և այլն:

⁴⁵ Ավելի ուշ փոխառությամբ՝ Լեոն:

Արսեն-Արսենյան, Պետրոս-Պետրոսյան, Մարտիրոս-Մարտիրոսյան, Անդրեաս-Անդրեասյան դեպքերում հունարենի և հայերենի հնչյունաբանական պատկերը չի տարբերվում:

Փոխառյալ-չուրացված ենթաշերտի մեջ երևում են նաև ասորական, լատինական անձնանուն-հիմքեր՝ Աբգար-Աբգարյան, Մարութ-Մարության, Մարութե-Մարության, Շամիրամ-Շամիրամյան, Սանասար-Սանասարյան, Բաղդասար-Բաղդասարյան:

Վերջինս անցել է հին-հրեերեն-հունարեն միջնորդությամբ: Ասորական անձնանուն հիմքերի մեջ առանձնանում է ասորա-հայկական Գագիկ անձնանունը, ուր Գագ ասորական ձևին ավելացել է -իկ մասնիկը և անձնանունը շնչին բացառություներով վկայված է մեզանում միայն Լյոզ ձևով:

Լատինական խումբը ներկայացված Varus-Վարոս-Վարոսյան շմիջնորդավորված ձևով, ինչպես նաև լատինա-հունական միջնորդավորված հետևյալ դեպքերով՝ Sergius -Սարգիս-Սարգսյան, Կոստանտին-Կոստանտինյան, Marcus -Մարկոս-Մարկոսյան, Antonius -Անտոն-Անտոնյան և Gaianus -Գայանե-Գայանյան:

Առանձնանում են նաև եվրոպական Սյուզաննա-Սուսան-Սուսանյան⁴⁶ և Իզաբելլա-Զաբել-Զաբելյան օրինակները: Մի քանի տասնյակ արաբական և թուրքական անձնանուն հիմքերից նկատելի վերապահումներով բնիկների շարքը կարելի է դասել միայն Զավահիր-Զավահիրյան⁴⁷, Ալմաստ-Ալմաստյան և Ումրշատ-Ումրշատյան հիմքերը:

Ի դեպ, վերջինս կազմված է արաբ. ումր + հայերեն շատ կաղապարով: Այստեղ, անշուշտ, պետք է ավելացնել նաև Աճառյանի կողմից վրացական համարվող Լիպարիտ-Լիպարիտյան օրինակը, որի համար բերում է 10 վկայություն⁴⁸:

Վերջին երկու խմբերի նկատմամբ կոշական տարբերակ կազմելու հնարավորության շափանիշը կիրառելիս ստանում ենք հետևյալ պատկերը. Պետրոս-Պետո, Պտե, Մարտիրոս-Մրտո, Փանոս-Փանո, Ղազարոս-Ղազո, Նիկողայոս-Նիկո, Սուքիաս-Սուքո, Սքե⁴⁹, Թադևոս-Թադո, Հովհաննես-Հովո, Հովե, Թովմաս-Թումո, Ղուկաս-Ղուկո, Ղուկե, Խուկե, Անդրեաս-Անդո, Աթանաս-Աթո, Գևորգ-Գևո, Գևե, Գրիգոր-Գիքո և Սա-

⁴⁶ Հնարավոր է նաև Սուսամբար-Սուսան անցումը մթ>նթ հնչյունափոխությամբ և ար-ի կրճատմամբ:

⁴⁷ Չի բացառվում Զավահիրյան-Զավահիրյան անցումը ևս:

⁴⁸ Յ ՀԱՆԲ, հ. Բ, էջ 430:

⁴⁹ Սարգիս անձնանունը նույնպես ունի այս տարբերակը:

նաստ-Սանո, Բաղդասար-Բղղե, Բղղո, Գագիկ-Գագո, Վարոս-Վարո⁵⁰, Սարգիս-Սքո, Սքե, Սաքո, Կոնստանտին-Կոստո, Սուսան-Սուսո, Զավահիր-Զավո, Ալմաստ-Ալմո⁵¹, Լիպարիտ-Լիպո և այլն:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք փոխառյալ-յուրացված ենթաշերտի վերաբերյալ ասվածները, ապա կարելի է պնդել.

1. Քննվող ենթաշերտի համար կիրառված տերմինի երկրորդ բաղադրիչը նրան ավելի բնորոշ է և գրեթե ամբողջությամբ ծածկում է նրան: Փոխառյալ լինելը պարզվում է հատուկ ջանքերի օգնությամբ:

2. Յուրացվածության աստիճանը այնքան նշանակալից է, որ առանց դժվարության այս ենթաշերտի իրողությունները կարելի է քննարկել բնիկների շարքում:

Եվ, ինչպես երևում է մեր շարադրանքից, բնիկը և փոխառյալ-յուրացվածը ենթաշերտեր են միեկույն շերտի սահմաններում:

3. Իրանական խմբի նշանակալիությունը պետք է բացատրել այն բանով, որ

ա/համընկել է հայկական անունարանի ձևավորման շրջանի հետ, բ/այդ անձնանունները կրել են հայ ժողովրդի պատմության ակնառու դեմքեր,

գ/նաև այն պատմական փաստով, որ իրենք պարսիկները, իսլամի ընդունումից հետո, մոռացել են այդ անձնանունները, այլապես հակադրվելու միտումը անպայման իր գործը կաներ: Իբրև ասվածի ապացույց հիշեցնենք, որ ուշ շրջանի ոչ պակաս բարեհունչ ու գեղեցիկ անձնանուններից մեկ-երկուսն են անցել փոխառյալ-յուրացվածների շարքը՝ Զավահիր-Զավահիրյան, Ումրշատ-Ումրշատյան, այն էլ արդեն վերը նշված վերապահումներով: Հին հրեական և հունական խմբերի համար կրկնելով ա և ր կետերում ասվածները, ավելացնենք, որ առանձնահատուկ նշանակություն է ունեցել Հին և Նոր Կտակարանների հետ մուտք գործելու հանգամանքը: Ի դեպ, այս խումբը փոխառյալ-յուրացվածների շարքն է դասվում ոչ միայն հայերի մոտ, այլև քրիստոնյա շատ ժողովուրդների մոտ: Կարծում ենք, որ այս հարցը ինքնուրույն հետազոտության արժանի հարցերից է:

Վերևում բնիկ ենթաշերտի մասին խոսելիս, մասնակիորեն անդրադարձել ենք այն հարցին, որ այդ ենթաշերտի սահմաններում արական-

⁵⁰ Կիրառվում է նաև Վար-ով սկսվող այլ անձնանունների դեպքում, օրինակ՝ Վարադրատ-Վարո:

⁵¹ Կիրառվում է նաև Ալմա-Ալմո դեպքում:

իւսկան ազգանվանակերտ անձնանունները ներկայացված են երկու- մեկ հարաբերությամբ: Դժվար չէ ենթադրել, որ այստեղ հնարավոր է երեք դեպք՝ արական անձնանունը իբրև ազգանվանակերտ հիմք, իգա- կան անձնանունը իբրև հիմք և խառը դեպք, երբ տվյալ անձնանունը անդես է եկել և՛ իբրև արական, և՛ իբրև իգական:

Պարզ անձնանունները իբրև ազգանվանակերտ հիմք հանդես են եկել 790 դեպքում, որից 589-ը կամ 74,1%-ը վկայված է իբրև արական անձնանուն և 201 կամ 25,4%-ը իբրև՝ իգական: Պետք է ավելաց- նել նաև 56 խառը դեպքերը, որոնք Աճառյանի մոտ կամ մեր կողմից յննված աղբյուրներում ներկայացվում են և՛ իբրև արական, և՛ իբրև իգական, սակայն այս մասին՝ ավելի ուշ:

Այստեղ ամենանշանակալիցը բնիկ շերտն է, որ կազմում է 207 անձնանուն կամ ընդհանուր թվին 26,3%, որից արական՝ 155 կամ 74,9% և իգական 52 կամ 25,9: Ինիկ-արական անձնանունները կազմում են ընդհանուր-արականների 26,4%ը, իսկ իգականները 25,8%-ը:

Իր տեսակարար կշռով բնիկ շերտին հաջորդում է իրանականը, որ կազմում է 194 կամ ընդհանուր թվի 24,6%, որից 132-ը կամ 68,7% արական և 62-ը կամ 31,3%-ը իգական: Հստ որում իրանական-արա- կանը կազմում է արական-ընդհանուրի 22,4%, իսկ իրանական-իգակա- նը՝ 30,8%:

Այնուհետև գալիս է արաբական շերտը, որը ներկայացված է 111 անձնանվամբ (14%), որից արական՝ 83 կամ 74,7% և իգական՝ 28 կամ 25,3%: Արաբական-արականը կազմում է ընդհանուր թվի 14%, իսկ արաբական իգական՝ 13,9%-ը:

Թուրքական շերտը ընդգրկում է 113 միավոր կամ ընդհանուր թվի 14,4%, որից 71-ը կամ 62,8%-ը արական և 42-ը կամ 37,2%-ը՝ իգա- կան: Թուրքական-արականը կազմում է ընդհանուր թվի 12,1%, իսկ իգականը՝ 20,9%-ը:

Հունական շերտը ունի 66 անձնանուն, որ կազմում է ընդհանուր թվի 8,4%-ը. որից 61-ը կամ 92,4%-ը արական և 5-ը կամ 7,6%-ը՝ իգական: Հունական-արականը կազմում է ընդհանուր-արականի 10,2%-ը, իսկ իգականը՝ 2,4%-ը:

Հին հրեական անձնանունները ազգանվանակերտ անձնանունների շարքում 54-ն են, որ կազմում են ընդհանուր թվի 6,8%-ը, որոնցից 43-ը կամ ընդհանուր թվի 98,2%-ը՝ իգական:

Այլ լեզուները (ասորերեն, ռուսերեն, վրացերեն, եվրոպական) ներ-

կայացված են 44 անձնանվամբ, որ ընդհանուր թվի 5,5%-ն է կազմում, որից 33-ը կամ 75%-ը՝ արական և 11-ը կամ 25%-ը՝ իգական: Ընդ որում արականները կազմում են արական-ընդհանուրի 5,6%-ը, իսկ իգականները՝ 5,4%:

Վերը բերված վիճակագրական տվյալները ներկայացնենք աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 1

Շերտերը	Միջին մասնագրանցելիքը	մասնագրանցելիքի ընթացքի արագացումը %	գրանցվածների թիվը	մասնագրանցելիքի ընթացքի արագացումը %	մասնագրանցելիքի ընթացքի արագացումը %	գրանցվածների թիվը	մասնագրանցելիքի ընթացքի արագացումը %	մասնագրանցելիքի ընթացքի արագացումը %
բնիկ	207	26,3	155	74,9	26,4	52	25,1	25,8
իրանական	194	21,6	132	68,7	22,4	62	31,3	30,8
արաբական	111	14	83	74,7	14,2	28	25,3	13,9
հին-հրեական	54	6,8	53	98,2	9	1	1,8	0,5
հունական	66	8,4	61	92,4	10,3	5	7,6	2,4
թուրքական	113	14,4	71	62,8	12,1	42	37,2	20,9
այլ լեզուներ՝ ասորերեն, լատիններեն, վրացերեն, ռուսերեն	44	6,5	33	75	5,6	11	25	5,4

Այժմ մի փոքր ընդարձակենք մեր վիճակագրության սահմանները և ներկայացնենք բերված շերտերի այսօր պահպանված տարրերը: Բնականաբար, այստեղ խոսվելու է զլխավորապես բնիկ և փոխառյալ-յուրացված ենթաշերտերի մասին, բացառյալ բնիկ շերտի այն անձնանունները, որոնք մեր օրերում այլևս չեն կիրառվում:

Այսպես, անձնանուն ազգանվանակերտ 790 հիմքերից այսօր օգտագործվում է 290-ը, կամ 36,8%-ը, որից 243 կամ պահպանվածի 83,5%-ը՝ արական անձնանուններ են, իսկ 48-ը կամ 16,5-ը՝ իգական: Ընդ որում պահպանված արականները կազմում են արական-ընդհանուրի 42,2%, իսկ իգականները՝ 23,8%:

Ըստ վերը ներկայացված շերտերի, բնիկներից պահպանվել է 109

անձնանուն, որ կազմում է ընդհանուր թվի 52,6%, որից բնիկ արական՝ 83 կամ եղածների 53,5%-ը, բնիկ իգական՝ 26 կամ 50%: Վերջիններս առավելագույնապես կազմում են պահպանվածների ընդհանուր քանակի 34 և 54,1 տոկոսը:

Իրանական-արականներից պահպանվել է 51-ը կամ 38,6%-ը, որ կազմում է պահպանված արականների 20,9%-ը: Իրանական-իգականներից պահպանվել է 6-ը կամ 9,6%, որ պահպանված իգականների 12,5%: Ընդհանուր առմամբ իրանականներից պահպանվել է 57-ը կամ 29,3%-ը:

Հունական շերտից պահպանվել է 43 անձնանուն կամ 65%, որից 11-ը կամ պահպանվածների 16,8% արական, որ կազմում է հունական-արականների 67,2%-ը և 2-ը՝ իգական, համապատասխանաբար 4,1 և 40%-ներ:

Հին հրեական շերտից պահպանվել է 42 անձնանուն կամ 77%, որից 11-ը կամ 16,8%-ը արական և 1-ը իգական: Հրեական-արականները կազմում են պահպանվածների 67,2%-ը:

Արաբական նշանակալից շերտից պահպանվել է 14-ը կամ 16,6%-ը՝ որոնցից 8-ը՝ արական կամ արաբական-արականների 9,6% և 6-ը՝ իգական կամ արաբական-իգականների 21,4: Պահպանված արաբական արականներն ու իգականները համապատասխանաբար կազմում են ընդհանուր թվի 3,2 և 12,5%-ները:

Թուրքական անձնանունների ընդհանուր թվից պահպանվել է 5-ը կամ 4%-ը, որից արական՝ 4 կամ 5,6% և իգական 1 կամ թուրքական իգականների 2,3%, իսկ իգականների՝ 2%-ը:

Վերջապես այլ լեզուների խումբը ներկայացված է հետևյալ կերպ. ընդհանուր 44 անձնանունից պահպանվել է 21-ը կամ 47%-ը, որից արական 15, այդ լեզուներով արականների 45,4%, և ընդհանուր պահպանված արաբականների 6,1%, իգական՝ 6, այդ լեզուներով իգականների 54,5 և ընդհանուր պահպանված-իգականների 12,5%-ը (աղյուսակ 2):

Այսպիսով, ամփոփենք բերված տվյալները:

Բնիկ շերտը բոլոր տվյալներով գերակշռում է մյուսների նկատմամբ, բացառությամբ իգական-իրանականից, որը, սակայն, իր պահպանվածությունից աստիճանով ավելի քան շորս անգամ գիջում է բնիկ շերտին: Վերջինս ամենանշանակալիցն է և կազմում է իգական պահպանվածների ընդհանուր թվի ավելի քան 54 տոկոսը: Անձնանուն-ազգանվանակերտ հիմքերի շարքում իր ներկայացուցչությամբ բնիկ շեր-

շեքտերը	արական-պահ-պանված		իգական-պահպան-ված		պահպան-վածների ընդհանուր		պահպան-վածների ընդհանուր %	
	մյուստակի %	հոգևոր %	մյուստակի %	հոգևոր %	մյուստակի %	հոգևոր %	մյուստակի %	հոգևոր %
ընդամենը	83	53,5	34	26	50	54,1	109	52,6
իրանական	51	38,6	20,9	6	9,6	2,5	57	29,3
արարական	8	9,6	3,2	6	21,4	12,5	14	12,6
հին-հրեակ.	41	77,3	16,8	1	100	2	42	77
հունական	41	67,2	16,8	2	10	1,1	43	65
թուրքական	4	5,6	11,6	1	2,3	2	5	4
այլ լեզ ասորերեն, լատ. վրաց. ուս. եվր	15	45,4	6,1	6	54,5	12,5	21	47,7

տին հետևում է իրանականը, որտեղ աչքի է ընկնում հատկապես արականը և իր թվով և իր պահպանվածությունից աստիճանով: Դժվար չէ ենթադրել, որ այստեղ իր վճռական խոսքն է ասել իրանական-յուրացված խումբը, որի մասին արդեն խոսվել է: Իրանական-իգական պահպանվածների նկատմամբ որոշ վերապահություն է արված, որովհետև եթե դրանց գործառական ծանրաբեռնվածությունը մեր օրերում գրեթե մոտենում է զրոյի, ապա նախորդ 3—4 տասնամյակներում դեռևս որոշ արժեք ներկայացնում էր: Ահա այդ օրինակները՝ Փերուզ-Փիրուզյան, Սիմիկ-Սիմիկյան, Սանդուխտ-Սանդուխտյան, Գյուլնազ-Գյուլնազյան, Չինաո-Չինարյան, Սարինգյուլ-Սարինգյուլյան:

Արաբականը իր բացարձակ թվով մտավորապես երրորդն է, սակայն ահա պահպանվածների թվով միայն նախավերջինը և մի փոքր գերազանցում է միայն թուրքականին: Ընդ որում այս դեպքում ևս իգական-պահպանվածները ներկայացվում են նկատելի վերապահությունով՝ Չավահիր-Չավահիրյան, Մարջան-Մարջանյան, Սանամ-Սանամյան, Զուլալ-Զուլալյան, Խումար-Խումարյան, Ումրշատ-Ումրշատյան:

Թուրքական շերտը բավականին նկատելի լինելով իր ներկայացուցչութեամբ, պահպանվածութեան բոլոր տվյալներով գրավում է վերջին տեղը՝ պահպանվել է ընդամենը 5 անձնանուն, որից 4-ը՝ արական և մեկը՝ իգական՝ Ալմաստ-Ալմաստյան և Իգիթ-Իգիթյան, Ասլան-Ասլանյան, Աշվազ-Աշվազյան, Սարուխան-Սարուխանյան: Ընդ որում այս պեպքում ևս վերապահումը բավականին նկատելի է, քանի որ վերջին տասնամյակներում այս անձնանունները խիստ հազվադեպ են կիրառվում: Մեր կարծիքով իրանական-իգական, արարական և թուրքական պահպանվածների նույնիսկ այս փոքր քանակները կապվում են, մեծ մասամբ, նորածիններին տատերի և պապերի անունները տալու մեր ժողովրդի՝ դեռևս բավականին կենսունակ սովորության հետ:

Հին հրեական և հունական շերտերը, ինչպես դժվար չէ նկատել, ոչանակալից են հատկապես իրենց արական մասով: Եթե հունական արական անձնանուն հիմքերը ներկայացված են 61 միավորով, ապա իգականները՝ 5-ով, իսկ պահպանվածները համապատասխանաբար՝ 1 ազմում են 41 և 2: Պատկերը գրեթե կրկնվում է հին-հրեականի դեպքում՝ 53 արական և 1 իգական, որոնցից պահպանվել են 41 արականը և Թամար-Թամարյան իգականը: Այս երկու շերտերի արական պահպանվածների ակնառու գերակշռությունը ձեռք է բերվել գլխավորապես այն անձնանունների հաշվին, որոնք վերևում առանց որևէ վերապահության դասվել էին յուրացվածների շարքը: Իգականների սակավությունը ևս իր օբյեկտիվ պատճառներն ունի, որոնցից ամենակարևորը, թերևս, հին-հրեական և հունական անձնանունների՝ հայկական անունարանում տեղ գտնելու պատմական պայմաններն են, որոնց մասին նույնպես խոսվել է:

Խառը ազգանվանակերտ անձնանուն հիմքեր: Որոշ դեպքերում Աճառյանի մոտ արական-իգական անձնանուն տարբերակումը հստակ չէ: Նա բերում է արական և իգական նշումներ:

Անմիջապես նշենք, որ այս ազգանվանակերտ անձնանունները, մեծ մասամբ, փոխառյալ են և շուրացված: Եղած մի քանի բնիկները՝ Շնորհավոր-Շնորհավորյան, Թանգ-Թանգյան, Թանկյան, Կաքավ-Կաքավյան, Թուխիկ-Թուխիկյան, Դուխիկ-Դուխիկյան, Մանան-Մանանյան, Ըղձակ-Ըղձակյան, Կթուն-Կթունյան, Մասուր-Մասուրյան, նույնպես դասվում են շուրացվածների շարքը:

Փոխառյալների մեջ կան մասնավոր դեպքեր, որոնք նկատելի վերապահությամբ կարող են դասվել յուրացվածների շարքը՝ վարդում-

Վարդունյան, Մելիք-Մելիքյան, Ասլան-Ասլանյան և Նարգիզ-Նարգիզյան: Ավելացնենք, որ այս շորս դեպքը այսօրվա լեզվամտածողությամբ որոշակիություն են ստացել՝ Վարդուն, Մելիք և Ասլան դիտվում են իբրև արական անձնանուն, իսկ Նարգիզը՝ իգական: Պատկերը ամբողջացնելու նպատակով բերենք խառը-փոխառյալ-չյուրացված ազգանվանակերտ անձնանուն հիմքերը ևս՝ Աղիզ-Ազիզյան, Ալթուն-Ալթունյան, Աղասի-Աղասյան, Ասլիզազե-Ասլիզազյան, Ասլիխան-Ասլիխանյան, Ասլի-Ասլիյան, Գյուլասար-Գյուլասարյան, էլխաս-էլխասյան, էլչակ-էլչակյան, Թաթար-Թաթարյան, Թուլակ-Թուլակյան, Լադիֆ-Լադիֆյան, Խալաֆ-Խալաֆյան, Ղամբար-Ղամբարյան, Ղարիբ-Ղարիբյան, Մարինոս-Մարինոսյան, Մուղալ-Մուղալյան, Նարին-Նարինյան, Նեվրուզ-Նեվրուզյան, Նիգար-Նիգարյան, Նուրում-Նուրումյան, Շահզադե-Շահզադյան, Շահում-Շահումյան⁵², Զամալ-Զամալյան, Սադաթ-Սադաթյան, Սուլթան-Սուլթանյան, Փաշա-Փաշայան, Քարամ-Քարամյան:

Ինչպես արդեն նշել ենք, որոշ դեպքերում Աճառյանի նշումը այս կամ այն անձնանվան վերաբերյալ որոշակի է, սակայն նորագյուտ աղբյուրներում մեզ հաջողվել է հայտնաբերել Աճառյանի նշումները ճշտող վկայություններ:

Այսպես, 1. Գյուլնազար-Գյուլնազարյան անձնանվան համար Աճառյանը առանց վերապահության բերում է միայն առ. նշումը, մինչդեռ XVII դարի մի արձանագրության մեջ մեզ հանդիպել է Գուլնազար խաթուն Օլխաննին անվանման բանաձևը⁵³ կամ Գուլնազար դուստր Արիստակի⁵⁴:

2. Դիլան-Դիլանյան դեպքի համար ևս Աճառյանը բերում է առ. նշումը, մինչդեռ կա նաև իգական անձնանուն լինելու մասին վկայություն՝ Մէլիք Դիլան դուստր Խանբեկի⁵⁵:

3. Սաթուն-Սաթունյան. Աճառյանը բերում է առ. նշումը, մինչդեռ հայտնի է հետևյալ փաստը՝ Սաթունին կողակից Պարսամ⁵⁶:

4,5,6. Նիազ-Նիազյան, Շահզուլ-Շահզուլյան և Քոչար-Քոչարյան դեպքերի համար Աճառյանը նշում է միայն իգ, ստորև բերվող վկայու-

⁵² Մեր օրերում հանդիպող Շահում արական անձնանունը անցել է ձևավորման Շահումյան-Շահում ուղին:

⁵³ Դիվան հայ վիմագրության (Կամո, Մարտունի, Վարդենիս), Երևան, 1973:

⁵⁴ Կ. Ղաֆադարյան, Երևան (միջնադարյան հուշարձանները), Երևան, 1975:

⁵⁵ Կ. Ղաֆադարյան, Նույն տեղում:

⁵⁶ Դիվան հայ վիմագրության (Կամո, Մարտունի, Վարդենիս):

Սյունիները ճշտում են մտցնում հարցի մեջ. «Պն նիազ որդի Իսաբեկի»⁵⁷, «Շաղկուլու որդի Շահնազար»⁵⁸:

Վերջին Քոչար-Քոչարյան դեպքի համար ճշտումը մտցնում ենք, իմնավորվելով՝ Քոչար-Քոչո-Քոչոյան և Քոչար-Քոչիկ-Քոչիկյան շարքերի առկա թվյամբ, քանի որ, ինչպես ավելի ուշ ցույց կտրվի, կոչական և փաղաքշական սարբերակներ և առավել ևս նրանցից կազմված ազգանուններ կարող էին սերվել միայն աքական անձնանուններից:

7. Նանում-Նանումյան դեպքի համար ևս Աճառյանը բերում է իզնշումը, ստուգաբանելով անձնանունը իբրև «մայր իմ», սակայն մեզ լանդիպել են այս անձնանվան արական կիրառություններ՝ «Նանումի որդի...»⁵⁹:

2. ԱԶԳԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ:

Հայկական անունարանը և մասնավորապես ազգանունների ամբողջությունը ձևավորվել է հարյուրամյակների ընթացքում և գործնականում համընկնում է ժողովրդի ձևավորման և գոյության ամբողջ պատմության հետ:

Այստեղ մենք կաշխատենք պատասխանել այն հարցին, թե ազգանվանակերտ այս կամ այն անձնանուն հիմքը երբ է մուտք գործել հայկական անունարան:

Առաջադրված խնդիրը լուծելիս ևս առաջնորդվել ենք Գ. Զահուկյանի առաջարկած շրջանաբաժանման հիմնական դրույթներով: Մեկ անգամ ևս հիշեցնենք այն՝ հնագույն շրջան, սկզբից մինչև V դ., հին շրջան, V դ. սկզբից մինչև XI դ. սկզբները, միջին շրջան, XII դ. մինչև XVI-ի վերջերը, նոր շրջան, XVII դ. մինչև մեր օրերը՝ XX դ.:

Շրջաններից յուրաքանչյուրը հատկանշական է մեր անունարանի ձևավորման համար և իր որոշակի կնիքն է դրել նրա վրա: Սակայն այստեղ պետք է հստակորեն գիտակցել, որ եթե խոսվում է ազգանունների հիմքում ընկած անձնանունների մասին, ապա այդ ամենին պետք է նայել 18-րդ դարի երկրորդ կեսի և հատկապես 19-րդ դարի առաջին երկուերեք տասնամյակների տեսանկյունից, երբ զանգվածաբար ազգանուններ էին ձևավորվում:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Հառ. Աբրահամյան, Կալվածադրեր, Երևան, 1941:

⁵⁹ «Բանբեր Մատենադարանի», 1960, № 5:

Այդ շրջանում, Պ. Սևակի դիպուկ խոսքերով ասած. «Պարսկա-թուրքական տիրակալների համար բարկացնելու շափ քիչ էր Լյուդովիկոս 14-րդի ծանոթ խոսքը («Պետութունը ևս եմ»), քանի որ դարավոր և ամենօրյա ճշմարտութունն էր դա Արևելքում»⁶⁰:

Այդ շրջանի վերջում Արևելյան Հայաստանը թոթափեց պարսկական լուծը, սակայն տասնամյակներ էին պետք, սերնդափոխություն էր պետք ավելի քան 10 դար, տևած մուսուլմանական ազդեցությունից ազատվելու համար: Այս ամենով հանդերձ, մեր կարծիքով, հնագույն և հին շրջանից եկող անձնանունների առկայությունը ազգանվանակերտ հիմքերի մեջ հսկայական ճիգերի արդյունք էր, քանի որ «գյավուրները, այդ աստ-ծո թշնամիները, որ կոչվում էին զիմսի կամ ույա-ույաթ (այսինքն՝ հալկատու), պիտի վճարեին ոչ միայն գլխահարկ և տնահարկ, այլ հարկ՝ եկեղեցիներից, տուրք՝ դրամագլուխներից, մաքս՝ ներմուծվող ու արտահանվող ապրանքներից, տուրք՝ խանութներից, ջրաղացներից, բրինձի դինգերից, ձիթահանքերից, կշեռքներից, սպանդանոցներից, շուկաներից, կալի կնքումից, կոշիկ պայտ շինող դարբնոցներից, մեղվափեթակներից, օղե-գինեվաճառությունից, ծխախոտավաճառությունից, շերամապահությունից, ինչպես նաև տուրք՝ ամուլիներից, ամուսնացածներից, հարսանիքներից, ապա նաև դատարան դիմելու համար, ճանապարհներով ու կամուրջներով անցնելու համար, ցանքսերը, արաւերը ջրելու, մինչև իսկ կանաչեղեն ծայսելու համար»⁶¹:

Սակայն, եթե Արևելյան Հայաստանում, այնուամենայնիվ, նսիադրյալներ ստեղծվեցին ազգայինին վերագառնալու, ապա Արևմտյան Հայաստանում նման հնարավորությունը կապվում էր մտավորականության սեփական նախստականության հետ, օբյեկտիվորեն պատճառաբանված չէր: Ավելին, բուն Թուրքիայում, ազգանունների զանգվածային ընդունումը տաճիկների կողմից, սկսվեց XIX դ. վերջերին և հատկապես XX դ. սկզբներին և, որքան մեզ հայտնի է, մինչև օրս չի ավարտվել: Արևմտահայերը ազգանուններ պետք է կազմեին գլխավորապես զբաղմունքի, արհեստի հետ կապված բառերից - չի ածանցի օգնությունամբ: Պապանուններից և մյուս անձնանուններից օղլու բառ-ածանցի օգնությամբ ազգանունների սերումը տաճիկների և հայերից ընտրյալների մենաշնորհն էր: Եվ պատահական չէ, որ այսօր էլ մեր ազգանունների մեջ

⁶⁰ Պ. Սևակ, Սոյաթ-նովա, Երևան, 1969, էջ 123:

⁶¹ Նույն տեղում, էջ 124:

արևմտահայության ազգանունները առանձնանում են՝ գլխավորապես իլ ենց մականվանական (զբաղմունքի, արհեստի անուն) հիմքով, որի մասին կխոսվի ավելի ուշ:

Նշված և մի շարք այլ հանգամանքներ, այդ թվում՝ մեր դարի 20-ական թվականների երկրորդ կեսի և 30-ական թվականների նիհիլիզմը, չէին կարող իրենց նկատելի հետքը չթողնել մեր ազգանունների առանձնանուն հիմքերի վրա, ուր նց էազմում, ինչպես ցույց կարվի, այնպիսի շատ են մուսուլմանաբանությունները՝ արաբիզմները, իրանիզմները ու թուրքիզմները:

Հնագույն շրջանը բնութագրվում է լր ավանդականությամբ: Այստեղ դասվող ազգանվանակերտ հիմքերը կամ ստեղծվել են այդ շրջանում կամ վերագրվում են այդ շրջանին և կամ հայ-իրանական սերտ անջակցությունների սրայմաններում բնդհանուր են այդ երկու լեզուներին: Ավանդականությունը առաջին հերթին կապվում է, ինչպես արդեն տեսիք ունեցել ենք նշելու, «սեփականի» գիտակցության, նույնպես և՛ մեր ամբողջ սրատմության բնթացում մեզ ուղեկցելու հանգամանքների

Հնագույն-ավանդական ենթաշրջանը ուղում ենք սկսել Հայկ-Հայկաճան, Արմեն-Արմենյան, Ասքանազ-Ասքանազյան, Թորդոմ-Թորգոմյան, Նաիրի-Նաիրյան օրինակներով, իբրև մեր ժողովրդի ձևավորման հետ կապվող առանձնանուններ, քանի որ, ինչպես հայտնի է, վերջիններս ծառայել են նաև իբրև ժողովրդանուններ (էպոնիմ): Գիտակցում ենք, որ բերվածների մի մասը, օրինակ, Ասքանազ, Թորգոմ այս շարքն են դասվում որոշ վերապահությամբ, սակայն իրենց նշանակությամբ նրանք չեն զիջում մյուսներին, մանավանդ, եթե հիշենք, որ հետագա դարերում վերջիններս շատ ավելի արգասավոր էին, քան, ասենք, Արմեն, Նաիրի առանձնանունները, որոնք, շնայած իրենց հնագույն ծագմանը, վերակենդանացան միայն վերջերս:

Իրենց հնությունը նախորդներին չեն զիջում նաև Արամ-Արամյան, Գեղամ-Գեղամյան, Սիսակ-Սիսակյան, Արեգ-Արեգյան, Առնակ-Առնակյան, Մարախ-Մարախյան, Արգամ-Արգամյան, Պարույր-Պարույրյան, Վարդգես-Վարդգեսյան, Յուլակ-Յուլակյան, Արամայիս-Արամայիսյան, Մամիկոն-Մամիկոնյան, ինչպես նաև բնութագրվող շրջանի վերջերին վերաբերվող՝ Լուսիկ-Լուսիկյան, Հուսիկ-Հուսիկյան, Մխիթար-Մխիթարյան և Սերոբ, Քերոբ, Սերոբյան, Քերոբյան: Ընդ որում վերջին երկուսը իրենց իմաստային առանձնահատկությամբ՝ «...հրեշտակների մի դասն

է ներկայացնում...: Այսպես նաև Քերովբե»⁶², արդեն հաջորդ շրջանի իրողություն ևս էարող են համարվել:

Իր տեսակարար կշռով, նշանակությամբ հետագա դարերի համար և վերջապես արգասավորությամբ նախորդներին ոչ միայն չի զիջում, կասեինք. նկատելիորեն դերադանցում է ազգանվանակերտ անձնանունների այն խումբը, որ հետազոտողները միաբերան կոչում են իրանական: Ընդունելով, որ այդ անձնանունները, հայկական անունարան են մըտել իրանյանների հետ սերտ առնչության պայմաններում, մենք, այնուամենայնիվ, չենք ուզում անվերապահորեն դրանք իրանական ազդեցության արդյունք համարել թեկուզ այն պարզ պատճառով, որ փոխառյալ և ոչ մի իրողություն մեր ժողովրդի սլաւամության ընթացքում նման ընդունելության չի արժանացել, այդքան «հարազատ» չի համարվել, ինչպես անձնանունների այն խումբը, որի մասին խոսվում է և որը ընդունված է ներկայացնել իբրև իրանցիների կողմից մոռացված և հայերի կողմից պահպանված: Այս հարցի մանրամասն քննությունը մեր նպատակներից դուրս համարելով, այստեղ ներկայացնում ենք ազգանվանակերտ այդ հիմքերը՝ Արամազդ-Արամազդյան, Զրվանդ-Զրվանդյան, Անուշավան-Անուշավանյան, Երվանդ-Երվանդյան, Զարեհ-Զարեհյան, Արբակ-Արբակյան, Շավարշ-Շավարշյան, Փարնավազ-Փարնավազյան, Արշավիր-Արշավիրյան, Արշամ-Արշամյան, Արտաշես-Արտաշեսյան, Տիգրան-Տիգրանյան, Միհրան-Միհրանյան, Տիրան-Տիրանյան, Վասակ-Վասակյան, Աբգար-Աբգարյան, Վաչե-Վաչեյան, Տիրիթ-Տիրիթյան, Սանդուխտ-Սանդուխտյան, Վոսամ-Վոսամյան, Վաղարշակ-Վաղարշակյան, Սմբատ-Սմբատյան, Հմայակ-Հմայակյան, Մուշեղ-Մուշեղյան, Վրթանես-Վրթանեսյան, Համազասպ-Համազասպյան, Խորեն-Խորենյան, Պապ-Պապյան, Վահրամ-Վահրամյան, Վարդան-Վարդանյան, Արշակ-Արշակյան, Վահրիճ-Վահրիճյան, Արիստակես-Արիստակեսյան, Վարդ-Վարդյան, Գուրգեն-Գուրգենյան, Վահան-Վահանյան, Ռոստոմ-Ռոստոմյան, Պապա-Պապայան:

Այսպիսով, անկախ հնագույն շրջանի փաստերի վերաբերյալ ասվածներից, նրանք ինչպես մեր անունարանում, նույնպես և ազգանունների անձնանուն հիմքերի մեջ ամենաներկայացուցչականն են և, շնայած իրենց հնագույն ծագմանը, բոլորովին «հնաբույր» չեն, կասեինք ճակատակը՝ այսօր մեր ակտիվ անվանապաշարի իրողություններ են:

⁶² Հր. Անադյան, ՀԱՆԲ, Գ, էջ 182:

Որքան այս շրջանի մյուս իրադարձությունները կարևոր են եղել հայկական անունարանի դարգացման համար, այնուամենայնիվ, նկատելիորեն զիջում են քրիստոնեության պաշտոնական ընդունման և դրան հետ կապված Աստվածաշնչի թարգմանության մշակութային ազդեցությանը:

Քրիստոնեության ընդունման ու Աստվածաշնչի թարգմանության յուրօրինակ հայկական ազգանունների անձնանուն հիսթերի շարքում ունենք երրայական և հունական մի քանի տասնյակ անձնանուններ, որոնց դերը ու նշանակությունը դժվար է գերազնահատել: Ընդ որում, ինչպես հայտնի է, հայոց մեջ Աստվածաշունչը և մասնավորապես Հին կտակարանը տարածվել է նրա հունական տարբերակի կամ «յոթանասնից» թարգմանության միջոցով, ուստի Հին կտակարանի հատուկ անունների շունչն անհամար անուններ են մտել հայկական շրջանառության մեջ և պահպանվել մինչև մեր օրերը: Այսպիսով, ներկայացնում ենք քրիստոնեության հետ հայկական անունարան մուտք գործած ազգանվանակերտ-անձնանուն հիմքերը, տարբերելով վերջիններս քրիստոնեության կապակցությամբ կամ նրա առիթով ստեղծված անձնանուններից՝

Հովհաննես-Հովհաննիսյան, Ղուկաս-Ղուկասյան, Մարկոս-Մարկոսյան, Մաթեոս-Մաթեոսյան, Թադևոս-Թադևոսյան, Պողոս-Պողոսյան, Պետրոս-Պետրոսյան, Գևորգ-Գևորգյան, Գրիգոր-Գրիգորյան, Ղազարոս-Ղազարոսյան և Ղազարյան, Հովսեփ-Հովսեփյան, Հովնաթան-Հովնաթանյան, Հովակիմ-Հովակիմյան, Հովասափ-Հովասափյան, Հովնան-Հովնանյան, Երանոս-Երանոսյան, Մարտիրոս-Մարտիրոսյան, Բարդուղիմեոս-Բարդուղիմեոսյան, Գանիել-Գանիելյան, Սամսոն-Սամսոնյան, Զաքար-Զաքարյան, Եսայի-Եսայան, Եփրեմ-Եփրեմյան, Սեդրակ-Սեդրակյան, Սողոմոն-Սողոմոնյան, Աբել-Աբելյան, Մովսես-Մովսեսյան, Սահակ-Սահակյան, Հակոբ-Հակոբյան, Սիմոն-Սիմոնյան, Ենոք-Ենոքյան, Ստեփան-Ստեփանյան, Աբգար-Աբգարյան, Աբրահամ-Աբրահամյան, Ահարոն-Ահարոնյան, Դավիթ-Դավիթյան, Գաբրիել-Գաբրիելյան, Իսրայել-Իսրայելյան, Բարսեղ-Բարսեղյան, Ղևոնդ-Ղևոնդյան, Թովմաս-Թովմասյան, Անդրեաս-Անդրեասյան, Սաղաթել-Սաղաթելյան, Սամվել-Սամվելյան, Միքայել-Միքայելյան, Մամբրե-Մամբրեյան, Իսահակ-Իսահակյան, Երեմ-Երեմյան, Շմավոն-Շմավոնյան, Կյուրեղ-Կյուրեղյան, Աթանաս-Աթանասյան, Փիլիպոս-Փիլիպոսյան, Սուբիաս-Սուբիասյան, Արսեն-Արսենյան, Աղեքսանդր-Աղեքսանդրյան, Ալեքսանդր-Ալեքսանդրյան, Ադամ-Ադամյան, Նազարեթ-Նազարեթյան, Աբել-Աբելյան, Բենիա-

մին-Քենիամինյան, Եփրանոս-Եփրանոսյան, Փանոս-Փանոսյան, Սիրանոս-Սիրանոսյան, Թեոդորոս-Թեոդորոսյան, Աբխողոմ-Աբխողոմյան, Նիկողոս-Նիկողոսյան, Քրիստափոր-Քրիստափորյան, Անաստաս-Անաստասյան, Մակար-Մակարյան, Եղիազար-Եղիազարյան, Բյուզանդ-Բյուզանդյան, Սենեբերիմ-Սենեբերիմյան, Եմափիոս-Եմափիոսյան, Թամար-Թամարյան, Սոֆյա-Սոֆյան, Գերասիմ-Գերասիմյան, Ամբակում-Ամբակումյան, Աբաս-Աբասյան, Ամասիա-Ամասյան:

Սակայն քրիստոնեութիւնը նպաստեց ոչ միայն եբրայական և հունական, այլև ասորական, լատինական և ուրիշ ժողովուրդների անձնանունների մտտք գործելուն հայկական անունարան և ոչ միայն ԷՆ—V դարերում, այլև ավելի ուշ շրջաններում: Հարկ է նշել, սակայն, որ զանգվածային ներհոսը կատարվեց հատկապես վերը նշված շրջանում: Այդ քրիստոնեութեան հետ կապվող և ավելի ուշ շրջանի հետևյալ անձնանուններն են պահպանվել մեր ազգանվանակերտ հիմքերում՝ Մարութա-Մարության, Սանասար-Սանասարյան, Բաղդասար-Բաղդասարյան, Անտոն-Անտոնյան, Կոնստանտին-Կոնստանտինյան, Վարոս-Վարոսյան, Գեղեճն-Գեղեճնյան, Գամաղել-Գամաղելյան, Հորդանան-Հորդանանյան, Մեսիա-Մեսիայան, Ռուբեն-Ռուբենյան, Բեռնարդոս-Բեռնարդոսյան, Սարգիս-Սարգսյան, Մինաս-Մինասյան, Գայանե-Գայանյան, Միսակ-Միսակյան, Ռաֆայել-Ռաֆայելյան, Իսմայել-Իսմայելյան, Մարուքե-Մարուքյան, Սեղբոս-Սեղբոսյան, Մաղաք-Մաղաքյան, Սեաստ-Սեաստյան, Գազիկ-Գազիկյան, Պարսամ-Պարսամյան, Պատրիկ-Պատրիկյան, Պրոխոր-Պրոխորյան, Մերգեր-Մերգերյան, Էմմանուել-Էմմանուելյան, Բասիլէոս-Բասիլէոսյան, Զադինոս-Զադինոսյան, Զաքեոս-Զաքեոսյան, Ռեթևոս-Ռեթևոսյան, Թադիսանոս-Թադիսանոսյան, Նիպիոս-Նիպիոսյան, Մարինոս-Մարինոսյան:

Քրիստոնեութիւնը ոչ միայն անձնանուններ բերեց իր հետ, այլև, որ ոչ պակաս կարևոր է, նպաստեց հայկական իրականութեան մեջ նոր անձնանուններ ստեղծելուն, որոնց մի մասը պատճենված էր հունարենից, իսկ ավելի զգալի մասը սերվեց հայերենի օրենքներով: Հարկ ենք համարում ավելացնել, որ քրիստոնեութեան հետ կապված հայկական անձնանուններ ստեղծվեցին ոչ միայն IV—V դդ., այլև հետագա դարերում: Պատկերը ամբողջական ներկայացնելու նպատակով այստեղ բերում ենք նման անձնանուն-հիմքերը, անկախ նրանց ստեղծման ժամանակից՝ Ավետիս-Ավետիսյան, Ավետիք-Ավետիքյան, Ավետում-Ավետումյան, Մկրտիչ-Մկրտիչյան, Մկրտում-Մկրտումյան, Աստվածատուր-Աստ-

Վաժատուրյան, Հարություն-Հարությունյան, Խաչերես-Խաչերեսյան, Վարդերես-Վարդերեսյան, Առաքել-Առաքելյան, Գալուստ-Գալուստյան, Գալստյան-Գալստանյան, Մարգար-Մարգարյան, Խաչատուր-Խաչատրյան, Տիրատուր-Տիրատուրյան, Քրիստոսատուր-Քրիստոսատուրյան, Կարապետ-Կարապետյան, Հայրապետ-Հայրապետյան, Մերուն-Մերունյան, Վարդիկ-Վարդիկյան⁶³, Խաչիկ-Խաչիկյան, Խոստիկ-Խոստիկյան, Խաչմանուկ-Խաչմանուկյան, Թուխայր-Թուխարյան, Թուխմանուկ-Թուխմանուկյան, Սուրբնշան-Սուրբնշանյան, Կանթեղ-Կանթեղյան, Նավակատիկ-Նավակատիկյան, Նշան-Նշանյան, Կարապետ-Կարապետյան, Տոներ-Տոներյան, Եկալ-Եկալյան, Տերուն-Տերունյան, Խաչում-Խաչումյան, Համբարձում-Համբարձումյան, Զատիկ-Զատիկյան, Մայրապետ-Մայրապետյան, Տոնական-Տոնականյան, Տոնապետ-Տոնապետյան, Սաղմոս-Սաղմոսյան, Մեծատուր-Մեծատուրյան, Մանան-Մանանյան, Խաչեր-Խաչերյան, Ինչպես նաև Տեր- և Հաջի- բաղադրիչներով բոլոր կազմութիւնները:

Ամբողջութեամբ ներկայացնելով քրիստոնեութեան կապակցութեամբ ստեղծված հայկական անձնանուն-հիմքերը, այնուամենայնիվ ուզում ենք հետևյալ դիտողութիւնը անել. Բերված օրինակների մի զգալի մասի վկայութիւնները կապվում են XII—XVIII դդ. հետ: Առաջին հայացքից տարօրինակ է թվում, որ պետականութիւնը կորցնելուց հետո, սելջուկ-մոնղոլական, թուրքական ասպատակութիւնների շրջանում դեռևս ո՛ր է հայնվել ստեղծելու բուն հայկական անձնանուններ, մանավանդ, ինչպես ցույց կարվի, սովելի ուշ շրջանում մեր անունարանը ողողված է արաբիզմներով, իրանիզմներով ու թուրքիզմներով:

Ուրեմն մի կողմից բնիկ հայկական ձևերի աննախագեպ ստեղծործում, իսկ մյուս կողմից՝ օտարաբանութիւնների առատութիւն: Մեր համոզմամբ երկու դեպքում էլ մեծ դեր ունի դիմագրավելու ձգտումը: Առաջին օրինակները ինքնութիւնը պահպանելու դրսևորումներ են, իսկ օտարաբանութիւնները՝ արտաքնապես համակերպվելու: Եվ ժամանակը ցույց տվեց, որ այս միտումները, ի վերջո, ճիշտ էին, քանի որ օտարաբանութիւնների մեծագույն մասը մոռացվել է և այսօր միայն պատմական աբժեք է ներկայացնում, մինչդեռ այդ շրջանում ստեղծված հայկական ձևերը մինչև օրս մեր անունարանում ամենակենսունակ շերտն են կազմում: Բերենք այդ դարերից վկայված անձնանուն-հիմքերը՝ Համ-

⁶³ Հնարավոր է նաև Վարդ-ով սկսվողներից իկ կաղապարով կազմութիւն:

բարձում-Համբարձումյան, Հարություն-Հարությունյան, Ավետիս-Ավետիսյան, Ավետիք-Ավետիքյան, Ավետում-Ավետումյան, Զատիկ-Զատիկյան, Գալուստ-Գալուստյան, Առաքել-Առաքելյան, Մայրապետ-Մայրապետյան, Տոնական-Տոնականյան, Տոնապետ-Տոնապետյան, Սաղմոս-Սաղմոսյան, Մեծատուր-Մեծատուրյան, Խաչերես-Խաչերեսյան, Տոներ-Տոներյան, Վարդերես-Վարդերեսյան, Թուխմանուկ-Թուխմանուկյան, Խաչում-Խաչումյան, Մկրտում-Մկրտումյան, Եկավ-Եկավյան, Տերունյան, Կարապետ-Կարապետյան, Նշան-Նշանյան, Խոստիկ-Խոստիկյան, Կանթեղ-Կանթեղյան, Վարազ-Վարազյան, Խաչմանուկ-Խաչմանուկյան, Մարգար-Մարգարյան:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս արդեն քննարկված անձնանունազգանվանակերտ հիմքերը, մինչև մեր ժողովրդին սպասվող արհավիրքներն ու փորձությունները հայկական անունսրանը իր հիմնական գծերով, իսկ վերջին օրինակները վկայում են նաև, որ իր հիմնական միատուններով ձևավորված էր: Դժվար չէ նկատել, որ հնագույն և հին շրջաններից արդեն բերված օրինակների մեծագույն մասը պահպանվել է մինչև մեր օրերը, իբրև յուրատեսակ մի անձեռնմխելի ֆոնդ:

Միջին շրջանում սկսվում է արաբական տարրի մուտքը հայկական անունարան, սակայն, ինչպես վկայում են փաստերը, հայկական ազգանվանակերտ անձնանունների մեջ առանձնապես նշանակալից են ոչ թև և ոչ այնքան արաբական տիրապետության շրջանում մեղ անցած անձնանունները, որքան այդ փուլի հաջորդ շրջաններին վերաբերող արաբիզմները, որոնք, առանց բացառության, միջնորդավորված էին պարսկերենով և թուրքերենով:

Արաբական բուն տիրապետությունը Հայաստանում տևեց VIII դ. սկզբներից մինչև IX դ. երրորդ քառորդը: Մոտ երկու դար տևած գերիշխանության արդյունքը եղավ մի քանի տասնյակ արաբական անձնանունների մուտքը հայկական անունարան, որոնցից մի քանիսը դարձան ազգանվանակերտ՝ Բալասան-Բալասանյան, Հասան-Հասանյան, Ամիր-Ամիրյան, Յուսուֆ-Յուսուֆյան, Փարաջ-Փարաջյան, Քարիմ-Քարիմյան:

Արաբական ազդեցության անմիջական դրսևորումներից մեկի մասին հիշեցնենք. ընտանիքի հայրը արու զավակի, հատկապես սնդրանիկի անունից իր համար նոր անձնանուն էր սերում, աբու «հայր» բաղադրիչը ավելացնելով զավակի անձնանվանը՝ Աբու-Սահլ, Աբլ-Աբաս, Աբլասադ, Աբլդարիբ, Աբլհասան, Աբումրվան, Աբուսայիդ և այլն: Անձնանվանակերտ այս կաղապարը երկար կյանք չունեցավ և դադարեց

գործելուց արաբական տիրապետության վախճանի հետ միաժամանակ: Հետագայում, արաբական տարրի միջնորդված թափանցման շրջանում, այն արդեն չէր գործում, այսուհանդերձ, զարմանալի է Աբլաբուսյան ազգանվան առկայությունը մեր ազգանունարանում, որը մենք մեկնում ենք իբրև վերոհիշյալ կաղապարի արդյունք, շնայած հնարավոր է այդ ազգանունը կապել վրացերենի արլարուղա բառի հետ, որ նշանակում է սարգ, իբրև մականվանական ազգանուն:

Ընդհանուր տոմամբ միջին շրջանը ամենաբազմազանն է: Բավական է հիշել արաբական տիրապետությունը, Բագրատունիների թագավորության հաստատումը, մոնղոլական, թուրք-սելջուկյան արշավանքներն ու երկարատև տիրապետությունը, Կիլիկիայի հայկական թագավորությունը իր անմիջական կապերով Եվրոպայի հետ, պարսկական տիրապետությունը և այլն: Վերոհիշյալ բոլոր իրադարձությունները իլ ենց կնիքն են դրել նշված ժամանակաշրջանի մեր անունարանի ձևավորման ու կազմի վրա ընդհանրապես, որը և իր արտացոլումն է գտել ազգանվանակերտ հիմքերի ամբողջության մեջ:

Նշվեց, որ արաբական տարրը մեր անունարան է թափանցել միջին շրջանի ամբողջ ընթացքում և մեծ մասամբ մուսուլման պարսիկների ու թուրքերի միջնորդությամբ: Այսպես, ազգանվանակերտ անձնանուն հիմնրում արաբիզմները վերաբերում են XI—XVIII դարերին, երբ արաբական անմիջական ազդեցության մասին խոսք անգամ լինել չի կարող: Իբրև ասվածի մի այլ ապացույց կարելի է նշել, որ զուտ արաբական միջնորդավորված ձևերի կողքին նվառելի են նաև արաբա-պարսկական և արաբա-թուրքական խառը կաղմություններ: Նորից անդրադառնալով արաբիզմների, իրանիզմների ու թուրքիզմների առատությանը մեր անունարանում, ուզում ենք շահաձայնել Աճառյանի հետևյալ երկու դիտողությունների հետ. «Անշուշտ մահմեդականները շատիպեցին մեզ, որ մենք բռնի կերպով ընդունենք իրենց անունները: Երևի այս էլ գերիշխան տարրի բնական ազդեցության արդյունքն է, ազդեցություն՝ որ ամեն ձևի ու ամեն հանդամանքի մեջ էլ իր գործը տեսնում է, և փոքր նվաճված ազգերը իրեն է քաշում, իրեն է միացնում»⁶⁴: «Հայ ժողովրդական անուններին գրեթե ժամանակակից են այն բազմաթիվ անձնանունները, որ հայ ժողովուրդը փոխ է առել թաթար, սելջուկ և նորապարսիկ մահմեդական ազգերից: Հայ ժողովուրդը ընդհանրապես շատ լավ գիտեր

⁶⁴ Աճառյան, ՀԱՆԲ, հ. 6, էջ 350:

այդ լեզունները, որով շատ դյուրավ թափանցում էր անձնանունների ներքին իմաստին և նրանց մեջ տեսած գեղեցիկ պատկերներից հրապուրված՝ վերցնում ու որդեգրում էր նրանք»⁶⁵։

Մի փոքր տարօրինակ են ականավոր հայագետի «չստիպեցին», «հմայված», «լավ գիտեր այդ լեզունները» արտահայտությունները, երբ բազմաթիվ փաստեր, որոնց, անկասկած, քաջատեղյակ էր նա, ճիշտ հակառակի մասին են վկայում։

Ավելի խորը հետազոտելու դեպքում շեն կարող ուշադրությունից վրիպել այս շրջանի ծայրահեղ իսլամիզմների առկայությունը մի կողմից և ընդգծված հայկականի ստեղծագործումը՝ մյուս կողմից։

Հայկական ազգանունների անձնանվանական հիմքերում միջնորդավորված արաբիզմները ըստ դարերի ներկայացված են հետևյալ օրինակներով՝ XII դ. Ազիզ-Ազիզյան, Հեթում-Հեթումյան, Խալաթ-Խալաթյան⁶⁶, XIII դ. Մարջան-Մարջանյան, Մալաք-Մալաքյան, Մելիք-Մելիքյան, Ջալալ-Ջալալյան, Սուլթան-Սուլթանյան, Դովլաթ-Դովլաթյան, Թամամ-Թամամյան, Սեիդ-Սեիդյան, Մուրադ-Մուրադյան, Խալիլ-Խալիլյան։

XIV դ. Հաջիբեկ-Հաջիբեկյան, Վելիխան-Վելիխանյան, Խալիֆ-Խալիֆյան, Սինան-Սինանյան, Խլղաթ-Խլղաթյան, Բուղա-Բուղայան, Ասկար-Ասկարյան, Քասիմ-Քասիմյան, Նադիր-Նադիրյան, Սանամ-Սանամյան, Մահլամ-Մահլամյան, Սուրաթ-Սուրաթյան, Ղաբիբ-Ղաբիբյան։

XV դ. Ավդալ-Ավդալյան, Շաբան-Շաբանյան, Սադադ-Սադադյան, Սաֆար-Սաֆարյան, Մուրադ-Մուրադյան⁶⁷, Վալադ-Վալադյան, Իսկանդարյան, Մուսայել-Մուսայելյան, Մասուտ-Մասուտյան, Էդիլ-Էդիլյան, Ջավադ-Ջավադյան, Էմին-Էմինյան, Բաշիր-Բաշիրյան, Ջուլալ-Ջուլալյան, Խումար-Խումարյան, Ջավահիր-Ջավահիրյան, Ջարիֆ-Ջարիֆյան, Ջուլում-Ջուլումյան, Ղամար-Ղամարյան, Սալաթին-Սալաթինյան, Ասլի-Ասլիյան, Լադիֆ-Լադիֆյան, Ջամալ-Ջամալյան, Սադաթ-Սադաթյան, Ջայնալ-Ջայնալյան։

XVI դ. Ավալ-Ավալյան, Ասլիզադե-Ասլիզադեյան, Ղասում-Ղասումյան, Մալում-Մալումյան, Շաղավաթ-Շաղավաթյան, Շեյխ-Շեխյան, Խտր-Խտրյան, Մսր-Մսրյան, Սայադ-Սայադյան, Նասիր-Նասիրյան, Յադուբ-Յադուբյան, Սուլեյման-Սուլեյմանյան, Մայսուր-Մայսուրյան,

⁶⁵ Նույն տեղում, էջ 352։

⁶⁶ Դասակարգվում են ըստ առաջին վկայության։

⁶⁷ Փոխատու աղբյուրում Մուրադ-ի հնչյունափոխված տարբերակն է։

Մանսուր-Մանսուրյան⁶⁸, Քամալ-Քամալյան, Թահիր-Թահիրյան, Շարաֆ-Շարաֆյան, Աշրաֆ-Աշրաֆյան, Մաքսուդ-Մաքսուդյան, Մայիլ-Մայիլյան, Օլբին-Օլբինյան, Նարինջ-Նարինջյան, Սադաֆ-Սադաֆյան, Մադան-Մադանյան, Շարբաթ-Շարբաթյան, Ումբր-Ումբրյան, Քարամ-Քարամյան, Հախնաղար-Հախնաղարյան:

Հաջորդ երեք դարերը ներկայացված են համեմատաբար ավելի քիչ օրինակներով՝

XVII դ. Միրվելի-Միրվելյան, Զաման-Զամանյան, Ղուժաշ-Ղուժաշյան, Նոան-Նոանյան, Ալիսալ-Ալիսաղյան, էլիազ-էլիազյան, Խերան-Խերանյան, Ռամազ-Ռամազյան, Սողբաթ-Սողբաթյան, Թարջիման-Թարջիմանյան, Զաֆար-Զաֆարյան:

XVIII դ. Սելիմ-Սելիմյան, Հասրաթ-Հասրաթյան, Մասեհ-Մասեհյան, Սևյրան-Սևյրանյան, Նազար-Նազարյան, Ղուրբան-Ղուրբանյան, էտիբար-էտիբարյան և հետևյալ օրինակները՝ XIX դարից՝ Գամեր-Գամերյան, Մաղլոմ-Մաղլոմյան, Շամիլ-Շամիլյան:

Հատկանշական է նաև, որ այս շրջանում հանդես են գալիս ազգանվանակերտ անձնանուններ, որոնք կարելի է բնութագրել իբրև խառը՝ լուծություններ և որոնց կազմի մեջ առկա է արաբական որևէ բաղադրիչ միացած պարսկական, թուրքական բաղադրիչների հետ:

Այսպես, աբաբեբեն-պաբսկեբեն կաղապարով են ձևավորված ազգանվանակերտ հետևյալ հիմքերը. Ամիրխան-Ամիրխանյան, Ամիրշահ-Ամիրշահյան, Ամիրջան-Ամիրջանյան, Բաղի-Բաղիյան, Դիվան-Դիվանյան, Մամեդխան-Մամեդխանյան, Նուրիգյուլ-Նուրիգուլյան, Ամիրգուլ-Ամիրգուլյան, Իմանգուլ-Իմանգուլյան, Միրազիզ-Միրազիզյան, Հուրիխան-Հուրիխանյան, Իսաջան-Իսաջանյան, Խալաֆ-Խալաֆյան, Ափուջան-Ափուջանյան, Ապուջան-Ապուջանյան⁶⁹, Վելիջան-Վելիջանյան, Մելիքջան-Մելիքջանյան, Ասլիխան-Ասլիխանյան, Ամիրխան-Ամիրխանյան, Աղիլիխան-Աղիլիխանյան, Մուրադ-Մուրադյան, Ազիզխան-Ազիզխանյան, Իսախան-Իսախանյան, Ասլիբեկ-Ասլիբեկյան, Ամիրզադե-Ամիրզադյան, պաբսկեբեն-աբաբեբեն կաղապարով՝ Խոնդալի-Խոնդալյան, Խանամիր-Խանամիրյան, Շահազիզ-Շահազիզյան, Աղանուր-Աղանուրյան, Շահամիր-Շահամիրյան, Շահմելիք-Շահմելիքյան, Շահնազար-Շահնազարյան, Շահվալադ-Շահվալադյան, էսեր-էսերյան, Մուշկամբար-Մուշկամբարյան, Դինար-Դինարյան, Ֆիդան-Ֆիդանյան, Մհլամ-Մհլամյան,

⁶⁸ Փոխառու լեզվում վերջին երկուսը միևնույն անձնանվան հնչյունափոխված տարբերակներն են: Մեզանում գիտակցվել են իբրև լնքնուրույն անձնանուններ

⁶⁹ Վերջին երկուսը հանդես են գալիս իբրև տարբերակներ:

Խոջամիր-Խոջամիրյան, Շահմասուր-Շահմասուրյան, Շահբարամ-Շահբարամյան հիմքերը: Ինչպես տեսնում ենք, հատկապես պարսկերեն-արաբերեն կաղապարով սերված հիմքերի դեպքում հաշվի են առնված ոչ միայն բառակազմորեն բաղադրյալ անցումները, այլև ծագումնաբանական անցումները՝ Դինսուր-Դինսուրյան, Ֆիդան-Ֆիդանյան, Մհլամ-Մհլամյան և այլն:

Արարական-բուրբական կաղապարը ներկայանում է հետևյալ օրինակներով՝ Ամիրաղա-Ամիրաղյան, Ավդալբեկ-Ավդալբեկյան, Ամիրբեկ-Ամիրբեկյան, Նուրում-Նուրումյան, Հախվերդի-Հախվերդյան, Հախում-Հախումյան, Իսավերդի-Իսավերդյան, Էվում-Էվումյան, Էլիզբեկ-Էլիզբեկյան, Դովլաթբեկ-Դովլաթբեկյան, Նազարբեկ-Նազարբեկյան, Իսաբեկ-Իսաբեկյան, Մուսաբեկ-Մուսաբեկյան, Ազիզբեկ-Ազիզբեկյան, Նուրիբեկ-Նուրիբեկյան, Սալամբեկ-Սալամբեկյան, Իսաղուլ-Իսաղուլյան, Նազար-Նազարյան, Սալվատ-Սալվատյան, իսկ բուրբական-արարական կաղապարը՝ Բեկնազար-Բեկնազարյան, Դանգուլի-Դանգուլյան, Խանսանամ-Խանսանամյան, Էլամիր-Էլամիրյան, Էլնազար-Էլնազարյան օրինակներով: Այստեղ պետք է ավելացնել նաև Ումրշատ Ումրշատյան աղբյուրները իբրև արաբական-հայկական կաղապարի միակ օրինակ, ավելացնելով, սակայն, որ, չնայած, կաղապարի Ումր բաղադրիչը արաբական է, սակայն կազմութունը ամբողջությամբ հայկական է, քանի որ **ումր** արաբական հասարակ անունը փոխ է առնվել և ապա ինքնուրույնաբար կազմել այս հատուկ անունը:

Միջին շրջանում աչքի է ընկնում նաև պարսկական տարրի ներթափանցումը հայկական անունարան, որը ոչնչով չի զիջում արաբականին:

Պարսիկների հետ ամենասերտ առնչությունները հատկապես ուշ միջնադարում, պարսկական տիրապետությունը և վերջապես հայերի բռնի արտագաղթերը Պարսկաստան չէին կարող իրենց նկատելի կնիքը չդնել հայկական անունարանի վրա, մանավանդ եթե հիշենք, որ XVI դարի վերջերից և XVII դարի սկզբներից սկսած տասնամյակներով Իրանը պաշտոնապես հայերի նկատմամբ բարյացկամ քաղաքականություն էր վարում, վստահելով նրանց ոչ միայն իր արտաքին առևտուրը, այլև արտաքին քաղաքականությունն ու պետական այլ պաշտոններ: Այսպիսով, հայերի արտաքնապես համակերպվելու միտումը, որի մասին խոսվել է, մի կողմից և Իրանի հայահանդուրծ քաղաքականությունը մյուս կողմից կարևոր նախադրյալներ էին հայկական անձնանուններում իրանիզմների գոյության համար:

Հայտնի է նաև, որ «Իրանահայ համայնքները սովորացել են սելջուկ-թուրքերի և մոնղոլական տիրապետության շրջանում, երբ հայերը Իրան են տեղափոխվել ոչ միայն բռնազաղթի ճանապարհով, այլև կամովին»⁷⁰։

Վերը շարադրված հանգամանքները իրենց անմիջական արտացոլումն են գտնում նաև հայկական ազգանունների անձնանուն հիմքերում։ Այսպես, եթե XII դ. վկայված ընդամենը չորս անձնանուն⁷¹ կա ազգանվանակերտ հիմքերում՝ Բախտավոր-Բախտավորյան, Մելքոն-Մելքոնյան, Մհեր-Մհերյան, Սաթուն-Սաթունյան, ապա XIII դ.՝ 11, XIV դ.՝ 13, XV-ից՝ 59, XVI-ից՝ մոտ 47, XVII-ից՝ ավելի քան 80 և XVIII դ.՝ ընդամենը 3։

XIII դ. Բաղդադ-Բաղդադյան, Մարդպան-Մարդպանյան, Նեվրուզ-Նեվրուզյան, Հայրում-Հայրումյան, Խուզաբախշ-Խուզաբախշյան, Գյուլասար-Գյուլասարյան, Բահադուր-Բահադուրյան, Փահլևան-Փահլևանյան, Օզան-Օզանյան, Ումիդ-Ումիդյան, Խանդամիր-Խանդամիրյան։

XIV դ. Մանկասար-Մանկասարյան, Բեկչան-Բեկչանյան, Աղաջան-Աղաջանյան, Խանդադա-Խանդադյան, Շահինար-Շահինարյան, Եղիգար-Եղիգարյան, Արզուման-Արզումանյան, Սիմիկ-Սիմիկյան, Խոշ-Խոշյան, Զուհար-Զուհարյան, Գիլան-Գիլանյան, Միրաք-Միրաքյան, Խուզադե-Խուզադեյան։

XV դ. Շահսուվար-Շահսուվարյան, Էղիլխան-Էղիլխանյան, Արասխան-Արասխանյան, Խանմուրադ-Խանմուրադյան, Խանվելի-Խանվելյան, Շամիրխան-Շամիրխանյան, Յուխան-Յուխանյան, Մուսախան-Մուսախանյան, Աբասխան-Աբասխանյան, Աբուտխան-Աբուտխանյան, Յալլախան-Յալլախանյան, Մելթիխան-Մելթիխանյան, Արաբխան-Արաբխանյան, Աղախան-Աղախանյան, Զիգարխան-Զիգարխանյան, Բայրամ-Բայրամյան, Շիրվան-Շիրվանյան, Խոջասար-Խոջասարյան, Թարխան-Թարխանյան, Քաթան-Քաթանյան, Յաղութ-Յաղության, Խոնդ-Խոնդյան, Նուբար-Նուբարյան, Շիրազ-Շիրազյան, Ղահրաման-Ղահրամանյան, Զինար-Զինարյան, Նարին-Նարինյան, Նիգար-Նիգարյան, Զոհրաբ-Զոհրաբյան, Մեհրաբ-Մեհրաբյան, Բարխուդար-Բարխուդարյան, Խանդան-Խանդանյան, Նարիման-Նարիմանյան, Ասմանգուլ-Ասմանգուլյան, Եվանգուլ-Եվանգուլյան, Արզանգուլ-Արզանգուլյան, Բաղդազյուլ-Բաղդազյուլ-

⁷⁰ ՀՍՀ, հ. Գ, Երևան, 1978, էջ 451։

⁷¹ IX—XI դդ վկայված են հետևյալ հիմքերը՝ Շիրմազան Շիրմազանյան, Օշինյան և Դարման-Դարմանյան։

յան, Թարգյուլ-Թարգյուլյան, Բաղչազյուլ-Բաղչազյուլյան, Գյուլխաս-Գյուլխասյան, Գուլգուլ-Գուլգուլյան, Գուլքան-Գուլքանյան, Գուլակ-Գուլակյան, Գյուլշատ-Գյուլշատյան, Գյուլբահար-Գյուլբահարյան, Զանվելի-Զանվելյան, Ղարիբջան-Ղարիբջանյան, Նուրիջան-Նուրիջանյան, Խոջաջան-Խոջաջանյան, Սերջան-Սերջանյան, Մախանջան-Մախանջանյան, Բերուջան-Բերուջանյան, Բարեջան-Բարեջանյան, Ալաջան-Ալաջանյան, Էլջան-Էլջանյան, Հախիջան-Հախիջանյան, Ախիջան-Ախիջանյան⁷², Եսաջան-Եսաջանյան:

Ինչպես տեսնում ենք այս շրջանում առանձնանում են ոչ միայն պարսկական նշանակալից թվով հիմքերը, այլև պարսկական անձնավանական ամբողջական կադապարները ձևավորված խան, գյուլ, ջան բաղադրիչներով: Ավելին, այլ բաղադրիչներով հանդես են գալիս խառը կազմություններ պարսկերեն-հայերեն և հայերեն-պարսկերեն կադապարներով՝ Լևխան-Լևխանյան, Արիխան-Արիխանյան, Խանանուշ-Խանանուշյան, Մամախան-Մամախանյան, Սեփխան-Սեփխանյան, Գյուլհոջան-Գյուլհոջանյան, Գյուլփանոս-Գյուլփանոսյան, Վարդիգյուլ-Վարդիգյուլյան, Մարիամջան-Մարիամջանյան, Հակոբջան-Հակոբջանյան, Թովմաճան-Թովմաճանյան, Սարկիսջան-Սարկիսջանյան, Սարգրսջան-Սարգրսջանյան, Կակոջան-Կակոջանյան, Գևոջան-Գևոջանյան, Գոգոջան-Գոգոջանյան, Օհանջան-Օհանջանյան, Ախպերջան-Ախպերջանյան, Փլիլիջան-Փլիլիջանյան, Մամաջան-Մամաջանյան:

XVI դ. նիազ-նիազյան, Սարխոշ-Սարխոշյան, Բունիաթ-Բունիաթյան, Փերուզ-Փերուզյան, Սելվինազ-Սելվինազյան, Բահար-Բահարյան, Ֆարման-Ֆարմանյան, Մերդին-Մերդինյան, Թառա-Թառայան, Փոչադ-Փոչադյան, Նադդ-Նադդյան, Մարդան-Մարդանյան, Էմնիազ-Էմնիազյան, Բալաբ-Բալաբյան, Բադամ-Բադամյան, Սաչամ-Սաչամյան, Շատան-Շատանյան, Դիլդիլ-Դիլդիլյան, Դուլդութ-Դուլդության, Դիլբար-Դիլբարյան, Դիլան-Դիլանյան, Դիլբանդ-Դիլբանդյան, Փերիջան-Փերիջանյան, Աղափիրի-Աղափիրյան, Փիլարդադե-Փիլարդադյան, Փիրվերդի-Փիրվերդյան, Փիրդալեմ-Փիրդալեմյան, Փիրում-Փիրումյան, Փիրան-Փիրանյան, Շահնազար-Շահնազարյան, Շահվերդի Շահվերդյան, Շահխաթուն-Շահխաթունյան, Շահիջան-Շահիջանյան, Շահգուլ-Շահգուլյան⁷³, Շահզադե-Շահզադյան, Շահնուբար-Շահնուբարյան, Զիհանջահ-

⁷² Չի բացառվում Հախիջանյան Ախիջանյան այլալեզու անցումը ևս

⁷³ Եթե բնօրինակում ինք շահ-գյուլ կադապարը, ապա այս ազգանունը տեղադրվում է ալտանդ, իսկ եթե շահ-դուլի, որ չի բացառվում, ապա պետք է դասվի պարսկերեն-

Զինանշանայան, Շահվալադ-Շահվալադայան, Գուլի-Գուլիայան, Փարիխան-
Փարիխանյան, Սարինգյուլ-Սարինգյուլայան, Գյուլզադե-Գյուլզադայան,
Միրզաջան-Միրզաջանյան, Գյուլամիր-Գյուլամիրայան, Գյուլիջան-Գյուլ-
իջանյան, Արիջան-Արիջանյան:

Այս դեպքում ևս երևում են որոշակի բաղադրիչներով կազմութուն-
ներ՝ դիլ, փիր(ի), շահ:

XVII դ. ներկայացված է մեծաքանակ և բազմազան օրինակներով,
որից հետո, ինչպես ցույց են տալիս վերը բերված վիճակագրական
տվյալները, օրինակների քանակը կտրուկ նվազում է:

Խանփերի-Խանփերյան, Խանբաբա-Խանբաբայան, Շահմուրադ-Շահ-
մուրադայան, Շահբազ-Շահբազայան, Գուլար-Գուլարյան, Զահանգիր-Զա-
հանգիրյան, Թեյմուրազ-Թեյմուրազյան Աղամիրզա-Աղամիրզայան, Աղա-
դուլ-Աղադուլյան, Զինչին-Զինչինյան, Միրզախան-Միրզախանյան, Գյուլ-
լաղամիր-Գյուլաղամիրյան, Շահմենենդ-Շահմենենդյան, Գյուլամբար-
Գյուլամբարյան, Դիլդար-Դիլդարյան, Շահնաբաթ-Շահնաբաթյան, Լա-
լախան-Լալախանյան, Գյուլան-Գյուլանյան, Թահմազ-Թահմազյան,
Լալազար-Լալազարյան, Զանփուլադ-Զանփուլադյան, Խոշեար-Խոշար-
յան, Թաղազուլ-Թաղազուլյան, Գյուլնաղար-Գյուլնաղարյան, Զինիմ-Զի-
նիմյան, Թոխում-Թոխումյան, Լալա-Լալայան, Նոլրուզ-Նովրուզյան, Ար-
ղան-Արղանյան, Մալխաս-Մալխասյան, Սահրադ-Սահրադյան, Միանսար-
Միանսարյան, Թազա-Թազայան, Մանանդ-Մանանդյան, Արմաղան-Ար-
մաղանյան, Նիյադ-Նիյադյան, Մանդոն-Մանդունյան, Զիլֆի-Զիլֆիյան,
Զախար-Զաներյան, Սաֆրազ-Սաֆրազյան, Սարդար-Սարդարյան, Խո-
ջա-էնաթյան, Միրզա-Պետրոսյան, Միրզաթունի-Միրզաթունյան, Միր-
զա-Ավալչան, Միրզա-Պողոսյան, և Մելիք-բաղադրիչով ավելի քան
երեսուն դեպք, որոնցից կեսը բաղադրված է բնիկ կամ փոխառյալ-յու-
րացված անձնանուններով, իսկ մյուս կեսը՝ գլխավորապես իրանիզմ-
ներով:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ Մելիք բաղադրիչով բո-
լոր օրինակները անվերապահորեն տեղադրում ենք XVII-րդ դարում:
Անմիջապես ասենք, որ ՀԱՆԲ-ում դրանցից ոչ մեկը վկայված չէ, սա-
լայն հայտնի է, որ մելիքությունները Արևելյան Հայաստանում սկսել
են ձևավորվել XVI դ. վերջում, իսկ XVIII դ. երկրորդ կեսին արդեն
ուստիճանաբար տեղի էին տալիս, ուստի նրանց ծագկումը կարելի է դը-

մուրքերեն կաղապարով սերվածների շարքը: Ի դեպ մեզ հանդիպել է նաև Շաղկուլի
տարիերակը՝ «Շաղկուլու որդի Շահնազար» (Հ. Աբրահամյան, Կալվածագրեր, Երևան,
1941).

նել XVII դ., երբ ձևավորված էին Մելիք բազադրիչով անձնանուններ, որոնք արդեն XVIII դ. սկսած դարձան ազգանվանակերտ հիմքեր:

Վերջապես XVIII և XIX դդ. ներկայացված են հետևյալ անձնանուն հիմքերով՝ Բախտամ-Բախտամյան, Գյուլբայազ-Գյուլբայազյան, Մերանգուլ-Մերանգուլյան, Գյուլնազ-Գյուլնազյան, Բլբուլ-Բլբուլյան, Բևհ-բուխ-Բևհբուխյան, Առուշան-Առուշանյան, Աղազադե-Աղազադյան: Սակայն, ինչպես և սպասելի էր և ինչպես ցույց են տալիս օրինակները պարսկական տարրը ոչ միայն փոխ է առնվել, այլ նաև նպաստել է խառը կազմությունների սերմանը, որոնց ցայտուն դրսևորումները կարելի է համարել Մելիք և Միրզա + բնիկ կամ յուրացված անձնանուն կազապարով ազգանունները: Բերվածներին պետք է ավելացնել նաև հետևյալ օրինակները՝ Իբրև խառը կազմության դեպքեր՝ Խոջիկ-Խոջիկյան, Սիրադար-Սիրադարյան, Հակոբբեխվա-Հակոբբեխվյան, Դավիթթյոխվա-Դավիթթյոխվյան, Վանեսքեհչա⁷⁴-Վանեսքեհչյան, Խոջաբալի-Խոջաբալյան, Խոջագոր-Խոջագորյան⁷⁵, Խոջագորո-Խոջագորոյան⁷⁶, Թամամավե⁷⁷-Թամամավեյան, Շահպարոն-Շահպարոնյան:

Թուրքական տարրի մուտքը հայկական անունարան, որի աբտացույնը երևում է ազգանվանակերտ անձնանուն հիմքերում առանձնապես նշանակալից շափերի է հասնում XV—XVII դարերում:

Նախորդ մեկ-երկու դարից մեզ ավանդված են հատուկետ օրինակներ՝ Խաթուն-Խաթունյան, Խանում-Խանումյան, Ասլան-Ասլանյան, Արզուխ-Արզուխյան, Ուլուբեկ-Ուլուբեկյան, Աթաբեկ-Աթաբեկյան, Չիչակ-Չիչակյան, Գյունաշ-Գյունաշյան, Չաղար-Չաղարյան, Ղուլար-Ղուլարյան, Դուման-Դումանյան, Սրմաբեկ-Սրմաբեկյան, որոնցից առաջին երկուսը XII դարից, իսկ մնացյալը՝ XIII—XIV դարերից:

XV դ.՝ Աղաբեկ-Աղաբեկյան, Ուլուբաբ-Ուլուբաբյան, Օրդուբեկ-Օրդուբեկյան, էլբեկ-էլբեկյան, էլչիբեկ-էլչիբեկյան, Բեգում-Բեգումյան, Խանբեկ-Խանբեկյան, Ղարազյոզ-Ղարազյոզյան, Ադիման-Ադիմանյան, Փաշա-Փաշայան, Աբամ-Աբամյան, Յավրում-Յավրումյան, Յավրի-Յավրիյան, Բալա-Բալայան, Բաբա-Բաբայան, Այվատ-Այվատյան, Բուլուխ-Բուլուխյան, Այդին-Այդինյան, Գյոզալ-Գյոզալյան, էլմա-էլմայան, Աբգալ-Աբգալյան, Տողան-Տողանյան, Դամիր-Դամիրյան, Ալթուն-Ալթուն-

⁷⁴ Քյոխվա-ի բարբառային տարրերակներից մեկը:

⁷⁵ Երկրորդ բազադրիչը անձնանվան կրճատված տարրերակ է:

⁷⁶ Երկրորդ բազադրիչը կոչական տարրերակ է:

⁷⁷ Երկրորդ բազադրիչը անձնանվան կոչական տարրերակ է:

յան, էլշակ-էլշակյան, Թաթար-Թաթարյան, Ղամբար-Ղամբարյան, Մուշղալ-Մուշղալյան:

XVI դ.՝ Աղամալ-Աղամալյան, Ղարաբեկ-Ղարաբեկյան, Սարիբեկ-Սարիբեկյան, Յախշիբեկ-Յախշիբեկյան, Աղամ-Աղամյան, Բեգլար-Բեգլարյան, Խանղուլ-Խանղուլյան, Ալագյոզ-Ալագյոզյան, Նազլու-Նազլույան, Դադում-Դադումյան, Բայաթ-Բայաթյան, Ղարղաշ-Ղարղաշյան, Ղահրի-Ղահրիյան, Դոնդու-Դոնդույան, Այգուն-Այգունյան, Ուղուր-Ուղուրյան, Մախմուր-Մախմուրյան, Եթար-Եթարյան, Ճաղար-Ճաղարյան, Քրման-Քրմանյան, Դիլաք-Դիլաքյան, Բուղաղ-Բուղաղյան, Իփակ-Իփակյան, Իգիթ-Իգիթյան, Այվազ-Այվազյան, Աղաս-Աղասյան, Թուլակ-Թուլակյան:

XVII դ.՝ Աղաբալ-Աղաբալյան, Աղաբաբ-Աղաբաբյան, Քեչիբեկ-Քեչիբեկյան, Այբեկ-Այբեկյան⁷⁸, Աղաբեկ-Աղաբեկյան, Նազլում-Նազլումյան, Սարում-Սարումյան, Սաղում-Սաղումյան, Աղբալ-Աղբալյան, Ինջիղուլ-Ինջիղուլյան, Նանում-Նանումյան, Կորխմազ-Կորխմազյան, Ֆերջուլ(ա)-Ֆերջուլյան, Յարդում-Յարդումյան, Ասլամազ-Ասլամազյան, Ղավալ-Ղավալյան, Ղուլի(ն)-Ղուլինյան, Ասմար-Ասմարյան, Եզան-Եզանյան, Թուրշ(ի)-Թուրշյան, Ղուլ-Ղուլյան, Գյոկչակ-Գյոկչակյան, Թաուան-Թաուանյան, Քիշմիշ-Քիշմիշյան, Յազիլ-Յազիլյան, Նաբաթ-Նաբաթյան, Ալմաստ-Ալմաստյան, Օթար-Օթարյան, Յաղմուր-Յաղմուրյան, Վերմիշ-Վերմիշյան, Լաչին-Լաչինյան, Զիլավ-Զիլավյան:

Հաջորդ դարը ներկայացված է մի քանի օրինակներով՝ Ղափլան-Ղափլանյան, Դեդե-Դեդեյան, Բալաբաջ(ի)-Բալաբաջյան, Բալում-Բալումյան, Մասում-Մասումյան, Թևում-Թևումյան, Մեջլում-Մեջլումյան, Բաբաս-Բաբասյան, Աղալար-Աղալարյան:

Թուրքական տարրն ընդգրկում է նաև -բեկ, -կարա և -ում բաղադրիչներով մոտ երկու տասնյակ օրինակներ: Նշված բաղադրիչները առանձնանում են գլխավորապես այն պատճառով, որ հանդես են գալիս նաև խառը կազմութուններում:

Այժմ բերենք այդ բաղադրիչներով կազմված մի քանի օրինակներ՝ Շամիրբեկ-Շամիրբեկյան, Գեզուբեկ-Գեզուբեկյան, Ալարբեկ-Ալարբեկյան, Շարանբեկ-Շարանբեկյան, Հունդիբեկ-Հունդիբեկյան, Կիսիբեկ-Կիսիբեկյան, Թուլբեկ-Թուլբեկյան, Իլբեկ-Իլբեկյան, Բասաբեկ-Բասաբեկյան, Միլբեկ-Միլբեկյան, Ղազում-Ղազումյան, Ղալում-Ղալումյան,

⁷⁸ Հնարավոր է նաև՝ Աղաբեկ Այբեկ Այբեկյան անցումը:

Սաժում-Սաժումյան, Բուդում-Բուդումյան, Թարում-Թարումյան, Թելում-Թելումյան, Օղլում-Օղլումյան, Գյանջում-Գյանջումյան, Թառում-Թառումյան, Ֆերջում-Ֆերջումյան, Կարադեմուր-Կարադեմուրյան, Կարամազ-Կարամազյան, Կարադավազ-Կարադավազյան, Կարա-Սաֆարյան, Կարա-Սեֆերյան:

Ավելացնենք նաև մի շարք օրինակներ, որոնց մեր անունարան մտնելու ժամանակ այնքան էլ հստակ չէ՝ Թարվերդի-Թարվերդյան, Անախաթուն-Անախաթունյան, Բալագյուլ-Բալագյուլյան, Ադիգյուզալ-Ադիգյուզալյան, Անախաս-Անախասյան, Դադաշ-Դադաշյան, Մախչախ-Մախչախյան, Փառլաղ-Փառլաղյան, Ջեյրան-Ջեյրանյան, Քիրազ-Քիրազյան, Քալաշ-Քալաշյան, Թորաման-Թորամանյան, Չարբուզաղ-Չարբուզաղյան, Չիլասլան-Չիլասլանյան, Նաբի-Նաբիյան, Էլխաս-Էլխասյան:

Իրանական ուժեղ ազդեցությունը չէր կարող իր նշանակալից կնիքը չդնել անունաբանի ձևալորման ու զարգացման վրա: Ասվածը ապացուցվում է հայկական ազգանունների անձնանուն հիմքերի օրինակով, ուր առկա է մի ստվար խումբ, որը կարելի է բնութագրել պարսկերեն-թուրքերեն և թուրքերեն-պարսկերեն կաղապարներով: Այլ կերպ ասած՝ բաղադրիչներից մեկը իրանական է, մյուսը՝ թուրքական և, եթե առաջնորդվելու լինենք անձնանուն բաղադրիչը ելակետ համարելու սկզբունքով, ապա պարսկերեն-թուրքերեն կաղապարը ներկայանում է հետևյալ օրինակներով՝ Խանդում-Խանդումյան, Վելում-Վելումյան, Քուշ մ-Քուշումյան, Գյուլում-Գյուլումյան, Շահում-Շահումյան, Խուբլար-Խուբլարյան, Խանլար-Խանլարյան, Գյուլբեկ-Գյուլբեկյան, Մեհրաբեկ-Մեհրաբեկյան, Խոջաբեկ-Խոջաբեկյան, Միրզաբեկ-Միրզաբեկյան, Սաֆրազբեկ-Սաֆրազբեկյան, Ջալալբեկ-Ջալալբեկյան, Ռոստոմբեկ-Ռոստոմբեկյան, Շերբեկ-Շերբեկյան, Յարիբեկ-Յարիբեկյան, Շահբեկ-Շահբեկյան, Խոջբեկ-Խոջբեկյան, Արազբեկ-Արազբեկյան, Ջարիբեկ-Ջարիբեկյան, Ջանիբեկ-Ջանիբեկյան, Շահգիդան-Շահգիդանյան, Խանգելդի-Խանգելդյան, Խուդավերդ(ի)-Խուդավերդյան, Խուդադուլ-Խուդադուլյան, Սարուխան-Սարուխանյան, Խոջաբալի-Խոջաբալյան, Յարմադա-Յարմադայան, Ադաբախշ-Ադաբախշյան, Բալաաչրում-Բալաաչրումյան, Խոնդկար-Խոնդկարյան, Դիլար-Դիլարյան, իսկ թուրքերեն-պարսկերեն կաղապարը հետևյալ օրինակներով՝ Այխան-Այխանյան, Բաբախան-Բաբախանյան, Ուլուխան-Ուլուխանյան, Իգիթխան-Իգիթխանյան, Բեգխան-Բեգխանյան, Նազլուխան-Նազլուխանյան, Դոլուխան-Դոլուխանյան, Բաջախան-Բաջախանյան, Մալախան-Մալախանյան, Օրդուխան-Օրդուխան-

յան, Դուրդախան-Դուրդախանյան, Բեկդադ(ե)-Բեկդադյան, Ուլուխոջա-
 մուլխոջայան, Աբաջան-Աբաջանյան, Աղամջան-Աղամջանյան, Ամա-
 ջան-Ամաջանյան, Նանիջան-Նանիջանյան, Ղուլիջան-Ղուլիջանյան, Ղա-
 յաջան-Ղալաջանյան, Ունիջան-Ունիջանյան, Աթաջան-Աթաջանյան, Են-
 գիրար-Ենգիրարյան, Աթագյուլ-Աթագյուլյան, Նանագյուլ-Նանագյուլ-
 յան, Գյուլբուրդ-Գյուլբուրդյան, Բալագյուլ-Բալագյուլյան, Մանա-
 գուլ Մանագուլյան, Ազգուլ-Ազգուլյան, Ինչպես նաև Քանան-Քանան-
 յան, Ֆրանգուլ-Ֆրանգուլյան, Բայանդուր-Բայանդուրյան, Բաթման-
 Բաթմանյան, Մեծլում-Մեծլումյան:

Միջին շրջանը հատկանշական է նաև սեփական ձևերի ստեղծա-
 գործման ընթացքով: Արդեն նշել ենք, որ այդ շրջանը հայկական անու-
 նարանի ձևավորման պատմության մեջ նկատելի տեղ է գրավում: Եվ
 հատկանշական է, որ եթե իրանիզմները, արաբիզմները, թուրքիզմնե-
 րը անունարան մուտք են գործել որոշակի պատմական ժամանակա-
 շրջանում, գլխավորապես կապված պարսկական և թուրքական տիրա-
 պետության հետ և բավականին կարճ ժամանակամիջոցում էլ դուրս
 են եկել ակտիվ անունարանի սահմաններից, ապա սեփական ձևերը
 բաշխված են V—XVIII դդ. ընթացքում:

V դ.՝ Ատոմ Ատոմյան նաև Ատովմ-Ատովմյան, Արև-Արևյան, Թա-
 թուլ-Թաթուլյան, Գարեգին-Գարեգինյան, Եզնիկ-Եզնիկյան, Շուշան-Շու-
 շանյան, Սևակ-Սևակյան:

VI—IX դդ.՝ Գառնիկ-Գառնիկյան, Զավր-Զավարյան, Փոքրիկ-Փոք-
 րիկյան, Դշխո-Դշխոյան, Մանուկ-Մանուկյան, Դերենիկ-Դերենիկյան,
 Իշխան-Իշխանյան, Թոռնիկ-Թոռնիկյան:

X դ.՝ Մանուշակ-Մանուշակյան, Ծաղիկ-Ծաղիկյան, Անդրանիկ-
 Անդրանիկյան, Մեղրիկ-Մեղրիկյան, Կոկոն-Կոկոնյան, Մեղեր-Մեղերյան:

XII դ.՝ Ոսկան-Ոսկանյան, Շողիկ-Շողիկյան, Կորկոտ-Կորկոտյան,
 Մամա-Մամայան, Սիրամարգ-Սիրամարգյան:

XIII դ.՝ Յողիկ-Յողիկյան, Շնորհավոր-Շնորհավորյան, Պարոնիկ-
 Պարոնիկյան, Պատվական-Պատվականյան, Թանգեր-Թանգերյան, Թան-
 գիկ-Թանգիկյան, Թանգ-Թանգյան, Եղնուկ-Եղնուկյան, Հազարապետ-Հա-
 զարապետյան, Կապուտիկ-Կապուտիկյան, Թագվոր-Թագվորյան, Ումիկ-
 Ումիկյան, Ավագ-Ավագյան, Շաքար-Շաքարյան, Զմրուխտ-Զմրուխտ-
 յան, Խելոք-Խելոքյան, Գոհար-Գոհարյան, Մարգ-Մարգյան, Պառավ-Պա-
 ռավյան, Կանաչ-Կանաչյան, Պոռոշ-Պոռոշյան, Սիրուն-Սիրունյան, Նավա-
 սարգ-Նավասարգյան, Նահապետ-Նահապետյան, Մերուն-Մերունյան:

XIV դ.՝ Երկաթ-Երկաթյան, Շամամ-Շամամյան, Ազատ-Ազատյան, Փոխան-Փոխանյան, Նորարև-Նորարևյան, Բազե-Բազեյան, Օրբել-Օրբելյան, Շատին-Շատինյան, Արևշատ-Արևշատյան, Վարդևան-Վարդևանյան, Նուշիկ-Նուշիկյան, Ծովիկ-Ծովիկյան, Գյուտեն-Գյուտենյան, Նագան-Նագանյան:

XV դ.՝ Հայկազ-Հայկազյան, Ծովան-Ծովանյան, Փայլակ-Փայլակյան, Կապուտ-Կապուտյան, Սևի-Սևիյան, Կաքավ-Կաքավյան, Մասուր-Մասուրյան, Լուսին-Լուսինյան, Ծովինար-Ծովինարյան, Զարդար-Զարդարյան, Խիզան-Խիզանյան⁷⁹, Նորամիր-Նորամիրյան⁸⁰ Բարունակ-Բարունակյան, Սևիկ-Սևիկյան, Սիրադեղ-Սիրադեղյան, Փախչան-Փախչանյան, Թուխիկ-Թուխիկյան, Շաղիկ-Շաղիկյան, Աստղիկ-Աստղիկյան, Շատարև-Շատարևյան, Ճերմակ-Ճերմակյան:

XVI դ.՝ Ռեհան-Ռեհանյան⁸¹, Բարիլույս-Բարիլույսյան, Նորատունկ-Նորատունկյան, Լուսպարոն-Լուսպարոնյան, Ճուտիկ-Ճուտիկյան, Դեղձուն-Դեղձունյան, Սևիկ-Սևիկյան:

XVII դ.՝ Զանազան-Զանազանյան, Ծառուկ-Ծառուկյան, Պապի-Պապիյան, Փարթամ-Փարթամյան, Քնար-Քնարյան, Հեղնար-Հեղնարյան, Արաքս-Արաքսյան, Թոռն-Թոռնյան, Մնացական-Մնացականյան, Սիրական-Սիրականյան, Ծամեր-Ծամերյան, Կթուն-Կթունյան, Պապիկ-Պապիկյան:

XVIII դ.՝ Երամ-Երամյան, Մանկիկ-Մանկիկյան, Սոնա-Սոնայան, Վարազդատ-Վարազդատյան, Կլորիկ-Կլորիկյան, Անշափ-Անշափյան:

Ավելացնենք նաև ստեղծման ժամանակները անհայտ հետևյալ ազգանվանակերտ անձնանուն հիմքերը՝ Պարթև-Պարթևյան, Քաջիկ-Քաջիկյան, Խաչկալ-Խաչկալյան, Շողեր-Շողերյան, Գարուն-Գարունյան, Մեխակ-Մեխակյան, Սոս-Սոսյան, Զոնիկ-Զոնիկյան, Սեպուհ-Սեպուհյան, Սոխակ-Սոխակյան, Հասմիկ-Հասմիկյան, Պարզ-Պարզյան, Հրաչյա-Հրաչյան, Արծվել-Արծվելյան, Արծիվ-Արծիվյան, Վարուժան-Վարուժանյան, Աղվան-Աղվանյան, Մանյակ-Մանյակյան, Վեմ-Վեմյան, Շատվոր-Շատվորյան, Հայրիկ-Հայրիկյան, Խաթակ(ն)-Խաթակյան, Շողան-Շողանյան, Անպետ-Անպետ(ք)յան, Լաջիկ-Լաջիկյան, Ըղձակ-Ըղձակյան, Քաղցրիկ-Քաղցրիկյան, Ցողեր-Ցողերյան, Դոխիկ-Դոխիկյան,

⁷⁹ Հնարավոր է նաև Խիզանցյան-Խիզանյան անցումը:

⁸⁰ Ունենք նաև Նորամիրյան-Նարմիրյան այլալեզու անցումը:

⁸¹ Ունենք նաև Ռեհանյան-Ռահանյան հնչյունափոխված տարբերակը, որը, ի դեպ, կարելի է մեկնաբանել նաև Ռեհան-Ռահան-Ռահանյան ձևով:

ինչպես նաև հետևյալ ազգանունները, որոնց անձնանուն հիմքերը հազիվ թե ինքնուրույն վկայված լինեն: Պարզապես այս ազգանունների հիմքերը նկատելի վերապահությամբ ենք հատկացնում անձնանուն հիմքերին՝ Մեծգևորգյան, Թուրսարգսյան, Գերավետյան, Նորաշխարհյան, Հազկազունչյան, Թուսյան:

Բնականաբար օտար և սեփական անձնանունների նկարագրված առատության պայմաններում անհնար է շունենալ խառը՝ հայերեն-օտար կաղապարով կազմություններ, ուր հայերեն բաղադրիչի հետ հանդես է գալիս որևէ թուրքաբանություն՝ Վարդում-Վարդումյան, Բեկ-Հովսեփ-Բեկ-Հովսեփյան, Ղուլ Ղազար-Ղուլղազարյան, Սարը Պետրոս-Սարը-սլետրոսյան, Չիլ Ավագ-Չիլավագյան, Սան-ով սկսվող որևէ անձնանուն + աղա՝ Սանաղյան, Պողոս բեկ-Պողոսբեկյան, Ջաքար բեկ-Ջաքարբեկյան, Հազար բեկ-Հազարբեկյան, Մինաս բեկ-Մինասբեկյան, Սարգիս բեկ-Սարգիսբեկյան, Օհան բեկ-Օհանբեկյան, Գասպարբեկ-Գասպարբեկյան, Խիթար բեկ-Խիթարբեկյան, Եսայի բեկ-Եսայբեկյան, Գուրգեն բեկ-Գուրգենբեկյան, Դավիթ աղա-Դավիթաղյան, Խաչի բաբ-Խաչիբաբյան, Հայր բաբա-Հայրբաբամյան, Բաբա Թորոս-Բաբաթորոսյան և Կարո + անձնանուն կաղապարով ավելի քան 10 հիմքերը, որոնց մասին խոսվել է:

Միջին շրջանում երևում են այնպիսի ազգանվանակերտ անձնանուն-հիմքեր, որոնց առկայությունը պայմանավորված չէ մշակութային ազդեցությամբ կամ քաղաքական գերիշխանություններով: Այս դեպքում ավելի շատ պետք է խոսել առնչությունների մասին, որոնց արդյունքը եղել են նախ և առաջ վրացական կամ վրացերենի միջոցով մեզ անցած մի քանի անձնանուն-հիմքեր:

Առանձնանում են Կիլիկյան շրջանի և բյուզանդական-հայկական առնչությունների դրսևորումները՝ Ալիս-Ալիսյան, Ջաբել-Ջաբելյան, Բարբար (ե, ա) Բարբարյան, Վասիլ-Վասիլյան, Լևոն-Լևոնյան: Վերջին երեքի մասին կուզեինք նշել հետևյալը. Բարբար-Բարբարյան, ձևը կարող է սերված լինել զբաղմունքի անուն→ազգանուն կաղապարով, սակայն, քանի որ հայտնի է նաև Բարբարա իգական անձնանունը, ուստի առաջնությունը տալիս ենք անձնանուն→ազգանուն կաղապարին:

Հայտնի է որ հունական Βασσιλέωϛ և Λεων անձնանունները մեկանում փոխ են առնվել, դառնալով մեր անունարանի տարածված միավորներ, ընդ որում՝ նրանց հնչյունափոխված-հարմարեցված տարբերակները՝ Բարսեղ և Ղևոնդ: Վասիլ-Վասիլյան, Լևոն-Լևոնյան ձևերը, ան-

կասկած, բյուզանդական շրջանի իրողություններ են, թեկուզ միայն այդ անձնանուններում լ-ի առկայության պատճառով: Ի վերջո, այս շրջանի, գուցե ոչ անմիջական ազդեցության, սակայն արձագանքներից պետք է համարել նաև Պարոնյան, Վարդ-Պատրիկյան, Պարոն-Վարդյան և Վարդ-պարոնյան ազգանունների առկայությունը հայկական ազգանունարանում:

Նոր շրջանը ազգանվանակերտ անձնանուն հիմքերի առումով առանձին հետաքրքրի վիճակն չի ներկայացնում: Վկայված են մի քանի անձնանուններ Արևելյան Հայաստանում, իբրև անցյալ դարի փոխառություններ՝ Ալբերտ-Ալբերտյան, Կարմեն-Կարմենյան, Սպարտակ-Սպարտակյան, Կոպերնիկ-Կոպերնիկյան, Անժել-Անժելյան, Սուսան-Սուսանյան, Գարիբալդի-Գարիբալդյան և Սալվադոր-Սալվադորյան: Վերջինիս վերաբերյալ վկայությունը գտնում ենք XVIII դ. կիվոռնոյի հայ ընտանիքների շարքում՝ Սալվաթորյան⁸²:

Վերջապես, նոր ժամանակների իրողություններ են նաև հայ-ռուսական առնչությունների հետ կապված ազգանվանակերտ անձնանուն հիմքերը՝ Բոգդան-Բոգդանյան, Եզոր-Եզորյան, Իվան-Իվանյան, Մոսկով-Մոսկովյան, Կնյազ-Կնյազյան, Պասկևիչ-Պասկևիչյան, Վաովառ(ա)-Վաովառյան: Ելնելով այն հանգամանքից, որ ռուսական անունաբանում КНЯЗЬ նոմենը վկայված չէ, գտնում ենք, որ Կնյազյան ազգանվան հիմքը կամ գուցե և ինքը ազգանունը հայերեն Իշխան անձնանվան կամ Իշխանյան ազգանվան պատճենումն է ռուսերեն: Գտնում ենք, նաև որ Բոգդանյանը Աստվածատուր-Բոգդան կամ Աստվածատրյան-Բոգդանյան անցումների արգասիք է: Ապացուցելու համար նման հնարավորությունը, բազմաթիվ փաստերից բերենք միայն մեկը՝ Тапривераи-Бои дан-Аствацатур Салгенов⁸³:

Մոսկովյան ազգանվան հիմքը իբրև անձնանուն կրեում է արդեն XVIII դ. և նույնիսկ Արևմտահայաստանում: Մեր կարծիքով այս դեպքում XVII—XVIII դդ. այնքան բնորոշ հայերի ռուսական կողմնորոշման դրսևորումներից մեկն է: Եվ քանի որ Ռուսաստանը կրթեմն կոչվում էր նաև Մոսկովիա, ուստի այս անձնանվան ազգանվանակերտ հիմք դառնալը պատահական չէ:

Ինչ վերաբերում է Պասկևիչ-Պասկևիչյան ձևին, ապա այս դեպքում գործել է հայերին հատուկ այն միտումը, կրթ պետական խոշոր գործիչների անձնանունները և երբեմն նաև ազգանունները, նայած թե ինչպես

⁸² Ուղուրլյան, Պատմութիւն հայոց գաղթականութեան կիվոռնո, Վենետիկ, 1891:

* Армяно русские отношения в XVII в Сб документов, Ереван, 1953

է հայտնի ժողովրդի լայն զանգվածներին տվյալ անհատը, դառնում են անձնանուն սերելու ուղիներից մեկը, որի լայն գործունեության արդյունքը դառնում ենք մեր դարի 20—30-ական թվականներին: Սովորաբար օտար ծագում ունեցող նման կազմությունները երկար կյանք չեն ունենում, ավելի շատ դիպվածային են: Պատկերիչյան ազգանվան գոյությունը հնարավոր է դարձել այն պարզ պատճառով, որ նրա անձնանուն հիմքը գործառում էր ազգանունների զանգվածային ձևավորման շրջանում:

Արդ, անվանաստեղծման տասնյակ դարերի հարուստ պատմությունը, փոխառյալ յուրացված անձնանունների նշանակալից շերտը մի կողմից և հայկական ազգանուններում օտար հիմքերի և հատկապես իրանիզմների, արաբիզմների և թուրքիզմների նման բազմություն: Կարծեք թե, հակասութուն կա: Հարցի լուծումը պետք է փնտրել հայկական ազգանունների զանգվածային ձևավորման ժամանակի մեջ: Այդ ժամանակաշրջանը XVIIII դ. վերջերից մինչև XIX դ. կեսեր, համընկնում է պարսկական և թուրքական ազդեցության ամենարդգծված շրջանների հետ, իսկ ազգանվանակերտման այդ շրջանում, ինչպես ցույց ենք տվել I գլխում, առանձնապես խստապահանջ չէին, մանավանդ որ ազգանունները բնականաբար այնքան մեծ հասարակական արժեք չունեին և կազմվում էին հաճախ պատահականորեն:

Նոր շրջանը, ինչպես ցույց տրվեց, նկատելիորեն զիջում է նախորդներին անձնանուն-հիմքերի ձևավորման առումով, սակայն խիստ աչքի է ընկնում գերդաստանի անուն-տոհմանուն-ազգանուն գործընթացով:

3. ԱԶԳԱՆՎԱՆԱԿԵՐՏ ՍՆՁՆԱՆՈՒՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Այստեղ քննվելու են մեկից ավելի բաղադրիչներով անձնանուն հիմքերը⁸⁴:

Գրաբանական մակարդակում բաղադրյալ հիմքերով անձնանունները կարող են հանդես գալ երկու կերպ՝ գծիկով և միաձուլյալ: Երբեմն հանդիպում է գրության այս երկու ձևերի շփոթ՝ Կարա-Վարդանյան և Կարավարդանյան, Կարա-Սաֆարյան և Կարասաֆարյան և այլն: Այս դեպքում «շփոթ» իմաստը մի փոքր պայմանական է, քանի որ բերվող

⁸⁴ Ծագումնաբանական դասակարգմանը նվիրված բաժնում որոշ շափով անդրադարձել ենք բաղադրյալ հիմքերին: Մասնավորապես խոսվել է բնիկ ենթաշերտի-իկով և երկարմաս, ինչպես նաև իրանական ենթաշերտի -գյուլ ձևերի մասին:

երկրորդ օրինակներում գործ ունենք ոչ միայն զուտ գրաբանական երևույթի հետ, երբ գծիկը դուրս է գալիս, իսկ բաղադրիչները ձուլվել են գրվում, այլև՝ հնչարտաբերական, քանի որ ազգանվան երկու շեշտերից մեկը վերանում է: Այլ կերպ՝ առկա է հայերենի բառաբարդման համար սովորական երևույթը, երբ կցվող բաղադրիչներից միայն վերջինն է պահպանում շեշտը:

Կծիկով բաղադրյալ հիմքերի բաղադրիչներից մեկը, սովորաբար երկրորդը լինում է որևէ անձնանուն, որին նախորդող բաղադրիչը անջատվում է նրանից դժիկով: Վերջինիս դերը կարող են կատարել -տեր, -մելիք, -խոջա, -կարա, -հաջի, -միրզա, -բեկ, -պարոն, -Ուր⁸⁵, որոնք ինչպես հայտնի է, հասարակության հետ առնչության այլևայլ հանգամանքների բերումով ուղեկցում են անձնանվանը, ցույց տալով նաև նրա սոցիալական վիճակը, դիրքը հասարակության մեջ և այլն:

Պետք է նշել, որ բերվածներից բեկ, պարոն և նոմենները միայն մեկ անգամ են հանդես գալիս այս կաղապարով սերված ազգանուններում՝ Բեկ-Հովսեփյան, Խոջա-էյնաթյան և Պարոն-Վարդյան: Սրանցից բեկ-ը բավականին լայն կիրառություն ունի երկբաղադրիչ ձուլվ կառույցներում, խոջան՝ նույնպես, մինչդեռ պարոն բաղադրիչը հանդես է գալիս միայն մեկ անգամ հակառակ շարադասությամբ՝ Վարդպարոն-Վարդպարոնյան: Այս ազգանվան մյուս բաղադրիչը ևս միայն մեկ անգամ է հանդես գալիս մի այլ կաղապարյան մեջ՝ Վարդ-Պատրիկյան:

Հաջի մականունը, ինչպես հայտնի է, տրվում էր խիստ որոշակի պայմաններում, այն է՝ Երուսաղեմ ուխտի գնացած հավատացյալներին: Առանց վարանելու կարող ենք այդ մականունը դասել պատվանունների շարքը և նշել, որ այս տիպի ազգանունները կազմված են նոմեն (պատվանուն) + անձնանուն կաղապարով հիմքից՝ Հաջի-Հակոբյան, Հաջի-Հովհաննիսյան, Հաջի-Մինասյան: Նույն կաղապարով են բնորոշվում նաև Միրզա-Ավագյան, Միրզա-Պետրոսյան և Միրզա-Պողոսյան ազգանունները: Ինչպես հայտնի է, միրզա բաղադրիչի շարադասությունը մյուս բաղադրիչների նկատմամբ կամայական չի եղել՝ անձնանվանը նախորդող դիրքում այն արտահայտել է գիտուն, գրագետ նաև գրագիր իմաստները, իսկ անձնանվանը հաջորդող դիրքում՝ իշխանածին, թագավորազն:

⁸⁵ Ավելի ուշ կտեսնենք, որ նշվածները հանդես են գալիս իրրև ինքնուրույն ազգանվանակերտ հիմքեր:

Հայկական ազգանուններում հանդիպող միջոցա բաղադրիչը վերջին իմաստով միայն ձույլ գրություն ունի և, բնականաբար, այդպիսիք միայն փոխառություններ են, որոնցից մեծ մասի մեջ այդ բաղադրիչը կորցրել է իր նախնական իմաստը:

Եթե նախորդները կարող էինք առանց վարանելու դասել պատվանունների շարքը, ապա կառա-բաղադրիչը, նույնպես առանց երկմտելու կոչում ենք մականուն, քանի որ այն մականուն + անձնանուն կաղապարի ռասմաններում իմաստային բազմազանություն չունի՝ արևահայտել է այդ անձնանունը կրողի արտաքին խիստ որոշակի հատկանիշ: Կուզեինք նշել հետևյալ առանձնահատկությունը. այս կաղապարով ազգանուններում անձնանուն բաղադրիչը բավականին կանոնական է՝ Կարա-Գևորգյան, Կարա-Հարությունյան, Կարա-Մինասյան, Կարա-Պողոսյան, Կարա-Սիմոնյան, Կարա-Վարդանյան: Ավելացնենք նաև մյուս փաստերը՝ Կարա-Սաֆարյան, Կարա-Սեֆերյան, Կարա-Դեմուրյան և այլն:

Գծիկով բաղադրյալ հիմքերի մեջ առանձնանում են Տեր- և Մելիք-նոյններով կաղապարները:

Տեր + անձնանուն կաղապարով կազմությունները անցնում են մի քանի տասնյակից: Չենք կասկածում, որ դրանք ավելի շատ կարող էին լինել: Պարզապես հայտնի է, որ 20—30-ական թվականներին հաճախ այդպիսի ազգանունների Տեր բաղադրիչից հրաժարվել են: Այնուամենայնիվ, պահպանվածները բավական են գաղափար կազմելու համար ազգանունների այդ ինքնատիպ շերտի մասին:

Ամենից առաջ նշենք, որ այս դեպքում անձնանուն բաղադրիչը, չընչին բացառությամբ, խիստ կանոնական է, որ կապվում է գլխավորապես ձեռնադրման հետ, երբ, ինչպես հայտնի է, ոչ կանոնական անձնանունը փոխարինվում էր կանոնականով: Մեզանում վերջինիս դերը կարող էին կատարել ինչպես բնիկ, նույնպես և փոխառյալ-յուրացված ենթաշերտի անձնանունները: Վերջիններիս մեջ առավելապես աչքի են ընկնում հրեական և հունական, ինչպես նաև քրիստոնեության ընդունումից հետո հայկական իրականության մեջ ստեղծված կամ պատճենված անձնանունները: Բերենք այդ օրինակները՝ Տեր-Աբրահամյան, Տեր-Ազարյան, Տեր-Ալեքսանդրյան, Տեր-Անանյան, Տեր-Անդրեասյան, Տեր-Անտոնյան, Տեր-Առաքելյան, Տեր-Աստվածատրյան, Տեր-Ավագյան, Տեր-Ավետիսյան, Տեր-Բաղդասարյան, Տեր-Բարսեղյան, Տեր-Գաբրիելյան, Տեր-Գալստյան, Տեր-Գրիգորյան, Տեր-Գևորգյան, Տեր-Դավթյան, Տեր-Ծղիշյան, Տեր-Ջաբարյան, Տեր-Թադևոսյան, Տեր-Իսահակյան, Տեր-Իսայան, Տեր-Իսրայել-

յան, Տեր-Խաչատրյան, Տեր-Կարապետյան, Տեր-Հակոբյան, Տեր-Հայրապետյան, Տեր-Հարությունյան, Տեր-Հովակիմյան, Տեր-Հովհաննիսյան, Տեր-Հովսեփյան, Տեր-Ղազարյան, Տեր-Ղուկասյան, Տեր-Ղևոնդյան, Տեր-Մամբրեյան, Տեր-Մարգարյան, Տեր-Մարկոսյան, Տեր-Մելիքսեթյան, Տեր-Մինասյան, Տեր-Միսակյան, Տեր-Միքայելյան, Տեր-Մխիթարյան, Տեր-Մկրտչյան, Տեր-Մովսիսյան, Տեր-Ներսիսյան, Տեր-Նիկողոսյան, Տեր-Պապյան, Տեր-Պետրոսյան, Տեր-Պողոսյան, Տեր-Սահակյան, Տեր-Սարգսյան, Տեր-Սիմոնյան, Տեր-Ստեփանյան, Տեր-Վահրամյան, Տեր-Վարդանյան, Տեր-Տաճատյան, Տեր-Փանոսյան, Տեր ֆերոբյան, և այլն: Ընդգծելով այս կաղապարով ազգանվանակերտ հիմքերի կանոնիկությունն և անխաթարությունը, որ հաստատվում է նաև բերված փաստերով, ուզում ենք նշել նաև որոշ շեղումներ, երբ անձնանունները հանդես են գալիս անձնանվան ժողովրդախոսակցական տարբերակի ձևով՝ Տեր-Ալեքսանյան, Տեր-Հովհանյան, Տեր-Օհանյան և այլն:

Մելիք + անձնանուն կաղապարով կազմությունները ևս նկատելի թիվ են կազմում և ունեն ժամանակային և տարածքային տեղայնացում: Ինչպես հայտնի է մեր ժողովրդի պատմությունից, նման անձնանուններ կրում էին Ղարաբաղում XVI—XIX դարերում տոհմական կալվածատեր իշխանները: Եվ ինչպես պետք էր սպասել, այդ շրջանում աշխարհիկ իշխանները Նախորդների նման խստապահանջ չեն եղել անձնանվան ընտրության հարցում. այդ կաղապարով կազմություններում հանդիպում են ինչպես կանոնական անձնանուններ՝ Մելիք-Ավետիսյան, Մելիք-Աղամյան, Մելիք-Սահակյան, Մելիք-Հովսեփյան, Մելիք-Հակոբյան, Մելիք-Հայկազյան, Մելիք-Իսրայելյան, Մելիք-Թանգյան, Մելիք-Սարգսյան, Մելիք-Ստեփանյան, Մելիք-Մինասյան, Մելիք-Վարդանյան, Մելիք-Վրթանեսյան, Մելիք-Գրիգորյան, Մելիք-Ավագյան, նույնպես և անձնանունների տարբերակներով կազմվածներ՝ Մելիք-Օհանյան, Մելիք-Մուսյան, Մելիք-Օհանջանյան, և այլն:

Այստեղ ավելի նկատելի են ուշ շրջանի հատկապես իրանական փոխառությունները՝ Մելիք-Բարխուդարյան, Մելիք-Բեգլարյան, Մելիք-Ալավերդյան, Մելիք-Աղամիրյան, Մելիք-Շահնազարյան, Մելիք-Նուբարյան, Մելիք-Հախվերդյան, Մելիք-Հախնազարյան, Մելիք-Աղաջանյան, Մելիք-Փաշայան, Մելիք-Փարսաղանյան, Մելիք-Քարամյան, Մելիք-Բեկյան, Մելիք-Այվազյան, Մելիք-Բախշյան, Մելիք-Աղամալյան, Մելիք-Նզանյան:

Գծիկով երկբաղադրիչ հիմքերով ազգանունների շարքում առանձնանում է մի խումբ, որ կարելի է բնութագրել իբրև դիպվածային, քանի որ օրինաչափ չեն իրենց կազմությամբ և, որ ամենակարևորն է, տա-

բաժված չեն: Այսպիսի ազգանուններ լավագույն դեպքում կրել են մեկ ընտանիքի սահմաններում: Ավելին, այդ ազգանունների պատմությունից հայտնի է, որ նրանց մի մասը նախապես ձևավորվել է իբրև կեղծանուն, իսկ ավելի ուշ բարձրացել է ազգանվան աստիճանի: Նշված խմբի ազգանունների մի մասը ձևավորվել է անձնանուն-ազգանուն կաղապարով՝ Վահան-Սարյան, Արաչսման-Մանուկյան, Վարդ-Պատրիկյան, Գոհար-Խարմանդարյան⁸⁶, Ադիբեկ-Մելիքյան, Ամո-Խարազյան, Բունի-Բունիաթյան: Վերջին երկուսը կեղծանուններ են, սակայն մեր օրերում նըշված ձևով հանդես են գալիս իբրև ազգանուն, ըստ որում Ամո-Խարազյան ազգանունը երբեմն գրվում է նաև առանց գծիկի՝ Ամոխարազյան:

Գեր-Սիմոնյան, Գեյ-Հակոբյան, Գյուլ-Հակոբյան և Տուր-Սարգըսյան (նաև ձույլ տարբերակը՝ Թուրսարգսյան) ազգանունների մասին կարելի է լավագույն դեպքում ենթադրություններ անել: Մեր կարծիքով Գեր, -Գեյ և -Թուր բաղադրիչները մականվանական ծագում ունեն, իսկ Գյուլ-ը՝ անձնանվանական, մանավանդ էթն ի նկատի ունենանք Գերավեստյան ազգանվան առկայությունը:

Կրկնակ ազգանունները, որ գրեթե հատուկ չեն հայերենին, վկայված են հետևյալ դեպքերում՝ Տայան-Ռաֆայելյան, Փիթոյան-Յաղալյան, Դարբինյան-Մելիքյան, Յաբլուկյան-Խնձորյան. վերջին դեպքում առաջնայինը Յաբլուկյան ձևն է⁸⁷: Այն կրում էին նոր-Նախիջևանում խնձորի առևտրով զբաղվող մի գերդաստանի անդամները: Ավելի ուշ, -յան ածանցը բավարար չհամարելով ազգային պատկանելությունը ընդգծելու համար, այդ տոհմի հետնորդների մի մասը սկսել է կրել այդ ազգանվան հիմքի պարզապես թարգմանված համարժեքը՝ Խնձորյան:

Բ. Ձույլ բաղադրյալ հիմքեր: Մեկից ավելի բաղադրիչներ պարունակող ազգանվանակերտ անձնանուն հիմքերը բավականին բազմազան են, որոնց մեջ աչքի են ընկնում -ջան բաղադրիչով կազմությունները: Այս բառի մասին Մալխասյանցը գրում է.՝ «Իբրև փաղաքշական խօսք դրվում գոյականին կից (առաջից, յետևից կամ երկու կողմից). սիրելի, անձկալի... դարձել են յատուկ անուններ և կազմում են ազգանուններ»⁸⁸:

⁸⁶ Այս ազգանունը հանդիպել է ուսական մամուլում Гохарь Хармандарян ձևով (տե՛ս «Здоровье» ամսագիրը, 1979, № 6)

⁸⁷ Տեղեկությունները քաղված են ազգանունը կրողներից մեկի հետ ունեցած մեր գրույցից:

⁸⁸ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 135:

«Ժամանակակից հայերենի բացատրական բառարանը» այս բառի համար գրում է. «Սիրելի՛ դրվում է բառին կից իբր՝ փաղաքշական բառ»⁸⁹, Աղայանը գրում է. «Գործածվում է որպես փաղաքշական բառ, որ դրվում է անվան վրա՝ սիրելիս, հարազատս նշ.»⁹⁰: Հայկազյանը և Արմատականը այս բառը շունեն, մինչդեռ Աճառյանը ՀԱՆԲ-ում այն օրինաչափորեն կոչում է «հոգի, հոգյակ» փաղաքշական կամ գզվական և այսպիսի կազմությունները առանձնացնում է իբրև ինքնուրույն բառահոգվածներ: Մենք գտնում ենք, որ այս դեպքում գործ ունենք անվանակազմական ձևույթի հետ, որը հատկապես ժողովրդախոսակցական լեզվում հաճախ հոմանիշ է եղել -իև մասնիկին: Ավելին, երբեմն անջատվելով բաղադրյալ կազմություններից, ինքնուրույնաբար գործածվել է իբրև առանձին անձնանուն՝ Ջան, Ջանի: Այս բաղադրիչի համար սովորականը ածանցախորդ դիրքն է, երբեմն հանդես է գալիս նաև բառասկզբում, որը արտահայտվում է հետևյալ ազգանուններում՝ Ջանիբեկ-Ջանիբեկյան, Ջանփոլադ-Ջանփոլադյան և այլն:

Իր համար սովորական դիրքում այն կարող է միացած լինել անձնանվան անփոփոխ կամ կրճատված տարբերակներին՝ Մարիամջան-Մարիամջանյան, Հակոբջան-Հակոբջանյան, Փիրջան-Փիրջանյան, Թովմաջան-Թովմաջանյան, Նուրիջան-Նուրիջանյան, Սարգիսջան-Սարգիսջանյան, Ղայաջան-Ղայաջանյան Ղարիբջան-Ղարիբջանյան, Ղուլիջան-Ղուլիջանյան, Կակոջան-Կակոջանյան, Իսաջան-Իսաջանյան, Գեոջան-Գեոջանյան, Գոգոջան-Գոգոջանյան, Գյուլամջան-Գյուլամջանյան, Ծսաջան-Ծսաջանյան, Օհանջան-Օհանջանյան Ախպերջան-Ախպերջանյան, Ախիջան-Ախիջանյան⁹¹, Ունիջան-Ունիջանյան, Փիլիջան-Փիլիջանյան⁹², Հախիջան-Հախիջանյան, Այջան-Այջանյան, Իլճան-Իլճանյան, Աղաջան-Աղաջանյան, Բարեջան-Բարեջանյան, Բերուջան-Բերուջանյան, Մախանջան-Մախանջանյան⁹³, Սերջան-Սերջանյան, Արիջան-Արիջանյան և այլն: Առանձնանում են ազգակցական կապի իմաստ արտահայտող բառ + ջան կաղապարով կազմությունները՝ Նանիջան-Նանիջանյան, Ամուջան-Ամուջանյան, Մամաջան-Մամաջանյան, Աբաջան-Աբաջանյան, Ապուջան-Ապուջանյան, Ափուջան-Ափուջանյան:

⁸⁹ Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, 1980, էջ 226:

⁹⁰ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 1237:

⁹¹ Չի բացավում Հախիջանյան-Ախիջանյան այլալեզու անցումը ևս:

⁹² Հնարավոր է Փիրիջանյան-Փիլիջանյան բաղադրկալին անցում:

⁹³ Ավելի հավանական է թվում Մեխանջանյան-Մախանջանյան բաղադրկալին ան-

—ջան բաղադրիչը որոշ դեպքերում ավելանում է նաև զանազան պատվանունների՝ աղա + ջան-Աղաջանյան, Աղամջան-Աղամջանյան, ա-միր + ջան-Ամիրջանյան, բեկ + ջան-Բեկջան-Բեկջանյան, Բեղջան-Բեղ-ջանյան, խոջա + ջան-Խոջաջանյան, մելիք + ջան-Մելիքջանյան, միրզա + ջան-Միրզաջանյան և Միզեջանյան⁹⁴, վելի + ջան-Վելիջանյան:

Նկատի ունենալով որ ջան-ը հաճախ հանդես է գալիս իբրև ինքնուրույն անձնանուն, ինչպես նաև, որ վերը նշված առաջին բաղադրիչները ևս վկայված են իբրև ինքնուրույն անձնանուններ (համտ. ՀԱՆԲ համապատասխան հատվածները), գտնում ենք, որ վերջին բոլոր օրինակները կարող են ունենալ երկակի մեկնաբանություն՝ անձնանուն + ջան և պատվանուն + ջան:

Բեկ բաղադրիչով անձնանուն ազգանվանակերտ հիմքերը բավակաճին ստվար խումբ են կազմում, որոնցից, սակայն, երկու-երեք դեպք ունենք, երբ այն հանդես է գալիս անձնանունանախորդ դիրքում՝ Բեկ-Զուրաբ → Բեկզուրաբյան Բեկ-Նազար → Բեկնազարյան, Բեկ-զադա → Բեկզադյան-Բեղզադյան: Մինչդեռ բեկ-ը յիմքավերջ դիրքում բավականին սովորական է: Ըստ որում, առանձին բաղմազանություն չկա. դեպքերի մեծ մասը կապվում է անձնանուն + բեկ կաղապարի հետ, բացառությամբ էլշիրեկ-էլշիրեկյան ձևի, ուր առկա է մականուն + բեկ → անձնանուն → ազգանուն ընթացքը: Իրենց երկվության մեջ հետաքրքրություն են ներկայացնում նաև Ամիրբեկ-Ամիրբեկյան, Միրզաբեկ-Միրզաբեկյան, Նոջաբեկ-Նոջաբեկյան, Ղարաբեկ-Ղարաբեկյան, Սարիբեկ-Սարիբեկյան, Յախշիրեկ-Յախշիրեկյան, Հաջիրեկ-Հաջիրեկյան և Աթաբեկ-Աթաբեկյան օրինակները, որոնք կարող են մեկնաբանվել անձնանուն + բեկ → ազգանուն և պատվանուն + բեկ → ազգանուն կաղապարներով:

Մյուս դեպքերը որոշակիորեն մեկնաբանվում են անձնանուն + բեկ → ազգանուն կաղապարով: Ըստ որում, իբրև անձնանուն բաղադրիչ կարող են հանդես գալ բնիկ, փոխառյալ-յուրացված և փոխառյալ անձնանուններ, ինչպես նաև անձնանվան տարբերակներ՝ կրճատված, բարբառային, կոշական և այլն: Այստեղ պետք է նշել, որ բեկ-ով ազգանվանակերտ որոշ հիմքեր ընդհանրապես վկայված չեն և նրանք անձնանուն հիմքերի շարքը դասելու գլխավոր կովաններից մեկը բեկ բաղադրիչի առկայությունն է՝ Միլբեկյան, Իլբեկյան⁹⁵, Թուլբեկյան, Կիսիբեկյան,

⁹⁴ Հավանական ենք համարում Միրզաջանյան-Միզեջանյան անցումը:

⁹⁵ Մեզ հանդիպել է նաև մի վկայություն. «Վրթանես որդի Իլբեկի»՝

Լ. Արուհամյան, «Կալվածագրեր», Երևան, 1941:

Հունդիբեկյան, Բերկիբեկյան, Գեղուբեկյան, Ալարբեկյան և այլն: Ալարբեկյան, Օրդուբեկյան և Շարանբեկյան ազգանունների հիմքերը, չնայած վկայված չեն, սակայն ունենք Շարանդուխտ, Ալամխաթուն, Ալամաթիկին, Ալամշահ և Օրդուշահ, Օրդուխան, Օրդումելիք և այլ ձևեր: Այդ նույն կարգի բազադրիչների և Հազար անձնանվան զուգորդմամբ անձնանունները՝ Հազարապետ, Հազարջան, Հազարադեղ, Հազարամայր, Հազարշահ և այլն մեզ թույլ են տալիս Հազարաբեկյան ազգանվան հիմքը մեկնաբանել անձնանուն + պատվանուն կաղապարով և ոչ թե Աճառչանի նման՝ «հազարի վրա իշխող»⁹⁶, որ, մեր կարծիքով, չի համոզում:

Խոշրեկյան, Սաֆրազբեկյան, Ալիբեկյան, Ավդալբեկյան, Սրմաբեկյան, Արազբեկյան, Զարիբեկյան, Խերբեկյան, Նուրիբեկյան, Յարիբեկյան, Այբեկյան, Էլբեկյան, Շամիրբեկյան ազգանունների անձնանուն հիմքերի բեկ-ին նախորդող բազադրիչները նույնպես վկայված են կամ առանձին և կամ այլ զուգորդություններում՝ Յարիջան, Արազխան, Նուրիջան, Նուրիխան, Շերխան, Զարիջան և այլն:

Ի տարբերություն նախորդների, բեկ-ով ազգանվանակերտ հիմքերում հանդիպում են այնպիսի ձևեր, որոնք որոշ վերապահությամբ կարելի է համարել դիպվածային, քանի որ բացառիկ, քիչ հանդիպող ազգանուններ են և, ըստ երևույթին, այն ստացել է մարդկանց շատ սահմանափակ շրջան՝ տվյալ անձնանունը կրողի հետ անմիջապես առնչվող անձինք՝ Մինասբեկյան, Գուրգենբեկյան, Մեհրաբեկյան, Սարգիսբեկյան, Օհանբեկյան, Գասպարբեկյան, Խիթարբեկյան, Նսայբեկյան, Զաքարբեկյան, Պողոսբեկյան, Զալալբեկյան, Ռոստոմբեկյան և այլն: Բերվող օրինակներում բեկի հետ բերվող անձնանունները ինքնուրույն շատ մեծ հաճախականություն ունեն և վերը բերվող զուգորդությամբ հանդես գալը նրանց մասնավոր, խիստ սահմանափակ դրսևորումներից մեկն է:

Նախորդներին և հատկապես վերջին խմբին հակադրվում են Ազիզբեկյան, Ուլուբեկյան, Մուսաբեկյան, Իսաբեկյան, Զանիբեկյան, Նազարբեկյան, Դովլաթբեկյան, Շահբեկյան, Ասլիբեկյան, Բասաբեկյան, Քեչեբեկյան և այլ ազգանունները առաջին հերթին այն բանով, որ սորանց հիմքերը ամբողջությամբ վկայված են ՀԱՆԲ-ում իբրև ինքնուրույն անձնանուններ: Այս խմբի ազգանվանակերտ հիմքերի առանձնահատ-

⁹⁶ Հր. Աճառչան, ՀԱՆԲ, հ. 9, էջ 9:

կություններից զլխավորն այն է, որ նրանք առանց բացառության փոխառյալ են:

Հայկական ազգանուններում խառն բաղադրիչով հիմքերի մեծ մասը կազմված է անձնանուն + խան կաղապարով:

Այս բաղադրիչը աղնվականական ծագում ցույց տվող տիտղոսից լատ, դրվել է նաև անձնանուններից հետո: Երկարատև գործածության հետևանքով, արդեն փոխատու լեզուներում դրանք գործածվում էին անձնանվան հետ միացած և հաճախ հանդես էին գալիս իբրև ինքնուրույն անձնանուններ: Այս խմբի ազգանվանակերտ հիմքերի առանձնահատկություններից զլխավորն այն է, որ առանց բացառության փոխառյալ են: Մեր լեզուն վերցրել է պատրաստի կաղապարը, որի բաղադրիչները և հատկապես խան-ը, այդպես էլ շուրացվեց, որի համար իբրև ապացույց բերում ենք բնիկ և փոխառյալ-շուրացված անձնանուններով և խան-ով կազմված անձնանուն հիմքերի բացակայությունը մեղանում:

Առկա են խան-ով այնպիսի ազգանուններ, որոնց անձնանուն հիմքերը արդեն ինքնուրույն անձնանուններ են՝ Ամիրխանյան, Աղախանյան, Կասխանյան, Ալիխանյան, Առլիխանյան, Աջաբխանյան, Աղիլխանյան, Ջիգարխանյան, Մուրադխանյան, Ուլուխանյան, Իգիթխանյան, Աբասխանյան, Բաբախանյան, Ղազարխանյան և այլն:

Ստորև բերվող դեպքերում հիմքերը իբրև ինքնուրույն անձնանուն վկայված չեն, սակայն խան-ին նախորդող մասով հանդես են գալիս մի այլ բաղադրիչի (օր. բեկ, մելիք, շահ, խաթուն, փաշա) հետ՝ Աղիլխանյան, Ալիխանյան, Մալախանյան, Միրխանյան, Դոլղուխանյան, Վելիխանյան, Մեյթիխանյան, Աբասխանյան, Օրդուխանյան, Արաբխանյան, Մամեդխանյան, Մամախանյան, Դոլուխանյան, Էդիլխանյան:

Եվ վերջապես Մուսախանյան, Յալախանյան, Աբուտխանյան, Յուխանյան ազգանունների հիմքերը անձնանվանականների շարքն են դասվում իրենց կազմում - խան բաղադրիչի շնորհիվ, քանի որ վերջինիս նախորդող մասը վկայված չէ:

Լևխանյան, Շամիրխանյան, Սևփխանյան օրինակներում հիմքերը նույնպես վկայված չեն, սակայն դանաղանվում են նախորդներից, քանի որ կազմված են անձնանվան հնչյունափոխված կամ ժողովրդախոսակցական տարբերակների և խան-ի զուգորդությամբ՝ Ստեփան-Սևփխանյան, Լևոն-Լևխանյան, Շամիլ-Շամիրխանյան:

Նախորդ պատվանունների նմանողությամբ աղա-ն ևս կարող է հանդես գալ անձնանունանախորդ և հաջորդ դիրքում: Առաջին տարբերա-

կը՝ Աղա-Թանձնանուն կաղապարով օրինակները գերակշռութիւն ունենալու և, արդեն նկատված օրինաչափությամբ, պատրաստի վիճակում մտել են մեր անունարանի մեջ, դարձել ազգանվանակերտ հիմք: Պատահական չէ, որ այս կաղապարով անձնանունները, մեծ մասամբ, Աճառյանի մոտ վկայված են: Այս դեպքում ևս Աղա-Թանձնանուն կաղապարի լահամաններում և ոչ մի բնիկ և փոխառյալ-յուրացված անձնանվան օրինակ չենք գտնում՝ Աղաբաբյան, Աղաբեկյան, Աղագուլյան, Աղազադյան, Աղաթոնյան, Աղալարյան, Աղախանյան, Աղամելիքյան, Աղամիրյան⁹⁷, Աղամիրգյան, Աղամջանյան, Աղանուրյան, Աղաջանյան⁹⁸, Աղասարյան, Աղաւյան, Աղավելյան, Աղափիրյան: Ավելին, աղա-ի հետ դրված բաղադրիչները անձնանունների շարքը կարելի է դասել նկատելի վերապահությամբ՝ նրանց մեծ մասը նույնպես պատվանուն է: Մյուս դեպքում աղա-ն դիպվածային կիրառութիւն ունի՝ Դավիթաղայան, Թումաղայան, Յարմաղայան, Սանաղայան: Նկատելի է, որ այս կազմութիւնները ոչ թե պատրաստի են, այլ ստեղծված են մեզանում, քանի որ, ինչպես հայտնի է աղա պատվանունը մեզանում միշտ վերջադաս է եղել:

Այլալեզու պատվանուններից մեր ազգանվանակերտ հիմքերում հանդիպում են նաև ամիր, փիր/ի/, խոջա, միրզա, հաջի, բաբ/ա/ւ նշվածներից մի մաւրի վերաբերյալ արդեն խոսվել է հատկապես գծիկով բաղադրյալ հիմքերին նվիրված բաժնում:

Ամիր պատվանունը մեծ մասամբ նախադաս է և զուգորդվում է այլ կարգի պատվանունների հետ՝ Ամիրաղայան, Ամիրբեկյան, Ամիրզադայան, Ամիրխանյան, Ամիրշահյան, Ամիրջանյան, իսկ մյուս դեպքերում զուգորդվում է ինչպես անձնանվան, նույնպես և պատվանունների հետ՝ էլամիրյան, Խանդամիրյան⁹⁹, Աղամիրյան և այլն: Բերվող բոլոր օրինակները և՛ իրենց բաղադրիչներով, և՛ ամբողջությամբ վերցված փոխառութիւններ են, արդեն XIX դ. երկրորդ կեսից սկսած աստիճանաբար դուրս եկան մեր անունարանից և, եթե հանդիպում էին, ապա, մեծ մասամբ, մեր ժողովրդի այն սովորության հետևանքով, ըստ որի ազգանուններից անձնանուններ են ստեղծում: Նման օրինակների, բավականին հազվադեպ, ականատես ենք լինում նաև մեր օրերում: Այդպիսիք տարբերելը բավականին հեշտ է՝ անվանման բանաձևերում

⁹⁷ Հնարավոր է Աղամիրզայան-Աղամիրջան անցումը ևս:

⁹⁸ Չի բացառվում Աղամջանյան-Աղաջանյան անցումը:

⁹⁹ Կազմված է Խուանդ-Թամիր կաղապարով:

անձնանունը կամ հայրանունը կրկնում են ազգանվան հիմքը, օր.¹ Արամ Ամիրխանի Ամիրխանյան կամ Ամիրբեկ Պետրոսի Ամիրբեկյան:

Խոջա և հաջի պատվանունները ևս նախադաս են և կարող են զուգորդվել, ինչպես անձնանվան, նույնպես և մի այլ պատվանունի հետ՝ Խոջաբալյան, Ուլտխոջյան, Հաջիարթինյան, Հաջիբարյան:

Միրզա և բաբա պատվանուններով կազմված ազգանվանակերտ անձնանուն հիմքերը ցույց են տալիս, որ դրանք, մեծ մասամբ, դիպվածային կազմություններ են և մատչելի են եղել ժողովրդի լայն զանգվածներին առաջին հերթին իրենց իմաստային առանձնատկությամբ՝ Բաբաթորոսյան, Խաչիբաբյան, Ուլուրբաբյան, Բալբաբյան, Միրզաթունյան, էլիմիրյան: Այս ամենը օրինաչափ է, քանի որ բեկ, խան, խոջա և բաբա ու միրզա պատվանունների սոցիալական ծանրաբեռնվածության միջև հսկայական տարբերություն կա:

Բաղադրյալ անձնանուն հիմքերի մեջ առանձնանում են պաշտոնանունով և որևէ անձնանունով կազմված օրինակներ, ուր հատկապես աչքի է ընկնում քյոխվա-ն՝ հնչյունական և գրային տարբերակներով՝ Հակոբքեխվյան, Դավիթքյոխվյան, Դավիթքեխվյան, Բաբաքյոխվյան, Հակոբքոխյան, Վանեսքեհյան, Գյուլիքեխյան և այլն, ինչպես նաև նույն կազապարով կազմված Գզրբալյան ազգանունը:

Մեր ազգանվանակերտ անձնանուն հիմքերի մեջ առանձնանում են նաև այնպիսի բաղադրյալներ, որոնց կազմի մեջ առկա են մականվանական իմաստով բաղադրիչներ, այն է՝ գյուլ, կարա, որոնց մասին տարբեր առիթներով արդեն խոսվել է: Տարբերվում են նաև «փոքր, գողտրիկ» իմաստ արտահայտող բալա, «մեծ» իմաստ արտահայտող՝ մեծ, դոջա, դեր բաղադրիչները, ինչպես նաև «չիլ» (չեչոտ) «սարը» (դեդին), «թամամ» (կատարյալ), «թուր» (արագ) իմաստներն արտահայտող բաղադրիչները՝ Բալաայրումյան, Բալագյոզյան, Բալագյուլյան, Բալաբաջյան, Մեծդեորդյան, Գոջիբրոյան, Գերավետյան, Զիլավագյան, Զիլասլանյան, Սարպետրոսյան (նաև Մարրպետրոսյան¹⁰⁰), Սարիմելիբյան, Թամամավեյան, Թուրսարգսյան:

Ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու գյուլ-ով անձնանուն հիմքերը, մեծ մասամբ, ուշ-իրանական փոխառություններ են, սակայն հանդիպում են այդ բաղադրիչներով արդեն հայ իրականության մեջ ստեղծված կազմություններ՝ Գյուլհովհաննիսյան, Գյուլփանոսյան, Խա-

¹⁰⁰ Տե՛ս Ուլուրյան, Պատմություն հայոց գաղթականության կիժոնո, Վենետիկ, 1891:

չադյուլյան¹⁰¹: Կարա բաղադրիչով անձնանուն հիմքերի մասին խոսվել է բաղադրյալ-դժիկովներին նվիրված բաժնում: Այստեղ ներկայացնում ենք այդ բաղադրիչով ձուլ կազմությունները: Անմիջապես նշենք, որ կարա-ի հետ մեծ մասամբ զուգորդվում են արական անձնանուններ իրենց ուղիղ կամ տարբերակային ձևերով՝ Կարազևորդյան, Կարահարությունյան, Կարամանուկյան, Կարամինասյան, Կարասաֆարյան, Կարալարդանյան, Կարազեմուրյան և Կարադանյան, Կարումալյան:

Բաղադրյալների շարքն են դասվում նաև -ում ածանցով կազմությունները: Թուրքական լեզուներում -ում (մ) մասնիկը առաջին դեմքի ստացական հոդի իմաստ է արտահայտում: Այդ մասնիկի օգնությամբ ստեղծվել են նոր անձնանուններ նաև հայկական անձնանուններից՝ Հայրում-Հայրումյան, Թևում-Թևումյան, Հայրաբաբամյան: Մյուս օրինակները մեծ մասամբ, փոխառություններ են՝ Չինիմյան, Թառումյան, Իյանչումյան, Դագումյան, Օղումյան, Արումյան, Վելումյան, Բալումյան, Յավրումյան և այլն:

Մի շարք դեպքերում անձնանուն հիմքերի երկբաղադրիչ լինելու մասին կարելի է ենթադրել նրանց կազմում եղած արդեն հայտնի բաղադրիչներից որևէ մեկի առկայությամբ, սակայն հիմքը իր ամբողջությամբ միշտ չէ, որ ենթարկվում է ստուգաբանության: Այդ դեպքում կարելի է ենթադրություններ անել միայն: Ահա այդ օրինակները՝ Գրախյան—անձնանուն կրճատված (օր. Գրիգոր)+աթա, Հասանջավալյան-անձնանուն + Ջավա՞դ (հնչյունափոխված), Խուզադյան-անձնանուն (օր. Խուանդ) + զադե, էլնազարյան -էլ (ժողովուրդ) + Նազար Ջեյնալվանդյան-Ջեյնալ+վա՞նդ, Հախանումյան→անձնանուն-կրճատված + խանում, Սպորազատյան-Սպո՞ր + Ազատ, Ջաներյան- ջան + յար կամ Ջան + ևր (Շողեր, Վարսեր օրինակով), Ջանվելյան- ջան + վա՞լի և Ջահմենենդյան, որ ամենայն հավանականությամբ Շահմանանդ-Շահմանանդյան ձևերի հնչյունափոխված տարբերակն է¹⁰²:

Չնայած պարզ հիմքերին հատուկ չենք անդրադարձել, սակայն հիմքերի ծագումնաբանության մասին խոսելիս գլխավորապես քննել ենք պարզ հիմքերը:

¹⁰¹ Այս դեպքում հավանական ենք համարում նաև Խոջագյուլյան-Խաչագյուլյան անցումը, քանի որ դժվար թե խաչ և գյուլ բառերը իրենց իմաստով և իրենց լեզվական պատկանելությամբ զուգորդվեին:

¹⁰² Շահմանանդ անձնանունը վկայված է ՀԱՆԲ-ում (հ. Գ, էջ 122), իսկ Շահմանանդյանը մեր քարտարանում՝ ոչ:

Մինչև այժմ դիտարկվում էին ազգանվանակերտ անփոփոխ կամ ուղիղ անձնանուն հիմքերը, սակայն, ինչպես կհամոզվենք ավելի ուշ, հայկական ազգանունների հիմքերի շարքում ներկայացված են նաև անձնանվան տարբերակները՝ փաղաքշական, կոչական, հնչյունափոխված, ժողովրդախոսակցական, կրճատված: Մեր անձնանունսրանի ձևավորման տասնյակ դարեր տևած ընթացքը, նրա ամենակարևոր շերտերի գործառական լայն հնարավորությունները, բնիկ և փոխառյալյուրացված անձնանունների մատչելիությունը և վերջապես, սահմանափակումների բացակայությունն ու հարաբերական ազատությունը անձնանվան ընտրության հարցում հանդես եկն բազմաթիվ տարբերակների ձևավորմանը: Ընդ որում, այդ տարբերակների մեծագույն մասը պաշտոնապես չի ընդունվում, որի լավագույն ապացույցը Աճառյանի բառարանն է, ուր, ինչպես հայտնի է, իբրև դիտաբառ հանդես են գալիս գերազանցապես անձնանունների անփոփոխ ձևերը, իսկ տարբերակները, լավագույն դեպքում, նշվում են և այն էլ՝ ոչ բոլորը:

Մինչդեռ ազգանվանական հիմքերում նշված տարբերակները բավականին լավ են ներկայացված: Ազգանունների ձևավորման ընթացքի ամենանշանակալից փուլը համընկնում է XIX դարի I կեսի հետ, երբ նախորդ շրջանից ժառանգել էինք ոչ միայն նշանակալից թվով օտարաբանություններ, այլև՝ ոչ դրսևական, բարբառային ձևերի ստեղծման ու կիրառության դարավոր ավանդույթներ: Եվ այս ամենը իր արտացոլումն է դտել հայկական ազգանվանական հիմքերում:

Անձնանվան փաղափշական տարբերակները իբրև հիմք: Անձնանվան տարբերակներից ժողովրդախոսակցական, կոչական, հնչյունափոխված ձևերի մի մասը, ինչպես ասացինք, ՀԱՆԲ-ում նշվում է, սակայն փաղաքշական տարբերակները քիչ են հիշատակվում, մինչդեռ ազգանվանակերտ հիմքերի շարքում դրանք նկատելի թիվ են կաղմում:

Անվանադիտական դրականության մեջ ընդունված է անհատական զնահատանքի վերաբերյալ դրույթը: Անհատական զնահատանքը կարող է Լրեք դրսևորում ունենալ՝ խոշորացուցիչ -գարհուրեցնող, փաղաքշական-փոքրացուցիչ և արհամարհական-նվաստացուցիչ: Ընդ որում, անհատական վերաբերմունքի վերոհիշյալ դրսևորումները, մեծ մասամբ, ունեն իրենց հատուկ ածանցները: Օրինակ, ուռներենում խոշորացուցիչ-գարհուրեցնող վերաբերմունքի դրսևորման համար օգտագործվում

են —ище, —ища ածանցները՝ Иванище, Силачтища, փաղաքշահան-փոքրացուցիչի համար —енька, —очек, —очка և արհամարհան-նվաստացուցիչի համար՝ —фа, օրինակ, Луцька, Ульська¹⁰³:

Հայ իրականության մեջ անհատական դնահատանքի վերը նշված դեպքերից ընդունված է միայն փոքրացուցիչ-փաղաքշահանը՝ իրեն հատուկ ածանցներով: Արհամարհական -նվաստացուցիչ վերաբերմունքի թույլ արտահայտված դրսևորումներ կան, սակայն անձնանուն հիմքերում և այն էլ՝ փոխառյալ: Այս մասին խոսվել է թուրքական շերտին նվիրված բաժնում:

Բնիկ, փոխառյալ -յուրացված շերտերում նման իմաստներ չեն արձանագրվում: Այդ իմաստի դրսևորման համար հատուկ ածանցներ հայեցենում վկայված չեն:

Փոքրացուցիչ-փաղաքշահական տարբերակները մեր ազգանվանական հիմքերում ձևավորված են -իկ,-ուշ,-ուլ ածանցներով, սակայն, մինչև այս ածանցներով օրինակների քննությանը անցնելը, ուտում ենք առանձնացնել ազգանունների մի փոքր խումբ, որոնց հիմքերը փաղաքշահան-փոքրացուցիչ իմաստ են արտահայտում իրենց ամբողջության մեջ, անկախ ածանցի առկայությունից: Չպետք է, սակայն, անտեսել այն հնարավորությունը, որ փոքրացուցիչ-փաղաքշահական իմաստը այդ բառերի կողմից ձևոք է բերվել այդ ածանցների շնորհիվ: Ավելացնենք նաև, որ իրենց իմաստով, անձնանունների համակարգում կատարած իրենց դերով այս ազգանվանակերտ հիմքերը մոտենում են մականուններին: Ահա այդ օրինակները՝ Աշիկյան, Բուլիկյան, Պատիկյան, Բուրուշյան, Նունուշյան, Գոգուլյան, Գունդուլյան:

-իկ ածանցով ազգանվանական հիմքեր:

Փոքրացուցիչ-փաղաքշահական ածանցներից ամենաարդասավորը -իկ ածանցով կազմություններն են: Այս ածանցը սովորաբար ավելանում է անձնանվան կրճատված տարբերակին, իսկ երբեմն՝ անձնանվանը իր անխաթար վիճակում: Ի դեպ, հայտնի է, որ այս վերջին կաղապարը՝ անձնանուն + իկ, այսօր էլ արդասավորություն ունի ոչ պաշտոնական, ընտանեկան -փաղաքշահական տարբերակներ կազմելիս՝ Տիգրանիկ, Արայիկ, Գուրգենիկ, Վարդանիկ, Աշոտիկ, Գեղամիկ և այլն, որի կիրառությունը մեր օրերում որոշ ծայրահեղության է հասցված: Անձնանվան ուղիղ ձև + իկ կաղապարով կազմությունները հայկական ազգանուններում բավականին սահմանափակ թվով են ներկայացված՝

¹⁰³ Հմմտ. Ի. В. Подольская, նշվ. աշխ., էջ 70-77:

Գանիելի-Գանիելիկյան, Արևիկ-Արևիկյան, Գարուն-Գարունիկ-Գարունիկյան, Ազատ-Ազատիկ-Ազատիկյան, Պերճ-Պերճիկ-Պերճիկյան, Զան-Զանիկ-Զանիկյան¹⁰⁴, Ազարիա-Ազարիկ-Սդարիկյան, Անանիա-Անանիկ-Անանիկյան, Բահար-Բահրիկ-Բահարիկյան, Շաքար-Շաքարիկ-Շաքարիկյան: Վերջին շորս օրինակների մեջ հնչյունափոխությունը կատարվել է -իկ ածանցի ավելացումից հետո, շեշտի տեղափոխության հետևանքով:

Քննվող ածանցի օգնությամբ փաղաքշական տարբերակների կազմությունը, ինչպես արդեն ասացինք, կատարվում է անձնանվան տարբերակ +(-իկ) կաղապարով: Այդ դերով կարող են հանդես գալ.

ա) կրճատված տարբերակները՝ Ավիկյան-Ավիկ-Ավետիք (նաև Ավաք) և նրանով բաղադրված անձնանուններ, թվով 3 հատ, Ավալ, Ավան, Ավգալ, Ավդիշ, Ավդուլ, Ավետիս, Ավետում, Ավթանդիլ և այլն¹⁰⁵, Անդրիկյան-Անդրիկ-Անդրանիկ (Անդրեաս), Արիկյան-Արիկ-Արամ (և Ար հնչունակապակցովյամբ սկսվող ավելի քան յոթ տասնյակ այլ անձնանուններ), Արտիկյան-Արտիկ-Արտավազդ (նաև՝ Արտաշես, ինչպես նաև Արտ-ով սկսվող ավելի քան 100 այլ ձևեր), Բադիկյան-Բադիկ-Բադալ(Բադամ), Բադիկյան-Բադիկ-Բազե, Բախտիկյան-Բախտիկ-Բախտավոր (Բախտիար)¹⁰⁶, Բադդիկյան-Բադդիկ-Բադդասար (Բադդատ), Բավիկյան-Բավիկ-Բավական, Բարսիկյան-Բարսիկ-Բարսեղ, Բարթիկյան-Բարթիկ-Բարթուղիմեոս, Բենիկյան-Բենիկ-Բենիամին, Գաբիկյան-Գաբիկ-Գաբրիել, Դերիկյան-Դերիկ-Տեր¹⁰⁷, Դադիկյան-Դադիկ- (Դադ-ով մի քանի ձևեր)¹⁰⁸, Երիկյան-Երիկ-Երանյակ (Երամ, Երանոս), Եղիկյան-Եղիկ-Եղիազար (Եղբայր, Եղիա, Եղիշե, Եղիսաբեթ, Եղնիկ), Զաքիկյան-Զաքիկ-Զաքարիա (Զաքեոս), Թևիկյան-Թևիկ-Թևոս (Թևում), Թաթիկյան-Թաթիկ-Թադևոս, Թորիկյան-Թորիկ-Թորոս, Խնկիկյան-Խնկիկ-Խոնակ կամ Ղունկիանոս, բրից՝ Խնկանոս, Խորիկյան-Խորիկ-Խորեն (Խորիշահ), Խոցիկյան-Խոցիկ-Խոցադեղ, Կատարիկյան-Կատարիկ-Կատարինե (Կատարյալ) Կատիկյան-Կատիկ-Կատարինե (Կատարյալ), Կոստիկյան-Կոստիկ-Կոստանդին, Հովնիկյան-Հովնիկ-Հովնաթան, (Հովնան,

¹⁰⁴ Այս դեպքում կարող է լինել նաև Զան-ով սկսվող անձնանուններից՝ կրճատված տարբերակ՝ + իկ մեկնարանություն:

¹⁰⁵ Նման դեպքերում տվյալ ազգանվանակերտ հիմքի ձևավորման համար լերում ենք ամենահավանական անձնանունը, անհավանական չհամարելով նաև մյուսները:

¹⁰⁶ Հնարավոր է նաև Բադդիկյան-Բախտիկյան հնչյունափոխությամբ անցումը:

¹⁰⁷ Տե՛ս նաև Դերոյան:

¹⁰⁸ Զի բացառվում նաև Դավիթ-Դաթ Դազ անցումը:

Հովհաննես), Ղազիկյան-Ղազիկ-Ղազար, Մալիկյան-Մալիկ-Մալխաս (Մալ-ով մոտ 20 այլ ձևեր)¹⁰⁹: Մարտիկյան-Մարտիկ-Մարտիրոս, Մորիկյան-Մորիկ-Մորճիկ կամ Մուրիկյան-Մորիկյան: Մուսիկյան-Մուսիկ-Մուսա (Մուսաբեկ), Մուրիկյան-Մուրիկ, Աճառյանը գտնում է հյ. մուրիկ «մուկացիկ» բառից¹¹⁰, սակայն մենք ավելի հավանական ենք համարում Մուրադ և նրանով բաղադրված ձևերից բխեցնելը: Նազիկյան-Նազիկ-Նազելի (Նազ-ով սկսվող ավելի քան 20 այլ ձևեր), Շուշիկյան-Շուշիկ-Շուշան կամ Շուշանիկ, Պետիկյան-Պետիկ-Պետրոս, Սադիկյան-Սադիկ-Սաղաթել, Սամիկյան-Սամիկ-Սամվել (Սամսոն), Սանիկյան-Սանիկ-Սանասար (Սանամ), Սառիկյան-Սառիկ-Սառու, Սարիկյան-Սարիկ-Սարիբեկ (Սարկավազ, Սարուխան, Սարհատ, Սարում դուցեև, Սարգսիս), Սենիկյան-Սենիկ-Սենեքերիմ, Սողիկյան-Սողիկ-Սողոմոն, Սուսիկյան-Սուսիկ-Սուսամբար (Սուսա՞ն), Վարիկյան-Վարիկ-Վարազդատ (Վարոս), Տոնիկյան-Տոնիկ-Տոնապետ (Տոնական, Տոներ, Տոնավազ), Փանիկյան-Փանիկ-Փանոս, Փերիկյան-Փերիկ-Փերուզ, Փիլիկյան-Փիլիկ-Փիլիպոս (Փիլարտոս), Քոչիկյան-Քոչիկ-Քոչար, Բերիկյան-Բերիկ-Բերկուհի, (Բերթում, Բերթա), Բարիկյան-Բարիկ-Բարսեղ (Բարեղամ, Բարունակ, Բարիույս, Բարխուդար), Ամրիկյան-Ամրիկ-Ամբաս (Ամբոս), Մերիկյան-Մերիկ-Մերանդու, (Մերկեռ, Մերուժան), Թուրիկյան-Թուրիկ, Թուր-ով սկսվող մի քանի ձևեր, ինչպես նաև Թորիկյան-Թորիկյան, Մարիկյան-Մարիկ-Մարիամ, Մարտիրոս, Մարութ, Մարջան, Մարուհի, Վելիկյան-Վելիկ-Վելի, Վելիջան, Վելիխան, Ունիկյան-Ունիկ-Ունչո բեկ, (Ունիչուն), Մատիկյան-Մատիկ-Մատաթ (Մաթևոս):

բ) Եթե նախորդ դեպքում ազգանվանակերտ հիմքը գտնելը առանձին դժվարություն չէր ներկայացնում և օրինակների մեծ մասում լրացուցիչ ընտրության և այդ պատճառով մեկնաբանության ավելի լայն հնարավորություն էր ստեղծվում, ապա որոշ թվով օրինակներում ազգանվանական հիմքերը հնչյունափոխված տարբերակներ են և երբեմն կարող են երկակի մեկնաբանություն ունենալ՝ անձնանուն հնչյունափոխիչ + իկ + յան և -իկ-ով ազգանուն → հնչյունափոխություն → ազգանուն: Այսպես, Մրտիկյան ազգանունը կարող է մեկնաբանվել. Մարտիրոս-Մրտիկ-Մրտիկյան և Մարտիկյան → Մրտիկյան: Հարկ է նշել, սակայն, որ առաջին տիպին վերաբերող փաստերը, այնուամենայնիվ, դերակշռում են:

¹⁰⁹ Չի բացառվում Մալաբ, Մելիք+յան → Մալիկյան այլալեզու անցումը ևս:

¹¹⁰ ՀԱՍԸ, հ. Գ., 1ջ 472

Այսպիսով, տվյալ դեպքում քննվում են այնպիսի ազգանվանական հիմքերը, որոնց մեջ -իկ-ին նախորդող հատվածը այս կամ այն անձնանվան հնչյունափոխված տարբերակն է: Բնականաբար այս դեպքում ևս ազգանվան քննվող հատվածը կարող է ներկայանալ իբրև մեկից ավելի անձնանունների հնչյունափոխման արդյունք: Բերենք այդ կարգի օրինակներ՝ Անդրիկյան-Անդրիկ-Անդրանիկ, (Անտոն, Անդրեաս) և այլն, Աշիկյան-Աշիկ-Աշոտ, (Արշավիր, Արշալույս, Արշակ, Արշամ), Ապիկյան-Ապիկ-Ապրես, (Աբրահամ, Աբդար) և այլն, Ատիկյան-Ատիկ-Ատոմ, Աթաբեկ, Աթանես, Աթաջան և այլն, Ափիկյան-Ափիկ-Աբրահամ, Աբդար, Արփենիկ և այլն, Բադիկյան-Բադիկ-Բադդատ, Բադդասար, Բադում, Բադդադուլ և այլն, Բալիկյան-Բալիկ-Բալաբաթ, Խուդաբա (խ)շ և այլն, Բատիկյան-Բատիկ, այս դեպքում հնարավոր է Բադալ-Բադիկ-Բադիկյան-Բատիկյան և Սմբատ+իկ→Բատիկ-Բատիկյան: Գերկիկյան-Գերկիկ-Գրիգոր, հայտնի է, որ Գրիգոր անձնանունը ունի, ի թիվս այլոց, նաև Գորքիկ¹¹¹ և Գրքո կոչական տարբերակը ուրեմն չի բացառվում նաև Գրքիկ ձևը, որը նույնպես վկայված է՝ Գրքիկյան, ինչպես նաև Գրբգիկ: Գրքիկյանը այլալեզու միջավայրում օրինաչափորեն ը>ե և ք>կ հնչյունափոխությունների հետևանքով կարող էր տալ Գերկիկյան:

Գեփրիկյան-Գեփրիկ-Գաբրիել, Ֆեղտրիկյան-Բեղտրիկ-Բախտիար, Ածիկյան-Ածիկ-Աստվածատուր, Եփրիկյան, էփրիկյան-Եփրիկ, էփրիկ-Եփրեմ, Եփրիանոս, Աբրահամ, Եվրիկյան-Եվրիկ-Յավրի, Մրտիկյան-Մրտիկ-Մարտիրոս, Մոսիկյան-Մոսիկ-Մովսես, Մխիկյան-Մխիկ-Մխիթար, Միքայել, Խրիկյան-Խրիկ-Խորեն, Խորիշահ, Շտիկյան-Շտիկ-Շատ, Շասարև, Արևշատ և այլն, Կրպիկյան-Կրպիկ-Կարապետ, Օսիկյան-Օսիկ-Հովսեփ, Յանիկյան-Յանիկ-Հովհաննես, Յասիկյան-Յասիկ-Եսայի, Հովսեփ, դուցեև Հովհաննես, Կուրտիկյան-Կուրտիկ-Գուրգեն, Մառիկյան-Մառիկ-Մարգար, Մարգարիտ, Մարիամ, Մարթա և այլն, Դոնիկյան-Դոնիկ-Տոնապետ, Տոնական, Գոզիկյան-Գոզիկ-Գյոզալ և նրանով բաղադրվածներից:

գ)-իկ-ով կազմված ազգանունների երրորդ խումբը աչքի է ընկնում փոքրացուցիչ -փաղաբշական ածանցին նախորդող հատվածի ավելի մեծ անորոշություններ: Այս դեպքում ավելի շատ են անձնանվան վերջին հատված +իկ հնարավորությունները: Նախորդ բոլոր դեպքերում -իկ-ը ավելանում էր որևէ անձնանվան ուղիղ կամ անփոփոխ ձևին, ինչպես

¹¹¹ «Հինունքի որդի Մզտսի Գորքիկ»՝ Կարվածագրեր ..., էջ 133: Մի այլ 1ջում՝ «Գորկիկի որդի Մարտիրոս»:

նաև անձնանվան կրճատված և կրճատված-հնչյունափոխված բառակզբի հատվածին, մինչդեռ այս դեպքում քննվող ածանցի հետ դործածվող հնչյունախումբը կարող է լինել ինչպես անձնանվան սկզբի, նույնպես և վերջի հատվածը: Ավելին՝ դրանք մեծ մասամբ հնչյունափոխված են և հաճախ նախաձևից զգալիորեն հեռացած, որի պատճառով բավականին մեծ է մոտավորության աստիճանը: Որքան փոքրանում է -իկ-ին նախորդող հատվածի երկարությունը, այնքան ավելի է մեծանում մոտավորությունը և ենթադրություններ անելու հնարավորությունը: Երբեմն փաղաքական մասնիկին նախորդող հատվածի «ինքնությունը» պարզելու համար անհրաժեշտ է լինում դիմել անվանագիտական համակարգի այլ միավորների, մասնավորապես՝ կոչական տարբերակներով ազգանուններին: Այսպես, Կնիկյան ազգանվան Կն-հիմքի համար համապատասխան նախաձև գտնելը բավականին դժվար է, լավապես դեպքում կարելի է հեռուն տանող ենթադրություններ անել, մինչդեռ Կնոյան ազգանվան առկայությունը արդեն հաստատում է, որ գործ ունենք անձնանվան (կրճատված, հնչյունափոխված) + (-իկ) և -ո և ոչ թե մականվան հետ, մի բան, որ չի բացառվում, նույնպես և՛ Բանդիկյան և Թևիկյան, Թուփիկյան օրինակների դեպքում, որոնցից առաջինի հիմքը ներկայացված է նաև Բանդոյան ազգանվան մեջ, իսկ մյուս երկուսինը՝ Թեփուլյան, Թոփոյան, Թոփուլյան օրինակներում: Չի բացառվում, ինչպես Թեփ և Թոփ հիմքերի նույնպես և Թևիկյան, Թուփիկյան և Թեփուլյան, Թոփուլյան, Թոփոյան ազգանունների հնչյունափոխված տարբերակներ լինելու հնարավորությունը¹¹²:

Որոշ փաստերի մեկնաբանմանը օգնում են մեր կողմից գտնված վկայությունները: Այսպես Փոստիկյան և Խրխիկյան ազգանունների հիմքերը վկայված են Հ. Աբրահամյանի «Կալվածագրեր» ժողովածուի մեջ: 1614 թ. Շամբ գյուղի վերաբերյալ մի վավերագրում գտնում ենք. «Եզգումենց Փոստիկս վկայ», իսկ 1824 թ. Կարինի վերաբերյալ մի այլ վավերագրում՝ «Խաչատուր Խրոխայարևան»: Կաթիկյան ազգանվան հիմքը անձնանուն լինելու մասին վկայությունը նույնպես գտնում ենք վերոհիշյալ աշխատության մեջ: Արդեն հիշատակված Կարինի վերաբերյալ վավերագրում գտնում ենք. «Կաթիկի որդի...»: Ի դեպ, հայկական ազգանունարանում վկայված են նաև Կաթյան և Կաթոյան ձևերը:

¹¹² Հնչյունափոխված ազգանվանակերտ հիմքերի և ազգանունների քննությանը առանձին կանդաղառնանք:

Կղիկյան, Կետիկյան և Կտիկյան, ինչպես նաև Գրոյան, Կտոյան ազգանունների հիմքերը ամենայն հավանականությամբ կապվում են Կատարեալ և Կատարինե անձնանունների հետ:

Ինչպես արդեն ասացինք, մի խումբ են կազմում -իկ-ով այնպիսի անձնանունները, որոնց վերաբերյալ դատողությունները խիստ մոտավոր են՝ Մանլիկյան-Մանգիկ-Մանավաղ, Գրիշկյան-Գրիշիկ կամ Գրիշկա, Քոլիկյան-Քոլիկ-Քոլ, իբրև մականուն, ինչպես նաև Քոլո, որ նույնպես մականուն է և Քոլոյան ազգանվան առկայությունը մեզանում: Թմբիկյան-Թմբիկ-Թումա բե՞կ, Կումբիկյան-Կումբիկ-Կո՞մ-բեկ, Քուստիկյան-Քուստիկ-Քրիստ -բաղադրիչով ձևերի՞ց, Պիտիկյան-Պիտիկ-Պիտեան կամ Պետիկ, Պետիկյան, Կոմիկյան-Կոմիկ-Կոմիտա՞ս, Կո՞մս, Նորդիկյան-Նորդիկ-Նորատու՞նկ, Մախշիկյան-Մախշիկ-Մախկամ-Մաղ+(-ուշ) + ի՞կ, Կուլիկյան-Կուլիկ-Գուլ-ով ձևերից՝ հնչյունափոխված: Զծանրաբեռնելու համար հետագա շարադրանքը, բերում ենք -իկ-ով այն ազգանունները, որոնց հիմքերի մասին դժվարանում ենք որևէ բան ասել՝ Բոխիկյան, Պոխիկյան, Ախտիկյան, Բոյնիկյան, Միլիկյան, Կարտիկյան, Կենտիկյան, Կոթիկյան, Կոտոշիկյան, Կուժիկյան, Կումբիկյան, Հոլիկյան, Հոխիկյան, Զերիկյան, Շիլիկյան, Շլուկյան, Վուլունիկյան¹³, Փեղիկյան, Փոթիկյան, Փուսիկյան:

Ուշ և -ուլ ածանցներով ազգանվանակերտ հիմքեր: Փաղաքշական-փոքրացուցիչ տարբերակների ավելի մասնավոր դրսևորումներից են -ուշ և -ուլ ածանցավոր կազմվածները: Պետք է նշել.

ա) -իկ-ով ձևերի համեմատությամբ սրանք սահմանափակ կիրառություն ունեն, պատմականորեն ավելի ուշ շրջանի երևույթներ են, մինչդեռ, ինչպես հայտնի է, -իկ-ով ձևերը վկայված են մեր անունարանում դեռևս հնուց: Քննարկվող ածանցներով օրինակների սահմանափակությունը հաստատվում է նաև ազգանվանակերտ հիմքերում նրանց փոքր քանակով: Այսպես, մեր քարտարանում -իկ-ով ձևերը շուրջ երկու հարյուր հատ են, մինչդեռ -ուշ-ով և -ուլ-ով ձևերը քառասունից մի փոքր ավելի:

բ) քննարկվող ձևերը իրենց կիրառության ոյորտում ևս սահմանափակ են՝ հաճախ մոտենում են դիպվածային կազմություններին, իսկ

¹³ Չի բացառվում, որ այս դեպքում գործ ունենք ինչ-որ անձնական բնտանեկան տարբերակի հետ, որ հաճախ անճանաչելիորեն հեռացած է լինում նախաձևից: Հմտ. Անուշավան Վավիկ:

երբեմն նաև որոշ նվաստացուցիչ երանգ էն դրսևորում՝ Սարգիս -Սա-
բուլ, Գրիգոր -Գիգուշ, Գևորգ-Գեուշ և այլն:

դ) նշված ածանցներով կազմությունները համեմատելիս, անմիջա-
պես աչքի են ընկնում հետևյալ առանձնահատկությունները. -ուշ-ով
կազմությունների և նրանց սերող անձնանունների կապը դառնելը նկա-
տելիորեն ավելի դյուրին է, քան-ուլ-ով ձևերինը կամ այլ կերպ ասած՝
վերջիններիս հիմքերը շատ ավելի են ձևափոխված և դրա հետևանքով
հեռացած են իրենց հիմք-անձնանուններից: Ներկայացնենք -ուշ-ով կազմ-
ված ազգանունները և նրանց հիմքերը. Արտուշյան-Արտուշ-Արտաշես,
Արտավազդ, չի բացառվում նաև Արտակ, Արտաշիր, Հարություն, Գու-
րուշյան -Գարուշ-Գարեգին, ինչպես նաև Գարուն, Գեուշյան-Գեուշ-Գե-
վորգ, Գիգուշյան - Գիգուշ-Գրիգոր, Գուգուշյան-Գուգուշ-Գարեգին, Թա-
գուշյան -Թագուշ-Թագուհի, նանուշյան-Նանուշ-Նան,¹¹⁴ Բարուշյան
Բարուշ-Բար-ով սկսվող որևէ անձնանունից, Թոփոշյան-Թոփուշ-
Թոփ ով որևէ անձնանունից, հմմտ Թոփիկյան, Թոփոյան, Թոփուլյան
և այլն, ինչպես նաև Գրմուշյան, Թանթուշյան, Բուկուշյան, Գյարգուշ-
յան, Արբուշյան և -ուշ-ով ձևերի հնչյունափոխված հետևյալ տարբե-
րակները՝ Գարուշյան-Գարոշյան, Փոթոշյան:

-ուլ-ով ազգանվանական հիմքերը ներկայացված են հետևյալ
օրինակներով՝ Սարուլյան-Սարուլ-Սարգիս, Թագուլյան-Թագուլ-Թագվոր,
Թագուհի, ինչպես նաև՝ դուլ-ով որևէ անձնանվան կրճատմամբ, Մա-
խուլյան-Մախուլ-Մախալ, Մախթում, Մախմուր, Մախսուտ կամ Մահ-ով
որևէ անձնանունից՝ հ>խ հնչունափոխությամբ, Նախուլյան-Նախուլ-
Նախշուն, Նախաշ, Դագուլյան-Դագուլ-Դագ-ով որևէ անձնանունից, այս
դեպքում հնարավոր է նաև Թաթուլ-Դագուլ անցումը, Բարուլյան-Բա-
բուլ-Բաբ և մոտ հնչյունախմբերով սկսվող կամ ավարտվող որևէ անձ-
նանունից: Աճառյանը Բաբուլ-ը դիտում է իբրև առաջին անձնանուն¹¹⁵,
սակայն մենք դտնում ենք, որ դործ ունենք անձնանուն -ուլ կաղապա-
րի հետ: Ափուլյան-Ափուլ-Աբրահամ, Աբգար և այլն բ>փ հնչյունա-
փոխությամբ, Ասուլյան-Ասուլ-Աս-ով սկսվող անձնանուններից, Ադուլ-
յան-Ադուլ-Ադ-ով սկսվող անձնանուններից, Թեփուլյան-Թեփուլ-Թեփ-ով
սկսվողներից, հմմտ նաև Թեփիկյան, Թեփոյան, ըստ որում չի բացառ-
վում Ստեփանից ծագած լինելը ևս, հմմտ Ստեփան-Տեփո-Տեփոյան:

¹¹⁴ Հմմտ ՀԱՆԲ, հ. Գ, էջ 21:

¹¹⁵ ՀԱՆԲ, հ. Ա, էջ 354:

Ջանգուլյան-Ջանգուլ, որ կարող է լինել Ջահանգիր-Ջանգուլ անցման, ինչպես նաև Ջան-ուլ սկսվող անձնանուն + գուլ կաղապարով բաղադրյալ անձնանվան կրճատման արդյունք: Ջահուլյան-Ջահուլ, որ կարող է լինել, ինչպես Ջահմենենդ-Ջահուլ կաղապարի, նույնպես և Ջահիլ-Ջահուլ անցման արդյունք:

Գտնում ենք, որ Կոնջուլյան և նրա հնչունափոխությամբ Կոնջուլյան ձևերի հիմքում ընկած է գոնջ, կոնջ մականունը: Այստեղ ենք դասում նաև Դադուլյան-Դոդուլյան, Ափուլյան-Ափուլյան հնչունափոխված օրինակները: Մուշուլյան¹¹⁶, Վաթուլյան, Անջուլյան, Նակուլյան, Թոմբուլյան, Վուդուլյան, Ցուցուլյան, Փութուլյան և Քմբուլյան ազգանունների հիմքերի մասին որոշակի որևէ բան ասել առայժմ դժվարանում ենք:

Անձնանվան ժողովրդախոսակցական տարբերակները իբրև հիմք: Ազգանվանակերտ անձնանուն հիմքերի ժողովրդախոսակցական տարբերակների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ վերջիններին և կոչական ու կրճատված տարբերակներով կազմված ազգանվանական հիմքերի միջև սահմանները հաճախ անորոշ են, քանի որ կոչական տարբերակները, օրինակ, զլխավորապես իրենց հատուկ ածանցից առաջ ունենում են անձնանվան ժողովրդախոսակցական տարբերակ՝ Ուխտանես կամ էխտիար-Իխտո-Իխտոյան, Խաչատուր-Խչե, Խչո-Խչեյան, Խչոյան, սակայն եթե այս դեպքում կոչական ձևերում ելքը բավականին հեշտությամբ գտնվում է ածանցների առկայության շնորհիվ, ապա կրճատված և ժողովրդախոսակցական տարբերակների միջև սահմանները ավելի անորոշ են: Այսպես, ունենք Վարուժ-Վարուժյան, Մազթաղ-Մազթաղյան և նման օրինակներ, ուր հիմքերը կարող են կրկնակի մեկսաքանություն ունենալ՝ կրճատված և ժողովրդախոսակցական տարբերակներ: Համեմատելով միմյանց հետ վերոհիշյալ հիմքերով ազգանունների բավականին մեծ զանգվածներ, մենք գտնում ենք, որ այս դեպքում ևս կարելի է բավականին ակնառու մի շափանիչ գտնել դրանք պատելու համար: Այն դեպքերում, երբ ազգանվանակերտ ածանցին նախորդող մասում որևէ հնչունափոխություն չի արձանագրվում, պետք է ընդունել կրճատված տարբերակի գոյությունը, տեսականորեն հնարավոր համարելով նրանց ժողովրդախոսակցական տարբերակ լինելը:

¹¹⁶ Մուշեղ-Մուշուլ անցումը բացառում ենք, քանի որ երբ անձնանուն+ուլ կաղապարով ձևեր էին ստեղծվում Մուշեղ անձնանունը բարձր, գրական ոճի իրողություն էր և մյուս կողմից այդ կաղապարը զլխավորապես հատուկ էր Թիֆլիսի բարլառային ուրբաին, ուր Մուշեղ անձնանունը գրեթե չէր գործում:

Այսպես օրինակ, Վարուժան-Վարուժ-Վարուժյան և Մազթաղինե-Մազթաղ-Մազթաղյան և նման այլ դեպքերում առաջնայինը համարում ենք բերված հիմքերի «անձնանվան կրճատված տարբերակ» մեկնաբանությունը, իսկ ետադար-Չատի-Չատյան, Աստվածատուր-Ծատուր-Ծատուրյան և նման այլ դեպքերում՝ «անձնանվան ժողովրդախոսակցական տարբերակ» մեկնաբանությունը: Նկատված երկվությունը գլխավորապես հետևանք է այն բանի, որ ոչ բոլոր անձնանուններից են կոչական տարբերակներ կազմվել և առօրյա հաղորդակցման ժամանակ վերջիններիս դերը հաճախ ստանձնել են կրճատված տարբերակները՝ Վարուժ, Մազթաղ, Բարունակ-Բառնակ, Շուշան-Շուշ և այլն:

Այսպիսով, հետևողականորեն ազգանվանակերտ անձնանուն հիմքերի այն տարբերակներն ենք համարում ժողովրդախոսակցական, որոնց տարբերակներով կազմված ազգանունները ուսումնասիրելիս երևում է որոշ անձնանունների նման տարբերակներ սիրելու նկատելի արգասավորությունը: Դրանք զործածության մեծ հաճախականություն ունեցող և, որ կամ նույնն է տվյալ դեպքում, բնիկ և փոխառյալ-յուրացված շերտերի իրողություններ են: Ավելին, այդ անձնանունները աչքի են ընկնում ոչ միայն ժողովրդախոսակցական տարբերակներ սիրելիս, այլև՝ կոչական, կրճատված, հնչյունափոխված, փոքրացուցիչ-փաղաքշական և այլն¹¹⁷:

Ժողովրդախոսակցական տարբերակներով կազմված անձնանունների քննությունը սկսենք այն դեպքերից, երբ միևնույն զրական ելակետից ձևավորվել են մեկից ավելի տարբերակներ՝ Աբրահամ՝ Ափրամ-Ափրամյան¹¹⁸, Ապրի-Ապրիկյան, Ափի-Ափինյան:

Ալեքսանդր՝ Ալեքսան-Ալեքսանյան, Ալեք-Ալեքյան¹¹⁹, Սանթրոս-Սանթրոսյան, Սանթուր-Սանթուրյան¹²⁰, Ասկանդար-Ասկանդարյան, Սկանդար-Սկանդարյան¹²¹:

Աստվածատուր՝ Ծատուր-Ծատուրյան, Տատուր-Տատուրյան, Ասատուր-Ասատուրյան:

Ավգուստինիանոս՝ Օկոս-Օկոսյան, Օզգո-Օզգոյան:

¹¹⁷ Միևնույն անձնանունից հնարավոր տարբերակների սերման և ազգանվանակերտ հիմքերում զրանց զոյություն հարցին կանդրադառնանք սուրե:

¹¹⁸ Հնարավոր է նաև Աբրահամյան-Ափրամյան անցումը:

¹¹⁹ Զի բացառվում Ալեքսանդր-Ալեքսան-Ալեք հնարավորությունը էտ:

¹²⁰ Կարելի է ենթադրել նաև Սանթուրյան-Սանթուրյան հնարավորությունը:

¹²¹ Զի բացառվում այս վերջին երկու հիմքերի փոխադարձ սերման հնարավորությունը իբրև արդյունք տարբեր հնչյունափոխական երևույթների զործունեություն:

Արխատակես՝ Առստակ-Առստակյան, Ռաստակ-Ռաստակյան, Ռըստակ-Ռստակյան¹²², Դագես-Դագեսյան, Դաքես-Դաքեսյան, Թագես-Թագեսյան:

Այս վերջին երեք դեպքը համարում ենք տարբեր հնչյունական համակարգ ունեցող բարբառների ազդեցութեան արդյունք: Չնայած չի բացառվում, որ նրանք լինեն հնչյունափոխութեան շնորհիվ առաջացած տարբերակներ:

Բաղդասար՝ Բաղի-Բաղիյան, Բաղի-Բաղիյան:

Բարսեղ՝ Փարսիլ-Փարսիլյան, Փորսուղ-Փորսուղյան, Փորսուխ-Փորսուխյան¹²³:

Գաբրիել՝ Կափի-Կափիյան, Կեբի-Կեբիյան:

Գևարգ՝ Գորգի-Գորգիյան, Գորգ-Գորգյան¹²⁴, Գագի-Գագիյան, Գևորգիլ-Գևորգիլյան, Գիվարգիլ-Գիվարգիլյան, Գևորգիլ-Գևորգիլյան,

Գրիգոր՝ Գիգոլ-Գիգոլյան, Գիգում-Գիգումյան, Գիգո-Գիգոյան, Գիշ-Գիշյան, Գիքան-Գիքանյան, Գիքոր-Գիքորյան, Գոգ-Գոգյան, Գոգոր-Գոգորյան, Գորոր-Գորորյան, Գրիք-Գրիքյան, Կրիկ-Կրիկյան, Քիքան-Քիքանյան, Քիքի-Քիքիյան:

Գուրգեն՝ Կյուրին-Կյուրինյան, Կուրի-Կուրինյան¹²⁵:

Եսայի՝ Սայի-Սայան, Սեյի-Սեյինյան, Սահի-Սահինյան:

Թովմաս՝ Թոմաս-Թոմասյան, Թումաս-Թումասյան:

Իգնատիոս՝ Իգնատոս-Իգնատոսյան, Իգնաթեսոս-Իգնաթեսոսյան, Իգնատեսոս-Իգնատեսոսյան, Իգնաթեսոս-Իգնաթեսոսյան, Իգնաթ-Իգնաթյան, Իդնատ-Իգնատյան, Իգնատոս-Իգնատոսյան, Թեսոս-Թեսոսյան¹²⁶:

Լևոն՝ Լեան-Լեանյան, Լեանդ-Լեանդյան, Լեանտ-Լեանտյան:

Խաչատուր՝ Չատի-Չատյան, Չատինյան, Խաչան-Խաչանյան, Խեանյան, Խեչիմ-Խեչիմյան:

Կոստանդին՝ Կոստանդ-Կոստանդյան, Կոստան-Կոստանյան, Կոնստանդ-Կոնստանդյան, Կոստի-Կոստինյան:

Կյուրեղ՝ Կիրեղ-Կիրեղյան, Կրեղ-Կրեղյան: Վերջինս կարող է լինել նախորդի հնչյունափոխված տարբերակը:

Հակոբ՝ Հագո-Հագոյան, Ակոջ-Ակոջյան: Վերջին դեպքում ավելի

¹²² Նախորդ դեպքի նման հնարավոր է փոխազարձ սերման հնարավորություն:

¹²³ Հնարավոր է նաև ղ > ի հնչյունափոխությամբ սերված լինելը:

¹²⁴ Վերջինս կարող է լինել նախորդի հնչյունափոխված տարբերակը:

¹²⁵ Չի բացառվում Կյուրինյան-Կուրինյան անցումը ևս:

¹²⁶ Չի բացառվում Մատթեսոս-Թեսոս-Թեսոսյան անցումը ևս:

հավանական է թվում Հակոբջան-Ակոջ անցումը, որ նշված է նաև ՀԱՆԹ-ում, սակայն մեզ հանդիպել է, մասնավորապես Ախալցխիսեում. Հակոբից Ակոջ ժողովրդախոսակցական տարբերակը:

Հառուրյր՝ն՝ Արութ-Արության, Արթեն-Արթենյան, Արթին-Արթինյան, Աթի-Աթինյան, Հարթեն-Հարթենյան, Թունի-Թունյան:

Հավակիմ՝ Օվագում-Օվագումյան, Ավագիմ-Ավագիմյան, Ավակիմ-Ավակիմյան, Օվիմ-Օվիմյան, Աքիմ-Աքիմյան¹²⁷, Ակիմ-Ակիմյան¹²⁸,

Հովհաննես՝ Օհան-Օհանյան, Վանես-Վանեսյան, Օվանես-Օվանեսյան, Օնիկ-Օնիկյան, Վանիկ-Վանիկյան, Հովես-Հովեսյան, Վանի-Վանիյան, Օվես-Օվեսյան, Ավանես-Ավանեսյան¹²⁹, Ավան-Ավանյան¹³⁰, Հանես-Հանեսյան, Հանեղ-Հանեղյան, Հանես-Հանեսյան, Հանեսյան:

Հովասափ՝ Ավասափ-Ավասափյան, Հովապ-Հովապյան, Հովաբ-Հովաբյան, Ուսեպ-Ուսեպյան, Օսիպ-Օսիպյան: Վերջին դեպքը կարելի է ներկայացնել նաև իբրև այլալեզու տարբերակ կամ պարզապես փոխառություն ուսերենից:

Ղևոնդ՝ Ղևեն-Ղևենյան, Ղևին-Ղևինյան, Կեվե-Կեվեյան:

Ղուկաս՝ Ղուզե-Ղուզեյան, Ղուզի-Ղուզիյան, Խուզեյ-Խուզեյան, Խուզի-Խուզիյան: Վերջին երկու դեպքը կարելի է ներկայացնել նաև իբրև նախորդ երկուսի այլալեզու տարբերակներ:

Մևհրաբ՝ Մարաբ-Մարաբյան, Միրաբ-Միրաբյան, Միրիբ-Միրիբյան:

Միֆայել՝ Մուքայել-Մուքայելյան, Մուխայել-Մուխայելյան, Մուքել-Մուքելյան, Միել-Միելյան, Միլյան, Մուխա-Մուխայան, Մքան-Մքանյան, Մուխայել-Մուխայելյան, Մքին-Մքինյան:

Մնացական՝ Մացակ-Մացակյան, Մնակ-Մնակյան, Ցական-Ցականյան:

Մկրտիչ՝ Մակիչ-Մակիչյան, Մակուչ-Մակուչյան, Միկիչ-Միկիչյան, Մուկուչ-Մուկուչյան, Միկիտ-Միկիտյան, Միկուչա-Միկուչյան, Միչիկ-Միչիկյան, Միտիչ-Միտիչյան, Միտին-Միտինյան, Միքիչ-Միքիչյան:

Նիկողայոս՝ Նիկոլ-Նիկոլյան, Նիկալ-Նիկալյան:

Պետրոս՝ Պեպե-Պեպեյան, Պեպան-Պեպանյան, Պիտին-Պիտինյան:

¹²⁷ Հնարավոր է նաև Հեքիմյան-Աքիմյան անցումը:

¹²⁸ Այս դեպքում հավանական է նաև Հովակիմ-Ակիմ-Ակիմյան այլալեզու անցումը:

¹²⁹ Կարելի է նաև Օվանեսյան Ավանեսյան այլալեզու մեկնարանությունը տալ:

¹³⁰ Չի բացառվում նաև Ավանեսյան-Ավանյան տարբերակը, սակայն վկայված է նաև Ավան անձնանունը:

Սարգիս՝ Սարան-Սարանյան, Աքան-Աքանյան: Հնարավոր է, որ վերջինը նախորդի հնչյունափոխված տարբերակը լինի:

Սաեփանոս՝ Տեփանոս-Տեփանոսյան, Տեփիս-Տեփիսյան, Տեփան-Տեփանյան, Փանոս-Փանոսյան, Փանի-Փանյան, Փանիյան:

Այսպիսով, երևտունից մի փոքր ավելի ելակետ սեփանունները սերել են հնգապատիկ ավելի աղզանվանակերտ հիմքեր: Ստորև բերվող դեպքերում յուրաքանչյուր ելակետ ներկայացված է մեկ տարբերակով՝ Ավթանդիլ-Թանդիլ-Թանդիլյան, Առուշան-Ռուշան-Ռուշանյան, Անդրանիկ, Անդրևաս-Անդրի-Անդրիկյան¹³¹, Անտոն-Անտին-Անտինյան, Անանիա-Անան-Անանյան, Ամբակում-Ամպագում-Ամպագումյան, Ադամ-Աթամ-Աթամյան, Բաղեր, Բաղդասար-Բղր-Բղրյան, Բաղդասար, Գաղդագուլ-Բաղդի-Բաղդիյան, Գերսամ, Գերասիմ-Գերցեմյան, Գայանե-Գարան-Գարանյան, Գամաղիել կամ Գամրեկել-Գամել-Գամելյան, Գալուստ-Գալուցի¹³²-Գալուցյան, Եվթիմոս-Եթիմ-Եթում-Եթիմյան-Եթումյան, Ելիկում-Ելում-Ելումյան, Եղիշե-Եղիշ-Եղիշյան, Աղավնի-Եղուն-Եղունյան, Եվթաղիոս կամ Թաղիանոս-Թաղես-Թաղեսյան, Թորաման-Թորան-Թորանյան, Թոռն-Թոռուն-Թոռունյան, Թանանդ կամ Թանա-Թնայան: Այս դեպքում հնարավոր է նաև Հարություն-Թյունի-Թյուննանց-Ռընանյան մեկնաբանությունը ևս: Թամամ-Թեմիմ-Թեմիմյան, Թագվոր-Թաբավիր-Թաբավիրյան, Թանգրիղուլի-Թանգուլ-Թանգուլյան, Թադևոս-Թաթոս-Թաթոսյան, Թևադրոս-Թադրի-Թադրիյան, Էլիաս-Իլիազ-Իլիազյան, Լիպարիտ-Լիբար-Լիբարյան, Միսիթար-Խիթար-Խիթարյան, Կիրակոս-Կակոս-Կակոսյան, Համազասպ-Համզա-Համզյան, Համազասպ-Համազափր-Համազարյան, Աբել-Հաբել-Հաբելյան, Հայրապետ-Հաբեթ-Հաբեթյան: Այս դեպքում հնարավոր է նաև Աբեթնակ-Հաբեթ-Հաբեթյան անցումը: Մովսես-Մոսի-Մոսիյան, Մանվել-Մնուլ-Մնուլյան, Մարիան-Մարան-Մարանյան¹³³, Մանուշակ-Մանուշ-Մանուշյան, Մաթևոս-Մաթոս-Մաթոսյան, Շամվոն-Սիմավոն-Սիմավոնյան, Պողոս-Պավել-Պավելյան¹³⁴, Ալեքսիանոս-Սիանոս-Սիանոսյան, Սոֆյա-Սոփի-Սոփյան, Սրապիոն-Սրապ-Սրապյան, Սողոմոն-Սուղ (ի)-Սուղյան, Սաղաթել-Սա-

¹¹ Կարելի է ներկայացնել նաև իրև կոչական և այլալեզու տարբերակի վերջինիս չամար շեմտ, «Անտրիյ Կոկոյի որդի», «Կամենեց-Պողոսկ քաղաքի հայկական դատարանի արձևագրությունները» գրքում, Երևան, 1963:

¹³² Калужк (Կյալուստ) Никула Кирилъ „Армяно русские отношения в XVIII в., Сб дск. Ереван, 1953 Հնարավոր է նաև Գալոցն- Գալուց- Գալուցյան:

¹³³ Չի բացառվում Մարանշյան-Մարանյան անցումը ևս:

¹³⁴ Հավանական է նաև հիմքի՝ ուսերենից փոխառված լինելու հնարավորությունը:

շի-Սաղիյան, Վարսենիկ-Վարսան-Վարսանյան, Տիգրան-Տիկո-Տիկ-
 յան¹³⁵, Փիլիպոս-Փիլոս-Փիլոսյան, Փեփրոնե-Փեփել-Փեփեյան, Գաս-
 պար-Քյասի-Քյասինյան, Քոչար-Քոչի-Քոչիյան, Քրիստոսատուր-Քրիս-
 տոր-Քրիստորյան: Այստեղ հավանական է նաև Քրիստոսատուրյան-
 Քրիստորյան անցումը: Վարուժան-Վարաժ-Վարաժյան, Գուլիխաս-Կու-
 լախազ-Կուլախազյան: Այս դեպքը կարելի է մեկնաբանել նաև Կուլակ-
 սրդյան-Կուլախազյան ձևով: Մի քանի ազգանունների հիմքերը զիտակց-
 վում են իբրև ժողովրդախոսակցական տարբերակներ, սակայն ելա-
 կետ-հիմքերի վերաբերյալ կարելի է, լավագույն դեպքում մոտավոր
 ենթադրություններ անել՝ Թորթիկյան-Թոգորիկ-Թորթիկ: Կուրեկյան,
 Աճառյանը հիշատակում է Կորկոտակ, Կորնկան անձնանունները, որոն-
 ցից հնարավոր է, որ ծագած լինի տվյալ ազգանվանակերտ հիմքը:
 Նկատելի մոտավորությունք այն կարելի է կապել նաև Գուրգեն-Կյուրին-
 Կուրիկ շարքի հետ: Դուլիյան, մեզ հանդիպել է «Տուրին Համբո» բանա-
 ձևում (ՎՍՍՀ, Բոգդանովկայի շրջան, Գանձա գյուղ): Հարոսյան-Հարու-
 թյուն-Հարո-Հարոս, Մուսլինյան, որևէ անձնանվան ժողովրդախոսակ-
 ցական տարբերակ չենելու մասին է վկայում նաև Մուսլոյան ազգանու-
 նը: Ենթադրում ենք Մուսայել-Մուսլո-Մուսլի-Մուսլինյան. Շավելյան-
 կապում ենք Շավարշ+ել կաղապարի հետ, Հովհաննես, Հովասափ-Հո-
 վակիմ+ել-Հովել նմանոդությունք: Պոգոսյանի հիմքում առկա է -ոս
 ածանցը, որը ենթադրել է տալիս, թե այն սերում է այդ ածանցով որևէ
 ալլալեզու անձնանունից: Ունենք նաև Փոթինյան, Վերանյան, Մոսյլ-
 յան, Կոծանյան ազգանունները, որոնց հիմքերը առայժմ դժվարանում
 ենք կապել որևէ անձնանվան հետ:

Ազգանվանակերտ կրճատված հիմքեր: Անկասկած ուշադրություն
 գրավեց այն, որ այս անգամ վերնագրի մեջ բացակայում է անձնանուն
 բառը և այդ արվել է, ելնելով նյութի ընձեռած հնարավորությունից,
 սր հավասարապես ներկայացված են «անձնանվան կրճատված տար-
 բերակ+յան» մի կողմից և մյուս կողմից այնպիսի ազգանուններ, որոնց
 հիմքերը կարող են երկակի մեկնաբանվել՝ «ազգանուն→կրճատված»
 →ազգանուն և «անձնանուն կրճատված+յան»: Սակայն ի՞նչն է մեզ
 իրավունք տալիս երկվություն տեսնել նման դեպքերում: Առաջին հեր-
 թին՝ ուղիղ և կրճատված ձևերով ազգանունների առկայությունը: Այս-
 պես, Ասքանյան ազգանունը կարելի է մեկնաբանել, ինչպես Ասքանազ-
 Ասքան-Ասքանյան նույնպես և Ասքանազյան-Ասքանյան ձևով, մինչդեռ

¹³⁵ Հնարավոր է, բայց անհավանական հիմքի մականվանական մեկնաբանությունը:

Նաթանյանը մեկնաբանվել կարող է միայն Նաթանայել-Նաթան-Նաթանյան և ոչ այլ կերպ, քանի որ Նաթանայելյան ազգանուն վկայված չէ, որպեսզի կարողանանք ենթադրել նաև Նաթանայելյան-Նաթանյան անցումը:

Այսուհանդերձ, բոլոր դեպքերում առաջնայինը համարում ենք անձնանվան կրճատված տարբերակը և ոչ՝ ազգանվան, քանի որ անձնանունների կրճատումն ավելի սովորական է, իբրև մեր անձնանվանական համակարգի հնագույն երևույթներից մեկը: Հայտնի է, որ արդեն V դարում ունենք Սմբատ-Բատ և Մամիկոն-Կոն օրինակները, որոնք վկայում են, որ արդեն այդ շրջանում նկատելի են անձնանունների կրճատված տարբերակներ կազմելու՝ հետագա դարերի համար այնքան բնորոշ նշաններ¹³⁶:

Մինչդեռ, ազգանունները, իբրև նորագույն կազմություններ և մեծ մասամբ գրական լեզվի իրողություններ ավելի քիչ են ենթակա նման կարգի փոփոխությունների: Վերջիններիս համար ավելի սովորական է նշյունափոխությունը: Անձնանունների կրճատված տարբերակներին առաջնություն տալը բացատրվում է նաև գործառական ծանրաբեռնվածությամբ, քանի որ անձնանունը առօրյա խոսքում ավելի շատ է գործածվում, քան ազգանունը: Վերջինս գլավորապես պաշտոնական ոճի և գրավոր խոսքի իրողություն է: Կարծում ենք բերված փաստարկները իմնավորում են վերը նշված երկվության դեպքում առաջնությունը անձնանվան կրճատված տարբերակին տալը շանտեսելով, սակայն, մյուս նարավորությունը:

Կրճատված հիմքերով ազգանունների քննությունը սկսում ենք այն ազգանուններից, որոնք ներկայացվեցին իբրև միակի մեկնաբանությունամբ ազգանուններ: Այլ կերպ ասած այս դեպքում ազգանվանակերտ հիմքերը կապվում են այս կամ այն անձնանվան կրճատված տարբերակի հետ՝ Նաթանյան-Նաթան-Նաթանայել, Մագթադյան-Մագթադ-Մագթադենի, Մագթադինե, Եզիկյան-Եզիկ-Եզեկիել, Եզեկյան-Եզեկ-Եզեկիել, Ջարմանյան-Ջարման-Ջարմանազան, Ջարմանդուխտ, Ջարմանուհի, Շարյան-Շար-Շարա, Շարանդուխտ, Շարապիսան, Շարբաթ, Շարմադ, Չալյան-Չալ-Չալաբի, Չալադան, Չալաք, Չալեխ, սակայն մեզ հանդիպել է նաև Չալի անձնանունը՝ «...ևս Չալիս»¹³⁷, որը ամենայն հավանականությամբ բերված անձնանունների կրճատված տարբերակն է: Հով-

¹³⁶ Հմմտ. Տ. Մ. Ավետիսյան, Հայկական պատմական անձնանվանագիտության ակնարկ, «Հայոց լեզվի պատմության հարցեր», Երևան, 1985:

¹³⁷ Հ. Աբրահամյան, Կալվածագրեր, Երևան, 1941:

նիկյան-Հովնիկ-Հովնաթան, Հովնան, Հովհաննես, որոնց կրճատված տարբերակներին ավելացել է -իկ փոքրացուցիչ-փաղաքշականը: Խա-նադյան-խանադ-խանումադա, Խաւյան-խաս-խասագուլ, Խասաննա, Խաս-բեգ, Խասխաթուն, Խասմելիք, ինչպես նաև հետևյալ տոհմանունը՝ Пстик Ага Шахи Хасенц, որ վկայված է 1672 թ.¹³⁸, Մազդալյան-Մազ-դալ-Մազթալինա¹³⁹, Միդյան, Միտյան-Միդ, Միտ-Մկրտիչ, ինչպես նաև Միդոյան և Միսոյան ազգանուններն ու Միտուշ փաղաքշական անձնա-նունը:

Ազգանունների մի ստվար խումբ կարող է երկակի մեկնաբանու-թյուն ունենալ՝ «անձնանուն կրճատված + յան» և ազգանուն → «ազգա-նուն կրճատված»: Նշել ենք, որ երկրորդ մեկնաբանություն իրավունքը մեզ տալիս է «ազգանուն → ազգանուն կրճատված» կադապարի առաջին եզրի ինքնուրույն գոյությունը մեր ազգանունարանում: Նման դեպքերում չի բացառվում նաև զուգահեռ կազմության հնարավորությունը: Այսպես, Վարուժյան ազգանունը կարող է սերված լինել ինչպես Վարուժանյան-Վարուժյան, նույնպես և Վարուժան-Վարուժ-Վարուժյան կադապարնե-րով¹⁴⁰, սակայն այս դեպքում կարելի է միայն ենթադրություններ անել, իսկ հարցի լուծման համար ներկայացնել փաստերը, կապելով համա-պատասխան անձնանվան և ազգանվան հետ: Բերենք այդ օրինակները՝ Ավյան-Ավետիք, Ավետիս, Ավագ և այլն և Ավետիսյան, Ավետիքյան, Ավագյան, Ավանյան..., Աայան-Ատ, Ադ, Աթ-ով անձնանունները և ազ-գանուններ¹⁴¹, Ատրյան՝ ա-տուր բաղադրիչներով անձնանուններից և ազ-գանուններից՝ Աստվածատուր, Խաչատուր, Տիրատուր... և Աստվածա-տրրյան, Խաչատրյան... Վերջինը ավելի հավանական ենք համարում հնչյունական պատկերի մերձավորություն պատճառով¹⁴²:

Ատուրյան և Ադուրյան, Դուրյան-Աստվածատուր, Խաչատուր, Տի-րատուր... և Աստվածատ(ու)րյան, Դանդուրյան, Խաչատ(ու)րյան, Տի-րատուրյան: Այս դեպքում արդեն անձնանվանական ծագումն ենք հա-վանական համարում: Արթյան-Արթեն, Արթին և Արթենյան, Արթինյան,

¹³⁸ Армяно-русские отношения в XVIII в., Ереван, 1953

¹³⁹ Կարող է լինել նաև Մազթադյան ազգանվան այլալիզու տարբերակ:

¹⁴⁰ Վարուժանյան-Վարուժյան կարգի անցումները առավել հնարավոր են դառնում հատկապես հոգելիզվաբանական այնպիսի գործոնի ազդեցությամբ, երբ անձնանվան կրճատված տարբերակը արդեն գործառում է լեզվում:

¹⁴¹ Օրինակները շատ են: Թվարկումը շատ տեղ կզրադեցնի: Բավարարվում ենք հնարավոր հնչյունակապակցությունների թվարկմամբ:

¹⁴² Զի բացառվում նաև Ատուրյան-Ատրյան անցումը:

Արիսյան-Արիստակես և Արիստակեսյան, Ափյան-Աբ, Ապ, Ափ-ով ըս-
կըսվող անձնանուններից և ազգանուններից, Աֆյան-Աֆ և Ափ-ով ըս-
կըսվող ազգանուններից և անձնանուններից, ընդ որում, ավելի հավա-
նական ենք համարում Աֆրիկյան, Աֆանդյան, Աֆաջանյան, Աֆեյան,
Աֆիցերյան, Աֆոյան ազգանունները: Ադյան-Ադ-ով սկսվող անձնանուն-
ներ և ազգանուններ: Ազյան-Ազ և Ազ-ով սկսվող ազգանուններից, Ա-
թակյան-Աթաբեկ և Աթաբեկյան, Աթանյան-Աթանաս, Աթանես և Աթա-
նասյան, Աթանեսյան, Աբյան-Աթ-ով սկսվողներից և հատկապես՝ Աթա-
բեկ և Աթաբեկյան, Աթանեսյան: Անդրյան-Անդրանիկ, Անդրեաս, Անդրի,
Անդրիկ և Անդրանիկյան, Անդրեասյան, Անդրիյան, Անդրիկյան: Անթան-
յան-Անթանես, Անթանոս, Անթառան և Անթանեսյան, Անթանոսյան,
Անթառանյան: Անմեղյան-Անմեղիկ և Անմեղիկյան, Անուշյան-Անուշ-ով
սկսվող կամ վերջացող անձնանուններից և ազգանուններից: Ասծաւոր-
յան, Ասծաւորյան, Ածյան-Աստվածատուր և Աստվածատրյան, Ավետ-
յան-Ավետիք, Ավետիս, Ավետում և Ավետիքյան, Ավետիսյան, Ավե-
տումյան:

Ընդհանուր առմամբ անձնանվան կամ ազգանվան այնպիսի կրր-
ճատումները, երբ պահպանված է նրանց վերջին մասը, բավականին
դժվար է վերականգնելը: Այս դեպքում որոշ բացառություն են կազմում
հետևյալ օրինակները՝ Անջոսյան և սրանից՝ Անջյան, Բողոսյան, Թիմոս-
յան, Կիոսյան, Օմպոսյան և Օմփոսյան, Օրկուսյան, ուր -ոս(ուս) բաղա-
դրիչները ենթադրել են տալիս այդ ածանցներով անձնանունների կամ
ազգանունների կրճատված տարբերակ լինելու մասին:

Բենյան-Բենիամին, Բենիկ, Բենո և Բենիամինյան, Բենիկյան, Բե-
նոյան, Բազյան-Բազե, Բազո, Բազիկ և Բազեյան, Բազոյան, Բազինյան,
Բազիմյան, Բազմաջյան:

Եզյան-Եզեկիել, Եզդան, Եզդում, Եզնիկ և Եզիկեւլյան և Եզդանյան,
Եզդողլյան, Եզնիկյան, Եզոյան և այլն:

Զալյան-Զալ և Զալինյան, Զալակյան, Զալիկյան, Զալումյան և այլն:

Զարյան-Զարեհ, Զարդար, Զարդիսթուն, Զարմայր, Զարմանդուխտ,
Զարուհի և Զարեյան, Զարդարյան, ինչպես նաև Զար-ով մոտ մեկ տաս-
նյակ այլ ազգանուններից: Հայտնի է, որ մի քանի դեպքում այն ծագել
է Եղիազարյան և Ղազարյան ազգանուններից:

Զաֆյան-Զաքար, Զաքոս, Զաքի և Զաքարյան, Զաքեոսյան, Զաքոյան
և այլն:

Խեչյան-Խեչիմ, Խեչան, Խեչիկ, Խեչում, Խեչո և Խեչիմյան, Խեչան-

յան, Խեչիկյան, Խեչումյան, Խեչոյան: Հնարավոր է նաև Խաչ-խեչ ան-
ցումը:

Մովյան-Մովակ, Մովիկ, Մովինար, Մովխաթուն և Մովանյան, Մո-
վիկյան, Մովինարյան:

Կատարյան-Կատարյալ, Կատարինե և Կատարելյան, Կատարիկյան,
Կատարջյան:

Կատյան-Կատ հնչյունափոխությամբ սկսվող անձնանուններից և
ազգանուններից:

Հովյան-Հովասափ, Հովսեփ, Հովաբ և Հովասափյան, Հովսեփյան,
Հովաբյան և այլն: Ի դեպ, այս ազգանունը գրեթե անձանաչելիորեն
փոխվել է, տալով Օպյան, Ոպյան տարբերակները:

Մարտյան-Մարտիրոս, Մարտին, Մարտիկ և Մարտիրոսյան, Մար-
տիկյան: Մուսյան-Մուս-ով սկսվող, ինչպես նաև Մովսես-Մուսի և Մե-
լիք-Մուսյան ձևերից: Մուշյան-Մուշեղ և Մուշեղյան: Չի բացառվում
նաև Մշեցյան-Մուշ-Մուշյան անցումը: Մոսյան-Մոսի և Մոսինյան,
Միքյան-Միքայել և Միքայելյան, Միքիշյան, Շախյան-Շաքար-Շաքար-
յան, Շաքրիկյան, Շուշյան-Շուշանիկ, Շուշան և Շուշանյան, Շուշիկյան,
Շուշոյան ձևերից: Շահմանյան-Շահմանանդ և Շահմանանդյան, Ոսկ-
յան-Ոսկի, Ոսկան, Ոսկեհատ, Ոսկեթուփ, Ոսկեծամ, Ոսկեհեր և այլն և
Ոսկանյան, Ոսկերչյան: Վանյան-Վանենի, Վանիկ, Վանես, Վանո և Վա-
նեսյան, Վանոյան, Վանունի, Վանցյան: Վաշյան-Վաշե, Վաշագան և
Վաշեյան, Վասյան-Վասակ, Վասիլ և Վասակյան, Վնսիլյան, Վարյան-
Վարագ, Վարագ և Վարագյան, Վարաժյան, Վարսյան-Վարսեր, Վարսե-
նիկ, Վարոս և Վարսեր, Վարսենյան, Վարոսյան: Վարուժյան-Վարու-
ժան, Վարուժ և Վարուժանյան, Ուլյան-Ուլուխան, Ուլուբաբ, Ուլուբեկ և
այլն և Ուլուխանյան, Ուլիխանյան, Ուլուբաբյան, Քոշյան-Քոշար,
Քոշո-Քոշարյան, Քոշոյան, Օրդյան, Օրդույան-Օրդուխան, Օրդումելիք,
Օրդուշահ և Օրդուխանյան, Օրդուբեկյան: Հնարավոր է նաև Օրդույան-
Օրդյան հնչյունափոխված տարբերակը: Օսյան-Օսիկ, Օսիպ և Օսիկյան,
Օսիպյան, Օսիպյանց, Օսմալյան:

Անձնանվան կոչական տարբերակը իբրև հիմք: Տարբերակային
դրսևորումներից ամենանշանակալիցը կոչականն է: Բավական է ասել,
որ մեր քարտարանում այդպիսի հիմքերով կազմությունների թիվը անց-
նում է հինգ հարյուրից: Ոչ միայն այս թիվը, այլև հայկական մարդան-
վանագիտության ամբողջ պատմությունը վկայում է, որ հայերենին
խիստ հատուկ է եղել անձնանուններից կոչական տարբերակներ կազմե-

լը, որոնք փաղաքշական-փոքրացուցիչ կազմութիւնների հետ եղել են անձնանվան առտնին գործածութեան ամենատարածված դրսևորումը:

Հայերենը կոչականակերտ հատուկ ածանցներ ունի՝ -ո և -ե, որոնցից առանձնապես սուրածված է առաջինը:

Կոչական տարբերակներով հիմքերից ավելի քան շորս հարյուր հիսունը կազմված են -ո ածանցով և միայն մոտ ութսունը՝ -ե ածանցով: Ավելին, մեր դարի 20—30-ական թվականներին, երբ անձնանունների փոխառութիւնը, ինչպես նաև անձնանունաստեղծումը (Մելս, Լենդրոշ, Լենսեր և այլն) աննախադեպ շափերի էր հասել, մեր ժողովրդի լայն զանգվածների համար օտար, հաճախ տարօրինակ հնչում ունեցող անձնանունները «հարազատ» էին դառնում հատկապես նրանցից կոչական տարբերակներ ստեղծելու միջոցով՝ Ալբերտ-Աբո, Ալֆրեդ-Աֆո, Հենրիկ-Հենո, Հենդո, Հերբերտ-Հերո և այլն:

Հայերենը դարերի ընթացքում մշակված եղանակներ ունի անձնանվան կոչական տարբերակներ կազմելու անձնանվան առաջին՝ բաղաձայնով վերջացող հատված + (-ո) կամ -ե՝ Կարապետ-Կարո-Կարոյան, Գարեգին-Գարե-Գարեյան, Նդիազար-Նդո-Նդոյան, Հայրապետ-Հայրո-Հայրոյան և այլն: Սակայն, լինելով հայկական անձնանունարանի ամենահին և մեծ հաճախականութիւն ունեցող տարրը, կոչական տարբերակները և հատկապես նրանց հիմքերը նշանակալից փոփոխութիւններ են կրել, որոնք նկատելի են ինչպես կոչական տարբերակներ կազմելու ընթացքի վրա, նույնպես և՛ արդեն եղած կոչական կազմութիւնների: Ինչպես արդեն ասվեց, օրինաւորապէս էր անձնանվան առաջին՝ բաղաձայնով վերջացող հատվածին կոչականակերտ ածանցների ավելացումը: սակայն հատկապես միջնադարում, երբ այնքան նկատելի էին շուրջավազ օտարաբանութիւնները և երբ գրական ձևերը աստիճանաբար տեղի էին տալիս ոչ նորմատիվ ձևերին, կոչականակերտ ածանցները ավելանում են արդեն հնչյունափոխված հիմքերին: Բավական է ասել, որ կոչական հիմքով բոլոր ազգանունների գրեթե կեսը բնութագրվում է «անձնանուն (հնչ.) + (-ո) կամ -ե + յան» կաղապարով՝ Բաղդասար-Բղդե, Բղդո-Բղդեյան, Բղդոյան, Ասատուր-Աստե, Աստո-Աստեյան, Աստոյան, Սարգիս-Սքե, Սքո-Սքեյան, Սքոյան, Դավիթ, Դվե-Դվո-Դվեյան, Դվոյան և այլն:

Սակայն պետք է ի նկատի ունենալ, որ չի բացառվում նաև Սարգիս-Սաքո, Սաքոյան-Սքոյան, Բաղդասար-Բաղդո-Բաղդոյան-Բղդոյան, Զաքար-Զաքե-Զաքեյան-Զքեյան ընթացքը ևս, քանի որ եթե անձնանուն-

ների հնչյունափոխված տարբերակներից կոչականներ կազմելու ավանդույթը բավականին տարածված էր, ապա եղած անհնչյունափոխ ազգանվանակերտ հիմքերը ևս կարող էին վեր ածվել իրենց հնչյունափոխված տարբերակների: Քանի որ վերը նշված երկու ընթացքների արդյունքը նույնն է եղել, ուստի այսօր դժվար է պարզել, թե, օրինակ, Սքոյան ազգանունը նշված ուղիներից որն է անցել՝ Սարգիս-Սքո-Սքոյան, թե Սարգիս-Սաքո-Սաքոյան-Սքոյան: Տեսականորեն երկու դեպքն էլ հնարավոր է, սակայն գործնականում ավելի հավանական է նշված ուղիներից առաջինը, քանի որ, ինչպես արդեն նշվել է, ազգանունը, իբրև նոր երևույթ և իր ձևավորման սկզբում հոգելեզվաբանորեն դեռևս բավարար չափով շուրացված, այդպիսի նշանակալից փոփոխություն չէր կարող ենթարկվել: Լեզուների պատմությունից հայտնի է, որ հնչյունափոխվում, կրճատվում և այդ պատճառներով երբեմն անճանաչելիորեն փոխվում են հատկապես բարձր հաճախականություն ունեցող բառերը և ուրեմն նաև՝ անձնանունները: Փաստերը վկայում են, որ կոչական տարբերակներ կազմվում են հատկապես բարձր հաճախականությամբ անձնանուններից: Ազգանունը հաճախական կիրառություն ունի վերջին մի քանի տասնամյակներում միայն: Ըստ որում, նա մեծ մասամբ գործառու է զանազան պաշտոնական ցուցակներում, ուր, ըստ հնարավորին, աշխատում են պահպանել գրական նորման:

Այսպիսով, անձնանվան կոչական տարբերակներից սերված ազգանունները կարելի է ներկայացնել հետևյալ կաղապարներով՝

ա) Անձնանվան բաղաձայնով վերջացող անհնչյունափոխ առաջին հատված $+(b)$, $-ո$:

բ) Անձնանվան բաղաձայնով վերջացող հնչյունափոխված առաջին հատված $+(-b)$ $-ո$:

«Հնչյունափոխված առաջին հատված» ըմբռնումը կարելի է փոխարինել «անձնանվան ժողովրդախոսակցական տարբերակ» ըմբռնմամբ, քանի որ կազմությունը ամբողջությամբ բնութագրվում է իբրև այդպիսին՝ Սաքո, Սքո, Սքե, Բաղո, Բղո, Բղե, Զաքո, Զաքե, Զքե և այլն: Ավելացնենք նաև, որ խիստ հաճախական որոշ անձնանունների դեպքում հանդես են գալիս կոչական հնարավոր չորս տարբերակներ՝ Դավիթ-Դավե, Դվե, Դավո, Դվո-Դավեյան, Դվեյան, Դավուան, Դվուան: Կոչականով ազգանունների քննությունը սկսենք այն դեպքերից երբ միևնույն անձնանունը կարող է տալ տարբերակներ և հակա-

տակը, երբ նույնական կամ մերձավոր հնչյունակազմով մի քանի անձնանուններ կարող են սերել նույնական կամ մերձավոր կոչական տարբերակներ: Աստվածատուր Ասատուր-Ասո, Աստե, Աստո-Ասոյան, Ասոյանց¹⁴³, Աստեյան, Աստոյան, Աբրահամ-Աբրե և Ապրե-Աբրո, Ապրո և Ափրո-Աբրեյան և Ապրեյան, Աբրոյան, Ապրոյան, Ափրոյան¹⁴⁴: Ելակետային անձնանվան ձայնեղ ք-ի հնչյունափոխվելը խուլի և շնչեղ խուլի, ինչպես հայտնի է, օրինաչափ էր մեր բարբառներում. Աբրո, Ապո, Ափո, Աֆո-Աբոյան, Ապոյան, Ափոյան, Աֆոյան ձևերի հիմքում հարող են լինել Աբրահամ, Աբգար, Աբել, Աբաս և այլ ձևեր: Ադամ, Ադիբեկ, Ադիլյան, Ադե, Ադո-Ադեյան, Ադոյան: Այստեղ հնարավոր է նաև Ադամ-Աթամ-Աթոյան և Ադամ-Հաթամ-Հաթո-Հաթոյան ձևերի գետեղումը, իբրև այդ անձնանվան ժողովրդախոսակցական տարբերակներ: Ալեքսանդր-Ալեքսան-Ալո, Ալե Ալեյան, Ալոյան, ինչպես նաև Ալ-ով սկսվող մոտ երկու տասնյակ ոչ հաճախական ձևերից: Աղալոյան, Ախլոյան-Աղալար, Աղալում-Աղալո, իսկ Ախլոյանը իբրև Աղալոյան-ի բաղարկությամբ հնչյունափոխված տարբերակ, մանավանդ որ Աղալո անձնանունը խիստ տարածված էր Թիֆլիսահայություն մեջ, իսկ «ախլո» վրացերեն նշանակում է «մոտիկ» ուստի բաղարկությունը այստեղ բավականին հավանական է: Անդրանիկ, Անդրեաս-Անդրո, Անդրի, Անդո-Անդրոյան, Անդրիկյան, Անդոյան: Անդոյան ձևի համար պարելի է բերել նաև Անտոն-Անդո անցումը: Ասլան և սրանով բաղադրյալներից, ինչպես նաև Ասլ- և նրանով բաղադրյալներից՝ Ասլեյան և Ասլոյան: Ավդոյան, Ավտոյան- Ավդո, Ավտո-Ավետիք, Ավետիս, Ավդալ, իսկ Ավտո-Ավտոյան ձևի համար կարելի է բերել Ավթանդիլ-Ավթո-Ավտո-Ավտոյան: Ավեյան, Ավոյան-Ավե, Ավո-Ավետիք, Ավետիս, Աբեյան, Աբոյան-Աբ-ով սկսվող մի քանի տասնյակ ձևերից, այդ թվում՝ Արիստակես, Արշակ, Արամ, Արտաշես, Արտավազդ, Արմենակ և այլն: Ինչպես տեսնում ենք այս կամ այն կոչական ձևի համար հաճախ որոշակիությունը բավականին փոքր է, իսկ մոտավորությունը և հավանականությունը մի քանի անձնանուններից ձևավորված լինելու՝ բավականին մեծ: Եվ այս ամենը արդյունք է կոչական ձևերի կազմության

¹⁴³ Ինքնին հասկանալի է Ասոյանց-Ասոյան անցումը, քանի որ ց-ի անկումով կամ -յանց-ի -յան-ով փոխարինելու փաստերը բավականին շատ են:

¹⁴⁴ Չի բացառվում, որ Ապրե, Ապրո կոչականները կապված լինեն Ապրես արական անձնանվան հետ, սակայն վերջինս, ինչպես վկայված է ՀԱՆԲ-ում (հ. Ա, էջ 202), հրնուց ավանդված չէ, փոքր հաճախականություն ունի և արևմտահայոց մեջ չի դորժածվել:

բազմազանության: Չնայած վերևում նշվեցին անձնանվան կոչական տարբերակների կազմության որոշ օրինակափո.թյուններ, բայց դրանց կողքին երբեմն անսպասելի անցումներ են լինում, որոնց վերհանման համար անհրաժեշտ են առնվազն բարբառագիտական, ազգագրական արշավախմբերի տվյալներ: Այսպես, ունենք Աբղոյան ազգանունը, որ կարելի է բխեցնել Աբղալ, Աբղիու, Աբղա, Աբղազիզ, Աբղիմսեհ, Աբղբարիմ և այլ անձնանուններից: Ի դեպ, Աճառյանը Ապսո ձևը, որից կարող էր ձևավորված լինել Աբղոյան ազգանունը բխեցնում է Աբղա-ից¹⁴⁵, սակայն մեզ հանդիպել է հետևյալ օրինակը. Հայրապետ-Հապետ-Հաբեթ, որը նույնպիսի հաջողությամբ կարող էր սերել Աբղոյան ազգանունը:

Ազոյան-Ազրո-Ազարիա, բայց չեն բացառվում նաև Արղուման-Արզո-Ազրո-Ազրոյան և Արզոյան-Ազրյան դրափոխությամբ անցումները: Ազոյան-Ազո-Ազատ, Ազարիա, Ազամաթ, Ազգուլ և սրանով բաղադրություններ: Աղոյան-Աղո-Աղիլիսան, Աթոյան-Աթ-Աթաբեկ, Աթանես, Աթաջան, ինչպես նաև Ադամ-Աթամ-Աթո, Ալեֆոյան-Ալեկոյան-Ալեքսանդր-Ալեքսան-Ալեքո-Ալեքոյան, որից և այլալեզու տարբերակը: Ալմոյան-Ալմո-Ալամ և նրանով բաղադրվածներ, Ալմաստ, Ալում: Աղոյան-Աղո-Աղ-ով սկսվող ավելի քան քառասուն ձևերից, որոնց թվում՝ Աղաբար, Աղարեկ, Աղազար, Աղախան, Աղամալ, Աղավարդ: Ակոյան-Ակո-Հակոբ, Ամսեյան-Ամսե-Համաղասպ, Համասփյուռ: Ամոյան-Ամրո, Ամրամ, Ամրում և Ամիր-ով բաղադրված մի քանի տասնյակ ձևերից: Ամոյան-Ամո-Ամով սկսվող ավելի քան հարյուր տարբեր անձնանուններից, ինչպես նաև Հմալակ, Համաղասպ-Համո-Համոյան-Ամոյան, իրրև այլալեզու տարբերակ: Այդոյան-Այդո-Այդին, Անոյան-Անո-Ան-ով սկսվող մի քանի տասնյակ ձևերից, Ասեյան-Ասե-Աս-ով սկսվող մի քանի տասնյակ ձևերից, և ՚ատկապես՝ Ասատուրից: Ասպոյան-Ասպո-Ասպետ, բայց ավելի հավանական է Աստվածուպով-ը, որից Աճառյանը նշում է հետևյալ տարբերակները՝ Ածպով, Ասծապով, Ասապով-Ասապա, Ապով կամ Աբով¹⁴⁶: Բաղդասար-Բաղդո, Բղդե, Բղդու, Բեդո, Բդո, Բադո, Բադե, Բդե-Բաղդոյան, Բղդեյան, Բղդոյան, Բադեյան, Բադոյան, Բեդոյան և Բդոյան-Բդեյան: Վերջին երեք դեպքերի համար հնարավոր է նաև Բաղալ-ից կազմված լինելու հնարավորությունը:

¹⁴⁵ ՀԱՆԹ, հ. Ա, էջ 11:

¹⁴⁶ նույն տեղում, էջ 233:

Բարխիյան, Բարխոյան-Բարխի, Բարխո-Բարխուղար, հնարավոր է նաև Բարեղամ, Բարդուղիմեոս: Զարմանալի շպետք է թվա Բարխիյան ազգանվան առկայությունը այստեղ, քանի որ նրա հիմքը ձևավորված է ոչ թե -և, -ո ածանցներով, այլ՝ -ի: Պետք է հիշել, որ ժողովրդախոսակցական լեզվում, ինչպես նաև որոշ բարբառներում և մասնավորապես Ղարաբաղի բարբառում այդ ածանցով կոչականներ են կազմվում ոչ միայն հատուկ անուններից՝ Աբրահամ-Աբի, Ապի-Աբիյան, Ապիյան, Պողոս-Պուղի, Պետրոս, Պետի, Սարգիս-Սաբի և այլն, այլև հասարակ անուններից և տատ-տատի, պապ-պապի, նան-նանի և, ինչպես տեսնում ենք, հատկապես մոտ ազգակցություն ցույց տվող բառերից: Ուրեմըն այստեղ գործ ունենք առտնին տարբերակի հետ, որը, շնայած իր սահմանափակ կիրառությունը, շատ արգասավոր է եղել այդ բարբառներում և ուստի ածանցը պետք է դասվի կոչականակերտ ածանցների շարքը:

Բախչայիշ, Բախշի-Բախշո-Բախշոյան և բաղարկություններ Բախշոյան, շնայած հավանական է, որ վերջինս կազմված լինի նաև Բաղշու, Բաղչագույ ձևերից: Բաբլոյան-Բաբլո-Բաբալի, Բաբել, Բաբուլ, շնայած անսովոր անձնանուններ են և փոքր հաճախականություն ունեն, սակայն էրեքն էլ կիրառվել են XV—XVIII դարերում, ուստի հավանականությունը մեծ է նրանցից կոչական տարբերակ կազմվելու, իսկ վերջինից՝ ազգանուն:

Բուզոյան-Բուզո-Բուզաղ, Բուռոյան-Բուրաստան, Բուրթել, Բրուան-Բրո-Բարսեղ, Բարեղամ, Բարդուղ, Բարդուղիմեոս: Փասպար-Փսպե, Փսպո, Փասո-Փսպեյան, Փսպոյան, Փասոյան, վերջին ձևը Փարսոյանի հետ կարող է առաջացած լինել նաև Փարսևան անձնանուններից: Փարեգին-Փարե, Փարո, Փրո-Փարեյան, Փարոյան, Փրոյան: Վերջին ազգանունը կարող է լինել նաև Փրիգոր-Փրո-Փրոյան ընթացքի արդյունք, իսկ Փարեյան-ը և Փարոյանը՝ նաև Հարեյան-ի ու Հարոյանի այլաբեզու տարբերակներ: Փալուստ-Փալո, Փալե, Փլո, Փիլո-Փալոյան, Փալեյան, Փլոյան, Փիլոյան, Փևոզ-Փևո, Փորզո, Փոզո-Փևոյան, Փորզոյան, Փոզիյան, ինչպես նաև Փոզյան, Փոզիյան, Փորզիկյան: Փրբոյան-Փրբուլոյան, Փրիոյան-Փրբո, Փրպո, Փրիո: Փաբոյան-Փաբո-Փաբրիել, Փագոյան-Փագո-Փագիկ, Փերոյան-Փերո-Փերասիմ, Փարեգին: Պավիր-Պավել, Պավո, Պվե, Պվո, Պևո-Պավեյան, Պավոյան, Պվեյան, Պվոյան, Պևոյան, Պրնոյան-Պրնո-Պերենիկ, Պուրան, ինչպես նաև Պոնոյան, որը կարող է ինչպես այս երկու անձնանվան հնչյունափոխված տարբերա-

կը լինել, նույնպես և՛ Դրնոյան-ի: Այստեղ կարելի է դնել նաև Դերենիկ-Դերո-Դերոյան ազգանունը, սակայն Դերոյան ազգանունը կրողներից մեկը վկայում է, որ այն Տեր-ից առաջացած ազգանվան արևմտահայերեն տարբերակն է: Դանիել-Դանո, Դնո-Դանոյան, Դնոյան, Դաւման-Դարմո-Դրմո-Դարմոյան, Դրմոյան, իսկ վերջիններից նաև Դերմոյան: Դաշոյան-Դաշո-Դշխո: Իբրև տարբերակային ձևեր այդ ազգանվան հետեւնք կապում Դոշոյանը և Դաշտոյանը և գտնում, որ այս դեպքում անցմանը նպաստել է բաղարկութիւնը դոշ և դաշտ բառերի հետ: Չնայած ունենք Դաշտենց ձևը, սակայն այն կապվում է Դաշտենք տոհմանվան հետ, որը սովորական էր հայոց մեջ իբրև լեռնաբնակներից տարբերելու միջոց և այս առումով մոտենում է մի կողմից մականվանական, մյուս կողմից՝ տեղանվանական ազգանուններին:

Դերբոյան-Դերբո, կարծում ենք կազմված «Տեր + Պ-ով սկսվող որևէ անձնանուն» կաղապարով, արևմտյան բարբառային հնչողութեամբ, իսկ սրանից հնչյունափոխութեամբ՝ Դրբոյան: Դաւոյան-Դարո-Դարման, Դարեջան, Դարվիշ, ինչպես նաև՝ Դերոյան-Դարոյան: Այստեղ ենք գետնդում նաև Դոբոյան-Դբոյան, ինչպես նաև Դոբրոյան, որ, մեր կարծիքով, բաղարկութեան արդյունք է, ինչպես նաև Դլխոյան, Դուկոյան, Դուդոյան, Դամբոյան ձևերը:

Եղոյան-Եղո-էղիլ և Յադիգար, որից ունենք նաև՝ Յադոյան: Եզոյան-Եզեկիկ, Եզիկ, Յազգուլ, Եզդուն: Եղոյան-Եղո-Եղիազար, Եղիշև, Եղիա, Ենգոյան-Ենգո-Ենգիբար, Ենգիխան, Եջոյան-Եջո-Երջանիկ, Եպոյան-Եպո-Եպրաքսիա, Եպիխան, Եսայան-Եսո-Եսայի, Եսթեր, Երոյան-Երո-Երանոս, Երանյակ, Երանուհի, Երանիկ, Եփրոյան-Եփրո-Եփրեմ, Եփրոսինե, Զաբարիա-Զաֆեյան, Զաֆոյան-Զաքե, Զաքո-Զաբարիա, Զադոյան-Զադո-Զադա, ընդ որում, Թումոյանը կարող է լինել նաև Թուման-Թումո ընթացքի արդյունք, իսկ Թմոյանը՝ Թամար-Թամո-Թմո ընթացքի: Թադևոս-Թադո, Թաթո-Թադոյան, Թաթոյան, Թուխոյան, Թխոյան-Թուխո, Թխո-Թուխայր, Թուխմանուկ, Թուխծամ, Թուխիկ, Թուխթամար, Թուխխան: Լուսոյան-Լուսո-Լույս և Լուս-բաղադրիչներով մի քանի տասնյակ ձևերից, այդ թվում՝ Լույս, Լուսպարոն, Լուսաբեր, Լուսեր, Լուսեղեն, Լուսիկ և այլն: Խաշոյան, Խաշիկյան, Խեշոյան, Խեշյան, Խաջոյան, Խաշո, Խաշի, Խեշո, Խշե-Խաշատուր և Խաշ-ով մի քանի տասնյակ անձնանուններ ու սրանց տարբերակները: Բերվածներից վերջինը չ>ջ հնչյունափոխութեան արդյունք է, սակայն կարող է լինել նաև Հաջի-ով սկսվող անձնանուններից իբրև այլալեզու տարբերակ:

Կաւապետ-Կրպո, Կարո, Կապե, Կեպե-Կրպոյան, Կարոյան, Կապե,

Կեւելեյան, Գրիգոր-Կիրկո, Կրկե, Կիկո, Գիքո, Գոքո, Գոգո, Կիրկոյան, Կրկեյան, Կիկոյան, Գոքոյան, Կաժեյան, Կաժոյե-Կաժե, Կաժո-ՀԱՆԻ-ում Կաժ-ով որեւէ վկայութիւն չկա, սակայն «Կալվածագրերում» մեզ հանդիպել է Կաժիկ ձևը՝ «Կաժիկի սրդի...»¹⁴⁷: Կոստոյան-Կոստո-Կոստանդին, Կոստան: Կիղոյան-Կիլո-Կյուրեղ, Կեցոյան-Կեցո-Կեցուն: Կոն-յան-Կրո-Կարապետ, Գուրգեն-Գուրո, Գրիգոր-Գրո ձևերից և շի բացառ-վում Կոոյան, Կուրոյան-Կրոյան անցումը ևս: Կորբոյան-Կորբո-Կարա-պե՞տ, Կուրոյան-Կուրո-Կուրդին, ինչպես նաև Կրոյան-Կուրոյան, ր-ի յիւստիանութեամբ: Գոոյան, Կտոյան-Կտո, Գոո-Կարապե՞տ, ինչպես նաև կարող են լինել Գոոյան, Կտոյան փոխադարձ անցումների արդյունք:

Հայրապետ-Հայրո, Հայո-Հայրոյան, Հայոյան, Հարություն-Հարե, Հարո-Հարեյան, Հարոյան, Հայդրոյան-Հայդրո-Հայրապետ-Հայրո, դ-ի յավելումով, իսկ Հայդրոյանից կարող էր ծագել նաև Հայթոյան-ը, շնա-յած շի բացառվում, որ վերջինս կասկած լինի Հայիսաթուն անձնանվան հետ: Հակեյան-Հակե-Հակոբ, Հովեյան-Հովե-Հովհաննես, Հովսեփ, Հո-վասափ: Համրոյան-Համբո-Համբարձում, Հախոյան-Հախո-Հախվերդի, Հախնազար, Հախում, Հազրոյան-Հազրո-Հազար և նրանով բաղադրված մոտ մեկ տասնյակ ձևերից, որոնց թվում՝ Հազարբեգ, Հազարվարդ: Հովսոյան-Հովսո-Հովսեփ, Հովասափ, Հովհաննես: Ղազար-Ղազե, Ղա-զո, Ղազի, Ղզրո-Ղազեյան, Ղազոյան, Ղազիյան, Ղզրոյան, Ղուկաս-Ղու-կե Ղուկո, Ղուկեյան, Ղուկոյան:

Մկրտիչ-Մկրո, Միկո, Մկո, Միտո, Միդո-Մկրյան, Միկոյան, Մկո-յան, Միտոյան, Միդոյան, Մնացական-Մնո, Մնե, Մացո-Մնոյան, Մնե-յան, Մացոյան, Մանկասար-Մնկո, Մանգո-Մնկոյան, Մագոյան, Մով-սես-Մոսո, Մուսո-Մոսոյան, Մուսոյան, Միֆայել-Մուբո, Միո, Մաքե, Մբլ, Մակե-Մուբոյան, Միոյան, Մաքեյան, Մքեյան, Մակեյան: Այս դեպքում շի բացառվում նաև Մաքե-Մաքեյան-ի և Մքե-Մքեյանի ծագու-մը Մաքրուհի ձևից, իսկ Մակեյանը կարող է լինել նաև Մաքեյանի ալ-յալեզու տարբերակը:

Մաւաիրոս-Մարտո, Մարդո, Մատո-Մարտոյան, Մարդոյան, Մա-տոյան, շի բացառվում նաև Մաթևոս-Մատո-Մատոյան հնարավորութիւ-նը: Մնոոյան, Մնդոյան-Մնդո, Մնտո-Մանդին, Մանանդ և այլն, իսկ մաս-նավոր դեպքում՝ Մնացական-Մնո-Մնդո անցումը ևս: Մելոյան-Միլոյան, Մելեյան-Մելո, Միլո Մելե-Մելիք և սրանով բաղադրված ձևերից՝ Մելիք-սեթ, ինչպես նաև՝ Մելիտոս, Միլիտոն: Նիկոյան-Նիկո-Նիկողոս, Նիկոլ և այլն, Նինոյան-Նինո-Նունե, Նունուֆար: Նավոյան-Նավո-Նավասարդ,

¹⁴⁷ Կալվածագրեր...

Ննոյան-ՆՏո-Նահապետ, Նազոյան-Նադո-Նադար, Նաղան, Նազ-ով սկըս-
վող այլ ձևեր:

Չատիչան-Չատի, Չտեյան-Չտե, Չատոյան-Չատո, ղուլգերը հանգում
են Խաչատուր-ին, Չիչոյան-Չիչո-Մանուչար, Չիչար, Չարոյան-Չալո-
Մանուչար, Չարբուղաղ, Չիլոյան-Չիլո, կարծում ենք այս դեպքում այլև-
լի հավանական է մականվանական ծագումը, քանի որ, ինչպես արդեն
նշվել է, ունենք Չիլասլան-Չիլասլանյան, Չիլ-Ավագ-Չիլավագյան:

Պետրոս-Պետե, Պետո-Պետեյան, Պետոյան, Պատիկ-Պատե, Պատո-
Պատեյան, Պատոյան, Պուլեյան և Պուլոյան-Պուլե, Պուլո, որոշ պայմաննե-
րում, հատկապես կաթոլիկ հայերի մոտ Պողոս անձնանունը ստանում էր
փոխատու լեզվի՝ հունարենի հնչյունական պատկերը՝ ոս-ի կրճատմամբ:
Հայտնի է նաև, որ ղ-ի արտասանությունից խուսափելու համար, գի-
տակցաբար հայկական Պողոս ձևը հնչեցվել է իբրև Պուլ-ոս, որից և
նրա կոչական տարբերակները, իսկ վերջիններից՝ ազգանունները: Պո-
ղոս անձնանվան կոչական տարբերակից ազգանուն գոյություն չունի:
Պապ-Պապե, Պաբե, Պապո-Պապեյան, Պաբեյան, Պապոյան, նշված
ազգանուններից առաջին երկուսը գրային տարբերակներ են:

Ռոնոյան-Ռբո-Առաքել, Ռասոյան-Ռասո-Ռոստոմ, Արիստակես-
Ռստակես: Ռաշոյան-Ռաշո-Ռաշիդ, Ռուշոյան-Ռուշո-Առուշան-Ռուշան,
Ռաֆոյան-Ռաֆո-Ռաֆայել: Հայկական անձնանունարանի և ոչ մի միավոր
այնքան կոչական տարբերակներ չի սերել, որքան Սարգիս անձնանունը
և դրանցից այնքան ազգանվանակերտ հիմքեր չունենք, որքան այդ անձն-
անվան տարբերակներից՝ Սարգիս-Սաբե, Սագե, Սագո, Սաբո, Սաբի,
Սբո, Սերգո, Սրբո-Սաբեյան, Սագեյան, Սագոյան, Սաբոյան, Սաբիյան,
Սբոյան, Սերգոյան, Սրբոյան: Պետք է ընդունել Սաբե-Սագի և Սարո-
Սագո գույգերի արտասանական տարբերակ լինելու հնարավորությունը
ևս: Ստեփան-Ստեփո, Սեփո-Ստեփոյան, Սեփոյան, Տեփոյան, Սիւեյան-
Սիրոյան-Սլրե, Սիրո-Սեր բառով բաղադրված ձևերից, այդ թվում՝ Սիրա-
կան, Սիրանուշ, Սիրաբ, Սիրուն: Սաղոյան, Սղոյան-Սաղո, Սղո-Սաղա-
թել, Սեղոյան, Սերոյան-Սեղո, Սեթո-Սեղրաբ, Մելիքսեղիկ-Սեղիկ, Սե-
թիկ, Սեղա: Սիսոյան-Սիսո-Սիսակ և Սիս-ով բաղադրված մի քանի այլ
ձևեր: Սնոյան-ՍՏո-Սահակ, Սանթոյան-Սանթո-Սանթոս-Սանթուր, Սա-
ֆոյան-Սաֆո-Սաֆար, Սողոյան, Սղոյան-Սողո, Սղո-Սողոմոն, ինչպես
արդեն նշել ենք Սղո-Սղոյան-ը կարող է կապված լինել նաև Սաղաթելի
հետ: Սարոյան-Սարո-Սար-ով սկսվող մի քանի տասնյակ ձևերից, ո-
րոնց թվում՝ Սարիբեկ, Սարուխան, Սարկավագ, Սարում և վերջապես
նաև՝ Սարգիս:

Հայրանունը իբրև հիմք: Հայ անձնանվանագիտական պատմությունից հայտնի է, որ հայրանուն կազմելու եղանակը դարեր շարունակ ածանցումն ու սեռականի վերջավորություններն են եղել, որոնց մասին մանրամասն խոսվել է: Հիշեցնենք միայն, որ վերջին մի քանի դարերի ընթացքում հայրանվան կազմության միջոցները նկատելի փոփոխություններ կրեցին: Մասնավորապես -ի-ի հանգոյ հայրանունների¹⁴⁸ սեռականի կազմության ժամանակ ն-ի հավելումը ի նկատի ունենք՝ Սարգիս-Սաքի-Սաքնի, Խաչատուր-Չատի-Չատնի, Աստվածատուր-Ծատի-Ծատնի, Գևորգ-Գորգի-Գորգնի, Կոստանտին-Կոստի-Կոստնի և այլն: Մինչդեռ այս կերպ ձևավորված հայրանունները դառնում էին անվանման բանաձևի անդամներ և հետևաբար պոտենցիալ ազգանվանակերտ հիմքեր: Եվ իրոք, հայկական ազգանունարանում առանձնանում են այնպիսի միավորներ, որոնց հիմքերը կարելի է բնութագրել իբրև անձնանվան -ի-ով կազմված առտնին տարբերակների սեռական հոլովածներ, որոնց մեջ ն-ն և ի-ն դրափոխվել են: Մեր կարծիքով այս հնչյունափոխության գլխավոր, եթե ոչ միակ պատճառը, ի-ից հետո-յանի ավելացման հետևանքով առաջացող հորանջից խուսափելն է՝ Սաքի-Սաքնի Անտին-Սաքնիյան-Սաքինյան, Չատի-Չատնի Օվագիմ-Չատնիյան-Չատինյան, Գորգի-Գորգնի Մուքո-Գորգնիյան Գորգինյան, Ծատի-Ծատնի Կոստի-Ծատնիյան-Ծատինյան: Ի դեպ, հայկական ազգանուններում ի-ի հանգոյ այլ հիմքեր ևս կան: Այդ դեպքում հորանջից խուսափելու համար հնչյունաբանականն այլ միջոցներին զուգահեռ կիրառվել է նաև ն-ի հավելումը: Նման դեպքերին կանդրադառնանք ավելի ուշ՝ տարբերակային ազգանունների մասին խոսելիս:

Այս կարգի ազգանունները բավականին սահմանափակ թիվ են կազմում, քանի որ երևույթը հատուկ է եղել գլխավորապես Ղարաբաղի բարբառախմբին, Լոռվա և որոշ շափով Իջևանի, Շամշադինի, Նոյեմբերյանի խոսվածքներին: Քանի որ նման օրինակներում հիմքերը բարբառալին դրսևորումներ են, ուստի, մեծ մասամբ, նկատելիորեն, իսկ երբեմն անձանաչելիորեն հնչյունափոխված են: Բերենք այդ օրինակները՝ Ապինյան, Ածինյան, Աթինյան, Անտինյան, Ափինյան, Գինայան, Գագինյան, Գոգինյան¹⁴⁹, Գորգինյան, Չանգինյան, Խոջինյան, Մագինյան, Մատինյան, Կանչինյան, Կոծինյան, Կոստինյան, Կու-

¹⁴⁸ Վերևում այդպիսի կազմությունները կոչեցինք «առտնին տարբերակ»:

¹⁴⁹ Այս դեպքերում կարող ենք ունենալ նաև այլալեզու անցում՝ Ափինյան-Ապինյան, Գագինյան-Գագինյան:

շինյան, Կոտինյան, Կուրինյան, Կյուրինյան¹⁵⁰, Կափինյան, Հաջինյան, Ղազինյան, Մակինյան, Մուսլինյան, Յուլինյան, Նոնինյան, Չասինյան, Պեպինյան, Ջաղինյան, Ջանինյան, Սագինյան, Սահինյան¹⁵¹, Վաղինյան, Վաթինյան, Փոթինյան, Փանինյան, Փանանյան¹⁵², Փաշինյան, Զյասինյան, Քոչինյան և այլն: Հիմքերի ստուգաբանությունը չենք անդրադառնում, քանի որ նրանց մեծ մասը քննված է անձնանվան ժողովրդաստեղծական տարբերակներով կազմություններին նվիրված բաժնում:

Նրբ վերը խոսվեց հայրանման կազմության մեջ վերջին դարերում տեղ գտած փոփոխությունների մասին, ի նկատի ունենալով նաև թուրքական լեզուների ազդեցությունը, որ դրսևորվել է -օղլի բաղադրիչի ավելացմամբ գլխավորապես հոր անձնանվանը կամ մականվանը՝ Հանեսօղլյան, Դեմիրճօղլյան, Յաղուբօղլյան և այլն: Նշենք, որ այսպիսի կազմությամբ հիմքերը ևս բավականին սահմանափակ են և տարածքային սահմանափակում ունեն՝ հատուկ են եղել գլխավորապես արևմտահայ քաղաքային բնակչությանը:

Այս դեպքերում ևս Օղլի-ին նախորդող հատվածը կրթման զգալիորեն հեռացել է իր նախնական ձևից: Մինչև համապատասխան օրինակներ բերելը ավելացնենք, որ մեր ազգանուններում առկա են օղլան-ով մականվանական արժեք ունեցող ձևեր՝ Բոզօղլանյան, Գյուլօղլանյան, Կարաօղլանյան, որոնց կանդրադառնանք մականվանական ազգանուններին նվիրված բաժնում: Այստեղ պարզապես ուզում ենք նշել, որ որոշ դեպքերում չի բացառվում պարզեցման (հասլոնոգիայի) գործունեության հետևանքով -Օղլանյան-Օղլյան անցումը, շնայած բավականին հրատակ իմաստային շափանիչ կարելի է նշել այդ երկու կարգի կազմությունները տարբերելու համար՝ -օղլ (ի) բաղադրիչին մեծ մասամբ նախորդում է անձնանուն կամ նրա հնչյունափոխված կամ ժողովրդաստեղծական տարբերակ, մինչդեռ -օղլան-ին՝ գլխավորապես մականուն: Փոխառյալ կաղապարով հայրանուններից կազմված հետևյալ ազգանուններն ունենք՝ Աճամօղլյան, Աջամօղլյան, շնայած Աճառյանը բերում է Աջամիև, Աջամիան¹⁵³ անձնանունները, բացի այդ, ունենք Աջմոնց,

¹⁵⁰ Ձի բացառվում Կյուրինյան-Կուրինյան հնչյունափոխություններով անցումը ևս.

¹⁵¹ Ունենք նաև Սեինյան ձևը, որ, մեր կարծիքով, կարող է լինել Սահինյան-ի հնչյունափոխված տարբերակը:

¹⁵² Գանի որ կազմությամբ հայրանվանականը Փանինյանն է, ուստի կարծում ենք, որ վերջինս առնմանական հնչյունափոխությամբ առաջացած կարող է լինել:

¹⁵³ ՀԱՆԲ, Հ. Ա, էջ 204:

Աջամյան, Աճեմյան տոհմանունը և ազգանունները, սակայն գտնում ենք, որ Աջամօղլյանը նույնպիսի հաջողությամբ կարող է տեղ գտնել նաև մականվանական ազգանունների շարքում «պարսկաստանցու որդի» իմաստով: Գենչօղլանյան, այստեղ գործ ունենք Գենչօղլանյան→ Գենչօղլյան վերը նշված անցման հետ, քանի որ Գենչօղլանյան-ը «երիտասարդ, մանկահասակ տղա, պատանի» իմաստն ունի: Նույնպիսի ծագում ենք ենթադրում նաև Գյուլօղլյանի համար, քանի որ նախ՝ Գյուլօղլանյան ձևը ևս վկայված է մեր ազգանունարանում և՛ Գյուլը-ը, ինչպես հայտնի է, «վարդ, ծաղիկ» իմաստներն ունի, որ համապատասխանում է վերը բերված մեր շափանիշին: Հայրանվան սահմանման մեջ, ինչպես տեսանք, ենթադրվում է և անձնանվանական և մականվանական ծագում: Քննարկվող կաղապարով ազգանուններում կան այնպիսիք, որոնց օղլի-ին նախորդող հատվածը դասվում է անձնանունների շարքը՝ Խաչիկօղլյան, Մաթոսօղլյան, Հանեսօղլյան, Գուրօղլյան, Բուրօղլյան, Յաղուբօղլյան, Շահամօղլյան, Ունուպօղլյան, Թամիրօղլյան, Խոջօղլյան, Եղոօղլյան, Մսրօղլյան, Մանուկօղլյան: Զիրօղլյանի անձնանուն հիմքը վկայված չէ, սակայն Զիրիկյան և Զիրոյան ազգանունները իրավունք են տալիս հայրանվանական ծագում վերագրել նաև Զիրօղլյան-ին: Քյորօղլյան ազգանունը գտնում ենք բաղարկությամբ առաջացած Քերօղլյանից, որը հայրանվանական ծագում ունի: Ունենք նաև Բուրդօղլյան և Կուրդօղլյան ու Կուլօղլյան ձևերը: Բերվածներից առաջինը նույնպես հայրանվանականն է, իսկ հաջորդները՝ նրա հնչյունափոխված տարբերակները: Մեր ազգանունարանում վկայված են նաև էրդօղլյան- և Երդօղլյան ձևերը: ՀԱՆԲ-ում բերվում է էրդողղի անձնանունը և ստուգաբանվում իբրև «տղամարդ ծնվեց»¹⁵⁴: Մեր կարծիքով, էրդօղլյանը վերջինիս բաղարկային հնչյունափոխությամբ առաջացած տարբերակն է: Իհարկե չի բացառվում նաև «տղամարդ» + օղլի կաղապարը, սակայն այդ դեպքում պետք է ունենայինք էրօղլյան: Ուրեմն՝ էրդողղի-էրդողղյան-էրդօղլյան: Մականվանական ծագմամբ հայրանվանական չետեյալ ազգանուններն ունենք՝ Գեմիրձօղլյան, Ղասաբօղլյան, Չարչօղլյան, Քեշիչօղլյան, Հաջօղլյան, Քալլօղլյան, Զուրուշտօղլյան: Ունենք նաև Զիթչիօղլյան ազգանունը, որ գտնում ենք Զրթչիօղլի հայրանունից ծագած: Այստեղ պետք է դասել նաև Կուլիջօղլյան և Ղուլիձօղլյան ազգանունները իբրև հնչյունական տարբերակներ:

¹⁵⁴ ՀԱՆԲ, հ. Բ, էջ 237:

Ազգանվանակերտ անձնանվանական շարքեր: Իբրև այս գլխի յուրատեսակ ամփոփում ներկայացնում ենք հաճախական, գլխավորապես բնիկ և փոխառյալ-յուրացված անձնանունների տարբերակներից սերված ազգանունների հնարավոր ամբողջութունը:

Աստվածատուր - Ասեյան, Տատուրյան, Ատրյան, Ասոյանց, Ասոյան, Աստոյան, Աստեյան, Ածինյան, Ածյան, Ասծատրյան, Ասծատուրյան, Ասցատրյան, Ասիկյան, Ասատրյան, Ծատուրյան, Ասուլյան, Ածիկյան, Ծատինյան, Ծաղինյան, Արիստակես-Արիսյան, Առստակյան, Ռաստակյան, Ռստակյան, Դագեսյան, Դաքեսյան, Թագեսյան:

Աբրահամ - Ափրամյան, Ափիկյան, Ափինյան, Աբրոյան, Աբյան, Ապրոյան, Ափրոյան, Ապրեյան, Աբրեյան, Աբիյան, Ապիկյան, Ապրիկյան:

Ավետիք, Ավետիս-Ավեյան, Ավոյան, Ավղինյան, Ավտոյան, Ավդոյան, Ավյան, Ավետյան, Ավիկյան:

Ալեքսանդր-Ալեքյան, Ալեքոյան, Ալեկոյան, Այելյան, Օլեյան, Ասկանդարյան, Սկանդարյան, Սանթուրյան, Ալեքսանյան, Սանթրոսյան, Սանդրոյան:

Անդրանիկ - Անդրիկյան, Անդրոյան, Անդրիկյան, Անդիկյան, Անտիկյան, Անդրյան, Անտինյան, Անդոյան:

Ամբակում - Ամբակյան, Ամպագումյան, Ամպագունյան:

Բաղդասար - Բղեյան, Բղոյան, Բաղեյան, Բաղոյան, Բաղիկյան, Բաղեյան, Բաղոյան, Բղղեյան, Բղղոյան, Բաղղոյան, Բաղղիկյան, Բախտիկյան, Բաղղիյան, Բղրյան, Բաղիյան:

Բարսեղ - Բարեյան, Բարոյան, Բրսոյան, Բարիկյան, Բարսիկյան, Փորսուղյան, Փորսուխյան, Փալսիլյան:

Բենիամին - Բենոյան, Բենեյան, Բենյան, Բենիկյան, Բինոյան, Բանոյան:

Բավական - Բավեյան, Բավիկյան, Բավոյան:

Գևորգ - Գորգիյան, Գորգյան, Գևորգիզյան, Գևորգիզյան, Գիվարգիզյան, Գոգյան, Գեուզյան, Գեոյան, Գորգինյան, Գոգինյան, Կեվեյան, Գագիյան, Գագինյան:

Գրիգոր - Գիքոյան, Գիգոյան, Կիրկոյան, Կրիկյան, Գիգուլյան, Կրկեյան, Գոգոյան, Գոքոյան, Գոգորյան, Գոքորյան, Գիքորյան, Գուգուլյան, Կուրիկյան, Կուրինյան, Կյուրինյան, Քիքիյան, Քիքանյան, Գորգորյան, Գրոյան, Գրիշկյան, Գրգիկյան, Գրքիկյան, Գերկիկյան, Գրիքյան, Գիքանյան, Գիշյան, Գիգումյան:

Գաբրիել - Գաբոյան, Գաբրիկյան, Գեփրիկյան, Կափինյան, Կեբի-
յան, Կբեյան:

Գալուստ - Գալեյան, Գալոյան, Գալիկյան, Գալյան:

Գարեգին - Գարիկյան, Գարուշյան, Գարոշյան, Գարեյան, Գարոյան,
Գարյան:

Գուրգեն - Գորոյան, Գորեյան, Գուրոզլյան:

Գարսևան - Գասոյան, Գերոյան, Գարոյան, Գարսոյան:

Գասպար - Գսպեյան, Գսպոյան, Քեսոյան, Քյասինյան:

Դավիթ - Դավեյան, Դավոյան, Դվեյան, Դվոյան, Դեոյան:

Դանիել - Դանիելիկյան, Դանոյան, Դնոյան:

Դերենիկ - Դերիկյան, Դերոյան:

Եգեկիել - Եգեկյան, Եգիկյան, Եգյան, Եգոյան:

Զաֆար - Զաքեյան, Զաքոյան, Զաքյան, Զաքիկյան:

Եղիշե - Եղիշյան, Եղիկյան, Եղոյան:

Թովմաս - Թոմասյան, Թումասյան, Թումիկյան, Թումյան, Թոմո-
ան, Թումոյան, Թմոյան:

Թեոդորոս - Թորոսյան, Թեսոյան, Թեիկյան, Թորիկյան, Թուրիկյան:

Թամամ - Թեմիմյան, Թամոյան:

Թադևոս - Թաթոսյան, Թաթիկյան, Թաթուլյան, Թաթլյան, Թաթո-
յան, Թադոյան:

Թագվոր, Թագունի - Թագոյան, Թարավիրյան, Թագուլյան:

Իգնատիոս - Իգնոյան, Իգնաթյան, Իգնատյան, Իգնատեսոյան, Իգնա-
թեսոյան, Իգնաթեսոյան, Իգնատոսյան, Էգնատոսյան, Էգնոյան, Էգնա-
յան:

Խաչատուր - Խաչոյան, Խաչոյան, Խաչեյան, Խչեյան, Խչոյան,
Չարյան, Չատինյան, Չտեյան, Չատոյան, Խեչոյան, Խաչոյան, Խաչիկ-
ոզլյան, Խաչյան, Խեչյան, Խեչիմյան, Խաչանյան:

Ղուկաս - Խուգիյան, Խուգեյան, Ղուկոյան, Ղուկեյան:

Ղունկիանոս - Խնկոյան, Խնկիկյան, Խնգիկյան:

Խորեն - Խրոյան, Խոոյան, Խրիկյան, Խորիկյան:

Կարապետ - Կրպոյան, Կրպիկյան, Կարոյան, Գրպոյան, Գրքոյան,
Կրփոյան, Կապեյան, Կբեյան, Կրոյան, Կեպեյան:

Կոստանդին - Կոստանյան, Կոստիկյան, Կոստինյան, Կոնստանդյան,
Կոստանդյան:

Կյուրեղ - Կիրեղյան, Կրեղյան, Կիղոյան:

Կատարինե, Կատարյալ - Կատարյան, Կատյան, Կատարիկյան, Կատարիկյան, Կղիկյան, Կետիկյան, Կարտիկյան:

Հովհաննես-Հովեյան, Հովոյան, Հովյան, Հանեսողլյան, Հովեսյան, Վանեսյան, Վանյան, Վանոյան, Վանիկյան, Վանեյան, Վանիկյան, Օնիկյան, Օհանյան, Ավանյան, Ավանեսյան, Ցսյան, Յանիկյան, Օվեսյան, Հանեյան, Հանեշյան, Հաննեյան,

Հարուրյուն - Արթինյան, Արթյան, Հարթենյան, Թունյան, Արության, Հարոյան, Արոյան, Հարեյան, Հարոսյան:

Հովսեփ, Հովասափ - Ուսեպյան, Օսիպյան, Օսիկյան, Հովապյան, Յասիկյան, Օսեյան, Օսյան, Ավասափյան, Հովսոյան, Հոփյան:

Հովակիմ - Հովակյան, Ավակիմյան, Ավագիմյան, Աքիմյան, Օվիմյան, Օվագումյան, Յագոյան:

Հայրապետ - Հայրոյան, Հարյան, Հաբեթյան, Հայոյան, Հայդոյան:

Ղազարոս - Ղազարյան, Ղազոյան, Ղազիկյան, Ղազինյան, Ղզրոյան, Ղազեյան, Լազիկյան:

Ղևոնդ - Ղևիյան, Ղևինյան, Ղևենյան:

Ղուկաս - Ղուկեյան, Ղուգեյան, Ղուկոյան, Ղուգիյան:

Մնացական - Մնեյան, Մնոյան, Մացոյան, Մնակյան, Մացակյան, Ցականյան:

Մկրտիչ - Մկոյան, Միկոյան, Մկրյան, Միտոյան, Միդոյան, Միդյան, Միտյան, Մուկուշյան, Միկիշյան, Միտիշյան, Միկուշյան, Միկիտյան, Մակիշյան, Մակուշյան, Միտինյան, Միքիշյան:

Միքայել - Մուքելյան, Մուքայելյան, Մուխայելյան, Մեքինյան, Մխելյան, Միլյան, Մոխայան, Մքանյան, Մխիկյան, Միքյան, Մխեյան, Մաքեյան, Միտոյան, Մուքոյան, Մակեյան, Մքեյան, Մաքեյան:

Մովսես - Մոսոյան, Մոսիկյան, Մոսիյան, Մուսոյան, Մուսլոյան, Մուսյան, Մոսյան, Մուսիկյան:

Մեհրաբ - Միրաբյան, Մարաբյան, Միրիբյան, Մեհրոյան, Միրոյան, Մհոյան

Մարտիրոս - Մարտոյան, Մարտյան, Մարտիկյան, Մրտիկյան, Մատոյան, Մատիկյան:

Մաթևոս - Մաթոսյան, Մաթոսողլյան, Մաթոյան, Մատոյան:

Մանկասար - Մանգոյան, Մնկոյան:

Նիկողայոս - Նիկողոսյան, Նիկոյան, Նիկալյան, Նիկուլյան:

Նունե - Նունյան, Նունուշյան, Նինոյան, Նոնինյան:

Նան - Նանյան, Նանուշյան, Նանինյան:

Նավասարդ - Նավոյան, Նովոյան:

Շաբար -Շաբրոյան, Շաբրյան, Շաբրիկյան:

Շատ -Շատոյան, Շտոյան, Իշտոյան, Շատիկյան, Շտիկյան, Շաղ-
յան, Շաղոյան:

Շուշան-Շուշյան, Շուշիկյան, Շուշոյան:

Պետրոս -Պետոյան, Պետեյան, Պեպինյան, Պետիկյան, Պեպան-
յան, Պեպեյան:

Պատիկ -Պատեյան, Պատոյան:

Ջան-Ջանոյան, Ջանինյան, Ջանիկյան:

Ջավահիր -Ջավեյան, Ջավոյան:

Ռաֆայել -Ռաֆյան, Ռաֆոյան:

Սարգիս -Սաբոյան, Սագոյան, Սաքեյան, Սքեյան, Սքոյան, Սաքե-
յան:

Սագեյան, Սրբոյան, Սագինյան, Սարույան, Սքանյան, Սաքանյան:

Սահակ -Սհոյան, Սահինյան, Սեինյան:

Ստեփանոս -Ստեփոյան, Սեփոյան, Տեփոյան, Տեփոսյան, Տեփա-
յոսյան, Ստեփանյան, Տեփանյան:

Սողոմոն -Սողոյան, Սողիկյան, Սուղիկյան, Սուղյան:

Սաղաթել -Սաղոյան, Սաղիյան, Սաղյան, Սաղիկյան, Սղոյան,
Սաթեյան:

Տիգրան -Տիկոյան, Տիկյան, Տեքոյան:

Փանոս -Փանոյան, Փանիյան, Փանյան, Փանիկյան, Փանանյան,
Փանինյան:

Քոչար -Քոչոյան, Քոչիկյան, Քոչյան, Քոչիյան, Քոչինյան:

Տարբերակային ազգանվանակերտ առավել հիմքեր տալիս են գըլ-
խավորապես բնիկ և փոխառյալ-յուրացված շերտերի փաստերը, իսկ
այս երևույթը մեկ անգամ ևս գալիս է հաստատելու մեր այն միտքը, որ
այս կամ այն անձնանվան յուրացվածության գլխավոր շափանիշներից
մեկը պետք է տեսնել նրանից սերված տարբերակների քանակի և հա-
ճախականության մեջ:

Բերվող փաստերը վկայում են, որ Աստվածատուր, Աբրահամ, Բաղ-
դասար, Գևորգ, Գրիգոր, Խաչատուր, Կարապետ, Հովհաննես, Հարու-
թյուն, Մնացական, Մկրտիչ, Միքայել, Մարտիրոս, Սարգիս, Ստեփան
անձնանուններն են հատկապես բազմազան տարբերություններ ավել,
որոնցից գրեթե բոլորը դարձել են ազգանվանակերտ հիմքեր:

Այս գլխի ընձեռած փաստերից էլնելով և օգտվելով բառավիճակա-
գրության մեթոդի ըմբռնումներից, կարող ենք ասել, որ այս մեկուկես

տասնյակ հիմքերը մոտ մեկ տասնյակ այլ հիմքերի հետ միասին կազմում են մեր անձնանունարանի այն միջուկը, որը 1000 տարվա ընթացքում շատ քիչ է փոփոխության ենթարկվել: Ավելին, ոչ միայն կորուստներ չի ունեցել այս շերտը, այլև իր տարբերակային ձևերի շնորհիվ ավելի հարազատ է դարձել մեր ժողովրդի բոլոր հատվածներին ու խավերին:

Այսպիսով, հայկական ազգանունների մեջ անձնանուն հիմքերը զգալի տեղ են գրավում, ներկայացնելով հայոց անձնանունների ամբողջ համակարգի մի յուրօրինակ մանրակերտ, որում արտացոլված է համակարգը իր բոլոր առանձնահատկություններով:

ՈՉ-ԱՆՁՆԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

1. ՈՒՂԵԿՑՈՂ ԲԱՌԵՐ

Ուղեկցող բառի ըմբռնումը լայն է: Նրանով նշանակվում է բառապաշարի այն հատուկ շերտը, որը տարբերվում է տերմիններից, ընդհանուր գործածության բառերից և հատուկ անուններից առաջին հերթին իր կիրառական առանձնահատկությամբ: Հատուկ անունների յուրաքանչյուր կարգ ունի իրեն հատուկ հասարակ բառերի մի խումբ, որի անդամները ուղեկցում են նրան. Անձնանունների համակարգի համար բնորոշ են ազգակցություն, զբաղմունք, արհեստ, աստիճան, կոչում, տիտղոս ցույց տվող, ինչպես նաև տեղանվանական ծագում ունեցող բառերը: Այսպես, հայկական անձնանվանագիտության պատմությանը¹ նվիրված մի աշխատության մեջ նշվել է, որ հայկական անձնանվանական համակարգի և հատկապես նրա կարևոր դրսևորումներից մեկի՝ անվանման բանաձևի գործառույթը հնարավոր չէր լինի առանց այդ կարգի բառերի մասնակցության: Անձի անվանման հայկական բանաձևերում առկա են ազգակցություն ցույց տվող՝ որդի, հայր, թոռ, դուստր, եղբայր, կողակից, ամուսին, ասալինան, տիտղոս, պաշտոն ցույց տվող՝ իշխան, նահապետ, մարզպան, մարտպետ, սեպուհ, տանուտեր, մարաջախտ, պարոն, խոջա, հարյուրավագ, քալանթար, ինչպես նաև վարդապետ, բահանա, Լպիսկոպոս, երեց, տեր, հաջի, մագիստրոս, սարկավագ, մահտեսի, արհեստավոր ու զբաղմունք ցույց տվող՝ ոսկերիչ, գդակկար, կազմող, գիտնական, քարակոփ, հյուան, նկարաքար, խաղաղորդ, արծաթագործ, սհաթջի, դոնդուրմաջի, արծաթպան, բասմաջի տեղանվանական ծագում ունեցող բառեր, որ ձևավորված են գլխավորապես -ցի, իսկ

¹ Տ. Մ. Ավետիսյան, Հայկական պատմական անձնանունագիտություն ակնարկ, «Հայոց լեզվի պատմության հարցեր», Երևան, 1984:

երբեմն՝ փոխառյալն -լի ածանցներով՝ աստապատցի, մուղնեցի, բեթցի, բլրցի, կարսեցի, իզմիրլի² և այլն: Հատկանշական է, որ ՈւԲ վերոբերյալ խմբելը տարբեր ինտոնսիվությամբ ուղեկցել են մեզ՝ կազմավորելով անձի անվանման պաշտոնական բանաձևը: Ավելին, ազգանունների կանգվածային ձևավորման շրջանում այդ կարգի բառերը հաջողությամբ մրցել են անձնանվան և նրա տարբերակների հետ ազգանվանակերտ հիմք դառնալու ինդրոմ: Իբրև այս ամենի արդյունք, մեր ազգանունաբանում ՈւԲ հիմքերով կազմությունները պատկառելի թիվ են կազմում:

Մինչև ՈւԲ ազգանունների դասակարգմանն ու քննությանն անցնելը, ներկայացնենք նրանց գործառության պատմության մի համառոտ ակնարկ:

ՈւԲ ամբողջության մեջ ամենատարածվածները ազգակցություն ցույց տվող բառերն են, իսկ վերջիններիցս ամենակարակյացն ու գործառութով գրեթե սահմանափակում չձանաչողը՝ որդին: Բառական է հիշել Սկայորդի և Որդի Դիմաքսևան, ինչպես նաև ավելի ուշ շրջաններից՝ Որդիք և Որդոց անձնանունների մասին վկայությունները³, որոնք ընդգրծում են այդ բառի հարադասությունը, իսկ արդեն IV դ. ունենք Մուշեղ որդի Վասակայ, Վաչէ որդի Արտավազայ, Շաւասպ որդի Վաչէի Արծրունույ և Փառանձեմ դուստր Անդոզկայ բանաձևերը: Բնականաբար վերջին օրինակի դուստր նոմենը բանաձևային իր դրսևորմամբ ոչնչով չի տարբերվում Նախաբղնկից, քանի որ երկու դեպքում էլ գործ ունենք սերման նույն հարաբերության հետ: Այլ կերպ ասած, իրենց գործառական ծանրաբեռնվածությամբ որով և դուստր նոմենները չեն տարբերվում միմյանցից:

Ոչ շրջանում, մասնավորապես արաբական տիրապետության ժամանակ որդի նոմենի նշանակությունը ավելի մեծ չափերի հասավ: Հայտնի է, որ արաբները անձի անվանման բանաձևերը կազմում էին «իբն»- որդի բառ-մասնիկի օգնությամբ: Եվ երբ մեզանում անհրաժեշտություն առաջացավ, պատրաստի ձևը արդեն առկա էր: Նշենք, որ նույն ժամանակներում անձնանուն + որդի + հայրանուն կաղապարով կազմությունները մեծ չափերի հասան: Արաբական մի այլ ավանդույթ, որ մի որոշ շրջան տարածվեց նաև հայերի մեջ և իր նախադեպը չուներ մեզանում, սկսեց գործել փոխատու լեզվում ընդունված ձևի օրինակով: Խոսքը արու բառ-մասնիկի օգնությամբ անդրանիկ արու զավակի

² Նկատենք, որ -լի-ով ձևերը անվանման բանաձևերում ինքնուրույն կիրառություն չունեն, սակայն իբրև ազգանվանակերտ հիմք հանդես են գալիս՝ Իզմիրլյան:

³ ՀԱՆԲ, հ. Գ, էջ 195:

անձնանո նից կազմված հայրանվան մասին: Մ. Օրմանյանը գրում է. «Արարացուց մեջ մեծ բարեբախտություն կհամարվեր մանչ անդրանիկ ձր և այս պատճառով հայրեր իրենց անդրանիկին անունով մականուն էլ կազմեին և այս սովորության համեմատ Սմբատն էլ (յոսքը Սմբատ Բագրատունու մասին է- Տ. Ա.) իրեն կոչեց Աբլաբաս կամ Աբու-էլ Երաս»⁴: Բերենք այլ օրինակներ ևս՝ Ապուպլեճ, Ապումկոն, Ապուսա- յակ, Աբումրուան, Աբուսեթ: Որդի ՈւԲ բանաձևերում դառնում է բազմաստիճան տոհմական կապերի ամենակարևոր օղակների գրսևորողը՝ Աբլխարխիի Հայոց մարզպան որդի Գրիգոր իշխանի որդո Ապուդամրի յազգէ Պալհատունի ի տանէ Արշակունեաց և Շապուհիկ իշխանաց իշխան որդի Գարբանիելի ի տոհմէ Պալհատունի յազգէ Արշակունեաց:

Ուշագրաւ է, որ միջնադարում այս ՈւԲ հանդես է գալիս ոչ միայն հայրանվան հետ միացած՝ Տո տեղորդի, Խանթկայորդի, Ալաւկայորդի, Թոքակերորդի, այլև իր հոմանիշներով՝ Հոնաւարատղա և Զուհակաձագ: Ալէլի՛ն, ուղի՛ն փխում է նաև իր շարագաությունը՝ Գէորգ-Սահակի որդի Գրիգոր Շեթի՛ սողի: Ավելի ուշ, արդէն XVIII դ. Աւարախանի հայկական գաղթօջախում ունենք որդի-ի-դի ւարբերակով ձևավորված անյունմուն բանաձևեր՝ Սարգիս դի Յոհաննի, Հարութիւն դի Դավիթի, Երեմիայ դի Հարութիւնի:

Ազգակցություն ցույց տվող մյուս ՈւԲ համեմատաբար սահմանափակ էիլ առթ թյուն ունեն՝ Վարդիխաթուն կողակից Երևանցի խառատ Գլիգրի՛ն, Մարիամ կողակից Ղազաս Միքայելի՛ն, Աղամալ հայր Կարբեցի Մկրտչի, Ուլուխոջա Գասպարի հայր, Ավետ ամուսին Նաղուխանի, Ծառուկ Մանուկի քոռ, Հովհաննես Մանչեի քոռ, Գուլում դուստր Մելիք Մանուչարի: Երկրորդ կարգի նոմենները ժամանակային բաշխվածություն ունեն: Բնականաբար իշխան, նահապետ, մարզպան, մարդպետ, սեպուհ, թագավոր, արքա, ըզեշխ, սպարապետ, նիզակակից և նման այլ օրինակները կարող էին հանդես գալ հայոց անվանման բանաձևերում սլխավորապես մեր թնջարկության առաջին մի քանի դարերում, մինչդեռ տանուտեր, սլարոն, մարաջախտ, հայրուրավագ, քալանթար, բաբունի, բաբունապետ, պատրիկ և նման այլ օրինակները հատուկ են միջնադարին:

2. «ԱՐՀԵՍՏԱՋՈՐ, ԶԲԱՂՄՈՒՆԵ» ԻՄԱՍՏՈՎ ԲԱՌԵՐ—ԱԶԳԱՆՎԱՆԱԿԵՐՏ ՀԻՄԲԵՐ

Ազգանվանակերտ քննարկվող հիմքերը, ըստ էության, արտացոլում են մարդկային գործունեության, մասնավորապես արտադրության,

⁴ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 2, էջ 924:

այն ուրտաները, ուր գործում էին հայերը հատկապես XVIII դարի վերջին քսուորդից մինչև XX դարի տասական թվականները: Ինչպես բազմիցս ընդգրկել ենք, նշված ժամանակահատվածը հայերի կողմից ազգանունների ընդունման շրջանն է և, բնականաբար, ազգանվանակերտ հիմքերում առավելագույնս հենց այդ շրջանը պետք է արտացոլված լինի:

Արհեստավորների անունների հետ կապված ազգանունները բառակազմորեն բավականին յուրահատուկ են, քանի որ ազգանվանակերտ ածանցին նախորդող հատվածը կամ ազգանվանակերտ հիմքը ձևավորված է համապատասխան ածանցներով՝ -ճի (-ջի, -չի), -գործ, -արար և այլն, իսկ վերջիններիս նախորդող հատվածը էր հերթին նույնպես իմաստային որոշակիություն ունի և ցույց է տալիս արհեստ, զբաղմունք, մասնագիտություն կամ որոշակի նմություն պահանջող որևէ այլ աշխատանք: Արհեստ բմբունման համար ընդունում ենք հետևյալ սահմանումը. «Պատրաստի արտադրանքի մանրապրանքային արտադրության՝ հիմնված աշխատանքի սարգ գործիքների կիրառման վրա... Աշխատանքի հասարակական բաժանման տարբեր փուլերին համապատասխան՝ տրոհվել են տնային և շուկայական տրհեստների... Շուկայական արհեստները մանրապրանքային արտադրության կարևոր աղբյուրներից էին. արհեստավորն ինքն էր վաճառում արտադրանքը»⁵: Ինորոշումից երևում է, որ «արհեստի անվանում + գործող անձ իմաստով ածանց» կաղապարի օգնությամբ կազմված հիմքերը ցույց են տալիս ոչ միայն այս կամ այն արհեստին տիրապետողին, այլև այդ արհեստի օգնությամբ արտադրվող ապրանքի ստեղծողին և վաճառողին: Ընդ որում, մեծ մասամբ այս փուլերը շեն զանազանվում միմյանցից և հանդես են գալիս միևնույն կազմության մեջ գիրկընդխառն: Այսպես, ավանջի, արակչի, բրուտ, մախրամաջի և այլ ձևերում զուգակցվում են ամանեղեն, օղի (ոգելից խմիչք), խեցեղեն, գլխաշոր և՛ արտադրող, և՛ վաճառող իմաստները: Ընդհանրացման ավելի բարձր աստիճանում՝ նաև այդ արհեստներին տիրապետող, քանի որ երբեմն կարելի է այս կամ այն արհեստին տիրապետել, բայց արտադրանք չտալ: Ավելի ուշ, երբ այս բառերը դառնում են ազգանվանակերտ հիմքեր և ժառանգաբար տնցնում են հաջորդ սերունդներին, արտահայտության և բովանդակության պլանների միջև խզումը շատ ավելի նկատելի է դառնում:

Արհեստավոր, զբաղմունք իմաստներով ազգանվանակերտ հիմքերը ձևավորված են՝ -ճի (-ջի, -չի), -գործ, -կար, -արար, -հան, -կոփ, -տաշ,

⁵ ՇՄՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 83

-մագ, -դրան, -քար, -հատ, -որդ, -պան, -թուխ, -իկ ածանցներով ածանցակերպերով, որոնք առանց բացառության ձևավորում են գործ-
-գործ, -արար, -ող, -իչ, -պան, -որդ ածանցները հասարակ անունների
-գործ, սպար, -ող, -իչ, -պան, -որդ ածանցները հասարակ անունների
դեպքում շատ մեծ արգասավորություն են հանդես բերում: Բավական է
նշել, որ սրանց օգնությամբ սերված «գործող անձ» իմաստով կազմու-
թյունները անցնում են հաղարից: Ավելին, այս կաղապարը կարևոր նշա-
նակություն ունի մեր լեզվի դարգացման արդի փուլում արդեն մասնա-
գիտություն, գբադմունք իմաստով նոր բառեր սերելու գործում:

Հետաքրքիր է, որ -ճի, (-ջի, -չի) ածանցը այսօր անարգասովոր է և
եղած կազմությունները մեծ մասամբ պատմական արժեք ունեն: Մեր
ազգանուններում միայն -ճի (-ջի, -չի)-ով կազմություններն են, որ ներ-
կայացված են բազմաթիվ ու բազմադան օրինակներով, մյուս դեպքերը
ընդգրկում են մի քանի, հաճախ՝ միայն մեկ օրինակ՝ Հացագործյան,
Վաշեգործյան, Ժամագործյան, Գինեգործյան, Արծաթագործյան⁶, Մա-
սուգործյան, Սանյագործյան⁷, Կոշկարյան, Քոշկարյան⁸, Մաշկակարյան
(Մաշկակարյան և Մաշկալյան տարբերակներով, Կոնջակալյան⁹, Սու-
կարյան, Սափրիչյան, Գզրարյան, Պայտարյան, Փոխարարյան, Սրճա-
րարյան) (Սրճարանյան տարբերակով), Ներկարարյան, Քարհանյան,
Քարտաշյան, Քարակոփյան, Փայտահատյան, Խաղաղորդյան (Խաղա-
լորտյան և Խաղաղործյան տալբերակներով), Մազմանյան, Հաց-
հոսիսյան, Արծաթպանյան, Զրաղացպանյան (Զաղացպանյան), Գրքա-
շարյան (Կրկյաշարյան տարբերակով), Զնչիլգրանյան, Նալդրանյան,
Նալդրաթյան, Քեչիղրանյան, Չախմախսազյան, Մանուսազյան, Ղոն-
տաղւազյան, Ղալամքարյան, Գալամբարյան, Զիբուկքարյան, Նախշքար-
յան, Ճիվքերյան, Միսկարյան, Մյասնիկյան, Սվեչնիկյան, Սբորշիկյան
և այլն:

-ջի (-ճի, -չի) ածանցներով ազգանվանակերտ հիմքերին անդրա-
դունալուց առաջ հարկ ենք համարում նշել, որ վերջիններս գլխավորա-
պես արևմտահայ իրողություններ են: Այս մասին է վկայում ոչ միայն
մեր գլխավորապես տաճկերենի հետ, այլև հանրալեզվաբանական այն
դիտումները, ինչպես նաև հարցումները, որ կատարվել են այդպիսիք

⁶ Հայտնի են նաև Սերբերյակյան և Սերիբրյակով այլալեզու տարբերակները:

⁷ Մեքսիկայում հայտնի է նաև Սանրա Գարսյան ազգանունը:

⁸ Հնարավոր է նաև Փոշկարյան-Կոշկարյան այլալեզու անցումը:

Ընթացում ենք Կոնջակարյան ազգանվան կամ կոնջակար նոմենի առկայությունը, որը, սակայն մեզ չի հանդիպել:

կրողների շրջանում: Հաստատելու համար ասվածը ավելացնենք նաև հետևյալ փաստը. Օրմանյանը, խոսելով XIX դ. սկզբներին Կ. Պոլսում կազմակերպված մի հանրագրովթյան մասին, նշում է, որ նրան մասնակցել են նաև արհեստավորներ և բերում է վերջիններիս ստորագրությունները թվով՝ 310 հատ, որոնք ներկայացնում են շուրջ 30 արհեստ՝ Գուլումճու -16 դեպք, ճեվաճիրճի -19, թյուլպենտճի -47, քիւրքճի -11, սաճաթճի -10, թերզի -15, պերպեր -15, էնքսերճի -15, քերեստենճի -16, շիլինկիր -10 և այլն: Ներկայացված 30 դեպքերից 25-ը ածանցավոր կազմություններ են և բոլորն էլ -ճի ածանցով, բացառությամբ գուլումճու ճեվաճից, որը հանդես է գալիս ածանցի ու ձայնաշարի տարրերակով:

Այս կաղապարով ազգանունների ելակետային ձևը պետք է համարել -ճի-ն, որ, ինչպես հայտնի է արտաբերվում է իրրև -ջի, իսկ -ջլ-ով և -չի-ով դեպքերը համարում ենք տարրերակներ: Ընդ որում, ջի-ն արտաբերական տարբերակն է, իսկ -չի-ն՝ այլալեզու: Ազգանունների այս խմբում քիչ չեն դեպքերը, երբ նույն հիմքը հանդես է գալիս նշված ածանցի երեք տարրերակների ուղեկցությամբ: Նման լարագաններում բառակազմական մակարդակում դրանք կարելի է համարել տարբերակներ, սակայն իբրև անվանագիտական միավոր՝ ազգանուն պետք է համարել ինքնուրույն: Այդպիսիք են անվանագիտության պահանջները, քանի որ այն իր մի եզրով առնչվում է իրավաբանական նորմերի հետ, իսկ վերջիններս, ինչպես հայտնի է, նման դեպքերում ինքնագործունեությունը բացառում են:

Այսպիսով, արհեստի անվանում + գործող անձ իմաստով ածանց + ազգանվանակերտ ածանց կաղապարով՝ կազմությունները ներկայացնում ենք, սկսելով միևնույն հիմքից սերված հնարավոր առավելագույն տարբերակներից՝ Ասջյան Ասլյան (խոհարար), Բակլաջյան-Բակլաջյան (Բակլավաջի-փախլավա թխող), Գլրճյան-Գլջյան-Գլլյան, Քլլջյան, Քլիջյան (դանակ կամ սուր գործիք սարքող)¹⁰, Գուլումճյան-Գուլումլյան (ոսկերիչ), Գալաճյան-Գալաջյան-Գալալյան (կլայեկող), Գասարճյան-Գասարջյան (տապարիկագործ), Գալրպճյան-Գալբջյան (կաղապարագործ), Գունտաճյան-Գունդակլյան (խզակոթագործ), Թեմուրճյան-Թեմուրջյան, Դեմուրլյան (երկաթագործ, դարբին), Դուլաբ-

¹⁰ Հնչյունափոխական մյուս կարգի երևույթները կրկնվեն «Տարբերակային ազգանուններ» գլխում:

ջան-Դուարչյան (կահագործ), Էքսերճյան-Էքսերջյան (մխաագործ), Թուֆեկչյան-Թուֆեկչյան (գինագործ), Թաշչիյան-Թաշճյան (քարհատ), Թաճատաճյան-Թախտաշյան (փայտագործ), Խղարջյան-Խղարչյան (սղո-
ղարար), Կիլիշյան-Կիլիշչյան (սրագործ), Կիլիկչյան (հագուստա-
գործ), Կոնճյան-Կոնջակալչյան (թամբագործ), Մաղջյան-Մեղջյան (մա-
ղագործ), Մոմջյան-Մոմչյան (մոմագործ), Միսջյան-Միսչյան (պղնձա-
գործ), Շարբաբջյան-Շարբաբչյան (գինեգործ), Չաթրջյան, Չաթրը-
րյան (մի տեսակ գործվածք), Պաստաճյան-Պաստաշյան (հրուշակա-
յործ), Ռահաջյան-Ռակչյան (օղեգործ), Սուշյան-Սուշյան (ջրավահառ,
ջրկիր), Սեպետջյան (զամբյուղագործ), Փինաջյան-Փինաչյան (կոշիկ
վերանորոգող), Քյաբաբջյան-Քյաբաբչյան (խորովածագործ) և այլն:

Ամենարնդհանուր ձևով արհեստավորների անվանումից սերված
աղղանունները կարելի է դասակարգել հետևյալ իմաստային խմբերի.

ա) Մենդի հետ կապվող արհեստներ՝ Աքմաբչյան, Հացագործյան,
Հացթուխյան, Ֆոնջյան, Սոմունջյան, Չորեքչյան, Էքմերչյան (հաց և
նրա հետ կապված մասնագիտություններ), Ղիվիշյան-հունցող, Կեպեկ-
չյան-ալյուրի թեփավաճառ, Բուզուրջյան (ձավարագործ և -վաճառ),
Բաթրջյան-ցորենից պատրաստվող կերակուր, Գինեգործյան, Շարբաբ-
ջյան (Շարբաբչյան), Մեյմաջյան, Ռակչյան (Ռահջյան, Ռագչյան), Գյա-
թրբջյան, Արակչյան, Բուլաջյան (գինի, ոգելից այլ խմիչքներ) և Սիրեկեջ-
յան (քացախագործ, -վաճառ): Բաստրմաջյան, Մյասնիկյան, Կակաչյան,
Ղավորմաջյան, Քերաբջիյան (Քյաբաբջյան, Քյաբաբչյան), Լյուլաքա-
բաբչյան (միս և մսեղեն): Գիղաշյան (սննդով զբաղվող), Ասջյան (Ասչյան,
Ասչիյան, Ասչիյանց) -խոհարար և Բորանջյան, Յախանեջյան, Շիլաջ-
յան, Դովմաջյան, Փլավչյան (զանազան ճաշատեսակներ): Սուշյան
(Սուշյան), Շիրիկչյան, Շարիաթչյան, Նենեջյան, (օշարակագործ, -վա-
ճառ), Կեյջյան: Բակլավաջյան (Բակլաջյան, Բակլաչյան), Բորեկչյան,
Պաստաճյան (Պաստաշյան) -հրուշակագործ, -վաճառ, Փետեճյան -բլի-
թագործ, -վաճառ, Հալվաջյան -հալվալյագործ, -վաճառ, Թիֆթիկչյան
-խմորեղենի կաղապար պատրաստող: Դոնդուրմաջյան (Տոնտուրմաջ-
յան) -ողողպողակագործ, -վաճառ, Լերլերիջյան և Լեփենջյան -բոված
սիսեռավաճառ: Յաղջյան -յուղագործ, -վաճառ, Յողարթչյան և Մանու-
շարչյան -մածունագործ, -վաճառ, Բենդիրճյան -պանրագործ, -վաճառ,
Ղալթմաչյան -կաթնավաճառ: Ղալթաջյան (Ղավճյան), Ջեզվեջյան,
Նրճատարչյան (Սրճարանչյան) -սրճևփ, Բալղչյան -ձկնավաճառ, -գործ,
Փեթակչյան, Գովանճյան -փեթակագործ, Մենչերչյան -կերակրի մի տե-
սակ:

բ) Կենցաղային առարկաներ՝ Սանրագործյան (Սանրագարսյան) և Դարակլչյան (Դարախչյան, Տարախչյան, Թարախչյան) - սանրագործ, -վաճառ, Թուլումջյան և Քելեկլչյան-տիկագործ, -վաճառ, Կաշուկչյան և Քաշիքչյան - գդալագործ, -վաճառ, Սանդուխչյան - սնդուկագործ, Բեշկլչյան - օրորոցագործ, Այնաջյան - հայելագործ, Սապոնջյան - օճառագործ, Քևիմջյան - խալիագործ, Չախաչյան - ժամագործ, Սեպետջյան (Սեպետչյան) - վամբյուղագործ, Խալբուրջյան, Քալբուրջյան - մաղագործ, Մաղչյան - մաղ բանեցնող, Յորդանջյան - վերմակագործ, Բարդակչյան, Ճերեճյան-բրուտ, կավագործ, Ավանչյան (էվանչյան), Թնպագճյան-ամանեղեն, ափսե պատրաստող, վաճառող, Չուվալչյան - ջվալ գործող, ջվալով կրող՝ բեռնակիր, Մեսչյան-սեղանագործ, -վաճառ, Մեշչյան¹¹ - կրակիսառնիչ պատրաստող, էկսուրջյան, Գապարաճյան, Պիպեոճյան - մեխագործ, -վաճառ, Թուղլաճյան - աղյուսագործ, Թութխալ(չի) - ջյան - սոսրնձագործ, Սվաճյան և Սվաղչյան (Սուվաղչյան) - ւվաղարար, Չուվանջյան, Քենդիրջյան (Քանդարջյան, Քյանդարջյան, Քանդարչյան, Քյանդարչյան) - պարանագործ, Քյունաջյան - վառարան մաքրող, Քյուրիչյան, Սոբաջյան - վառարանագործ, Քուլունջյան - ծխնելույղ մաքրող, Քումուրճյան - ածխագործ, -վաճառ, Մանկրաջյան - ածխափոշոց գնդիկներ պատրաստող և վաճառող, Խզարջյան (Խզարչյան) - սղոցարար, Չանթաջյան-պայուսակ պատրաստող, Դուլաբջյան (Դուլաբչյան) - կահագործ, -վաճառ, Թեքնեջյան - տաշտագործ, -վաճառ, Քեֆինջյան - փեղկագործ, Մոմջյան (Մոմչյան) - մոմագործ, Թեմիքջյան-փոս մաքրող, Կլեկչյան, Գալայճյան (Գալաջյան, Գալաչյան), Ղալայչյան (Ղալաչյան), Ղալեչյան, Ղալակչյան, Հալաջյան և Բերչյան - կլայեկագործ, Ղագանչյան - աման (պղինձ)ագործ, Չեմբերջյան - օղակագործ, Բերբերչյան - վարսավիր:

գ) Հագուստեղեն՝ Կիլիկչյան (Կիլիկչյան) - հագուստեղենով գրադվող, Քյուրբջյան-կաշվե արտահագուստ կարող, Չուխաջյան-չուխա կարող, Մենթանջյան - վերնաշապիկ կարող, Մախրամաջյան, Շալջյան - գլխարկ, շալ պատրաստող, կարող, վաճառող, Ֆեսչյան, Գալփակչյան (Կալպաբչյան, Կալպակչյան, Խալպախչյան), Խորասանջյան, Գավունկչյան (Գավունկչյան) - գլխարկի տարբեր տեսակներ պատրաստող, վաճառող, Շալվարջյան-տաբատ կարող, Ղայիշչյան, Գոլանճյան (Փոլանջյան) - գոտիագործ, Բուանաջյան-թիկնոցագործ, Ղայթանջյան-առասանագործ:

¹¹ Չի բացառվում Մեսչյան-Մեշչյան առնմանական անցումը:

դ) Գործվածքագործ մանածագործ՝ Մանածագործյան, Բյուկյուրջյան -գործվածքագործ, Իլիկչյան -մաքոքագործ, Կատեչյան -թալշագործ, -վաճառ, Իփեքչյան (Իփեկչյան) -մետաքսագործ, -վաճառ, Յազմաջյան -դաջարար, Ասթարճյան, Քեթենչյան, Չաթրջյան (Չադրջյան, Չաթրչյան), Սեթենչյան, Չիթչիյան (Չթչյան/Չուրջյան/Չլջյան), Բեզջյան, Աբաջյան, Թյուլպենտճյան, Մաքրամաջյան, Մանուսաջյան, Մանուսազյան -գործվածքեղենի զանազան տեսակներ պատրաստող, Մաղմանյան -մաղմանող և այլն:

ե) Առանձին խումբ են կազմում կենդանա -և բուսաբուծությամբ զբաղվող իրի անուններից կազմված ազգանունները՝ Բեստանջյան (Բոստանջյան) -բանջարանոցագործ, Բիբերջյան -տաքտեղաբույժ, -վաճառ, Ըամարբջյան-շուշանավաճառ, Զավղավաթճյան-կանաչեղեն աճեցնող, վաճառող, Չիշեքչյան -ելակ աճեցնող, էլմաջյան -խնձորավաճառ, Բամպուքճյան, Փամբուխչյան, Բամբուկչյան, Փափուխչյան, Փափախչյան, Փեմբերջյան -բամբակագործ, -վաճառ, Փանջարջյան -ճակնդեղագործ, Թոխմաջյան -սերմավաճառ, Կիրքչյան -ոչխարավիր, Թոռչյան, Թոռանյան, Թուրաջյան -ձկնորս, ցանցագործ, Քեսեջյան (Քսաջյան) -անասուն մորթող, Բակլատչյան -յոբազգիներ աճեցնող:

զ) Զարգեղենագործ՝ Արծաթագործյան, Արծաթպանյան, Քյուփչյան (Կյուպչյան) -ականջողագործ, Բիլիզիկչյան (Բիլազիկչյան) -ապարանջանագործ, Գույումջյան (Գույումչյան, Ղույումչյան) -ոսկերիչ, Զավահիրջյան -ակնագործ, Ինճիճյան -մարգարտագործ, Յալտրղճյան -ոսկեջրող:

կ) Կոշկակար՝ Կոշկակարչյան, Մաշկակարչյան (Մաշակարչյան, Մաշակալչյան, Սոլկարչյան, Քոշկարչյան, Փինաչյան (Փինաչյան), Փափուչյան (Բարուչյան), Չարոխչյան (Չարուխչյան), Ճզմաչյան (Ճզմեչյան):

ը) զինագործ՝ Թվանքչյան, Թիֆեկչյան (Թուֆեկչյան, Թուֆեկչյան), Գունտագճյան (Գունտակչյան, Ղոնդախչյան, Ղոնդաղսազչյան) -խզակոթագործ, Չախմախչյան (Չաքմաքչյան), Չախմախսազչյան -հրացանի կայծքարագործ, Ճեպեճյան -ղրահագործ, Ղեմչյան -թնդանոթագործ, Թոփճյան (Թոփչյան):

թ) մետաղագործ՝ Մեղնիկչյան, Միսկարչյան, Միսկչյան, Միսկերչյան, Միսջյան (Միսչյան), Միսեչյան, Բախրջյան -պղնձագործ, Դեմիրճյան, Դամուրչյան, Թեմուրճյան, Թեմուրչյան, Դեմուրչյան, Սաչյան, Թեհեքեճյան -երկաթագործ, թիթեղագործ, Թեքմեչյան (Թոքմաչյան), Գալչյան ձուլարար, Զնջիլզրույան, Զենջիրչյան, Զինջիրչյան, Նալբանդյան, Նալդրանյան, Նալդրաթյան, Նալչաչյան -պայտագործ, Խալաչյան -արծա-

Թագործ, էքսերճյան (էքսերջյան) մեծ մեխ (բևեռ)ագործ, Չիվիչյան-մեխագործ, -վաճառ, Չիլինգարյան -փականագործ:

ժ) Քարգործ՝ Քարտաշյան, Քարհանյան, Քարակոփյան, Թաշճյան (Թաշիչյան):

ժա) Կաշեգործ, Թամբագործ՝ Կաշեգործյան, Կոնգրաջյան և Կալթակչյան (Ղալթախչյան), Կոնջակալչյան, Կոնճյան, Փալանջյան, Սեմերջյան, Սարաջյան -Թամբագործ, Քնաշյան -պատյանագործ, Գեոնջյան (Գյոնջյան) դաբաղ, Կազումջյան -քերող, Քեշիղրանյան -կաշի մշակող:

ժբ) Փայտագործ՝ Թահտաճյան (Թախթաջյան, Թախտաջյան), Քերեստեջյան -ատաղձագործ, Կոնտրաջյան -ֆաներագործ, Թավշանճյան, Խազմանյան և Կյաշինջյան -փայտի վրա փորագրող, Կաղարջյան, Վարելչյան -տակառագործ, Փայտահատյան, Չամշյան -փայտագործ, Պալտաջյան -փայտահատ, Դողրամաջյան -հյուսն, Քիրամիջյան -կղմինդրագործ, Քյոշկեմանյան -ապարանք կառուցող, Ղայրախչյան -ծածկագործ, Կիրիշչյան -տանիրագործ, Ջամշյան -ապակեգործ, Բադանաջյան -նախշքար:

ժգ) Ծխախոտագործ՝ Թոթունջյան, Թեմբեկչյան, Էնֆեջյան -քթախոտագործ, Չիբուխչյան, Լյուլեջյան -ծխամորճագործ, Մարկուպչյան (Մերկուպչյան, Մալկուպչյան) -ղեյլանագործ, Բենկչյան -հաշիշագործ:

ժդ) Կտրող դործիքագործ՝ Կիլիջյան (Կիլիչյան) -թրագործ, Շիմշիրյան -սուսերագործ, Գասարճյան (Դոսարջյան, Կասարջյան) -տապալորագործ, Բալթաջյան -կաջնագործ (նաև փայտահատ), Բիյախչյան, Գլըճյան (Գլջյան, Գլչյան) -գանակագործ, սուր դործիք պատրաստող, Գալեմտերյան (Գալենտերյան)¹² -գրչագործ:

ժե) Ներկարար՝ Ներկարարյան, Բոյաջյան, Բասմաճյան, (Բազմաջյան, Բասմաջյան), Ալբոյաջյան, Մուբոյաջյան, Բոյախանջյան:

ժզ) Մի շարք այլ արհեստներ՝ Դերմենջյան, Էմչիաջյան, Լոքմանյան, Ջենդերջյան -դեղագործ, Գալըպճյան (Գալբջյան) -կաղապարագործ, Թասլախչյան -սևագործ բանվոր, Խաթլամաջյան -դարսող, Ալեաթճյան -գործիքագործ, Գալեմճյան -գրչագործ, Աբաջյան, Արբաջյան¹³ -գարեգործ, -վաճառ, Թալչյան (Թիլաջի) -թելագործ, Ղանթարջյան, Գանտահերճյան -կշեռքագործ, Գութունճյան -արկղագործ, Չանախչյան -բրուտ, կավագործ, Լամբարջյան, Ֆանարջյան -փողոցի լապտերավառ, Չիտեչյան, Կյուֆարյան -զամբյուղագործ, Այգնջյան, Այգեջյան -լուսարար, Կան-

¹² Չի բացառվում նաև գալանտերեա բառից ծագած լինելը, քանի որ ունենք, օրինակ, Ֆաբրիկաջյան:

¹³ Այս դեպքում չի բացառվում Արարաջյան-Արբաջյան հնարավորությունը:

դիւջան (Ղանդիւջան)-լամպագործ, ժամագործյան, Սահաթչյան, Սարսկիչյան-ժամացույցի ճոճանակագործ, Ղալամբարյան (Գալեմբարյան), Ճիվքերյան-քանդակագործ, Գրքաշարյան (Կրկյաշարյան), Սափրիչյան, Սվեչնիկյան, Սբորչիկյան, Յավունջյան-տրորող, փշրող, Խեմչյան-հումքագործ, Քամանչաջյան (Քեմենչյան), Սանթուրջյան, Ռաչյան-Երաժշտական գործիքներ, Ալաջաջյան (Ալաջյան) -ներկարար, ավելացնենք նաև Ետեյալ օրինակները՝ Պալաջյան, Չենտիկչյան, Քուլլունջյան, Բաղմանչյան, Դալախյան, Բուայզչյան, Բիդեջյան, Այաջյան, Բյուկլուջյան և այլն:

Արհեստներ և արհեստավոր ցույց տվող ՈւՅ շարքում տեղ են գտել նաև անաժանց ձևեր: Սրանք նախորդի համեմատութեամբ բավականին փոքր թիվ են կազմում, մեր կարծիքով, իրենց կիրառական առանձնատեսակութեան բերումով: Ածանցավոր կազմութեանների ինքնուրույն կիրառութեան հնարավորութեանները շատ ավելի մեծ են, քան քննարկվողներիինը, քանի որ վերջիններիս վերացարկման աստիճանը շատ ավելի բարձր է: Ածանցները ավելի են մասնավորեցնում բառի կամ արմատի իմաստը և դրանով իսկ նպաստում կիրառական ինքնուրույնութեան մեծացմանը: Կ. Պոլսին վերաբերող վերոհիշյալ ցուցակում անվանման բանաձևերը կազմված են հետեյալ կաղապարով՝ անձնանուն + արհեստի անուն + ճի, օրինակ, Հակոբ Սվաճի, Հովսեփ Թիւպկենտճի, Քերոբե Գուսմճու, Հովհաննէս Սահաթչի, Սերոբե Օթուրաքչի, Մինաս Գափամաճի, Եսայի Փեշտիմալճի և այլն, մինչդեռ այդ նույն շրջանում Արեւելահայաստանում արհեստ ցույց տվող նոմենները անձի անվանման բանաձևում, լրբե օրենք, միայն երբորդ բաղադրիչի դերով են հանդես գալիս՝ Ավետեան թարգի Յակոբ, Բաբազենց տանուտեր Աստուածատուր, էլիազար որդի Խօճա Փանոսի, Իսրայել ոսկերիչ որդի Աղապի, Մայիլ հայր դասակար Ստեփանի, Մխիթար որդի դալաք Մուրադի, Խաչատուր որդի Խառատ Գրիգորի և այլն: Կարծում ենք, որ բերվող օրինակները գալիս են հաստատելու, որ արեւմտահայ իրականութեան մեջ արհեստավոր իմաստով նոմենի ազգանուն դառնալու համար մի քայլ էր անհրաժեշտ, մինչդեռ մյուս դեպքում, երբ նոմենները հանդես են գալիս գլխավորապես անձնանունների համար իբրև յուրատեսակ որոշիչներ, նրանց ազգանվանակերպ հիմք դառնալու հնարավորութեանը ավելի փոքր է:

Չենք կարող շնչել նաև, որ ածանցավոր կազմութեանները, ինչպես ցույց տրվեց, ավելի շուտ արեւմտահայ իրականութեան արգասիք են, ուր այդ ավանդույթը, տեղական պայմանների բերումով, բավականին խոր արմատներ ուներ, մինչդեռ անաժանց ձևերը մեծ մասամբ արեւելահայութեանը վերաբերող փաստեր են, ուր, ինչպես հայտնի է, ազգա-

նուններ սերելու ավանդույթը սերտորեն կապվում է անձնանվան և նրա այլևայլ տարբերակների հետ:

Բերենք արհեստի՝ կազմությամբ պարզ անուններից սերված ազգանունների օրինակներ՝ Բրուտյան, Զուլհակյան (Զուլիկյան)¹⁴, Շաղափյան, Հյուսնյան, Խառատյան, Դարբինյան, Դերձակյան, Դերզինյան, Թերզյան, Թարզյան (Թերեզյան)¹⁵, Լպուտյան-գզրար, Ղազազյան, Խաչազյան-մետաքսավաճառ, Խարազյան-ոտնամանի մի տեսակ կարող, Հեքեքյան-փորագրող, Յամալյան-բեռնակիր, Ղասաբյան-մսագործ,-վաճառ, Մանգալյան-կողպեքագործ, Նաջարյան, Մարանգուլյան (Մերանգուլյան) -ատաղձագործ, Դուրզարյան -որմնադիր, Զարգարյան -արժաթագործ և այլն:

Փուզյան, Զիվիլյան, Զանգալյան, Դալուզյան, Զեմենյան, Մանջրրյան. Թեպեղիկյան ազգանունները գտնում ենք ձևալորված-ճի, (ջի, շի) ածանցի անկման ճանապարհով, մասնավորապես վկայված է Զիվիլյան ազգանունը, որ կարող էր Զիվիլյան-ի սերման հիմքը լինել:

Զբաղմունքի անվանման հետ կապված ազգանունները տարբերվում են նախորդից, թե իրենց իմաստային առանձնահատկությամբ և թե կազմությամբ:

Զբաղմունքը նույնպես աշխատանքային գործունեություն է, որ պահանջում է որոշ հմտություն կամ մասնագիտացում, որը, մեծ մասամբ, արհեստների աստիճանի շի հասնում: Եթե արհեստի համար էականը աշխատանքի պարզ գործիքների կիրառման վրա հիմնված մանրապրանքային արտադրությունն է, ապա գբաղմունքը նման անպայմանություն չի ենթադրում: Այս դեպքում հնարավոր են որոշ զուգադիպումներ հատկապես -ճի (-ջի, -շի) ածանցով կազմությունների համար, քանի որ, ինչպես նշվել է, այս ածանցը մեծ մասամբ -գործ, և -վաճառ իմաստը արտահայտում է միաժամանակ, եվ եթե արհեստավորի անունից սերված ազգանուններում իբրև առաջին իմաստ նշում էինք «-գործ»-ը, ապա այս դեպքում, ելնելով այդ ածանցին նախորդող մասի իմաստային առանձնահատկությունից առաջնայինը պետք է համարենք «-վաճառ»-ը: Եթե այս վերջին իմաստը նկատելիորեն գերակշռում է, ապա

¹⁴ Այս տարբերակը բաղարկային փոփոխության արդյունք է՝ Զուլհակյան և Զուլիկտա Զուլիկ Այս անցմանը նպաստել է նաև այլալեզու միջավայրը, ուր հ-ն, իբրև օջևեք, բնկնում է:

¹⁵ Այս դեպքում ևս բաղարկությունը իր դերը կատարել է՝ Թերզյան և Թերեզա-Այս անձնանունը, ինչպես հայտնի է, վերջին մի քանի տասնամյակում հայերի մտամենատարածված անձնանուններից էր:

զբաղմունքի որոշ այլ տեսակներ ևս բավականին լավ են ներկայացված:

Այս կարգի ազգանուններից առաջին հերթին ուզում ենք առանձնացնել, ինչպես ասվել է, «-վաճառ» իմաստային խումբը, շմոռանալովոր շեն բացառվում նաև «-գործ», ինչպես նաև «գործունեության այդ բնագավառում աշխատող» իմաստները՝ Մեյխանաշյան-գինեվաճառ, Նուբարավաճառյան, Ունջյան -ալրավաճառ, Ղրմաշյան (Ղոմաշյան) -ձավարավաճառ, Գայֆաշյան (Գայֆեշյան)-սրճավաճառ, սրճեփ, Թահմիշչյան -չոր սուրճ վաճառող, Ալմաշյան (Ալմայան)¹⁶, Այվաշյան -խնձոր և սերկևիլ վաճառող: Առանձնանում է նաև «մանր առևտրով զբաղվող» խումբը՝ Աթթարյան (Ադդարյան), Ակտարյան, Բեզիրգանյան, Չերեշյան (Չերեշյան), Չերգիշյան -փերեզակ, մանրավաճառ, շրջիկ վաճառական, Կադմերշյան, Գոլթոխչյան, Էսֆիշյան, Խորդաշյան -հնավաճառ, Կաբզիմալյան (Ղաբզիմալյան) -վերավաճառող, Յայմաշյան -հատալվաճառ: Գաբամաճյան, Բազազյան, Գազազյան (Ղազազյան), Գավթանճյան (Ղավթանշյան և Ղավանշյան), Փարջաշյան, Բասմաշյան (Բազմաշյան) -կտորեղենի և հագուստեղենի առևտրով զբաղվող, Կուլակչյան, Փոխսրբարյան -բամբակավաճառ, Բեքերշյան (Բեքարյան), Ջելեբյան -անասնավաճառ, Թավուքճյան (Թավուխչյան) -թռչնավաճառ, Կաբաշյան, Դիջիգրիկյան -առևտրական, ընդ որում վերջին օրինակը բարդ կազմութուն ունի՝ դիջի + գրիկ (Գրիգոր): Այստեղ ենք դասում Բարխանաշի և Խանջի -իջևանատեր, ինչպես նաև Սարաֆյան -լումայափոխ, Կաբզանյան, Ղաբզիմալյան-վարկատու, Թավաշյան-վաշխատու, Շիրիքչյան-առևտրական ընկերակից, Դալալյան, Էլշաշյան-միջնորդ և այլ ազգանունների Փոստաշյան-փոստի ծառայող, նամակատար, Չափառյան, Ղավազյան, Չափանյան, Օդաշյան -ցրիշ, հյուրանոցի ծառայող: Վերջին իմաստով ունենք նաև Օդաբաշյան (Ադարաշյան), Ղոնաղչյան (Ղոնախչյան), Իմախիբյան (Իմաչիկյան)-սպասավորուհի, աղախին:

Պահեստի, որևէ արհեստանոցի տեր, աշխատող իմաստով հետևյալ ազգանուններն ունենք՝ Չալկադարյան, Սրմաքեշխանլյան, Չարվադարյան, Ամբարդարյան, Ամբարջյան, Սեյրադարյան, Գինադարյան, Մաբանջյան (Մառանջյան), Միթարջյան, Քիշարջյան:

Ջրաղացի, ալրաղացի աշխատող իմաստը դրսևորված է հետևյալ ազգանուններում՝ Ջրաղացպանյան (Ջաղացպանյան), Դեյրմենջյան, Դերմեշյան, Դերեմեշյան, Դերմաշյան, Մելնիկյան:

Պահակ, ուղեկցորդ, ճանապարհորդ՝ Գաբուշյան, Կալեշյան, Կուլա-

¹⁶ Չի բացառվում նաև Ալմա իգական անձնանունից սերված լինելը:

յան, Փասպանդյան, Քեշիկբաշյան, Քերվանջյան, Բեկլյան, Յուլլյան, Ծրմանճյան (Ծրմանյան) -անտառապահ:

Մենդի հետ կապված զբաղմունքներ՝ Պալզճյան (Բալեկլյան, Բալխաշյան)- ձկնորս, Բալջյան- մեղրագործ, Ճանճապանյան, Մերջիմեկյան-ոսպավաճառ, Մեդրեթյան-Լրկրագործ, Ղուլլյան-թռչնաբույժ,-վաճառ, Գավունջյան -սեխավաճառ, -գործ, Ինջիրյան, Ինջիկանյան -թուզ, թզաչիր վաճառող, պատրաստող, Պարտիղպանյան, Քյոքլյան -արմտիքավաճառ, Բախշաշյան (Բաղջիջյան, Բաղջյան, Բախշյան) -այգեգործ:

Ծովի հետ կապված աշխատող՝ Դենիդյան, Գալիկլյան-նավակ ունեցող, Համլաջյան-թիավար, Սանդալոյան, Թագակլյան-նավավար, Դակաջյան, Շլեպլյան -նավակի տարբեր տեսակներ, Թեյֆեջյան -ծովային:

Գրաստ բանեցնող՝ Կաթրջյան (Գաթրջյան, Ղաթրջյան) -ջորևպան, Դեվեջյան, Դվճյան -ուղտապան:

Բժշկությամբ զբաղվողներ՝ Բժշկյան, Սնդլյան (Սնխշյան), Քիրաշյան -մանկաբարձ, տատմեր, Դիշեկյան, Տուտուրյան -ատամնաբույժ, -գործ, Հեքիմյան, Զառահյան -վիրաբույժ, Իբրաջյան -բուժակ:

Երաժշտական գործիքի վրա նվագող,-գործ՝ Զուռնաշյան, Դուդուկչյան, Բորոզանյան-շեփորահար, Դամբուլոյան-մի տեսակ երաժշտական գործիք, Մեհթարյան-Լրաժիշտ, Շարաքյան-երգիչ, գուսան, Սահանդարյան, Աշուղյան, ինչպես նաև աշուղ + անձնանուն կադապարով հետևյալ կազմությունները՝ Աշուղաթոյան, Աշուղբաբյան, Աշուղբալյան, Աշուղդարիրյան:

Գրագիր, դպիր, նոտար՝ Դպիրյան, Կալեմդարյան, Յագերյան, Յագիշյան, Դիվանշյան, Մահսերեջյան (Մահսերջյան, Մաքսերեջյան, Մախսերեջյան, Մախսերջյան) -հանրագիր, համախոսական գրող:

Ավելացնենք նաև զբաղմունքի այլ անուններից սերված հետևյալ ազգանունները՝ Հովիվյան և Ինեկլյան, Համամջյան (Համամշյան) և Փեշտմալջյան -բաղնեպան, Մաթարաջյան և Իսակչյան -ջրկիր, ջրվոր, Ավջյան (Ավշյան) -որսորդ, Ատրալյան -ճիապան, Արարաշյան և Արուլյան -սալլապան, կառապան, Գաբանջյան (Կապանջյան, Կափանջյան), Զեքիջյան (Զաքուլջյան)-կշռավար, Զամրճյան (Զամրջյան), Ութուջյան (Ութունջյան)-լվացարար, արդուկող, Ֆալջյան, Թեկֆիջյան, Թաբիրյան (Տաբիրյան)-բախտահմա, երազահան, Զարիշյան¹⁷ -(դանակ-մկրատ սրող), Կուրեջյան-ըմբշամարտիկ, Մոստիշյան, Գալֆայան-ենթավարպետ, Դալլաքյան -վարսավիր, Զուքուրյան -կոյափոս մաքրող, Բարաշ-

¹⁷ Զի րացաովում նաև Զարովիշյան-Զարուիշյան-Զարիշյան անցումը:

յան -բեռնակիր, ծանրություն բարձրացնող, էվաջյան, Քիրաջյան -տան-տեր, վարձով տվող, Տավարածյան, Շինականյան, Մաճկալյան: Զենկիջյան, Քարաջյան -զինվոր, մարտիկ, Կուրթանջյան (Կուրտանջյան) -փրկիչ, ազատարար, Սուվարյան -հեծյալ, Սիլահտարյան -զինակիր և Սուլաղյան -թիկնապահ ազգանունները միայն որոշ վերապահությամբ կարելի է դետեղել զբաղմունքի անվանումներից սերված ազգանունների շարքում, քանի որ վերջիններս որոշ շափով մոտենում են մականվանական ազգանուններին:

3. «ՊԱՇՏՈՆ, ԱՍՏԻՃԱՆ» ԻՄՍՍՏՈՎ ԲՍՈՒՐ

Այս ենթախմբի ազգանունները առանձնապես մեծաթիվ չեն և բաժանվում են չորս մասի՝

ա) Պաշտոն ցույց տվող բառեր՝ Զրպետյան, Տանուտերյան, Գործակալյան, Մաքսապետյան, Դատաւորյան (Ղաղիյան, Ղաղյան, Ղաղիմյան), Գզիրյան (Գզրյան, Ղզիրյան), Մովրոյան (Մողրովյան), Ռեխսյան (Ռեսյան, Ռայսյան) -դյուղապետ, Քեհեյան (Քեհյան, Կեյոյան, Կեյաոյան), ինչպես նաև այս նում ենը՝ անձնանուն կաղապարով կաղմություններ՝ Գյուլբերդյան (Գյուլիբերդյան, Գյուլիբերդյան), Հակոբքոխյան և այլն, Մութաֆյան-տնօրեն, խնամակալ, Քալանթարյան և Քալանթար -քաղաքագլուխ, ինչպես նաև Բաշաշյան -շուկայի հարկահավաք, Զարշյան, Բազարշյան, Բազարշյան -շուկայի աշխատող, Բուշակշյան -ծառայող, Աջաջյան, Դարշյան-մաքսատան ծառայող, Գիշշյան-դրամարկղի, տոմսարկղի աշխատող, Դաղմաջյան-կաշի կնքող, Խարմանդարյան-բերքի վրա նշան անող, կալի հսկիչ, Զարբհանալյան -դրամատան աշխատող, Զուխադարյան-սուրհանդակ, Ղաբուզյան-բռնագրավող, կատարածու, Դանդուրջյան-կարգադրիչ, տնօրեն, Մուղիրյան-ղեկավար, վարիչ, էլշյան -դեսպան, միջնորդ և այլն:

բ) Աստիճան ցույց տվող բառեր՝ Ուստյան¹⁸, Վարպետյան, Փանչոստյան, Քեղխուդյան, Զաուշյան (Զավուշյան), Սոտնիկյան, Կապիտանյան¹⁹, Աֆիցերյան (Աֆրիցերյան), Կոմանդրյան (Կամենդարյան, իոմենտարյան): Այստեղ ենք զետեղում նաև -բաշի բաղադրիչով կաղմությունները, քանի որ այն ավելանալով այս կամ այն բառին ցույց է տալիս առաջնային, գերազանց ղեկավար լինել, օրինակ, Մահ-

¹⁸ Հնարավոր է Ուստիան իզական անձնանունից սերված լինելը:

¹⁹ Զի բացավում կապիտան և Կապիտանյան բառերի բաղադրկությամբ ձևավորված լինելը:

լիբաշյան - Յաղապետ, Հեքիմբաշյան, Գուլումշիբաշյան (Ղուլումշիբաշյան), Սաղբաշյան, Ուստամբաշյան և Ուստաբաշյան, Քերվանբաշյան, Տահլաբաշյան, Կրբաշյան²⁰, Թերղիբաշյան, Բահալբաշյան, Թոմբաշյան, Թորխբաշյան, Թոփբաշյան, Իգիթբաշյան, Խաղաբաշյան, Դերբաշյան, Ըրղաթբաշյան, ինչպես նաև զինվորական աստիճաններ Յուզբաշյան, Նրդատբաշյան (Նրբաշյան) և այլն:

զ) Տիտղոս և պատվանուն՝ Ալևորյան, Աքսակալյան (Ակսակալյան, Ախսախալյան, Ախսախալյան, Ակալյան), Ղաֆադարյան, Բեկթաբեկյան, Զադեյան, Թավադյան, Գաբրիկաջյան, Բարոնյան, Պարոնյան, Բեզինյան, Բեգյան, Բեյլերյան, Բեկյան, Բեկվերդյան, Բեդթաշյան, էֆենդյան (Աֆանդյան), Խոջայան (Խոջոյան), Հանմյան, Հաշիմյան - շքեղ, մեծաշուք, Աղադադյան, Աղայան, Մեծատունյան, Աղնաուրյան (Աղնավուրյան), Մաշադյան, Ֆեսախյան (Ֆեսախլյան) - ֆես կրող, Քիբարյան - ազնրվական, անվանի²¹, Վեքիլյան - նշանավոր մարդ, վեզիր, Վուշատյան - հարստություն:

դ) Կրոնի և եկեղեցու հետ կապված մի շարք նոմեններից սերված ազգանունները՝ Տերյան, Տերոյան, Դերոյան, Տերտերյան, Սարկավադյան, Վարդապետյան, Երեցյան, Իրիցյան, Երեցփոխյան, Ժամհարյան, Ժամկոչյան, Աթոռակալյան, Գանձանակյան, Գանձապետյան, Տիրացույան (Տիրացվյան), Վեհապետյան, Վարժապետյան, Քեշիշյան, Հաճիյան, Հաջյան, Մուղղուսյան (Մուղղեսյան, Մղղեսյան), Մահտեսյան, Մայտեսյան և այլն: Այստեղ պետք է ավելացնել Քյուֆեյլյան (երաշխավորող) և Իզրարյան: Վերջինիս հիմքը հաճախ հանդես է գալիս առուվաճառքի, երբեմն նվիրատվության վավերագրերում և «պատիվ», «երդում» իմաստներն է արտահայտում:

4. ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Տեղանվանական հիմքերով ձևավորված էնք համարում այն ազգանունները, որոնց ազգանվանակերտ ածանցին նախորդում են -ացի, -եցի, -ցի, -ց և -լի(-լ)-ով հիմքերը, ինչպես նաև այնպիսի հիմքեր, որոնց մեջ նշված տեղանվանակերտ ածանցները բացակայում են, սակայն ածանցավոր կազմությունները իբրև հիմք առկա են այլ ազգանուն-

²⁰ Հնարավոր է նաև Գրբաշյան-Կրբաշյան անցումը:

²¹ Վկայված է նաև իբրև անձնանուն, ուստի չի բացառվում այս ազգանվան անձնանվանական ծագումը ևս:

ներում և կամ եթե վկայված չեն, ապա ինքը ածանցազուրկ հիմքը որևէ տեղանուն է: Այսպես, ունենք Երևանցյան և Երևանյան ազգանունների զույգը, ուր Երկրորդը, անկասկած, առաջինի ածանցազուրկ տարբերակըն է, սակայն ունենք նաև Խարբերդյան ազգանունը, որի Խարբերդցյան ելակետային ձևը վկայված չէ, սակայն Խարբերդ-ը հայտնի է իբրև տեղանուն: Ի դեպ, Խարբերդցի նոմենը բավականին հաճախ հանդիպում է հայոց անվանման բանաձևերում: Նման դեպքերում ածանցազուրկ տեղանվանական այնպիսի ազգանունները, որոնց ածանցավոր ելակետը վկայված չէ մեր ազգանունարանում միայն տեսականորեն կհամարվեն ածանցի հետագա սղմամբ ձևավորված ազգանուններ: Նկատելի է, որ նման դեպքերը զգալի թիվ են կազմում և որոշակիորեն կարելի է նշել այն ժամանակահատվածը, երբ տեղանվանական-ացի, -եցի, -ցի, -ց-ն սղվում էր ազգանվանական հիմքից՝ անցյալ դարի երկրորդ յլս. ազգանունները տարածվում են և ընդգրկում մեր ժողովրդի գրեթե բոլոր հատվածները: Իբրև ազգանվանակերտ ածանց շատ արգասավոր է -յանց-ը, բըր ավելանում է -ացի, -եցի նաև -ցի, -ց-ով ձևերին սիկնույն բառում ստեղծելով երկու ց-ի առկայություն՝ Երևանցյանց: Սմբանի որ տեղանվան առկայության դեպքում -ցի(-ց)-ն հավելուրդայնություն ուներ, ուստի կրկնվող ց-երից սղվում է հատկապես տեղանվանականը: Նշենք, որ մեր ազգանունարանում -ացի, -եցի, -ցի -ց-ով և առանց այդ ածանցի տեղանվանական ազգանունները ներկայացված են գրեթե հավասարաչափ:

Հայկական անձնանվանական համակարգում տեղանունների կիրառությունը երկար պատմություն ունի: Արդեն վաղնջական անցյալում անձի անվանման բանաձևերում հայրանուններին զուգահեռ լայնորեն օգտագործվում են նաև տեղանունները՝ Փառեն-Ներսեհ (Երբեմն նաև Փառնեսեհ) Աշտիշատեցի, Գէորգ Գառնոյ, Շահակ Մանազկերտացի, Ղլիգորիս Կոկիսոնցի, Խաղ Կարնեցի և այլն: Ի դեպ, արդեն շորրորդ դարից (որին վերաբերում են օրինակները) սկսած տեղանվանական բացառիչը գլխավորապես բարձր դասի և հատկապես հոգևորականության մենաշնորհն էր: Դարեր շարունակ հոգևորականության ներկայացուցիչների անվանման բանաձևերում անձնանվան զուգակցությամբ դրվել է տեղանունը: Հետագա դարերից բերենք մեկական օրինակ՝ Ղևոնդ Վանանդեցի, Քրիստափոր Տիրատիջցի, Սարգիս Տայեցի, Նրեմիա Ապահունաց, Խոսրով Ակեացի, Ստեփանոս Ցախացքարեցի, Տիրանուն Կապանեցի, Մարկոս Մոկացի, Հովհաննես Արճիշեցի, Կոստանտին Կեսարաբի, Մկրտիչ Մեծոփեցի և այլն: Ի դեպ, սովորական մահկանացուները

Լեկեղեցուն մատուցած աչքի ընկնող ծառայություններից հետո իրենց անվանման բանաձևերում տեղանուն բաղադրիչ են ստանում՝ Ստեփանոս, բայց ընտանիքով հանդերձ նահատակվելուց հետո՝ Ստեփանոս Ուլնեցի։ Մի այլ օրինակ՝ արդեն XIII դարից Դավիթ ջրաղացպանը Լեկեղեցանպաստ աչքի ընկնող ծառայությունների համար սկսեց կոչվել Դավիթ Մարեցի²²։

Այս ավանդույթը հետագայում նոր որակ ստացավ հատկապես ժողովրդի տեղաշարժերի և առաջին գաղթօջախների ձևավորման շրջանում, երբ Հայաստանի տարբեր գավառներից արտագաղթածները իրենց նոր բնակավայրում, ըստ հնարավորին, աշխատում էին պահպանել հայրենի բնակավայրի անվանումը։

Այսպիսով, տեղանվանական հիմքով ազգանունների առկայությունը մեր ազգանունարանում պայմանավորված է հայ անվանագիտական համակարգի ամբողջ պատմությամբ և զարգացման ընթացքով։

Տեղանվանական հիմքերով ազգանունները ըստ ձև-իմաստային առանձնահատկությունների կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) ազգանվանակերտ ածանցից առաջ -ացի, -եցի, -ցի, -ց և -ի (լ) Լուկայություն և բ) նշված ածանցի բացակայություն։ Իբրև օրենք, երկու շեպքում էլ ազգանվանակերտ հիմքի իմաստային հիմնական ծանրաբեռնվածությունը բաժին է ընկնում տեղանվանական իմաստով հատվածի վրա որը երբևէ համընկնում է ազգանվանակերտ հիմքին։

Տեղանվանական հիմքով ազգանուններում, ինչպես ասացինք, աչքի են ընկնում -ացի, -եցի, -ցի, -ց ածանցով ձևավորվածները, որոնք, իրենց հերթին, բաժանվում են երկու ենթախմբի՝ նշված ածանցին նախորդող հատվածի անհնչյունափոխ և հնչյունափոխված դրսևորումներ²³։ Այսպես, առաջին ենթախմբի մեջ ենք դասում՝ Արարքեցյան, Արաբանցյան, Արդահանցյան, Ասլաձօրցյան, Աղուզումցյան, Բորեցյան, Բինգյուլցյան, Բերնեցյան, Բայբուրդցյան, Բալուցյան, Բասենցյան, Բաղեշցյան, Գյուլեցյան (Գեոլեցյան), Գյանջեցյան, Գարցյան, Գարասանցյան, Գայեքցյան, Երևանցյան, Երթևցյան, Երզնկացյան, Զեյթունցյան, Զայիմցյան, Զարացյան, Էրզրումցյան, Թոփլաղալցյան, Թոխաթցյան, Թավանցյան, Իզմիրցյան, Լոռեցյան, Խոյեցյան, Խիզանցյան, Խանցիյան (Խանցյան) Խակցյան, Մանեցյան, Կանեցյան, Կոշեցյան, Կնդեղցյան, Կար-

²² Հմմտ, Մ. Օրմանյան, Ազգասպատում, Կ. Պոլիս, հ. 1, 2, 1912—1914։

²³ Հնչյունափոխության մասնավոր դրսևորումներին ավելի մանրամասն կանգրդառնանք տարբերակային ազգանուններին նվիրված բաժնում։

եցյան, Կանցյան, Կաղզվանցյան, Կազբինցյան, Հողմրցյան, Հաջնցյան, Ղափանցյան, Ղարավանցյան, Ղարսեցյան, Ղարաբաղցյան, Ղազախեցյան, Մուղնեցյան, Մուղուրգեցյան, Մոկացյան, Մանուցյան, Նիդիցյան, Պարերցյան, Շիպակցյան, Շամբցյան, Շատախցյան, Զառուկցյան, Զավանցյան, Զառացյան, Սևանցյան, Ստամբուլցյան, Սպերցյան, Սիդեցյան, Սասունցյան, Վելիցյան, Վանեցյան, Վաղիգեղցյան, Տրասիդոնցյան, Տարոնցյան, Քինակցյան, Քափանակցյան, Քասրակցյան, Օկուցյան, Օթեկցյան և այլն:

Հնչյունափոխված տեղանվանական հիմքերը ևս բավականին լավ են ներկայացված, ընդ որում նկատելի են որոշ զուգահեռություններ անհնչյունափոխ հիմքերի հետ՝ էրզրումցյան-Արզրումցյան, Կարսեցյան-Ղարսցյան, Խոխաթցյան-Թոքաթցյան և այլն: Հնչյունափոխված դրսևորումները ներկայացված են հետևյալ օրինակներով՝ Աբուցյան (Աբուլ), Ալվրցյան (Ալվար), Ախցիսեցյան (Ախալցիխե), Աստաբացյան (Աստապատ) Արզումցյան (էրզրում), Արեխցյան (Արարք, Արերք), Գասրանցյան (Գարասան, Գարսան), Կնտեխցյան (Կնդեղ), Կարնեցյան (Կարին), Կանցյան (Կանեցյան), Հարցյան (Հարք), Պոլսեցյան (Պոլիս), Գարսևանցյան (Գարասանցյան), Գոլեցյան և Գալեցյան (Գյոլեցյան), Գոմկցյան (Գոմիկ), Գոմցյան (Գոմիկ, Գոմկցյան), Գալիցյան (Գալցյան, Կալոյան), Բաբերցյան (Բաբերդ), Բախշեցյան (Բաղիշ), Բայաղատցյան (Բայազետ), Բլրցյան (Բլուր), Երքցյան (Արարք), Թոփալցյան (Թոփաղալցյան), Թոքաթցյան (Թոխաթ), Խնձրցյան (Խնձորեկ, Խնձորեսկ, Խընձորի), Կանցյան (Կանեցյան), Ղարսցյան (Ղարսեցյան), Մշեցյան (Մուշ), Մակվեցյան (Մակու), Շամցյան (Շամբցյան), Ստամբուլցյան (Ստամբուլ), Վանցյան (Վանեցյան), Քեթցյան (Քեթի), Օզնեցյան (Օզան) և այլն:

Տեղանվանական հիմքով ազգանուններում նկատելի են նաև փոխառյալ -լի (-լ) ածանցներով կազմությունները, ուր նշված ածանցը ավելացել է մեծ մասամբ, անհնչյունափոխ տեղանուններին՝ Աղանալյան (Աղանեղյան), Աքշեհերլյան, Բուրսալյան, Բուլյուքլյան, Բեվսնեղյան, Բենլիլյան, Բենգլյան, Բաբաղաղլյան, Բաբաբլյան, Գյանջալյան (Գանջալյան), Գարամանլյան, Գալակլյան, Գուղաքլյան (Գուղակլյան), Գաշըլլյան, Զազալյան, Էդիրնեղյան, Թոքաթլյան, Իզմիրլյան, Խարթլիլյան, Խրիմլյան, Կարալյան²⁴, Հաճընլյան, Ղազլյան, Ղարալյան, Մարեկյան:

²⁴ Այս օրինակը կարելի է մեկնաբանել նաև իբրև Ղարալյանի այլալեզու տարբերակ:

Մարաշյան, Մանթաշյան, Մալաթյան, Մոճորյան (Մոջոռյան), Նուրջուղյան, Նովչատյան, Շարուրյան, Շարաբխանյան, Շամխորյան, Շամախյան, Շաբուրյան, Չլդրյան, Չերնամորյան, Չամուրզյան, Չուլֆարյան, Սիմսարյան, Սարատակյան (Սարատիկյան), Սահբաղարյան, Սևաթևյան, Բասաշիկյան, Քութաչխսյան, Քեսաբյան (Կեսաբյան), Քոշաուաշյան, Քիլիսյան, Օձունյան և այլն:

Վկայված է նաև Մերեթյան ազգանունը, որ կարող է մի քանի մեկնաբանություն ունենալ՝ ա) Մար-Մարեցի-Մերեթյան²⁵, բ) Մերթա անձնանուն, որից և՛ Մերեթյան:

Հայկական ազգանունների տեղանվանական շերտը իմաստային մի առանձնահատկություն ունի՝ տեղանվանակերտ -ացի, -եցի, -ցի, -ց և -լի, -լ ածանցներին նախորդող բառերը կարելի է բաժանել երկու խմբի ըստ արտահայտած իմաստի տարածքային ընդգրկման: Մի դեպքում դրանք որոշակի գյուղանուններ, քաղաքանուններ են, մյուս դեպքում՝ գավառի, աշխարհի, նահանգի, կողմի անուններ: Ալիւացնենք, որ այս առանձնահատկությունը բնորոշ է գլխավորապես հայերեն ածանցավոր կազմություններին: Փոխառյալ ածանցով կազմությունները մեծ մասամբ կոնկրետ են:

Այսպես, գավառ, նահանգ, աշխարհ ցույց տվողների շարքը կարելի է դասել՝ Տարոնցյան, Վանեցյան, Սասունցյան, Սպերցյան, Սևանցյան, Զահուկցյան, Շատախցյան, Մոկացյան, Ղազախեցյան²⁶, Ղարաբաղցյան, Հաշնյան, Խոյեցյան, Լոռեցյան, Թոխաթցյան, Էրզրումցյան, Զեյթունցյան, Բասենցյան, Բինգյուլցյան, Մշեցյան, Ուրֆալյան, Մսրրլյան, Խրիմյան, Շարուրյան, Մարզվանյան, Ալաշկերտյան և այլն:

Քանի որ երկրորդ կարգի օրինակները նկատելիորեն շատ են, ուստի բավարարվենք մի քանի օրինակով միայն՝ Նրեանցյան, Նրզնկացյան, Թիֆլիսյան, Քափանակցյան, Տրապիզոնցյան, Վազիգեղցյան, Ասլաձորցյան, Մուղնեցյան, Ղափանցյան, Կարսեցյան, Խակցյան, Քեթցյան, Մակվեցյան, Բլրցյան, Աստաբացյան, Ախցիսեցյան, Սվազլյան, Կարսլյան, Իղմիրլյան, Օձունյան, Քութաչխսյան, Սևաթևյան, Չուլֆայան, Նուրջուղյան, Կահիրյան, Կարչևանյան, Խաչվանքյան, Թավրիզյան, Բոնակոթյան, Դադիվանյան և այլն:

Ուժ ազգանունների շարքն ենք դասում նաև այնպիսիք, որոնց հիմքերը կապվում են այս կամ այն ժողովրդանվան (էպոնիմ) հետ: Նման

²⁵ Թ-ի բմայնացմամբ և ծ > թ անմանությամբ:

²⁶ Այսպես էին իրենց կոչում Ղազախի գավառի հայկական գյուղերի բնակիչները:

ազգանունների հիմքում կարող են ընկած լինել տվյալ ժողովրդի մեջ ապրելու, գուցե և այդ կողմերում ծնվելու, երբեմն նույնիսկ որոշ հատկանիշներով այդ ժողովրդի որևէ ներկայացուցչի նմանվելու իմաստալին երանգները: Ի դեպ, նման ելևույթների մասին վերևում խոսվել է Խաչիաչի հայկական գաղութում որոշ հայեր իրենց անվանման բաժնաձևում ունեին նաև Սուրեան բաղադրիչը, որ ուներ արևելքից ներգաղթած իմաստը. նման իմաստ են արտահայտում նաև Աճեմյան (Աջամբան) ազգանվան հիմքերը: Այսպես էին անվանում Աբևեյյան կամ Պարսկահայաստանից Արևմտյան Հայաստան արտագաղթածներին: Շիմարյան, Ծամլյան, Շիմլիրյան ազգանունների հիմքում ընկած են դասակարգի «նյուսիսից եկած» իմաստները: Չիթախչի-Չիթախչյան էին կոչվում Տաճնաստան ներգաղթած օտարները և մասնավորապես Բալկանյան երկրներից ներգաղթածները: Բառացիորեն չիթախչի-ն ունի օտար, բառերը աղավաղող իմաստները. Հունգարիայի, Տրանսիլվանիայի հատկերը երբեմն ստանում էին Ըստկարյան և Մաչարյան²⁷ ազգանունները:

Չևավորման նման հնարավորություն պետք է ենթադրել նաև Սոմխան, Վրացյան, Գյուրջիյան, Գյուրջինյան, Գյուրջյան, Դաղստանյան, Լազգիյան, Թուրքմենյան ազգանունների համար: Ուրումյան, Ռումյան ազգանունները կարող էին արվել գլխավորապես Փոքր Հայքի հայ բնակիչներին:

Հետաքրքիր է Քաղքցյան (Քաղկցյան) ազգանունների հիմքի ծագումը, որ կապվում է Թիֆլիսի հետ: Հայտնի է, որ արդեն XIII դ. սկզբած, հասկապես Գուգարքում անձի անվանման բանաձևերում երևում է քաղաքացի (քաղքցի, քախկցի) Ուր՝ Իւան աւագ քաղաքացի, Յուսեփ քախկցի²⁸: Այսպես էին կոչվում Թիֆլիսում ապրած կամ ծնված անձինք, որոնք ինչ-ինչ պատճառներով այնուհետև ապրում էին այլ վայրերում: Ի դեպ, համանման փաստի հանդիպել ենք Գարիալի կիրճում, որի հատուկենտ բնակավայրերի բնակիչները մինչև օրս Օրջոնիկիձե (Չաուչիկաու, Վլադիկավկազ) քաղաքը պարզապես կոչում են Գորոդ (Город): Նախորդին մերձավոր իմաստ ունի Կենտիլյան (Քենդիլյան)-ի հիմքը, որ թարգմանվում է իբրև քաղաքացի:

²⁷ Այս ազգանունը մասնավոր դեպքերում կարող է Մաճույան-Մաճարյան-Մաչարյան անցման արդյունք ևս լինել:

²⁸ Հմմտ. Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, Երևան, 1963, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957:

Կեղացյան ազգանունը ևս կարելի է կապել այս ենթախմբի հետ, սակայն չի բացառվում նաև Եկեղեցացի ձևից ծագած լինելու հնարավորությունը: Հայկական ազգանունարանում վկայված է նաև Լեմենցյան ազգանունը: Այն կարելի է համարել հյուսիս-արևելյան Հայաստանի բնակիչների՝ մոտակա գերմանական գաղթօջախների հետ ունեցած հարաբերությունների արգասիք, քանի որ դեռևս այսօր այդ կողմերի տարեց հայերը անցյալի իրենց վերհուշներում երբեմն կրկնում են՝ «քջացել ինք լեմենցնին», այսինքն՝ այն կողմերը, ուր ապրում էին դերմանացիները: Սակայն այս հիմքը կարող է դասվել նաև ազգանվանակերտ մի այլ փոքր խմբի մեջ, որ մենք հակված ենք կոչելու մակաևմանական՝ Կոոչյան, Կուոոչյան, Ինգելիզյան, Ինգիզյան, Կաթուիկյան, Տոաւոուան (Տրանգյան), Կազակյան, Օսմալյան և Լեմենցյան:

Իր իմաստով և սոցիալական ծանրաբեռնվածությամբ նախորդներին են մոտենում նաև Բնիկյան, Նորեկյան, Էլարյան, Դրացյան, Ախպարյան ազգանունների հիմքերը: Առաջինը հականշային հարաբերության մեջ է Նորեկյան և Էլարյան-ի հիմքերի հետ: Ինչպես հայտնի է վերջին երկուսի իմաստները արտահայտում են նաև «գաղթական», «գյալմա» վիրավորական մականունները, որոնք, բարեբախտաբար, ազգանվանակերտ հիմք չեն դարձել:

Այս շերտի ազգանունների մեջ առանձնանում է Փորթոխայան (Պորտուզալյան)-ը, որին դժվարանում ենք որևէ մեկնաբանություն տալ: Չի բացառվում փորթոխալ (նարինջ) վաճառողին նման ազգանուն տրվելու հնարավորությունը:

Ուժ հիմքերի մասին խոսելիս նշվեց, որ ազգակցություն և նման հարաբերություններ արտահայտող բառերը ևս դասվում են այդ շարքը: Այդպիսիք, ինչպես արդեն ցույց է տրվել, ունենալով արտակարգ մեծ հաճախականություն անձի անվանման բանաձևերում, մեր ազգանունարանում ավելի քան համեստ ներկայացուցչություն ունեն՝ Բիձյան, Քեռիչյան, Ամիչյան, Ապերյան, Կնքաբաբյան, Յոթեղբայրյան, Դադամյան, Բաբամյան, Բաբալյան, Դադասյան, Դադայան, Նանումյան, Նանասյան, Գալաֆյան (ժառանգ, հետնորդ), Բաբալարյան և այլն:

Նշվածներից հատկապես ոչ հայկական, փոխառյալ միավորները մեզանում գործածվել են իբրև պատրաստի ձևեր, առանց հաշվի առնելու դրանց իմաստային առանձնահատկությունները: Այսպես, մուսուլման ժողովուրդների մոտ Բաբամ, Բաբաս, Նանում, Նանաս, Դադամ և նման ձևերը օգտագործվում էին իբրև յուրատեսակ պատվանուններ: Դրանցով

անվանակոչում էին նորածիններին ի հիշատակ հոր, մոր և մերձավոր այլ ազգականի: Մեզանում այդ սովորությունը, ինչպես հայտնի է, նույնպես լայն տարածում ունի, սակայն որակապես տարբերվում է թուրքալեզու ժողովուրդների տվանդուլթից, քանի որ պարզապես հիշարժան հարագատի անձնանունն է տրվում նորածնին²⁹:

5. ՄԱԿԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Հայկական անձնանվանական համակարգում մականունների գործառնությունը դեռ հնուց բավականին նշանակալից է եղել: Բավական է հիշել Նդիշեի սրկոմ օգտագործված մականունները՝ արդար, արի, առաջադեմ, զարմանալի, իմաստուն, կոբովի և այլն, որոնց կիրառությունը ամբողջովին արդարացված է գործի բնույթով: Այդ նույն շրջանից հայտնի են նաև Անհաղթ, Վերժանող մականունները, որոնք դարձան դրանցով նշվող պատմական անձանց անվանման բանաձևի անքակտելի տարրը՝ Գավիթ Անհաղթ, Մամբրե Վերժանող և այլն: Մի փոքր ավելի ուշ երևում են պատրիկ, կրօնաւոր մականունները, ինչպես նաև մականվանական ծագում ունեցող Պարզե, Յոյս անձնանունները:

Վաղ միջնադարում և հատկապես VII—VIII դարերից սկսած խիստ նշանակալից է դառնում հոգևոր դասի, «գիտունների» համար գանաղան մականունների գործածությունը՝ թարգմանիչ, սքանչելագործ, խոտաճարակ, բանի սպասավոր, փիլիսոփա, իմաստասեր, դրաներեց, իմաստասիրական, պատմաբան, գրամատիկոս, մուրացիկ և այլն: Ավելի ուշ՝ արդեն XI դարում հանդիպում են Ղաղար Շեկչուն, Վասիլ իշխան ելուզակ կամ Կող, իսկ հաջորդ դարում երևում է Շնորհալի մականունը, որ կրում էին մի քանի գործիչներ՝ Ներսես, Իգնատիոս, Սարգիս, Բարսեղ: Հայտնի է, որ այս մականունը, կասեինք՝ տիտղոսը տրվում էր Քեսուների Կարմիր վանքի սաներին, ինչպես Սյունյաց դպրոցի աշակերտները ստանում էին Քերթող մականունը, իսկ Արագածոտնի դպրոցի աշակերտները՝ Իմաստասեր մականուն-տիտղոսը: Այս և հաջորդ դարերում հոգևորականները իրենց անվանման բանաձևերում կրում են այնպիսի մականուններ, որոնք առանձնապես համատեղելի չեն նրանց ավանդապահությունը այս հարցում: Այսպես օրինակ, Գրիգոր Անավարզեցի կա-

²⁹ Վերջին ժամանակներս, երկարակեցության նկատելի աճի պայմաններում տատերի ու պապերի անձնանունները կրկնվում են դեռևս նրանց կենդանության օրոք:

Թողիկոսի անվանման բանաձևում Մեծքարեցի, Տուրքերիցանց բաղադրիչների կողքին երևում են նաև Երզնցոյ, Զրոյ մականունները: Հետագայում այս երևույթը ավելի տարածվեց: Այսպես, XVI—XVII դարերում հոգևորականության անվանման բանաձևերը կրեմն, մեղմ ասած, տարօրինակ են թվում իրենց ավանդախախտությանը՝ Կարապետ Զագ վարդապետ, Հովհաննես Խուլ եպիսկոպոս, Հովհաննես Թյուֆյունճի³⁰, Մինաս Կարնեցի Քացախ, Հովհաննես Պոլսեցի Նոխուֆճի, Եղիա քահանա Սեչովցի Մանտրուն, Մխիթար եպիսկոպոս, Մոկաց Լալուակ Մյոտ, Մաթևոս եպիսկոպոս Կեսարացի Սարի, Ներսես վարդապետ Բեղլու և այլն:

Օրինակները, ինչպես երևում է, միտումնավոր կերպով ընտրվում են հոգևորական դասի ներկայացուցիչների անվանման բանաձևերից, որոնք, մեծ մասամբ, դարեր շարունակ ավանդապահ են եղել: Վերոբերյալ մականունները պետք է ենթադրել տան, որ ժողովրդի լայն զանգվածների համար մականունները ավելի սովորական էին: Եվ իրոք, նույնիսկ այսօր, երբ եռանդամ պաշտոնական բանաձևը թվում է, թե անդառնալիորեն կենցաղային անհրաժեշտություն է դարձել, հայ գյուղը նշանակալից շափերով պահպանել է մականվանական տոհմանունները: Բերենք Շամշադինի շրջանի Բերդ ավանից վերցված օրինակներ: Այսպես, Ադամյան ազգանունը կրողները ունեն Պրրթանք, Ղարիբանք, Տոուզանք, Կենդարունք մականունները, մազոտ, եկվոր, պարարտ լինելու համար, իսկ ահա Կենդարունք մականունը ստացել են այն բանի համար, որ ցորեն են ցանել, բայց գարի է բուսնել (կենդարի-գարի): Շլապեանք (Ավալյան)՝ առաջին անգամ ժլխարկ (շլապկա) դնելու համար, Թոքառանք (Մելիքյան) - շատ ծիւխու և հազարու համար՝ Թոքառած՝ Թոքերը առած: Նույն Մելիքյան ազգանուն կրողները ունեն նաև Պեպկանք և Կրկալանք մականունները, որ տրվել է քաղաքից գալով ոտաբոբիկ շրջելու և շատ ընկույզ ունենալու համար: Թաղա Քիրինանք՝ մի այրի, որի ամուսնու անունը Քիրի (Գրիգոր) է եղել, նորից է ամուսնացել և այս անգամ էլ Քիրիի հետ: Կուղամանք (Մելիքյան)՝ նախնին եկվոր է եղել, անկասկած՝ արևմտահայ, հարևաններից ուտելիք հավաքելիս անընդհատ կրկնել է. «Ջամ-ջամ խավաքեմ, խան-խան կուղամ»: Դալալանք (Մելքումյան)՝ առևտրով, միջնորդությամբ զբաղվելու համար: Քիթը կոտրածանք (Պողոսյան)՝ ամուսնացած կնոջը առաջարկություն անելու և դրա համար պատժված լինելու համար: Բոշ Պետինանք՝

³⁰ Մականունը տրվել է ծխախոտի նկատմամբ արտակարգ հակում ունենալու հա-

վերջինս դժգույն է եղել՝ հիվանդոտ (բուշ-անգույն, սփրթնած)։ Հետա-
 րքիր է Կինդինանք (Օրկանյան) մականվանական տոհմանունը։ Ինչ-
 ույևս ցույց է տալիս ազգանվան ստուգաբանությունը՝ երկան, մականու-
 նը արդեն առկա է։ Ընդ որում կրողը արևմտահայ է եղել, որի մասին
 վկայում է, ինչպես ազգանվան հիմքի ձևը, նույնպես և նոր համայն-
 քում ստացած մականունը՝ կենտ-կենդի Կինդինանք (միայնակ)։ Սը-
 րբլիսկանք (Պապյան)՝ անբարեխիղճ կառուցողներ են եղել և կառու-
 ցածները երկար չի դիմացել (սլալախկ-խարխուլ)։ Բերենք մի քանի այլ
 մականվանական տոհմանուններ՝ Ղարգալանք, Ղազանք, Դմբուզանք,
 Կարկաժանք, Բեղլվանք, Աշուղանք, Ենինանք, Կուչինանք, Յորղանք,
 Կոկոանք, Լևհինանք, Բեցինանք, Շլվարանք և վերջապես Շվիլոյանք
 (Էջիրյան), որ Վրաստանից ներգաղթածներ են և մայրը որդուն կանչել
 է շվիլո (վրացերենում շվիլի -որդի բառի կոչական հոլովածին է)։

Բերենք մի քանի օրինակներ նաև այլ բնակավայրերից՝ Սհաթսա-
 զանք և Կոկոյանք (գյուղ Գոշ)։ Վերջիններս ունեղուրկ են եղել և երկար
 ժամանակ կոկոլի (բուլիկի) տակ են պարել։ Փետտատարիեանք (կեղծ
 դարբիններ), Գյալմա Համազանք, Տիտոկանք (բարակոտն), Դաստեանք
 (Նվազածուններ) (գյուղ Կուլբիշե)։

Դայանք, Հիլյանք (խորամանկ), Տրվածանք (տավարածներ), Կառչ-
 կանք (կարճիկ), Քրհանանք (Քարհանյաններ), Ղարաբաղցոնք, Միրա-
 նանք (կարմրահեր), Գլավանք (գլավնի՝ պաշտոնի անուն) (Գուգարքի
 շրջան, գյուղ Մեղրուտ)։ Պախրանք, Գուրբանողանք (գուլպա գործող),
 Գիլանք (գայլ խեղդող), Գղլանք (կարճահասակ), Լոթնանք (զվարթ, ան-
 կեղծ), Ճուտանք, Տուճկանք, Մտանք (փոքրամարմին) և այլն (Նոյեմբեր-
 յանի շրջան, գյուղ Ոսկևվան (Ղոշղոթան)։ Մտանք, Սթարանք, Հիլնանք,
 Հոպոպանք, Չոփրանք, Քամոնք և այլն (Ստեփանավանի շրջան, գյուղ
 Լեջան), Մեծախոսանք, Ճիպրանք, Իծանք, Գոմշանք, Միրանանք, Մոխ-
 րոտանք, Վրդապետանք և այլն (Գուգարքի շրջան, գյուղ Վահագնի)։

Մուլունք, Քոանք (խուլ), Փշանք (փաշա պատվանունից), Տոուզանք,
 Խոատանք, Օրուկանք (փոքր հասակ ունենալու համար), Թուխտարանք
 (բախտ բացող), Քեթուտանք, Զկոանք, Չոփուտանք, Չոբանանք, Քոն-
 ձունք (աղքատ, քոնձոտ), Մվանանք, Թիզունք և այլն (Կրասնոսելսկի
 շրջան, գյուղ Արծվաշեն)³¹։

³¹ Օրինակները քաղված են Կիրովականի սփյուռքական մանկավարժական ինստիտու-
 տի 1983 թ. շրջանավարտների՝ մեր ղեկավարությունը կազմակերպված անվանագիտա-
 կան արշավախմբի նյութերից։

Ինչպես վկայում են բերված, նաև մեզ մոտ հավաքած նյութերը, տոհմանունների հավաքման և ուսումնասիրության աշխատանքը անհետաձգելի և խիստ կարևոր գործ է, քանի որ նրանք ազդագրական, բարբառագիտական, երկրագիտական և վերջապես ընդհանուր մշակութային մեծ արժեք են ներկայացնում։ Այս դեպքում հապաղելը կարող է անդառնալի կորուստների տեղիք տալ, քանի որ անվանման եռանդամ՝ այսօր ընդունված բանաձևը իր իրավաբանական ուժով և զործածության հաճախականությամբ աստիճանաբար դուրս է մղում տոհմանունները։ Մինչդեռ, շնայած Աճառյանի կապիտալ բառարանի, «Դիվան հայ վիմագրության» յոթ մեծարժեք հատորների, Ղ. Ալիշանի, Լ. Խաչիկյանի, Կ. Ղաֆադարյանի, Մ. Օրմանյանի, Հ. Աբրահամյանի և այլոց նյութաշատ և խիստ կարևոր աշխատությունների առկայությանը հայ անվանագիտական համակարգի ամբողջական ուսումնասիրությունը մեծ չափով կտուժի, եթե հաշվի չառնվեն այդ ինքնատիպ ենթահամակարգի ընձեռած փաստերը։ Հայտնի է, որ միօրինականացման մի նշանակալից աչիք արդեն անցել է հայկական ազգանունների վրայով, որի հետևանքով զգալի թվով «ոչ ճիշտ, ոչ գեղեցիկ», «ոչ սովորական» ազգանունները փոխարինվել են նորերով, իբրև հիմնական սկզբունք ունենալով նախնիների՝ գլխավորապես պապերի անձնանուններից կազմված ազգանունների կազմումը։ Մեր՝ առայժմ միայն դիտումները վկայում են, որ այդ շրջանում հայկական ազգանունաբանը զգալիորեն զրկվել է իր բազմազանությունից գլխավորապես տոհմանվանական և մականվանական ծագում բունեցող ազգանունների հաշվին։

Պատկերացնելու համար, թե որքան տարածված է եղել այդ մտայնությունը նկատենք, որ նույնիսկ Աճառյանի նման մեծ հայագետը հայկական ազգանուններին նվիրված իր արդեն վերը հիշատակած ակնարկում գրում է. «Մեկին տվել են մի ծաղրանուն, այդ ծաղրանունը անցել է որդիներին և կազմվել է ազգանուն։ Այսպես են օրինակ՝ Երկայնյան (կամ Թյուրքերեն Ուզունյան), Կարճիկյան, Կոլոտյան, Շիրինյան (քաղցր)³², Գարագաշյան (սև ունքերով), Ղարագյոզյան (սև աչքերով), Թոփալյան (կաղ), Չոլախյան (թևը կոտրած), Տերպետերյան (թափթփված), Խաչանյան, Պուռնազյան (մեծ քթով), Չորթանյան (ժլատ մարդ է եղել, որ միայն շորթանով է սպրել), Դերվիշյան (անփուլթ)։ Այս կարգի ազգանունները երբեմն գործը անհամության (ընդգծ. մերն

³² Գտնում ենք, որ ազգանունը ձևավորվել է ոչ թե մականունից, այլ Շիրին անձնանունից։

են -Տ. Ա.) են հասցնում. օրինակ գրականության մեջ հայտնի է պոլսե-
ցի կաթուղի մի վարդապետ Պոյնուէյրիյան (վիզը ծուռ)..... Նշանավոր
են Նոր-նախիջեանցիք իրենց տարօրինակ, հաճախ անվայել ազգանուն-
ներով. ինչպես՝ Չաթուրաշյան (գլուխը ճղված), Խապախաշյան (ղը-
դումզուխյան), Սյուլյան (արջյան), Թիլթիյան (աղվեսյան), Բուղայան
(ցուլյան), Թացփեշյան (քիթը միշտ վազել է, շորի ծայրով սրբել է,
տնունը դրել են Թացփեշյան): Մի փաստաբան կար Փորքշեյան (փորը
միշտ քշել է), մի դերասանուհի կար Գոզոտյան, մնացյալը քաղաքա-
վարության սահմաններից բոլորովին հեռանում է»³³:

Ինչպես տեսնում ենք մտայնությունը որոշակի է, սակայն, մեր
կարծիքով՝ ոչ նպաստավոր, քանի որ Թացփեշյան, Երկնափեշյան, Աժ-
դահարյան, Աղվեսյան, Հարմարյան կամ Փետադարփնանք, Կուղամանք,
Ժողառանք կամ Ենիկոլոպյան և նման ձևերը ժողովրդի պատմությունն
են, Էրա առողջ, կասեինք՝ հումորով աղեցուն կենսափիլիսոփայության
լավագույն դրսևորումները: Այնպես ինչպես չի խրախուսվում միօրի-
նականացումը, ստանդարտը, քաղաքաշինության, Երդարվեստի ու սյար-
այվեստի մեջ նույնպես և շատք է թույլ տալ անհիմն միջամտություն-
ները ազգանունների բնագավառ: Ավելին, մեր օրերում, երբ 30-ական
թվականների Սաշաները, Կուլյաները, Միշաները, Գրիշաները արդեն սլապ
են դառնում, պետք է զգուշանալ դրանց ազգանվան աստիճանի բարձ-
րանաույց, քանի որ, ինչպես հայտնի է, վերջիններս ավելի մնայուն են՝
անցնում են ժառանգաբար:

Ի դեպ, մամուլից հայտնի է, որ Ֆրանսիայում պետական հոգատա-
րություն է ցուցաբերվում ոչ ստանդարտ, «տարօրինակ», «անհամու-
թյան» ու «անվայելության» հասնող ազգանունների նկատմամբ: Դրանք
նորերով փոխարինելը հատուկ մարմինների իրավասության մեջ է մըտ-
նում³⁴: Մականունների նման տարածումը, ինչպես ազգանունների դանգ-
վածային ընդունման ժամանակներից առաջ ընկած հատվածում, այն-
պես էլ հետո, վկայում են, որ ազգանունների տարածման շրջմունտ ևս
մականունները և մականվանական տոհմանուններն ու գերդաստանի ա-
նունները շատ լայն տարածում ունեն Քարենց Զաքար, Ղօշիկենց Իյ-
վազ, Բոզենց Թորոս, Փիրզուլենց Խեր Ակոբ, Մուկենց Ատոմ, Բեղլվենց

³³ Հ. Անադյան, ՀԱՆԲ, հ. Ե, Երևան, 1962, էջ 361:

³⁴ Հեղվաշինության և լեզվապահության այս և մի քանի այլ օրինակներ, որ կիրառ-
վում է Ֆրանսիայում, անկասկած, ընդօրինակման է արժանի:

դարպինտ Մկրտիչ, Մատղաշ Ասատուր, Խենկեց Թարջիման, Չորթանենց էլբեկ, Հակոբճան Քել Օհանես և այլն³⁵։

Վերը ասվածները գալիս են հիմնավորելու ճայկական ազգանուններում մականվանական հիմքերի նշանակալից քանակը։

Անվանագիտությունը մականունն տերմինը, ինչպես ցույց ենք տվել, կապում է անհատի և նրան շրապատող մարդկանց փոխհարաբերության հետ, երբ վերջիններս այդ անհատի բնորոշ որևէ հատկանիշին համապատասխան մականուն են տալիս, որը մեծ մասամբ կապվում է արտաքինի, ներքինի և հասարակական վիճակի և հասարակության մեջ ունեցած դիրքի հետ։

Առաջինի հետ կապվող մականունն ազգանվանակերտ հիմք

Այս կարգի ազգանունները բավականին բազմազան են և ունեն արտաքին բարեմասնություն, թերություն, ալատ և այլ իմաստներ։

ա) Արտաքին բարեմասնություններ՝ Խորոտյան, Մարալչյան, Շիմշատյան, Գեոկչակյան, Գանազուլյան (ծով աչքեր), Սեաշերյան, Գարագաշյան (Գարագաշ), Ղարաղաշյան, (Կարագաշյան), Սամուրգաշյան (մրահոն), Քաշիքեմանյան (ալեյնահոն), Փաշաբեղյան, Գեջեգաշյան, Գեջեգուշյան, Գեջերուշյան, Գեջեյան (Գեջեյան)։

բ) Գունային երանգներով դրսևորվող արտաքին հատկանիշներ՝ Բոշնաղյան (կարմրահեր), Կարմրամորուսյան, Կարմիր-Մորուսյան, Կարմիրյան, Կրմզյան (Լարմիր), Կարմիրշալյան, Շեկոյան, Մավյան, Գեոկչանյան, Գեոկելակյան, Գյոզջայան (կապույտ), Թուրունջյան (դեղնակարմիր), Բեազյան (սպիտակ), Պողլիկյան, Չակիրյան, Քյուլինկյան (մոխրագույն, թոխ), Չախալյան, Ելանգյոզյան (խաժակն) Կպրրյան, Կպրանյան, Չնդեմյան, Ղառայան (սև), ինչպես նաև «որևէ գույնի անվանում + անձնանուն, Ու՞ կամ այլ նշանակությամբ բառ» կաղապարով հետևյալ կազմությունները՝ Ղարաղազարյան, Ղարապուլումջյան, Ղարախրխզյան, Ղարագյոդակյան, Ղարաբեկյան (Կարաբեկյան), Ղարագյուլյան (Ղարագուլյան), Ղարագյոզյան (Ղարագոզյան, Կարակոզյան), Ղարախանյան (Կարախանյան), Ղարախաշյան, Ղարաղաշյան, Ղարաքեշիշյան, Կարաուտայան, Կարաբաբյան, Կարագևորգյան, Կարադեմուրյան (Կարա-Դեմուրյան), Կարա Թորոսյան, Խարաբաջախյան (սևաոտ), Կարաօղլանյան, Սարիգուլումջյան (Սարիգուլումջյան, Սարիղուշյան), Սարըպետրոսյան, Սարիբեկյան, Սարուխանյան, Սարիմելիքյան, Սարիբաշյան, Մավիսակալյան։

³⁵ Հմմտ. Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքներ...

գ) Մարմնի շափեր և այլ հատկանիշներ՝ Երկանյան, Երգինյան, Եր-
 րենյան, Երգանյան, Երգանջյան, Գրձեկյան (վրաց. երկար), Մաղալյան
 (վրաց. բարձրահասակ) Աժդահարյան³⁶, Ուզունյան, Ուզունբաջաղյան,
 (երկարոտն), Ուզունկիշյան, Իրիբյան, Բույուկկյան, Բալիբեյուկյան,
 Խոջորյան, Մեծոյան, Մատմատյան (մեծ մատներ), Գաշոյան, Գոն-
 րոյան, Գնդոյան, Գոուզյան, Տոուզյան, Թոփաշիկյան, Քյութուկ-
 յան, Տարաշյան (զինվոր, սակայն նաև՝ մեծ, ահեկի), Թևքեր-
 լեկյան (կլորիկ), Թոթոյան, Բոջուկյան (Բոջիկյան), Բոջոլյան (գիրուկ),
 Լուբոյան (հաստ, փափուկ, նաև շատակեր), Փորքշեյան (ըստ Աճառյա-
 նի՝ մեծաչոր), Գոճամանյան, Կոջոյան (հսկայական, ահեկի), Դիշդիշ-
 յան (մեծ ատամներ ունեցող, նաև՝ շատակեր), Թաքշորյան (տկճոր),
 Կուպալյան, Դոբաջյան (գեր, անճոռնի), Կաբաղյան (ղզում, մեծ գլուխ),
 Խնչպես նաև այս իմաստով՝ Բաշբեյուկյան, Կոդբաշյան, Կոմբաջյան,
 Կոջաբաշյան, Չաթալբաշյան, Կրբաշյան (Գրբաշյան) (կարմրագլուխ) և
 այս իմաստով Ալաբաշյան, Բոգբաշյան ձևերը և Կարճիկյան, Կարճյան,
 Կոլոտյան, Կուճուրյան, Պիճիկյան, Պուճիկյան, Պուճուրյան, Գղյան
 (Կղյան), Բոդուրյան (կարճահասակ), Յամալյան (կես, կիսատ), Չա-
 միշյան (փոքրիկ), Քուշուկյան (Քեշուկյան), Մանրիկյան (Մանդրիկյան),
 Սուլուկիկյան, Բոյուկսոլյան (անբեղ), Աղղգյուճուկյան:

դ) Ֆիզիկական ուժի առկայություն և բացակայություն՝ Գոմշոյան,
 Բյուփեկյան (պնդակազմ հաղթանդամ), Քեկյան (խոշոր), Թոփուզյան
 (թիկնավետ), Գենջյան (Գենշյան), Գենջոյան (ուժեղ, երիտասարդ), էլ-
 գուջյան (բառաց. ձեռքի ուժ), Բույուքշյան (շատ մեծ), Կոնջոյան, Խա-
 դիլյան (ամուր, պինդ, կոշտ), Քեսկինյան (ամրակազմ) և Զաբունյան,
 Լեգրյան (նիհար, նվնվան), Փասլիկյան (գունատ, մաշված), Քեմիկ-
 սըղյան (անոսկոր, ճկուն, բալց և՛ թույլ), Գեգեկյան (նիհար, բարակ),
 Ինջեյան (բարակ, թեթև, մանր), Կանսուզյան (անարյուն, գունատ), Բո-
 շիկյան, Դերեմսզյան (անուժ):

ե) Մարմնական արատներ՝ Կաղյան (Կախյան), Կաղինյան, Կա-
 դաղյան, Կուղիկյան, Կուզկուզյան, Փետեվոտյան, Կոնդյան, Կոնատյան,
 Թոփալյան, Թոփալբարյան, Զուլախյան (Զուլաբյան), Գահակիրյան, Գահ-
 նապետյան, Գահմանյան, Գամպուրյան (սապատավոր), Քոլսուզյան
 (անձեռք)³⁷, Փելթեկյան, Կախկեջյան, Քեքլիկյան (Քեկլիկյան) (կակազ),

³⁶ Ժողովրդական հումորի առանձնահատկությունների բերումով այս մականունը մեծ
 մասամբ տրվել է փոքրամարմին, փոքրահասակ մարդկանց (ըստ կրողների):

³⁷ Զի բացառվում նաև «ժլատ» մեկնաբանությունը:

Չոփուռյան (Չոփուրյան), Չեքեքչյան (նեղաչք), Շլլարյան (աչքերը բորբոքված), Քելեչյան (ճաղատ), Սալնազարյան (սալ-ճաղատ+նազար), Բարախյան (մազմզոտ), Թաքբեխյան, Թաքմաղյան (Թեքմեղյան), Ճսիկյան, Բուռնազյան (մեծաքիթ) և Բուռնուսուրյան (քթապուրկ)³⁸, Քյոսայան (Քոսայան, Քոսյան), Քոսակյան, Գյոսամիրյան, Քյոսաբաբյան և այլն:

Արտաքինի հետ կապվող այլ մականուններ՝ Չիրքինյան, Գեմամազյան, Չիլբակյան, Չիլոյան, Կրճիկյան, Գավարյան, Ըուղուրյան, Ըրպուռյան, Չեփչյան (Չեպչյան) - ճախլիկ, Կաճոյան, Բեղլույան, Բեղուկյան, Շաղգամյան (Շախլամյան), Սղոցյան, Գապասաքալյան (կոպիտ, ցանցառ մորուք), Երկնասլետյան, Երկնափեշյան, Երկարակեցյան: Երկնապետյան-ը հետևյալ մեկնաբանությունները կարող է ունենալ՝ ա) Երկնափեշյան-Երկնապետյան, ուր ունենք առաջնալեզվային շ > տ և փ > պ շնչեղ խուլ > խուլ այլալեզու անցումների հնարավորություն, բ) Երկնապետ - սակավապետ, դեղապետ բառերի երկրորդ բաղադրիչների նմանակությունից, այսինքն՝ պէտ, գ) Երկնքի պետ, իբրև պատվանուն: Բառը վրկաչված չէ մեր բառարաններում: Այստեղ ավելացնենք նաև Երկվարունգյան ազգանունը, որ մականվանական ազգանունների բաղմազանության պայմաններում անդամ խիստ անսովոր է:

Ներքին հատկանիշներ, բնավորության գիծ իմաստով մականունները և նրանցից սերված ազգանունները, բնականաբար, առաջին հերթին պետք է բաժանել դրական և բացասական իմաստներով մականունների:

Դրական իմաստով մականունները արտահայտում են հետևյալ իմաստները՝ ա) համարձակ, քաջ, արագաշարժ՝ Քաջվորյան, Պեծիկյան, Գուզճակատյան, Զորունյան, Գելխեղդյան, Գելուկյան, Գորխմազյան (Ղորխմազյան) - անվախ, քաջ, Գայանջյան, Զարուխյան, Բառուխյան, Հայդեյան - շտապող, անհանգիստ, արագաշարժ, Սրտլյան, Քելեշյան - համարձակ, անվախ, խիստ վերջին դեպքում նույն՝ գեղեցիկ, հմայիչ, Զրադյան - ճարպիկ, Մեթանջյան - կայուն, ամարձակ, դիմացկուն, Զիվալեկյան, Բուրդյան - ճարպիկ, արագավազ, Ղոչիյան - քաջ, ամարձակ և այլն, բ) շափավորություն, հոգատարություն և այլն՝ Ճգնավետյան, Անպետյան, Հրեշտակյան, Հոգտանյան, Քերմիջյան - մեծահոգի, Ղանադյան, Օրուջյան, Փեհրիզյան - շափավոր, սակավապետ, ժուժկալ, խստաբարո, Զիտեջյան - լուրջ, Դիլքարյան - խղճով, Մախշուրյան - ամաչկոտ, Մերջիմանյան - ցանկալի, սպասելի, Ռաշիշյան - առինքնող, հրապուրիչ, գ) ու-

³⁸ Հնարավոր է նաև «քթի ծակ» շունեցող՝ ուշ գլխի ընկնող մեկնաբանությունը:

ախ, երջանիկ, կատակասեւ և այլն՝ Շաթիրյան-ուրախ, ղվարթ, Աշկարյան - սրտաբաց, Սամուրյան - երջանիկ, Քեֆիկյան, Փսարուլյան, Իյուլեջյան - ժպտերես, Բերեքյան - երջանիկ, առատ, Գոնչյան, Աշիբգյուզյան, Տնգոզյան, Յարամազյան-չարաճճի, Մասարաջյան-կատակաբան, յ) Մարդկային այլ բարեմասնություններ՝ Գործունյան, Ճարպիկյան, Ռշմարիտյան, Ճարտարյան, Ենիկոլոսյան (ըստ Աճառյանի՝ վրաց ցճօ (Լնա) լեզու և յՊԼՊՅՅՅ (Կշյոփի) - կաղապար: Ի դեպ, Թիֆլիսի բարրատում ունենք կալապոտ՝ կողապար բառը: Էնակոլոսի մակդիրը ստույգել ևս և ճարտար և դիվանագետ լինելու համար): Հիշենք որ այս սուգանունը կրող գերդաստանի ներկայացուցիչները դիվանագիտական ծառայություն մեջ են եղել Պարսկաստանում: Աղեկյան, Աշխատոյան³⁹, Երջաղիկյան, Ղաֆաղարյան: Այստեղ ենք գետեղում նաև Խրչուսյան ազգաճունը, որ, ըստ կրողի, մեկնարանով մ է իբրև «համատեղ ուտող» (խո-միասին, յոփ-ուտել, ուտել-խմել), «մարդասեր» և այլն:

Բացասական իմաստով ազգանվանական հիմքերը թվով գերակշռում են նախորդներին և, որ հատկանշական է, մեծ մասամբ օտարալեզու (թուրքերեն) են: Այս կարգի ազգանունները կարելի է, իմբավորել հետևյալ կերպ. ա) մեծախոս, դատարկախոս, շատախոս՝ Շատախոսյան, Գիլիզյան⁴⁰, Յողուլյան, Բուբուլջյան, Գավազյան, Թանգարաջյան, Յախուրյան, Չալրմյան, Քյուրումյան և այլն, բ) երկերեսանի, հարմարվող, չափ՝ Հարմարյան, Ղարուլյան, Չալումյան, Բուլինյան, Յարապյան, Կինչիկյան (հիշաչար), Կախարդյան, Ճիզվիզյան (ճիզվիտ-երկերեսանի, կեղծավոր), Ղարաջյան (սեպցնող, զրպարտիչ), Քիթապսզյան (քիթապսրդ - հավատուրաց), Փիրսզյան (սրբություն շունեցող), Փախիլյան (չար, անսիրտ), Ութմազյան (անամոթ), Վալիսյան, Սխտորյան, Քացախյան, Գեղիրյան (գառը, թթու) և այլն, գ) անառչ, անկիրք, գիժ՝ Խեռալյան, Վենտաշյան, Անթեքելյան, Թափտուղյան, Թավաքալյան, Ուլոջյան, Դադիլյան (լեռնցի), Դալիբալթոյան, Գեժոյան, Դալդալյան, Դումբաշյան, Քայայան, Խամթրաշյան, Չենգերեջյան, Չալիկյան, Գիժլարյան, Թուլումբաշյան (Թուլումպաշյան), Յողունյան, Չոբանյան, Յուլթուջյան, Կոշտոյան, Գուբարյան, Բուրխաշյան, Կաֆկաշյան (կովարար), Քելաբյան (կասաղած), Բոբոռոյան, Գումբուրյան, Չանգրյան-աղմկարար,

³⁹ Վկայված է անվանման հետևյալ բանաձևը՝ «Ղարխ աշխատող կին Թումանի»,
⁴⁰ Ղաֆաղարյան, Երևան Միջնագործական հուշարձաններ, Երևան, 1975:

⁴¹ Հնարավոր է նաև Ինգիլիզյան-Գիլիզյան անցումը:

դղրդացնող, Դուժազյան - պակաս և այլն: դ) խորամանկ, խաբեբա՝ Անդուզյան, Կճանյան, Զանդուզյան (Ճինգուզյան), Աժանջյան, Զեքմիյան, Զակալյան, Մալիջյան, Նեյթանյան և այլն, ե) ծուլ, ստրկամիտ՝ Անճարակյան, Անգոյան, Մեղավերյան, Անգոյան, Ախքաշյան, Նանսյան, Մուլուլյան, Յարալյան (Թախժոտ), Էքշյան, Թամբալյան, Ղուլլյան, Հայլամազյան, Էմիկսեզյան և այլն, զ) հիմար, ապուշ, տխմար՝ Անհասկանալյան, Ախմախյան, Դանդաղոշյան, Դանդանյան, Դինդինյան, Քեթքշյան-լոակյաց, Քեթիշյան, Փարուջյան, Թիթիզյան, Բելինջյան, Քեֆնիսեզյան և այլն, լ) վախկոտ, անսխառն՝ Դինգշյան, Դինգիլյան, Էրքեքզյան (ոչ տղամարդ), Փախսյան, Քուշկյան (վախկոտ), Տոսյան, Տոսակյան-վատ, անպիտան, Զուրիկյան (անորակ), ը) մի շարք այլ հատկանիշներ՝ Կուլունջուկյան, Գուլունյան (Գուլունյան-Ուլունյան) - ծիծաղելի, Բոսաթյան - ծաղրածու, Բաքրաշյան⁴¹ - հարբած, սարխոշ, Քելեքյան - վտանգավոր, Շալախյան - մերկ, անամոթ, Զապկինյան - կնամուր, ուտող - խմող, Պարմաքսզյան: Առանձին խումբ են կազմում կենդանիների անուններից սերված մականվանական ազգանունները, որոնք տվյալ կենդանու հետ առնչվող այս կամ այն հատկանիշի իմաստն են արտահայտում, Ազվեսյան, Գելոյան, Յախկորյան, Ճոփկյան, Ճղրիկյան, Մոծակյան, Կոունկյան, Թոշունյան, Խորոզյան, Խոզոյան, Քելեքեկյան-թիթեռ, Քելեքյան-մողես, Զախկալյան, Զիբինյան-ճանճ, մոծակ, Զալգուշյան, Դոյդոյան-սագ, Օրդակյան-բադ, Փալազյան, Օղլախչյան-ուլ, Քերազյան, Իլանդրյան, Իլանչյան - օձ, Զոմաոյան (Զոմարյան) - մեծ, հովվի շուն, Դոդանյան - բազե և այլն:

Սոցիալական վիճակի իմաստով մականվանական ազգանուններում, բնականաբար, իմաստային երկու դաշտ պետք է առանձնանա՝ ունևոր և չունևոր: Առաջին իմաստը ներկայացված է հետևյալ հիմքերով՝ Մամուլյան, Մամուրյան (ունեցվածք), Եղլարյան և Եղշատյան, Յաղլոյան, որոշ վերապահություններ նաև Յաղլիջյան (շատ յուղակեր), Բեզարյան (բեկանման), Իրադյան (Իրաթյան)-եկամուտ, օգուտ, Գոնչյան (Կոնչոյան) - երջանիկ, հարուստ: «Չունևորություն» իմաստային դաշտը շատ ավելի բազմազան է ու բազմաբանակ՝ Աղբատյան, Ախքաշյան, Բոբիկյան, Թանապուրյան, Ճարահատյան, Յրտատարյան, Զփլախյան (Զփլաքյան, Զբլաքյան, Զբլախյան), Զուգասզյան, Զուստուզյան, Ճիվասզյան, Ճելոյան, Թերլեմեզյան, Քաֆաֆյան, Օկումաշյան, Դիլանչյան (Թալանչ-

⁴¹ Հնարավոր է Բեքերեշյան-Բաքրաշյան անցումը ևս:

յան)⁴², Գերվիշյան, Օբսուզյան, Եթիմյան⁴³, Պանդուխտյան, Գյալուր-
յան⁴⁴ և այլն:

Մականվանական աղգանունները ուսումնասիրելիս ակամա որոշ
լիճակագրական հաշվումներ և ոչ այնքան հեռու գնացող ընդհանրա-
ցումներ կատարելու անհրաժեշտություն է առաջ գալիս:

Այսպես, ավելի քան 560 մականվանական աղգանուններից մոտ
160-ն է հայերեն, որոնցից միայն 1/3-ը կարելի է նկատելի վերապա-
հումներով դասել բացասականների շարքը: Վերապահումներ են արվում,
քանի որ այլալեզու բացասական իմաստով մականվանական աղգանուն-
ների համեմատությամբ սրանք անմեղ են թվում կամ այլ կերպ ասած՝
դրանք կարելի է դասել պարզապես շեղոքների շարքը: Բերենք դրանցից
մի քանի օրինակներ՝ Փորքեյան, Կաղյան, Կոնատյան, Կոնդյան, Խե-
ռալյան, Խոզոյան, Մոծակյան, Անճարակյան, Սխտորյան, Ախմախյան,
Քացախյան և այլն: Եվ հատկանշականն այն է, որ բացասական իմաս-
տով բոլոր մականվանական աղգանունների իմաստները խիստ շափա-
վոր են, որոնցից հատկապես մարմնական արատներին վերաբերվողնե-
րը՝ Կոնդյան, Կոնատյան, Կաղյան, Գահակիրյան, Կարճյան (Կարճիկ-
յան) և միայն այսքանը: Բացասական երանգներով մյուս մականվա-
նական աղգանուններում ավելի շատ հումոր կա, քան թե ծաղր կամ
ղավերշտ՝ Ածղահարյան, Կծուպանիրյան, Աղվեսյան, Տոուզյան, Խեռալ-
յան, Խոզոյան, Մոծակյան, Ախմախյան, Շատախոսյան, Հարմարյան,
Կճանյան, Անհասկանաչյան, Ճպիկյան, Գղյան, Պիճիկյան, Պուճուրյան,
Կոլտոյան, Գանակեղյան, Գոշունյան, Բոբրոոյան, Կոշտոյան, Անտաշ-
յան, Քացախյան, Սխտորյան, Թաքբեիյան, Թաքմազյան⁴⁵ և այլն:

Մի փոքր ավելի խտացված են մյուս կարգի բացասական իմաստով
մականունների երանգները՝ Կախարդյան, Անտաշյան, Ախքաշյան, Ցըր-
տատարյան, Անճարակյան, Ճարահատյան, Աղքատյան, Բոբիկյան, Ճե-
լոյան, Պանդուխտյան, սակայն, ինչպես դժվար չէ համոզվել, ոչ մի ար-
համարհանք (գուցե որոշ բացառություն են կազմում Կախարդյանը և

⁴² Գտնում ենք, որ բաղարկությամբ ձևավորված աղգանուն է, այլապես աղգանվան
հիմքը նույնիսկ այլաբանորեն չէր հանդուրժվի կրողի կողմից:

⁴³ Վերևում այս աղգանվան հիմքը կապել ենք Եվթիմոսի-ի հետ, որ ավելի հավա-
նական է թվում: Չենք բացառում նաև Եթիմ-Եթիմյան հնարավորությունը

⁴⁴ Կարծում ենք սխալ գրություն կամ բաղարկության արդյունք, այլապես հիմքը
խիստ վիրավորական է, ստորացուցիչ: Առանց ուղղորդի աղգանուն ունենալու, կրողը
այդ մականվան արդյունքը ճաշակած կլինի:

⁴⁵ Վերջին երկուսը, ինչպես տեսնում ենք, ընդհ. բաբ և հայերեն բեղ, մազ բառե-
րի բաղադրությունն է:

Անտաշյանը), ընդհակառակը՝ որոշակի է կարեկցանքի երանգը՝ Յըր-տատարյան, Անճարակյան, Ճարահատյան, Ախքաշյան, Աղքատյան, Պան-դուխտյան և այլն: Ոչ բացասական, դրական երանգներով հայերեն մականվանական ազգանուններին չենք անդրադառնում: Դրանց մասին այս կամ այն չափով վերևում խոսվել է:

Այլալեզու (գլխավորապես՝ թուրքալեզու) ավելի քան 400 մակա-նունների մոտ կեսը բացասական իմաստ է արտահայտում՝ Յագինյան-թշնամի, Շալախյան, Ութմազյան-անամոթ, մերկ, Չապկինյան-կնամուլ, Ինդերեզյան-քաչքալված, անհետացած, Քենգյոզյան-արյունոտ աչքեր, Զիբինյան-ճանճ, մոծակ, մժեղ, Չախկալյան, Քելերյան-մողես, Յոսյան, և Յոսակյան-փտած, փշացած, Բելինջյան-ապշած, վախեցած, Շալկին-յան-չշմած, Թափթփված, Դանգանյան-ապուշ, տխմար, Քելաբյան-կա-տաղած, Բուրխաջյան-ծուռտիկ, ծոմոված, Յայլմազյան, անբան, ծուլ, Դուլչյան-ծառայամիտ, ստրկամիտ, Իլանչյան-օձանման, Մալկջյան-խաբեբա, Չակալյան-սրիկա, Ղալաջյան-գրպարտիչ, Կինջիկյան-հիշա-չար, Զալումյան-չար, անարդարացի, Օքսուզյան-որբ, անտեր, միայնակ, Օկումաշյան-անգրագետ, հիմար, Թերլեմեզյան-հողաղուրկ, ունեզուրկ, Զփյախյան, Դինգիլյան-վախկոտ և այլն:

Բերվածներից իրենց խիտ գույներով, արհամարհանքի ընդգծված դրսևորմամբ ետ չեն մնում արտաքինի վերաբերյալ մականունները՝ Նըլ-լարյան-բորբոքված աչքերով, Քոսաշան, Քյոսաբաբյան, Գյոսամիրյան, Քելեջյան-քաշալ, Չոփուրյան, Քեքլիկյան-կակազ, Գեգնլյան, Թուլուկ-յան, Փասլիկյան, Լեգրյան-գունատ, նի՛ար, անարշուն: Առանձնապես բազմազան են դիվի հետ կապված մականունները՝ Կաբազյան (դդոմ), Կողբաշյան (մեծագլուխ), Բուշբեյո կյան-մեծագլուխ, Կոմբաջյան, Կոշա-բալյան, Չաթալբաշյան և այլն: Բողոքյան-թղուկ, Փախիլյան-անսիրտ, չոր, Դոբաջյան-անճոռնի, Դիլանչյան-մուրացիկ և այլն: Այս կարգի հիմ-քերի ընդգծված բացասականությունը առավել ընդգծվում է՝ արգ ժրխ-տական մասնիկով ձևավորված մականունների առկայությամբ՝ Փիր-սոլյան-սրբություն չունեցող, Բիթապսոզյան-հավատուրաց, Ճիվասոլյան-նոր հագուստ չունեցող, Չուգասոլյան, Չուստուզյան, Դիլսոլյան-անլեզու, Կանսուզյան-անարյուն, Քոլսուզյան-անձեռք, Բուունսոլյան, անբիթ, Թյուլսուզ-մազաղուրկ, Յաղսոլյան-անյուղ, Պարմաքսոլյան-անականջ և այլն:

Պատկերը ամբողջացնելու համար բերենք մի քանի դրական երան-գավորումով մականվանական ազգանուններ՝ Թոռլուկյան-պատանի, ան-փորձ, Քեֆլիկյան, Շաթիրյան-ուրախ, զվարճասեր, Գյուլեջյան-ժպտի-

րես, Բաշլյան-գլուխ ունեցող, խելացի, Օրուջյան-չափավոր, Քերեմիջյան -մեծահոգի, Սամուրգաշյան, Գարագաշյան -մրահոն և այլն: Այսպիսիք փոքրաթիվ են: Ոչ քացասական շերտի մնացյալ մասը շեղոք իմաստով մականուններ են:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, մեր ազգանունների թուրքական շերտը, ուր դասվում են թուրքական անձնանունները և մականունները իմաստաչին որոշակի ուղղվածություն ունեն, որը շնկատել հնարավոր չէ Անձնանուն-հիմքերի մասին արդեն խոսվել է: Մականուն հիմքերի նշված առանձնահատկությունը գալիս է համոզելու, որ թուրքական տիրապետությունը սովորական գերիշխանություն չի եղել, այլ դիմազրկելու, ստորացնելու և, ի վերջո, ոչնչացնելու նպատակալաց մի ամբողջ աղաքականություն:

Հաստատելու համար մեր ասածները, բերենք վերջերս հրատարակված¹⁶ Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների վերաբերյալ թուրքական վավերագրերից որոշ քաղվածքներ՝ «...Իմ բարձր Նրամանով դեշիրմեի (մանկաժողով) ենթարկված այն տղաները, որոնք փախուստի դիմելով դավանափոխ են եղել, հավաքիր...»⁴⁷: «...Այնպես չստացլի, որ մահմեդականները, գալով լուր տան, որ հիշյալ տան մեջ անհավատներ են հավաքվում կամ քանդվածը վերականգնելու փորձեր են արվում»⁴⁸: «...Այսուհետև անհավատները չկրեն մահմեդականներին սմանվող հազուստներ»⁴⁹: «...Մի շարք գյուղերից եկած անհավատներ Գալաթիայի նավահանգստում գինի բերող նավերից գինին փոխանակ տակառներով պահեստ տեղափոխելու կրում են տիկերով և քաղաքի մեջ անցուղարձի բնթացքում քսվում մահմեդականներին»⁵⁰: «...Մահմեդական տներում քրիստոնյա վարձակալներ են ապրում, հրամայում եմ նման սարդեանց հեռացլ ել մահմեդական թաղերից»⁵¹: «...Արգելված է «Հայաստան» պատմության և աշխարհագրության վերաբերող նման այլ անունների հիշատակումը»⁵²: Գիտակցում ենք, որ ավելի աղաղակող

¹⁶ Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների վերաբերյալ թուրքական մի շարք վավերագրեր (Նրապարսկում՝ Ա. Հ. Փափաղյանի), «Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 4:

⁴⁷ Նույն տեղում, էջ 202:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում, էջ 204:

⁵⁰ Նույն տեղում էջ 205:

⁵¹ Նույն տեղում էջ 209:

⁵² Նույն տեղում:

փաստեր կան, սակայն բերվածները վերաբերում են XVI—XX դդ. և ապացուցում, որ ժամանակները ոչինչ չեն փոխել: Ավելին, գնալով այդ ամենը բարձրացավ պետական քաղաքականության աստիճանի, որի արդյունքը եղան համիդյան և երիտթուրքական վայրագությունները, որոնց հակամարդկային էությունը բացահայտող բազմաթիվ վավերագրեր ու փաստեր կան⁵³:

Կանխատեսում ենք որոշ տարակուսանքներ այն կապակցությամբ, որ նման բացասական, ստորացուցիչ մականուններ կարող էին տրվել համայնքի հայերի կողմից ևս: Մենք ևս չենք բացառում նման առանձին դեպքերի հնարավորությունը, սակայն այստեղ խոսքը առանձին փաստերի մասին չէ, այլ՝ ամբողջությամբ վերցված միտումի:

Ի դեպ, նկատենք, որ մեր որոշ նախնական ծանոթությունը ժամանակակից թուրքական անձնատուներին համակարգին, մեզ իրավունք է տալիս նկատելու, որ մականվան նման ծայրահեղ դրսևորումներ չեն նկատվում:

Վերջապես ավելացնենք, որ երբ այս գլխի սկզբում մեր անհամաձայնությունն էինք հայտնում մականվանական աղբանուներին ազատվելու մտայնության վերաբերյալ, ապա նման ծայրահեղությունները չէ, որ ի նկատի ունեինք, քանի որ այդպիսիք, անկասկած, պետք է համապատասխան վերաբերմունքի արժանանան:

⁵³ Հմմտ. «Геноцид армян в Османской империи», Сб, под ред проф Нерсисяна М Г, Ереван, 1966 Ձ Ս. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ, Երևան, 1982 և այլն:

ԱԶԳԱՆՎԱՆԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐ

Հայկական ազգանունները աննշան բացառությամբ սերվում են ազգանվանակերտ հիմք + ազգանվանակերտ ածանց կաղապարով, ուր -յան-ը հանդես է գալիս իբրև ընդհանրական ածանց: Բավական է ասել, որ մեր ազգանունների մոտ 99%-ը ձևավորված է այդ ածանցով և միայն շուրջ 1%-ը՝ այլ ածանցներով: Ածանցազուրկ ազգանունները միայն մի քանիսն են՝ Դանիել-բեկ, Աբով, Քալանթար, Քեչեկ, Քոչար և այլն, որոնք նախապես հանդես են եկել իբրև կեղծանուններ և ազգանվան ուժ են ձեռք բերել ավելի ուշ՝ միայն այն ժամանակ, երբ կրողների հետնորդները ժառանգել են պատճառ իբրև ազգանուն:

Հայկական ազգանուններում -յան-ով ձևերի կողքին հանդիպում են -յանց,-ունի,-ենց,-ունց,-անց ածանցներով ձևավորված դեպքեր, ինչպես նաև ազգանունների մի խումբ, որ սերված է ազգանվանական հիմք + (-ունի,-ենց,-ունց,-ենց,-ով(+)յան) կաղապարով: Այլ կերպ ասած, ազգանունների այս խմբում առկա է անձնանվանական գործընթացի երկու դրսևորում: Արդեն նշել ենք, որ հայկական ազգանունների զանգվածային ձևավորման շրջանի սկզբում իբրև ազգանվանակերտ ածանց գործում էր -յանց-ը: Ավելի ուշ հատկապես XIX դ. երկրորդ կեսից սկսած վիճակը նկատելիորեն փոխվեց. մինչև այդ իբրև հայրանվանական ածանց գործածվող -յան-ը սկսեց փոխարինել -յանց-ին. Ընդ որում, եթե նկատվում էին յանց-ի յան-ով փոխարինման դեպքեր, ապա թիչ չէին նաև այն դեպքերը, երբ նոր ձևերը կազմվում էին պարզապես -յանց-ով ձևերից՝ -ց-ի անկումով: Այս գործընթացը շարունակվեց ընդհուպ մինչև մեր դարի 10-ական թվականները: Նախորդ տասնամյակներում, բնականաբար նկատվում էր այդ երկու ածանցներով կազմված ձևերի զուգահեռ գործածություն:

Արդ, մեր ազգանուններում պահպանված -յանց-ով ձևերի առկայությունը մենք հակված ենք բացատրելու Արևելյան Հայաստանում անցյալ դարի վերջին տասնամյակներին տեղ գտած արտագաղթերով, որոնց հետևանքով, կտրված լինելով բնիկ հայկական միջավայրից՝ Միջին Ասիայում, Մոսկվայում և այլուր հայտնված հայերը աշխատեցին անադարտ պահել իրենց ազգանունները. մինչդեռ Հայաստանում, ինչպես նաև Անդրկովկասի գրեթե բոլոր հայաշատ վայրերում -յանց-ի անցումը -յան-ի համընդհանուր բնույթ ուներ և վերջնականապես ավարտվեց մեր դարի 20-ական թվականներին: Ասվածից, ինչպես նաև նյութի քննությունից պարզ է դառնում, որ -յանց-ով ձևերը գոյատևել և մեզ են հասել, գլխավորապես Հայաստանից դուրս, վերը նշված վայրերում ապրող հայերի շնորհիվ: Մեր քարտարանում տեղ են գտել ավելի քան 60 -յանց-ով ձևեր: Կարծում ենք, որ ցուցակը կարող է համալրվել նոր փաստերով և նման ձևերը կհասնեն լավագույն դեպքում 160-ի: Ավելացնենք նաև, որ մեր ունեցած -յանց ով գրեթե բոլոր ձևերը ունեն առանց ց-ի կամ -յան-ով զուգահեռներ՝ Ասուանց-Ասույան, Արոյանց-Արոյան, Բագյանց-Բագյան, Բաբաթյանց-Բաբաթյան, Բիծյանց-Բիծյան, Գաղիյանց-Գաղիյան, Գազյանց-Գազյան, Գաթրջյանց-Գաթրջյան, Գարյանց-Գարյան, Դավիթյանց-Դավիթյան, Դանդուրյանց-Դանդուրյան, Եղյանց-Եղյան, Երեմյանց-Երեմյան, Թամիրյանց-Թամիրյան, Թեմուրյանց-Թեմուրյան, Թրյանց-Թրյան, Լալայանց-Լալայան, Խանյանց-Խանյան, Խոջայանց-Խոջայան, Կաչյանց-Կաչյան, Կասյանց-Կասյան, Կրոյանց-Կրոյան, Կուլոյանց-Կուլոյան, Հակոբյանց-Հակոբյան, Հայրումյանց-Հայրումյան, Հարությունյանց-Հարությունյան, Հունանյանց-Հունանյան, Ղազարյանց-Ղազարյան, Ղազիյանց-Ղազիյան, Մախաթչյանց-Մախաթչյան, Մինասյանց-Մինասյան, Միքայելյանց-Միքայելյան, Պապիսյանց-Պապիսյան, Վանիյանց-Վանիյան, Տարասյանց-Տարասյան, Տեր-Գազարյանց-Տեր-Գազարյան, Տեր-Ղազարյանց-Տեր-Ղազարյան, Քոլյանց-Քոլյան, Քուշմանյանց-Քուշմանյան, Պետրոսյանց-Պետրոսյան, Բենգլյանց-Բենգլյան, Նանյանց-Նանյան, Սիրունյանց-Սիրունյան, Քեչյանց-Քեչյան, Արիկյանց-Արիկյան, Ամատունյանց-Ամատունյան, Կալիյանց-Կալիյան:

Առանց ց-ի կամ -յան-ով իրենց զուգահեռները չունեն հետևյալ ազգանունները՝ Ակուլյանց, Աղաջրաղյանց, Բրդանյանց, Էկոյանց, Թոթոմյանց, Կոստոյանց, Զնիլումյանց, Կուտոյանց: Մի շարք -յանց-ով ձևերի առանց ց կամ -յան-ով տարբերակները հանդես են գալիս նաև, կրած լինելով այլ կարգի փոփոխություններ՝ Ալոջյանց-Ալոշյան,

Աղավալյանց-Աղավելյան, Ասշիյանց-Ասշյան, Գելոֆյանց-Գելովյան, Գեորգյանց-Գեորգյան, Սոնանյանց-Սոնայան, Բեորեկչյանց-Բեորեկչյան: Մեր ազգանունների շարքում առկա են նաև -ունց, -անց, -ենց, -ոնց ածանցներով կազմություններ: Հայտնի է, որ նշված ազգանվանակերտ ածանցները կազմում են գրական և բարբառային -ունք, -անք, -ենք, -ոնք ածանցներով կազմված գոյականների սեռական հոլովածների հետ: Դժվար չէ նկատել, որ պատկանելություն, սերում ցույց տալու իրենց ունակությունը նշված սեռական հոլովածները գործածության շատ մեծ հաճախականություն են ունեցել առօրյա խոսքում և աստիճանաբար վեր են ածվել անձի անվանման բանաձևի անդամի, իսկ հետագայում, Հայաստանի որոշ վայրերում, մասնավորապես Ջանգեղուրում, բարձրացել են աղբյուրական աստիճանի: Ինչպես հայտնի է, այսօր էլ Հայաստանի գյուղական վայրերում զգալի տարածում ունեն գերդաստանի նման անունները¹:

Ինչպես և պետք էր սպասել, մեր ունեցած ավելի քան յոթանասուն դեպքերի մեջ գերակշռողը բարբառային -ունց, ինչպես նաև -ոնց, -անց ածանցներն են: Բավական է ասել, որ գրական -ենց ածանցով ունենք միայն Բրեւտենց, Խանենց, Մալենց, Մանկասարենց, Բազենց, Մարտենց ձևերը: Բերենք օրինակներ հայկական ազգանունների այս շերտից՝ Ադոնց, Ադունց, Աթասունց, Ակունց, Ակլունց, Այունց, Բակունց, Բուլունց, Բելունց, Բուլանց, Բրդանունց, Գարունց, Գիլունց, Գիշունց, Գյագունց, Գոգունց, Դադունց, Դաջունց, Դայանց, Դինունց, Դուլունց, Թաթունց, Թելունց, Թոնունց, Թրվանց, Իսունց, Խաչունց, Խեշունց, Խոյլունց, Խոսունց, Խունունց, Ծոնվերանց, Կյաղանց, Հախունց, Հյուսնունց, Հովունց, Ղավալբաբունց, Գավալբաբունց, Ղլեյշունց, Ղուզրունց, Մադունց, Մալունց, Մակինց, Մակունց, Մոկնանց, Մոնտունց, Շաշունց, Շեգունց, Շեկունց, Չոպշունց, Ջանունց, Սաթունց, Սակունց, Սնեցունց, Սրույանց, Սևունց, Վանդունց, Տոնունց, Քյարունց, Ֆատունց, Ֆիոունց, Ֆիրունց, Ափունց, Բադունց, Բալունց:

Ազգանունների նշված շերտի վերաբերյալ կարելի է ավելացնել նաև, որ ազգանվանական հիմքերը մեծ մասամբ միավանկ են, կրճատ-

¹ Այս բնագավառում մեր կատարած նախնական հետազոտությունները վկայում են, որ հայկական անձնանունների այս շերտը բալականին հետաքրքիր ենթահամակարգ է կազմում և կարոտ է հատուկ ուսումնասիրության:

ված և հաճախ խիստ բարբառային երանգ ունեն և թերևս հենց այդ պատճառով դժվարութեամբ են մեկնաբանվում և ստուգաբանվում²:

Եվ վերջապես, ազգանունների այս խմբի մեջ նկատվում են միևնույն հիմքից տարբեր ածանցներով կազմություններ՝ Ադոնց-Ադունց, Մալենց-Մալունց, Մակինց-Մակունց: Այս խմբի մեջ պետք է դասել նաև -ոնք ածանցով միակ ձևը՝ Թրունք: Հայկական հին, իշխանական տոհմանվանական ածանցներից միայն -ունի-ով ձևերն են մեզ հասել և տեղ գտել մեր ազգանունների շարքում: Դրանք մոտ քառասունն են: Նկատելի է, որ եղածներից ոչ բոլորն են, որ իրենց արմատներով հասնում են մեր ժողովրդի վաղ անցյալին, առանձնացված փաստերի մի մասը որոշակիորեն նորակազմություններ են՝ Ակնունի, Աստունի, Ատյունի, Արամունի, Բենունի, Գերունի, Գոխատունի, Թրունի, Հերունի, Հայկազունի, Հայկունի, Զիտունի, Վարդունի, Քաջունի և այլն:

Բերվածներից առանձնանում են Շահաթունի, Շահխաթունի ձևերը, որոնք Շահխաթուն- Շահխաթունյանից կեղծ կազմություններ են, ինչպես նաև Քաջազնունի-Քաջունի պարզեցումը: Ընդգծվում է նաև բաղարկութեամբ կազմված Արմատունի ձևը:

Եվ վերջապես՝ մեր ազգանվանական հիմքերի հնագույն շերտի մասին: Առաջին հերթին զարմացնում է, թե ինչպես են դրանք դիմացել ուշ Միջնադարի և մեր դարի առաջին տասնամյակների արհավիրքներին և հասել մեզ: Բերենք այդ ազգանունները՝ Ամատունի, Արծրունի, Բըզնունի, Գնթունի, Գնունի, Խորխոռունի, Շահապունի, Պահլավունի, Սահառունի, Սլկունի, Վահունի, Քաջազնունի, Արշակունի, Բագրատունի, Ռշտունի, Մանդակունի, Քաջբերունի: Ներկայացվող բոլոր ձևերը վկայված են Գահնամակում, սակայն չպետք է կարծել, որ ազգանունները մեզ են հասել իշխանական պահպանված տների հետ միասին: Սրանք պարզապես մասունքներ են, հինը, ավանդականը պահպանելու մեր ժողովրդին շատ հատուկ գծի դրսևորման արգասիք: Այս շերտի մասին ասելիքը ամբողջացնելու համար նշենք, որ չի բացառվում նաև վերը բերված ազգանուններից մի մասի նորակազմություն լինելու հնարավորությունը, այլ կերպ ասած, կարելի է ենթադրել, որ XIX դարի վերջերին և XX սկզբներին, ազգային ինքնագիտակցութեան նոր վերելքի տարիներին վերածնունդ ապրեցին նաև այս կարգի որոշ ձևեր: Առավաճը

² Այդ ազգանունները կրողների հետ զրույցները ևս մեզ բերել են այն համոզման, որ հիմքերի իմաստները մեծ մասամբ մթազնաժ են:

ապացո՛ցող ուղղակի փաստեր շունենք, պարզապես նկատել ենք, որ նման միավորների գործածությունը հատկապես հաճախական է դառնում հենց վերը նշված ժամանակահատվածներում: Հայտնաբերել ենք նաև -ական-ով մի ձև՝ Կամսարական, ինչպես նաև Սրվանձտյան, Դիմաքսյան, Կարագյան ազգանունները: Բնականաբար հարց է ծագում, թե ինչու են վերջին երեքը առանձնացված -յան-ով մյուս ձևերի բազմությունից: Առաջին երկուսը, ինչպես հայտնի է, հին իշխանական տոհմանուններ են: Այս դեպքում ծագում է մի այլ հարց ևս. ինչու՞ այստեղ չդիտարկել, ասենք, Մամիկոնյան տոհմանունը: Գտնում ենք, որ եթե առաջին երկուսը անվերապահորեն մեղ են հասել-ունի-ով ձևերի նման, ապա Մամիկոնյանի մասին նման անվերապահությունը ճիշտ չէր լինի, քանի որ հնարավոր է վերջինիս սերումը Մամիկոն անձնանունից, հատկապես, եթե ի նկատի ունենանք, որ -ունի-ով բոլոր ձևերին, ինչպես նաև Սրվանձտյան և Դիմաքսյան ազգանուններին իր սարածվածությունամբ հակադրվում է Մամիկոնյան ազգանունը: Ինչ վերաբերում է Կարագյան ազգանվանը, ապա այն սերված ենք համարում հայկական ուշ Միջնադարյան ամենանշանավոր մի տոհմանունից՝ Կիրաք (Գիրաք, Գյալաք, Կյարաք)-Միրմանների, որը ինչպես հայտնի է խալաֆայի դադթօջախի ամենաաչքի ընկնող գերդաստանն էր³: Որոշ վերապահությունամբ այստեղ դիտարկում ենք նաև կրկնակ ազգանվանական ածանցունեցող ազգանունները: Իհարկե, ավելի ճիշտ կլիներ դրանք քննել ազգանունից ազգանվան սերման դեպքերին նվիրված բաժնում, սակայն, ի նկատի ունենալով, որ այդ բաժինը կոչել ենք «Տարբերակային ազգանուններ», իսկ կրկնակ ածանցով ձևերը ոչ մի կերպ տարբերակների շարքը չեն դասվում, ուստի այդ շերտի քննությունը այստեղ ավելի նայատակահարմար ենք գտնում: Հայկական ազգանուններից մոտ հիսունի ազգանվանակերտ -յան, ածանցին նախորդում է -ունց, -ենց, -ինց, -ունի, ինչպես նաև փոխառյալ՝ -ով: Արդեն առիթ ունեցել ենք նշելու, որ վերջին ածանցով որոշ ժամանակ, հատկապես ազգանունների զանգվածային ձևավորման շրջանում, հայերի ազգանունները սերվել են սակայն այդ երևույթը բավականին կարճ կյանք ունեցավ, քանի որ ազգանունների սերման բնիկ հայկական կաղապարը շատ արագ վերջնականապես քաղաքացիություն ստացավ: Փոխառյալ այդ ածանցով ձևերը փոխարինվեցին հայկականով, սակայն որոշ դեպքերում, պարզապես

³ Միրմանյանը ևս այստեղ չենք քննարկում Մամիկոնյանի նմանողությամբ:

եղած փոխառյալ կաղապարի վրա ավելացվեց -յան՝ Դավիթովյան, Պապովյան, Դիլովյան, Պապովիչյան, Պրոտոպապովյան⁴։

Կրկնակ ածանցով մյուս ձևերից հատկապես տարածված են -ունց-յան կաղապարով սերման դեպքերը՝ Ակունցյան, Մալունցյան, Մակունցյան, Մանուցյան⁵, Վարդունցյան, Վարունցյան, Բադունցյան, Բունցյան, Թաթունցյան, Խաչունցյան, Հախունցյան, Հովունցյան, Մադունցյան և այլն։ Այս խմբի մյուս ածանցներով ձևերը ներկայացված են հետևյալ ազգանուններով՝ Մալենցյան, Մալինցյան, Մակինցյան, Մալինցյան, Տատենցյան, Տատինցյան, Խաչենցյան։ Ինչպես տեսնում ենք, բերվածների մեծ մասը հանդես է գալիս իբրև -ունց-ով ձևերի տարբերակ՝ Մալունցյան-Մալենցյան, Մալինցյան, Մակունցյան, Մակինցյան, Խաչունցյան-Խաչենցյան։ Նշենք նաև, որ կրկնակ ածանցներով այս ենթաշեղանի ազգանունների մի մասը ներկայացված է իր զուգահեռ՝ առանց -յան ձևերով Ակունցյան-Ակունց, Մալունցյան-Մալունց, Մակունցյան-Մակունց, Թաթունցյան-Թաթունց, Մալենցյան-Մալենց, Մակինցյան-Մակինց և այլն։ -ունի, -յան կաղապարը ներկայացված հետևյալ ազգանուններով՝ Ամատունյան նաև՝ Ամատունյանց, Արծրունյանց-Արծրունյան, Գնթունյան-Գնունյան նաև Կնունյանց, Խորխորունյան, Ռշտունյան, Արշակունյան, Բզնունյան, Մանդակունյան, Բազրատունյան։ Չեն վկայված կամ մեղ հայտնի չեն Շահապունի, Պահլավունի, Սահաունի, Սլկունի, Վահունի, Քաջազնունի, Քաջբերունի տոհմանուններից զաղմված ազգանունները։ Վկայված -ունի, + -յան կաղապարով ազգանունների գոյությունը պետք է բացատրել իբրև մեր դարի 20—30-ական թվականներին տիրող նիհիլիզմի և այլ կարգի երևույթների ազդեցության արդյունք, երբ ընդգծված «հնաբույր» և «տիրող» դասակարգ հիշեցնող -ունի ածանցով ձևերին ավելացվեց ընդհանրական, «դասակարգային» առումով չեզոք -յան ածանցը։

⁴ Այստեղ չենք քննում Պասկելիչյան ազգանունը, քանի որ այս դեպքում ունենք անձնանուն՝ Պասկելիչ+յան կաղապարը։

⁵ Գործ ունենք հնչյունափոխված տարբերակի հետ, որ ձևավորվել է տարնմանական անկնման հետևանքով՝ Մանունց Մանուգյան։

ՏԱՐՔԵՐԱԿԱՅԻՆ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐ

Հայկական ազգանունների ձևավորման բարդ ու երկարատև գործընթացում, ի թիվս վերը նշված հիմքերով ազգանունների, նկատելի արգասավորություն է ունեցել եղած ազգանուններից նորերի ձևավորման ուղին: Այս երևույթը ազգանունների ամբողջության հետ հարաբերության դեպքում ներկայանում է իբրև երկրորդական կազմություն՝ ազգանուն→ազգանուն, իսկ հատուկ անունների ամբողջ համակարգի հարաբերությամբ՝ երրորդական. հատուկ անուն (բացառությամբ ազգանվան)->ազգանուն→ազգանուն:

Ազգանունների քննվող շերտի երևան գալը օրինաչափ էր հատկապես հայկական ազգանունների ձևավորման շրջանում միասնական գրական լեզվի բացակայության, մի քանի տասնյակ բարբառների և խոսվածքների առկայության պայմաններում: Ասվածին պետք է ավելացնել նաև հայկական ազգանունների այլ լեզվական միջավայրում հայտնվելու փաստը:

Հայտնի է, որ հատուկ անունները և մասնավորապես անձնանունները բառապաշարի այն հատուկ շերտն են կազմում, որոնց համար արտաքին շփումների և հարաբերությունների հաճախականացման հետևանքով մեծանում է այլալեզու միջավայրում հայտնվելու հավանականությունը: Եվ որքան նոր լեզվական միջավայր, այնքան տարբեր հնչյունական համակարգեր և դրանց հարմարվելու անհրաժեշտություն է: Երբեմն հայկական ազգանունը հարմարվելով հնչյունական նոր միջավայրին, այնուհետև տեղ է գտել մեր ազգանունների շարքում իբրև նոր միավոր՝ Թանգոյան և Տանգոյան, Մոկացյան և Մակասյան, Ճուղուրյան և Զուգուրյան ու Զուխուրյան և այլն⁶:

⁶ Քննվող բոլոր օրինակները անխտիր վկայված են: Այլ կերպ ասած, այստեղ քննվելու են միայն այն օրինակները, որոնց անփոփոխ, ելակետային կամ բնիկ ձևերը և տարբերակները նշված են մեր քարտարանում իբրև ինքնուրույն միավորներ:

Այս գլուխը նվիրված է լողանվան ելակետային ձևերի և նրանց տարբերակների վերհանմանը: Ավելացնենք նաև, որ վերը նշված հիմքերի տարբերակներով ձևավորված ազգանունների քննությանը այստեղ չենք անդրադառնա, քանի որ դրանց մասին խոսվել է անձնանուն հիմքերի տարբերակային ձևերին նվիրված բաժնում: Այսպես, Հովհաննիսյան, Հովեյան, Հովոյան, Վանեսյան, Հովիկյան, Օնիկյան և Աստվածատրյան, Մատուրյան, Ասատուրյան, Մատոյան, Մատինյան, Ասոյան և այլ ազգանունները այս գլխի խնդրո առարկան չեն, մինչդեռ Իոնիսյան, Օվեյան, Օվոյան, Իվանիսյան, Ասատուրյան, Մատիյան, Մատրյան և նման այլ ձևեր, ըստ հնարավորին, լիակատար քննության են ենթարկվում:

1. ՀԵՉՈՒՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Հնչյունափոխություն

Չայնավորների հնչյունափոխություն: Հայկական ազգանուններում հնչյունափոխություն⁷ կատարվում է վերջին՝ ազգանվանակերտ ածանցի ձայնավորից զատ, մյուս բոլոր դեպքերում:

ա-ի դիմաց ը կամ զերո -Ֆարաշյան-Ֆարշյան, Մանդալյան-Մընդլյան, Սադադյան-Սադդյան, Փախալյան- Փախլյան, Ազարյան-Ազրյան, Թաթարյան-Թաթրյան, Լազարյան-Լազրյան, Վանիյան-Վանյան, Ղարախաչյան-Ղարախշյան, Կիրակոսյան-Կիրկոսյան և այլն:

ե-ի դիմաց ի կամ ը՝ -Ումեդյան-Ումիդյան, Ալեքյան-Ալիքյան, Յազերյան-Յազրյան, Դանեդյան-Դանդյան, Սիրադեդյան-Սիրադդյան⁸, Արարքեցյան-Արարքցյան, Թնգերյան-Թնգրյան, Լենդյան-Լնդյան, Արեգյան-Արրգյան, Արդենյան-Արդինյան, Սաղերջյան-Սաղիրջյան, Բաբերյան-Բաբիրյան, Բաղեշյան-Բաղիշյան⁹, Բաղերյան-Բաղիրյան¹⁰, Բեազ-

⁷ Հնչյունափոխությունը ներկայացնում ենք, հետևելով ակադեմիկոս Գ. Զահուկյանի ձևակերպած հնչյունական հատկանիշներին (զուգաբանություններին), տե՛ս, «Հայ բարրառագիտության ներածություն» Երևան, ԳԱ հրատ, 1972, էջ 45—81:

⁸ Խոցադեդյան ի դեպքում այս երևույթը չի նկատվում: Ըստ երևույթին կամ տարբեր դեպքերում այդ բաղադրիչի գիտակցման հստակության աստիճանն է դեր խաղացել և կամ էլ հնչյունափոխության այդ դեպքի գործունեության աստիճանը:

⁹ Նաև դրա փոխ.՝ Բաղշիյան-Բաղիշյան:

¹⁰ Նաև հարմարում այլալեզու միջավայրին:

յան-Բիազյան, Բեզոյան-Բիզոյան, Եզեկյան-Եզիկյան¹¹, Էլյազյան-Իլյազյան, Էլանգոզյան-Իլանգոզյան, Էլդարյան-Իլդարյան, Էմիրզյան-Իմիրզյան, Եվանգուլյան-Իվանգուլյան, Երեցյան-Իրիցյան, Տատենցյան-Տատինցյան, Ղևենյան-Ղևինյան, Ջանգեզորյան-Ջանգիզորյան, Գարանֆելյան-Գարանֆիլյան, Լաքեսյան-Լաքիսյան, Էգերջան-Էգիրջան, Ծերունյան-Ծիրունյան¹² և այլն:

Ի-ի դիմաց ը կամ զերո՝ Ռայիսյան-Ռայսյան, Ջիվչյան-Չվչյան, Քլիջյան-Քլջյան, Բեդիրյան-Բեդրյան, Բժիշկյան-Բժշկյան, Գզիրյան-Գզրյան, Դաղլիյան-Դաղլյան և այլն:

Ի-ի դիմաց Ե՝ Կադիկյան-Կադեկյան, Միրվելյան-Մերվելյան¹³, Աղայիկյան -Աղայեկյան, Աղիկյան -Աղեկյան¹⁴, Դիրիլյան -Դիրեկյան¹⁵, Բարիկյան -Բարեկյան, Դիլանյան -Դելանյան, Իգնատոսյան -Էգնատոսյան¹⁶:

Հնչյունափոխությունները նոր ազգանունների ձևավորման պատճառներից է նաև ձայնավորների քմայնացումը կամ քմայնացած ձայնավորների դիմաց ոչ քմայնացածների հանդես գալը՝

ու-ի դիմաց ու, վերջինս արտասանության ժամանակ շփոթվում է ույ երկբարբառի հետ և, ի վերջո, ու-ի դիմաց ի, ա, և յու՝ Շարսուրյան-Շարիրյան, Փերոզյան-Փերիզյան, Ուլուխանյան-Ուլիխանյան, Թոփուզյան-Թոփազյան, Նուրումյան-Նարումյան, Ուղուբյան-Յուղուբյան և այլն:

ու-ի դիմաց ու (գրաբանական ու > ո հետագա ընթացքով) - Կուխիկյան-Կոխիկյան, Ջանգիզուրյան-Ջանգիզորյան, Տուռուզյան-Տոռոզյան, Բուլիկյան-Բոլիկյան, Ծիրունյան-Ծիրոնյան և այլն:

ա-ի, ո-ի դիմաց ու (գրաբանական ու > ու հետագա ընթացքով) - Դեզումենյան-Դեզումենյան, Թոռչյան-Թուրչյան, Սաբոզլանյան-Սաբուզլանյան, Սոլախյան, Սալախյան-Սուլախյան, Ջարոբյան-Ջարուբյան, Էյրամջյան-Էյրումջյան և այլն:

¹¹ Նաև բաղարկություն իկ-ով ձևերի հետ: Հնարավոր է նաև պարզեցում Եզիկելյան ձևից:

¹² Նաև բաղարկային հնչ-փ՝ խոցատության + (տուր > տր) - խոցատրյան. Ծերունյան-Միրունյան Ծիրունյան

¹³ Հնարավոր է նաև առնամանություն:

¹⁴ Չի բացավում նաև Աղայեկյան-Աղեկյան յև > է հնչյունափոխություններ անցումը:

¹⁵ Հնարավոր է նաև տարնմանական հնչյունափոխություն:

¹⁶ Այնպիսի դեպքերում, երբ երկրորդ բաղադրիչի հիմքը վկայված է նաև իբրև անձնանվան որևէ տարրերակ, օրինակ Էգնատոս, հնարավոր է նաև փաստի նման մեկնաբանություն:

է-ի դիմաց յե -էլոյան-ելոյան, էլինյան-ելինյան, էվինյան-եվինյան, էլբակյան-ելբակյան, էփրիկյան-եփրիկյան, էփրոյան-եփրոյան, էդիլյան-եդալյան և այլն:

Երկբարբառների հնչյունափոխությամբ ևս նոր ազգանուններ են ձևավորվել:

-այ, էյ, յա, յե, յո երկբարբառների դիմաց է, և, ա՝ Այլազյան-էլազյան, էյրամջյան-էրամջյան, Այվազյան-էվազյան, Յաղիսյան-եղինյան և այլն: Յավրիյան-եվրիյան, Յարալյան-երալյան, Յազգուլյան-էզգուլյան, Եգանյան-էգանյան, Եգինյան-էգինյան, Եզդանյան-էզդանյան, Եսաջանյան-էսաջանյան, Եսազուլյան-էսազուլյան, Եսայան-էսայան, Երոյան-էրոյան, Երվանյան-էրվանյան¹⁷, Գայլուկյան-Գալուկյան, Յոզունյան-եդունյան, Եվինյան-Ավինյան, Եփրիկյան-Ափրիկյան, Եփրոյան-Ափրոյան:

Հանդիպում են քիչ տարածում ունեցող հետևյալ դեպքերը ևս ու > ը՝ Ուխտոյան-Ըխտոյան¹⁸, շեշտակիր ե-ի դիմաց ի՝ Զանգեզուրյան-Զանգիզորյան:

յու-ի դիմաց ի, ը, ու -Կուլումջյան-Կուլիմջյան, Կյուրեղյան-Կրեղյան, Կիրեղյան, Կուրեղյան, Թյունյան-Թունյան, Թյուսուլյան-Թուսուլյան և այլն:

Մեր ազգանունների մեջ առանձնանում են նաև ը-ի լիաձայնության հետևանքով ձևավորված տարբերակներ, որոնց հարաբերությունը ելակետային ձևերի հետ արտահայտվում է գաղտնավանկ ը-ի հնչյունափոխությամբ ու-ի կամ ի-ի-Պլուզյան-Պուլուզյան, Բլրցյան-Բլուրցյան, Բուլուրցյան, Խդրյան-Խդիրյան, Սվարյան-Սուվարյան, Բոխսկյան-Բրիսիկյան, Բշախչյան-Բիշախչյան, Բուշախչյան, Տուուզյան-Տուտուզյան, Բուրդմոսյան-Բուրդումոսյան, Սմբուլյան-Սումբուլյան, Բլբուլյան-Բուլբուլյան-Բիլբուլյան, Գզիրյան-Կիբիրյան, Գզողյան-Կիզողյան, Կզողլանյան-Կիզողլանյան:

Առնմանությունը ևս պատճառ է դարձել ազգանվանական նորանոր տարբերակների երևան գալու համար: Ընդ որում, ինչպես և պետք էր սպասել, առնամանողի դերում ամենից հաճախ հանդես է գալիս ազգանվան ավելի հստակ գիտակցվող հատվածի ձայնավորը: Երբեմն նրկատելի է նաև առնմանության դեպքում բաղարկային գործոնի ազդեցությունը՝ Լուսինյան-Լիսինյան, Օրուջյան-Օրոջյան, Լուսիկյան-Լիսիկ-

¹⁷ Յե > է անցումը կարող է այլալեզու հիմք ևս ունենալ:

¹⁸ Չի բացառվում, որ Ըխտոյան ձևը արդյունք լինի հետևյալ գործընթացի՝ Ուխտանես-Ըխտո-Ըխտոյան:

յան, Թորամանյան-Թորոմանյան, Թորոմոնյան, Սաթենյան, Սաթունյան-Սաթանյան¹⁹, Շիմշատյան-Շիմշիտյան, Ուլիխանյան-Իլիխանյան, Եղնուկյան-Եղնակյան, Թոսունյան-Թուսունյան, Միրվելյան-Մնրվալյան (գրաբանական Մուրվալյան), Միրվելյան-Մերվալյան, Վերանյան-Վարանյան, Քուրդողլյան-Քորդոլյան, Կոպալյան և Կոպելյան-Կոպոլյան, Աժդարյան-էժդարյան և Աժդերյան, Թավրիդյան-Թավրազյան, Կիբաբյան-Կարաբյան, Սրապյան-Սարապյան, Խոցատուրյան-Խոցատարյան, Ազարումյան-Ազարամյան, Բուդաղյան-Բուդուղյան, Մանասերյան-Մանասարյան, Սարատակյան-Սարատիկյան²⁰, Բարելուսյան-Բարելասյան, Գյուլբահարյան-Գյուլբահանյան, Նախշունյան-Նախշանյան, Ջավուկցյան-Ջավակցյան, Սասունյան-Սուսունյան, Մալերյան-Մալարյան, Ղորղանյան-Ղարղանյան, Խալիֆյան-Խալաֆյան, Արիստակեսյան-Արեստակեսյան:

Տարնմանական հնչյունափոխության դեպքում բաղարկային գործոնի ազդեցությունը ավելի նկատելի է, իսկ ընդհանուր առմամբ տարնմանական տարբերակների թիվը նկատելիորեն սակավ է առնմանական հնչյունափոխության հետևանքով տարբերակների համեմատությամբ՝ Հարաֆյան-Ջարեֆյան-Ջարիֆյան, Նուրումյան-Նարումյան, Իկլիկյան-Իկիլիկյան, Մարդանյան-Մերդանյան և այլն: Բլքյան-Բլբայան, Առավանյան-Աովանյան²¹, Դիդիլյան-Դիդելյան, Ջանջալյան-Ջինջալյան, Եգանյան-Եգինյան²², Խուդավերդյան-Խուդիվերդյան:

Նշվածներից տարբերվում է ձայնավորների հնչյունափոխության այն դեպքը, երբ ազգանվանական ածանցի ավելացումից հետո, ինչպես սպասելի էր, փոխվում է ոչ թե հիմքավերջ կամ ածանցանախորդ ձայնավորը, այլ հիմքի վերջընթեր ձայնավորը: Այս դեպքում, մեր կարծիքով, դեր է խաղացել իմաստաբանական գործոնը՝ անհնչյունափոխ է մնում ազգանվանական հիմքի իմաստային որոշ ինքնուրույնություն պահպանած բաղադրիչը՝ -ջան, -բեկ, -դեղ, -խան, -իկ, -ավոր, -ամիր, -եր և այլն: Բերենք օրինակներ՝ Միրիջանյան-Միրջանյան, Խոջաբեկյան-Խոջբեկյան, Խոցադեղյան-Խոցդեղյան, Ադիլխանյան-Ադլիխանյան, Թագավորյան-Թագվորյան, Շահամիրյան-Շահմիրյան, Մարտիկյան-Մըրտիկյան, Ջարացյան-Ջրացյան, Թանգերյան-Թնգերյան, Բաղերյան-Բըղերյան, Չիրիկյան-Չրիկյան, Անանիկյան-Աննիկյան և այլն:

¹⁹ Չի բացառվում նաև Սալթանյան-Սաթանյան անցումը:

²⁰ Հնարավոր է նաև ակ>իկ բաղարկային անցումը:

²¹ Ենթադրելի է նաև Աղվանյան բաղարկային անցումը:

²² Նաև Եղինյան-Եգինյան այլալեզու անցումը:

Ինչպես տեսանք վերևում, շեշտից կախված հնչյունափոխության մյուս դեպքերում հնչյունական փոփոխությունները կատարվում են բավականին օրինաչափորեն՝ ազգանվանական հիմքի վերջին վանկի շեշտը ածանցի ավելանալուց հետո տեղափոխվում է այ, առաջ բերելով շեշտագուրկ ձայնավորի արդեն նկարագրված փոփոխություններ:

Բաղաձայնների հնչյունափոխություն

Բաղաձայնների առնմանությունը ներկայացված է բավականին բազմազան օրինակներով: Ընդ որում բազմազանությունը ձեռք է բերվում գլխավորապես բաղաձայնների առնմանության հնարավոր դեպքերի հաշվին՝ ըստ արտաբերման տեղի, ըստ ձայնի որակի, ըստ արտաբերման եղանակի և այլն: Ավելին, մասնակի առնմանության կողքին, որ, ինչպես հայտնի է, ավելի սովորական երևույթ է, մեր ազգանուններում երևում են լիակատար առնմանության հետևանքով առաջացած տարբերակներ՝ Կարմիրշալյան-Կարմիրշարյան, Խոնդալյան-Խոնդանյան, Ճաղմաճյան-Ճաղմազյան²³, Չարխիֆալակյան-Չալխիֆալակյան, Շահումյան-Շահունյան, Ճաղմաչյան-Ճաղմազյան, Ջանբազյան-Ջամբազյան, Ճիզմիճյան-Ճիժմիճյան, Չիթչյան-Չիլչյան, Սուլթանյան-Սալթալյան, Մագթաղյան-Մագթարյան, Սունգարյան-Սունգալյան, Սուվարյան-Սուվալյան, Տոներյան-Տոնելյան, Անթառամյան-Անթառանյան, Գավուրմաջյան-Գավուրնաջյան, Կարակուլյան-Կալակուլյան, Կալպակչյան-Կալպաբչյան, Նազդուլյան-Նասիսուլյան²⁴, Աբասյան-Աբազյան, Աբշեհերյան-Աբշեհիրյան, Ասոյան-Ազոյան²⁵, Ալմասյան-Ալմազյան, Բաբասյան-Բաբազյան, Բաղդիկյան-Բախտիկյան²⁶, Բաշմազերկյան-Բաշբազերկյան, Շանչյան-Շանչյան, Ճզմեչյան-Ջզմեչյան, Նալդրանյան-Նարդրանյան և այլն:

Տարնմանությամբ ստեղծված տարբերակները նկատելի տեղ են գրավում հայկական ազգանունների ամբողջության մեջ: Այս դեպքում ևս

²³ Այս դեպքում ունենք առնմանության և տարնմանության համատեղ ազդեցություն:

²⁴ Նազդուլյան-ը ալլալեզու միջավայրում արտասանվել և գրվել է Նազխուլյան և ապա ըստ ձայնի որակի՝ զխ > սխ

²⁵ Նաև Ազ-ով սկսվողներից՝ կոշական:

²⁶ Հնարավոր է նաև Բախտ-ովներից անձնանվան կրճատման կաղապարով կազմություն:

զգալի են լիակատար տարնմանությամբ դեպքերը՝ Դուրգարյան-Դուլգարյան, Սրճարայան-Սրճարանյան, Գայանյան-Գայամյան և այլն: Այս խմբի մեջ ենք դասել նաև այն ազգանունները, որոնց հիմքը պարունակում է -սզ հնչյունակապակցություն: Այդ հնչյուններից մեկը տարնմանական գործոնի ազդեցությամբ ընկել է: Իհարկե, կարելի էր այս դեպքերը քրննել հնչյունների անկմանը նվիրված բաժնում, սակայն, մեր կարծիքով, այս դեպքում տարնմանությունը ավելի վճռորոշ դեր է ունեցել՝ Քեմիկսզյան-Քեմիկազյան, Այբասզյան-Այբասյան, Պարմաքսզյան-Պարմաքեզյան, Չուբասզյան-Չուբասյան, ինչպես նաև ըստ արտաբերման տեղի նույնական հնչյունների անկման մյուս դեպքեր՝ Թաշշյան-Թաշյան, Արուզյան-Աբոշյան, Չզմաջյան Չմաշյան, Սալաջչարյան-Սալաչարյան, Բժշկյան-Բժիկյան և այլն:

Հայկական ազգանունների ամբողջությունը հարուստ է նաև բաղաձայնների այլ կարգի հնչյունափոխությունների հետևանքով ձևավորված տարբերակներով՝ Դելալյան-Դելանյան²⁷, Գյուլգադյան-Գյուրգադյան, Զարդարյան-Զանդարյան²⁸, Թաշշյան-Թասշյան-Թաշյան, Մերկերյան-Մերկելյան, Ռաշմաջյան-Ռասմաջյան, Շալջյան-Սալջյան, Բաղդադյան-Բաղդատյան, Դադամյան-Դատեմյան, Դնդիկյան-Դատիկյան, Մաղբիսյան-Մախթիսյան, Բշակչյան-Բշակչյան, Ժամկոչյան-Չամկոչյան, Աբողչյան-Աբոշյան²⁹, Քեշիշբաշյան-Քեշիշբալյան³⁰, Օսմանյան-Օսմալյան³¹, Կոստանդյան-Կոստանյան, Քեմիկսզյան-Քեմիկազյան, Այբասզյան-Այբասյան, Բժիշկյան-Բժիկյան, Գայանյան-Գայամյան, Տրրդատյան-Ծրտատյան, Մովրուլյան-Մողրուլյան, Ներսիսյան-Նեսիսյան, Պարմաքսզյան-Պարմաքեզյան, Չուբազյան-Չուբասյան, Սրճարարյան-Սրճարանյան³²:

հ-ի դիմաց յ՝ Մեհթարյան-Մեյթարյան, Թահիրյան-Թաչիրյան, Թաճմազյան-Թաճազյան, Բեհբության-Բեյբության, Մահտեսյան-Մաչտեսյան, Շահվերդյան-Շաչվերդյան, Քեհինյան-Քեյինյան և այլն:

²⁷ Ձի բացառվում նաև առնմանություն ածանցի ն-ի սլատճառով, ինչպես նաև ի>ե հնչյունափոխություն՝ Դիլանյան-Դելանյան:

²⁸ Ձի բացառվում նաև Զանդարճյան-Զանդարյան անցումը:

²⁹ Նաև Աբոշչյան-Աբոշյան:

³⁰ Ձի բացառվում նոմեն + արա (կրճ.) կաղապարով կազմություն:

³¹ Հնարավոր է նաև Օսմանլյան-Օսմալյան՝ տեղանվանական լ-ից առաջ բաղաձայնի սղումով

³² Նաև բաղարկային հնչյունափոխություն:

Շնչեղ խուլերի և խուլերի ձայնեղութիւն՝ Գնթունյան-Գնդունյան, Գորոյան-Գոգոյան, Խնկիկյան-Խնզիկյան, Տարոնյան-Դարոնյան, Թերզյան-Դերզյան, Բուլուժյան-Բուլուդյան, Գոքորյան-Գոգորյան, Էթարյան-էդարյան, Թոքաթյան-Թոգաթյան, Թորոսյան-Թորոզյան, Իկլիկյան-Իգլիկյան, Լիպարյան-Լիբարյան, Մալխասյան-Մալխադյան, Մանկիկյան-Մանգիկյան³³, Նովշատյան-Նովշադյան, Շամշիտյան-Շիմշիդյան, Վայիսյան-Վայզյան, Թորոսյան-Տոռոզյան³⁴, Կրպոյան-Գրբոյան, Աբասյան-Աբազյան, Փափազյան-Բաբազյան, Պապինյան-Բաբինյան, Թեմուրյան-Դեմուրյան, Կրբաշյան-Գրբաշյան³⁵, Թերզինյան-Դերզինյան, Սահրադյան-Չահրադյան, Սարաֆյան-Չարաֆյան և այլն:

Ձայնեղների իլացում և շնչեղ իլացում՝ Ադամյան-Աթամյան, Անդինյան-Անտինյան, Աբազխանյան-Աբասխանյան, Ադդարյան-Աթթարյան³⁶, Աբամյան-Ափամյան, Բարդուղյան-Բարթուղյան, Գաբոյան-Գափոյան, Դուզդաբանյան-Դուզտապանյան, Զոբյան-Չոպյան, Լեանդյան-Լեանտյան, Սավդալյան-Սաֆթալյան³⁷: Ադելյան-Աթելյան, Ադլոյան-Աթլոյան, Ասադյան-Ասատյան, Ադամանյան-Ատամանյան, Արազխանյան-Արասխանյան, Արզականյան-Արզաքանյան, Աբամյան-Ափամյան, Աբրամյան-Ափրամյան, Բայաթյան, Բարունակյան-Բարունաքյան, Բերդիկյան-Բերթիկյան, Գանջալյան-Գանչալյան, Գաբոյան-Գափոյան, Գյուլնազարյան-Գյուլնասարյան, Գրզիկյան-Գրբիկյան, Զաբունյան-Չոփունյան, Էգնայան-էքնայան, Իրադյան-Իրաթյան, Խանբաբյան-Խանպապյան, Խուզիկյան-Խուտիկյան, Խուրդաշյան-Խուրտաշյան, Կաբիկյան-Կապիկյան, Համդիլյան-Համտիլյան, Մաժինյան-Մաշինյան, Չրադյան-Չրախյան, Չուրաբյան-Սուրաբյան, Օդաբաշյան-Օթաբաշյան, Լոգյան-Լոկյան-Լոքյան, Խրլագյան-Խրլաքյան, Մեղնիկյան-Մետնիկյան և այլն:

Կիսաշփականների դիմաց շփական՝ Աթաշյան-Աթաշյան, Բչակչյան-

³³ Նաև տարնմանութիւն:

³⁴ Հնչյունափոխութեան մյուս երևութիւնները ներկայացվում են համապատասխան տեղերում:

³⁵ Նաև բաղարկութիւն գր-արմատի հետ:

³⁶ Գործել է նաև միջձայնավորային բաղաձայնների ոչ սաստկական և ոչ առնմանական կրկնութիւն:

³⁷ Այս դեպքում գործել է ինչպես դ, թ, նույնպես և թ-ի պղզեցութեամբ վ>ֆ առնմանական հնչյունափոխութիւնը:

Բշակչյան³⁸, Խաշխաջյան-Խաշխաշյան³⁹, Քերեստեջյան-Կերեստեջյան-Կերեստեշյան⁴⁰, Չերքեզչյան-Չերքեշյան⁴¹, Սվեշնիկյան-Սվեշնիկյան⁴², Չանաքյան-Շանաքյան⁴³ և այլն: Գոյություն ունի նաև Ջիլավյան-Դիլավյան օրինակը, ուր առկա է ետնալեզվային պայթականի բմայնացումը: Խեմչյան-Խեմշյան, Խշեյան-Խշեշյան, Խուրդաջյան-Խուրդաշյան, Կերեստեջյան-Կերեստեշյան, Կուրոշյան-Կուրոշյան, Ճոճկանյան-Ճոշկանյան, Մամշյան-Մամշյան, Միկիշյան-Միկիշյան, Մնիշյան-Մնիշյան, Չարշյան-Չարշյան, Չիվշյան-Չիվշյան, Չուվաջյան-Չուվաշյան, Տոջյան-Տոշյան, Քաղբեմանյան-Քաշբեմանյան, Դերձինյան-Դերզինյան, Դերձյան-Դերզյան, Շանշյան-Շանշյան:

Ձայնավորահարդ ետնալեզվային պայթականների շփականություն և խաբարաձայնական դիֆֆուզիան Մարսուդյան-Մախսուդյան, Բարդակչյան-Բարդախչյան, Դարակչյան-Դարախչյան, Թասլակչյան, Թասլաքյան-Թասլախչյան, Թոքախչյան, Թոգաթյան-Թոխաթյան, Թավուրշյան-Թավուխչյան, Բեզլարյան-Բալլարյան, Բեյլերյան, Բագրապյան-Բալրապյան, Արերքչյան-Արեխչյան, Մարուքյան-Մարուխչյան, Ռակշյան-Ռաճչյան և այլն:

Ետնալեզվային շփականների պայթականացում՝ Չարխչյան-Չարքչյան, Չբլախչյան-Չբլաքչյան, Չիբուխչյան-Չիբուկչյան, Փամբուդչյան-Փամբուքչյան, Թուխմանյան-Թոքմանյան, Ինջիխանյան-Ինջիկանյան, Չոլախչյան-Չոլաքչյան, Սոլախչյան-Սոլակչյան, Փառլադչյան-Փառլաքչյան, Քաշխեմանյան-Քաշբեմանյան, Քեչիդրանյան-Քեչիկրանյան-Քեչիգրանյան, Փանդրաթյան-Փանգրաթյան:

Խ-ի և ր-ի շփոթություն՝ Արդուշյան-Առդուշյան, Բարունակչյան-Բառնակչյան, Դանդուրյան-Դանդուռյան, Խոռխոռյան-Խորխորյան, Մառուկչյան-Մարուկչյան, Չոփուրյան-Չոփուռյան, Ֆիրունց-Ֆիռունց, Բուդուրյան-

³⁸ Դեր է խաղացել նաև տարնմանության դորժոնը:

³⁹ Ակներև է նաև բաղարկության ազդեցությամբ կատարված հնչյունափոխությունը՝ բարբառների խաշխաշի ազդեցությամբ:

⁴⁰ Այս դեպքում առկա է նաև ք>կ այլալեզու անցումը, որը ավելի է նպաստել ջ>շ անցմանը:

⁴¹ Կատարվել է նաև գ-ի տարնմանական սղում, իսկ ազգանվան այս տարբերակը, հավանաբար, այլալեզու միջավայրի արդյունք է:

⁴² Երկրորդ ձևը պարզապես փոխառություն է ուսանողներից, ուր այն արտասանական տարբերակ է:

⁴³ Չուտ այլալեզու տարբերակ է, առաջին շեշտազարկ վանկի ձայնավորի թույլ արտաբերումը նպաստել է նաև շ>շ անցմանը:

Բողոքյան, Բուռնուսուզյան-Բուրունսուզյան, Թարայան-Թառայան, Թոռչյան-Թուրչյան, Լոռյան-Լորյան, Խոռայան-Խրայան, Կոջիբոքյան-Կոջիբոքյան, Դրմաջյան-Դոմաջյան, Դոջյան-Դրջյան, Մարմարյան-Մամառյան, Մառանջյան-Մարանջյան, Մոճոռյան-Մոճորյան, Նարանյան-Նառանյան, Չափարյան-Չափառյան, Չոփուրյան-Չոփուռյան, Զառահյան-Զարահյան, Զրնազյան-Զոնազյան, Սառաֆյան-Սարաֆյան, Տոռոզյան-Տորոզյան, Տուրլիկյան-Տուրլիկյան, Ումրյան-Ումառյան, Ուսուսյան-Ուրուսթյան, Քեռյան-Քերյան, Ֆարաշյան-Ֆառաշյան և այլն:

Լ-ի և յ-ի դիմաց ռ՝ Գայանյան-Գարանյան, Զուլումյան-Զուրումյան, Կունջուլյան-Կունջուրյան, Կուլազյան-Կուրազյան, Օլբինյան-Օրբինյան, Մաշակարյան-Մաշակալյան⁴⁴, Կարմիրշալյան-Կարմիրշարյան, Զամբուլյան-Զամբուրյան, Սեյիդյան-Սերիդյան, Սմբուլյան-Սմբուրյան, Համալյան-Համարյան, Բալբաշահինյան-Բարբաշահինյան, Բաշբեյուկյան-Բաշբերուկյան, Շահվերդյան-Շալվերդյան-Շարվերդյան, Նիքսալյան-Նիքսարյան, Գուլապյան-Գուրապյան, Գուլաւալյան-Գուրասարյան:

Փ-ով և Ֆ-ով տարբերակներ՝ Խալաֆյան-Խալափյան, Խալիֆյան-Խալիփյան⁴⁵, Ֆալջյան-Փալջյան⁴⁶, Փայլաբազյան-Ֆալաբազյան, Ֆարմանյան-Փարմանյան և այլն:

ՀՆԶՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ

Նոր ազգանունների երևան գալու ուղիներից մեկն էլ հնչյունների հավելումն է: Այս դեպքում խոսքը վերաբերում է ինչպես ձայնավորների, նույնպես և բաղաձայնների հավելմանը: Հանդիպող դեպքերի շարքում բավականին օրինաչափ է ձայնավորով և հատկապես ի-ով վերջացող ազգանվանական հիմքի և -յան ածանցի միջև ն-ի երևան գալը՝ Գագինյան, Բեգինյան, Գյուրջինյան, Գինանյան, Բաջինյան, Գյուլչանյան, Գոգինյան, Գորգինյան, Դարչինյան, Թերգինյան, Զանինյան, Խանոնյան, Խոջինյան, Ծատինյան, Հաջինյան, Մալանյան, Մեքինյան, Մոսինյան, Զուղանյան, Քեհինյան, Դերգինյան և այլն: Իհարկե, բավականին հեշտ է նման հնչյունափոխությունը հիմնավորել արտասանական բազայով և բարեհնչուիթյամբ, քանի որ միջնալեզվային ի ձայնավորի և յ կիսաձայնի միմյանց հաջորդումը հնչյունական շղթայում անբարե-

⁴⁴ Մաշակարյան-Մաշակարյան-Մաշակալյան անցման դեպքում առկա է ինչպես բաղադրկություն կալ-ով ձևերի հետ, նույնպես և յ-ին նախորդող դիրքում ռ>լ անցում:

⁴⁵ Հնարավոր է նաև Խալափյանից և Խալաֆյանից տարնմանական անցում:

⁴⁶ Զի բացառվում նաև Փալանջյան-Փալջյան անցումը:

հնչությունն է առաջ բերում և լեզուն, հատկապես նրա բարբառային դրոսկորումները անսլայման պետք է կարգավորեին այդ երևույթը: Այս ամենով հանդերձ, մենք գտնում ենք, որ տվյալ դեպքում վերը նշված այդ կարևոր գործոնից զատ այդ օրինակների մեծ մասը իր հիմքում ունի հայրանուններից ազգանուն կերտելու հետաքրքիր փաստը՝ Մատի-Մատնի Սահակ→Մատնիյան Սահակ-Մատինյան Սահակ: Այս պնդման օգտին է խոսում թեկուզ պարզ վիճակագրությունը. ոչ բոլոր ի-ով և ընդհանրապես ձայնավորով վերջացող ազգանվանական հիմքի և ածանցի միջև է, որ ն-ի հավելում ունենք և մանավանդ, եթե հիշենք, որ ազգանունների վերը բերված շերտի առանց և տարբերակները ևս վկայված են՝ Բեգիյան, Գագիյան, Գորգիյան, Հաջիյան, Քեհիյան և այլն: Բերենք ն-ի հավելման հետևյալ դեպքերը ևս Ղալանչյան, Յութունչյան, Աթանեսյան-Անթանեսյան, Ութունչյան, որոնցից առաջինը, մեր կարծիքով, բաղադրված է հնչյունափոխության դեպք է՝ Ղաղանչյան+Ղալաչյան-Ղալանչյան, իսկ վերջին երկուսը՝ քմայնացած ու-ի և ջ-ի միջև նորից բարեհնչության պահանջներով ավելացած ն-ի: Անթանեսյան ազգանվան մեջ ն-ի հանդես գալը կարելի է բացատրել և առնմանությամբ և բաղադրված (Անթ հնչյունակապակցությամբ որևէ ձև) հնչյունափոխությամբ:

Բաղաձայնների հավելմամբ ձևավորված ազգանուններից նշելի են Ալլանյան-Ավլանդյան, Ասլանյան-Արսլանյան, Գյուլամիրյան-Գյուլդամիրյան, Լևանյան-Լեւանդյան, Ամբարջյան-Համբարջյան, Մանրիկյան-Մանդրիկյան, Մանրոյան-Մանդրոյան, Ոսկանյան-Որսկանյան դեպքերը, որոնցից Ավլանդյան, Լեւանդյան, Մանդրոյան ձևերում դ-ի հանդես գալը բավական բնորոշ է մեր ժողովրդախոսակցական լեզվին և նկարագրված է լեզվաբանական գրականության մեջ: Արսլանյան, Որսկանյան ազգանունները արդյունք են Ասլան, Ոսկան անձնանունների կողքին Արսլան, Որսկան ժողովրդախոսակցական տարբերակների առկայության: Համբարջյանի, Հաբելյանի, Հալբերտյանի, Ապինյան-Հապինյանի հ-ն արդյունք է բառասկզբի ձայնավորից առաջ հավելական շնչի առկայության: Աֆիցերյան-Աֆրիցերյան անցման ժամանակ, անկասկած, գործել է առնմանության գործոնը:

Ձայնավորների հավելման դեպքերի նշանակալից մասը կապվում է այլալեզու միջավայրի հետ և գլխավորապես հանդես է գալիս բաղաձայնական կուտակումների դեպքում: Նման օրինակները կքննվեն հայկական ազգանունների այլալեզու տարբերակներին նվիրված բաժնում:

ՀՆՁՅՈՒՆՆԵՐԻ ՍՂՈՒՄ

Բաղաձայնների սղման դեպքերի նկատելի մեծամասնությունը կապվում է ածանցանախորդ կամ հիմքավերջ դիրքի հետ:

Այդ դիրքում սղվում են ն, լ, ր, տ/դ, ղ, հ, ս, ք/կ բաղաձայնները՝ Հյուանյան-Հյուսյան, Կարակելյան-Կարակեյան, Զադելյան-Զադեյան⁴⁷, Մեհթարյան-Մեհթայան, Քիստորյան-Քիստոյան⁴⁸, Սանդուխտյան-Սանդուխյան, Խարբուրդյան-Խարբուրյան, Երվանդյան-Երվանյան⁴⁹, Դոլմադյան-Դոլմայան, Գինոսյան-Գինոյան, Մեծատունյան-Մեծատույան, Զիմանյան-Զիմայան, Պարանյան-Պարայան, Սաքանյան-Սաքայան, Կանանյան-Կանայան, Գնդոլյան-Գնդոյան, Խաջոլյան-Խաջոյան, Զաղարյան-Զաղայան, Սունգուրտյան-Սունգուրյան, Գևոնդյան-Գևոնյան, Աղամիրդյան-Աղամիրյան, Աշխարհյան-Աշխարյան, Խաչվանքյան-Խաչվանյան, Խելոքյան-Խելոյան, Կալիկյան-Կալիյան, Օլեքյան-Օլեյան, Ղևոնդյան-Ղևոնյան և այլն:

Երբեմն ազգանուններում հանդիպում են հատկապես ըստ արտաբերման տեղի նույնական կամ մերձավոր բաղաձայններ և այդ դեպքում կատարվում է դրանցից մեկի տարնմանական սղում՝ Անդրանիկյան-Անդանիկյան, Գումբուրյան-Գումուրյան, Դեղտրիկյան-Դեղտիկյան, Ումբրյան-Ումրյան, Թոփբաշյան-Թոփաշյան, Խաչատրյան-Խաչարյան, Խարամադարյան-Խարամարյան, Կոֆբերելյան-Կոֆերելյան, Կունդրուպյան-Կունդուպյան, Զամբաղյան-Զամաղյան, Զուբասղյան-Զուբաղյան, Կանսուղյան-Կանուսյան, Զեմբերջյան-Զեմերջյան:

Ն-ի սղում է նկատվում նախածանց վանկում՝ Կուշներյան-Կուշերյան, Մատնիշյան-Մատիշյան, իսկ Մեռկելյան-Մեռելյան, Շահխաթունյան-Շահաթունյան, Ղավթանջյան-Ղավանջյան, Երկենյան-Եկենյան գույգերի երկրորդ ձևերը արդյունք են բաղարկային հնչյունափոխության:

Բաղաձայնների սղման մի շարք դեպքեր հակված ենք բացատրելու բարեհնչույթյան պատճառով՝ Մելիկիկյան-Մեկիկյան, Ալաշկերտյան-Ալակերտյան, Բուղուրջյան-Բուղուրյան, Գյուլմիսկարյան-Գյուլմիսարյան, Դվինարյան-Դինարյան, Սիմսարյան-Սիսարյան, Փախչանյան-Փախանյան, Թիֆենկչյան-Թիֆեկչյան, Թովմասյան-Թոմասյան և այլն:

⁴⁷ Զի բացառվում, որ այս ձևը արդյունք լինի զադե-ն իրրե երկրորդ բաղադրիչ ունեցող ազգանվանական հիմքերի կրճատման:

⁴⁸ Հնարավոր է նաև շփոթ որևէ անձնանվան կոշական տարրերակի հետ:

⁴⁹ Հնարավոր է նաև Երևանյան-Երվանյան անցումը:

Հայկական ազգանունների ամբողջության մեջ բավականին որոշակի առանձնանում են գործող անձ ցույց տվող շ (ը/ի) ածանցի անկման դեպքերը՝ Բոստանջյան-Բոստանյան, Բաշմակչյան-Բաշմակյան, Չաքմաքչյան-Չաքմաքյան, Փանջարջյան-Փանջարյան, Քամանչաշյան-Քամանչյան, Գրիշչյան-Գրիշյան, Ջավահիրջյան-Ջավահիրյան, Կալչաշյան-Կալչայան, Իփեքչյան-Իփեքյան, Օրմանջյան-Օրմանյան և այլն:

Նկատելի են տեղանվանական -ցի և -լ ածանցների սղմամբ ձևավորված ազգանունները՝ Ջահուկցյան-Ջահուկյան, Սասունցյան-Սասունյան⁵⁰, Ստամբուլցյան-Ստամբուլյան, Ստամբուլցյան-Ստամբուլյան, Սևանցյան-Սևանյան, Տարոնցյան-Տարոնյան, Տրապիզոնցյան-Տրապիզոնյան, Քափանակցյան-Քափանակյան, Աբուլցյան-Աբուլյան, Մարդակերտցյան-Մարդակերտյան⁵¹:

Վերոհիշյալ ածանցների անկման հնչյունաբանական հիմքը պետք է փնտրել նախորդող հնչյունների որակի մեջ, քանի որ հաջորդողը ազգանվանակերտ ածանցի յ-ն է, որը սղման պատճառ լինել չի կարող թեկուզ այն պարզ պատճառով, որ բազմաթիվ այլ դեպքերում նրան նախորդող այդ նույն ածանցները չեն սղվում:

-ց և -լ ածանցներին նախորդում են կ, ն, լ, շ, վ, դ, մ, ր, խ, թ, բ, վ, ս բաղաձայնները, որոնք բացառությամբ կ, մ, խ, բ, վ, հնչյունների առաջնալեզվայիններ են և հետևաբար երկու առաջնալեզվայիններից մեկը պետք է սղվեր: Բերված օրինակներում սղվել են -ց-ն և -լ-ն: Մի փոքր ուշ ցույց կտրվի, որ նման դիրքում կարող են սղվել նաև նախորդող բաղաձայնները: Մնացած բաղաձայնների սղման համար, մեր կարծիքով, դեր է խաղացել պարունակած մասնավոր հնչյունաբանական տարրի կրկնությունը՝ ձայնորդություն, պայթականություն և այլն:

Պակաս կարևորություն չունի նաև ազգանվան կազմում տեղանվանական տարրի հստակ գիտակցումը՝ Երևան, Ստամբուլ, Սևան, Զեյթուն, Արդահան, Արեշ, Շատախ և այլն:

Ինչպես ասվեց, սղվում են ոչ միայն խնդրո առարկա ածանցները, այլև նախորդող բաղաձայնները՝ Աբուլցյան, Աստապացյան, Բաբերցյան,

⁵⁰ Տեղականորեն հնարավոր է նաև տվյալ ազգանունների Սասուն, Սևան տեղանվանական հիմքով անձնանուններից ստեղծումը, սակայն այդ անձնանունները վերջերս են մտել հայկական անձնանունների շարքը:

⁵¹ Մարդակերտցյան ձևը ավանդված չէ կամ մեզ չի հանդիպել; սակայն Մարդակերտյան ազգանվան հիմքի ընդգծված բացասական իմաստը մեզ կարծել է տալիս, որ զործունենք վերը նշված անցման հետ:

Գայեքցյան-Գայեցյան, Թոփլաղալցյան-Թոփլաղացյան, Շամբցյան-Շամցյան, Բուրջաբլյան-Բուրջալյան, Դադակլյան-Դադալյան, Դուդուկլյան-Դուդուկյան, Պենկյան-Պենկյան, Սուլթասլյան-Սուլթալյան, Փայասլյան-Փայալյան, Չորլյան-Չոլյան և այլն:

Ինչպես տեսնում ենք ց-ի և լ-ի սղման դեպքերը գերակշռություն ունեն, իսկ երբեմն միևնույն տեղանվանական հիմքով և ածանցով կազմված ձևերից ունենք երկու տարբերակներ՝ Աբուլցյան-Աբուցյան և Աբուկյան, Բայբուրդցյան-Բայբուրդյան և Բայբուրցյան, Սուլթասլյան Սուլթասյան և Սուլթալյան, Արևշչյան-Արևչյան, Բայազցյան-Բայազյան, Գարսանցյան-Գարսանյան, Երևանցյան-Երևանյան, Զևյթունցյան-Զևյթունյան, Էրզրունցյան-Էրզրունյան, Արդահանցյան-Արդահանյան, Իզմիրցյան-Իզմիրյան, Խորասանցյան-Խորասանյան, Ղազախեցյան-Ղազախյան, Մարդակերտցյան-Մարդակերյան, Շատախցյան-Շատախյան, Ալվրցյան-Ալվրյան, Աքշեհերլյան-Աքշեհերյան, Դաշլյան-Դաշյան, Թաթլյան-Թաթյան, Թոքաթլյան-Թոքաթյան, Խրիմլյան-Խրիմյան, Հալեբլյան-Հալեբյան, Մսրլյան-Մսրյան, Պրթավլյան-Պրթավյան, Սիսլյան-Սիսյան, Սվասլյան-Սվասյան, Սուլթասլյան-Սուլթասյան, Փոթուրլյան-Փոթուրյան, Քեսաբլյան-Քեսաբյան, Ըղրլյան-Ըղրյան, Ուրլյան-Ուրյան:

Հնչյունների սղման դեպքերը նկատելի են նաև -չի, -ջի, -ճի ածանցին նախորդող դիրքում՝ Բիշաշյան, Գայանջյան, Էմենեթջյան-Էմինեջյան, Թիֆիկշյան-Թիֆիշյան, Լեփենջյան-Լեփեջյան, Յողուրթջյան-Յողուրջյան, Շերբեթջյան-Շերբեջյան, Չաղիրջյան-Չաղիջյան, Չիթջյան-Չիշյան, Չուվալջյան-Չուվաջյան, Ջենտերեջյան-Ջետերեջյան, Փեմբերջյան-Փեմբեջյան, Քյուրքջյան-Քյուրքյան, Քիլարջյան-Քիլաջյան, Բարտախջյան-Բարտաշյան, Դերմենջյան-Դերմեջյան, Դուվարճյան-Դուվաճյան և այլն:

Այս դեպքում ևս սղման գլխավոր պատճառներից մեկը քննվող ածանցին նախորդող բաղաձայնում և ճ, շ, ջ-ում որոշ հատկանիշների ընդհանրության մեջ է: Մեր օրինակներում ճ, Չ, Ջ-ին նախորդում են կ, խ, ն, թ, լ, ք, ը բաղաձայնները, որոնցից հատկապես առանձնանում են թ, ն, ը-ն իբրև առաջնալեզվայիններ: Ավելացնենք նաև, որ ի տարբերություն -ցի և -լի-ով դեպքերի, «զբաղմունքի անուն» կաղապարով կազմված ազգանունները առանց ջ-ի և առանց նրան նախորդող բաղաձայնի տարբերակներ չեն տալիս:

Ամփոփելով -ճի, -չի, -ջի, -ցի և -լի ածանցներով կազմված ձևերի հնչյունափոխության մասին մեր ասածները նշենք, որ վերը նշված

ածանցների անկմամբ տարբերակների թիվը շատ ավելի մեծ է, քան նախորդող բաղաձայնի անկմամբ կազմվածների: Եթե ի նկատի ունենանք, որ հնչյունաբանական առումով նրանցից որևէ մեկի սղվելու հավանականությունը հավասար է, ապա նշված գերակշռությունը պետք է բացատրել այլ գործոններով և առաջին հերթին իմաստային գործոնով՝ զբաղմունք, տեղ ցույց տվող հիմքերի արտահայտած իմաստը այնքան ցցուն է, որ երբեմն հատուկ ածանցների առկայությունը համապատասխան հնչյունափոխական հիմքի պայմաններում որոշ ճոխություն է:

ԴՐԱՓՈՆՈՒԹՅՈՒՆ

Նոր ազգանուններ են ձևավորվել նաև դրափոխության պատճառով: Այն, ինչպես հայտնի է, արտահայտվում է բառի մեջ հնչյունների կամ վանկերի տեղափոխությամբ և ավելի բնորոշ է լեզվի ժողովրդախոսակցական դրսևորմանը: Բերենք ուղիղ և դրափոխված զույգերի օրինակներ՝ Արվոյան-Ազրոյան⁵², Անդրոյան-Անդրյան, Ապրեսյան-Ապերսյան, Բարեղամյան-Բաղրամյան⁵³, Թարվերդյան-Թավրեդյան, Ղրեմլյան-Ղըրմեկյան, Բաղշիյան-Բաղիշյան⁵⁴, Իգնատոսյան-Ինգատոսյան, Զիլֆուդարյան-Զիլֆիդարյան, Ասլիյան-Ասիլյան, Ալվանյան-Ավլանյան, Բետնեզյան-Բենտեզյան, Բուրսալյան-Բրուսալյան, Բուռունսուզյան-Բուռնուսուզյան, Գավլաքյան-Գավլաքյան, Դալբաղանյան-Դալդաբանյան, Դաղլիյան-Դաղիլյան, Ամոլյան-Ամլոյան, Դարվեշյան-Դավրեշյան, Լնիաթյան-Էյնաթյան, Թարջումանյան-Թուրջամանյան, Խոջա-Էյնաթյան-Խոջանիաթյան, Ճավոշյան-Ճաովշյան, Յավրույան-Յավուրյան, Նապարեթյան-Ներգեթյան, Պայասլյան-Պայլասյան, Փայասլյան-Փայլասյան, Զնդերջյան-Զնդրեջյան, Սավրազյան-Սարվազյան, Փոշտոյան-Փոշուրյան, Քասաչիկյան-Քասչիկյան, Քյուլինիկյան-Քյուլնիկյան, Զիլֆուդարյան-Զուլֆիդարյան:

ՊԱՐԶԵՑՈՒՄ

Այստեղ կքննվեն այն ազգանունները, որոնք ձևավորվել են իբրև արյունք այլ ազգանվան կրճատման, կրկնվող հնչյունների և վանկերի

⁵² Հնարավոր է Ազարիա Ազրո-Ազրոյան կաղապարը ևս:

⁵³ Մեկ անդամ ևս ընդգծենք, որ այս և նման օրինակներում Բարեղամ-Բաղրամ-Բաղրամյան կաղապարը կարող է զուգահեռաբար գործած լինել Բարեղամյան-Բաղրամյան կաղապարին:

⁵⁴ Զի բացառվում նաև Բաղեշյան-Բաղիշյան անցումը:

սղման, ինչպես նաև մեկից ավելի հնչյունափոխական երթույթների գործունեության:

Ազգանուններին պարզ, կասեինք նաև մեխանիկական, կրճատման արդյունքը մեծ մասամբ միավանկ ազգանվանական հիմքեր են: Մեր ազգանունների այս շերտի վերաբերյալ կուզեինք հետևյալ դիտողությունները անել. մենք հակված չենք լուսաբանվող օրինակների ստորև ներկայացվող մեկնաբանությունները սպառիչ համարել՝ հնարավոր են և այլ լուծումներ, հատկապես բրոշակի ազգանունների դեպքում, երբ նրանց կրողները պահպանել են այդ ձևերի առաջացման պատմությունը:

Մենք առաջնորդվել ենք անվանագիտության, մասնավորապես հայ անվանագիտության և լեզվաբանության հայտնի սկզբունքներով: Նման դեպքերում սերող հիմքի և կրճատված ձևի միջև կապի վերհանումը հենվում է գլխավորապես հնչյունական ընդհանրության վրա, քանի որ մյուս չափանիշները, ինչպես օրինակ, իմաստային, բառակազմական և այլն էական նշանակություն ունենալ չեն կարող կրճատված տարբերակի խիստ զգալի փոփոխության սլաքառով: Եվ, եթե ասվածին ավելացնելու լինենք նաև, որ կրճատման որոշակի սկզբունքներ չկան՝ կրճատումից հետո կարող են մնացած լինել ինչպես սերող հիմքի առաջին վանկը, նույնպես և այլ, երբեմն իմաստազուրկ հնչյունախմբեր, ապա ավելի ակնառու է դառնում, որ նման տարբերակների վերհանման ժամանակ, լավագույն դեպքում կարող է հայտնվել այս կամ այն ենթադրությունը:

Ահա մի քանի այդպիսի օրինակ՝ Աբյան, Ադյան, Ախյան, Ածյան, Աշյան, Ասյան, Բամյան, Բիլյան, Գեսյան, Դայան, Էմյան, Թուֆյան, Պեյան, Պերյան, Վարյան, Տավյան, Սիլյան, Սելյան, Զուլյան, Յոսյան, Քայայան և այլն: Որոշ դեպքերում սերող հիմքի վերհանման հավանականությունը նկատելիորեն ավելի մեծ է՝ Սաֆյան, Սաֆ հնչյունախմբով սկսվող (Սաֆարյան, Սաֆրազբեկյան և այլն) որևէ ազգանվան կրճատման արդյունք: Սեխյան, Սեխլյան, Սերտյան, Սերիդյան, Սուլյան-սզածանցով որևէ հիմքի հնչյունափոխություն և կրճատում, Վերդյան-վերդի բաղադրիչով (Հախվերդյան, Թարվերդյան, Շահվերդյան և այլն) որևէ ազգանվան կրճատում, Տառյան 1. Տատ բաղադրիչով (Տատաշյան, Տատենցյան, Տատինյան, Տատինցյան, Տատուրյան և այլն) որևէ ազգանվան կրճատում 2. Թաթյան→Տատյան այլալեզու անցում, Տուլյան, Տուլակյան, Տուրյան 1. տուր բաղադրիչով (Խաչատրյան, Տիրատուրյան, Աստվածատուրյան և այլն) որևէ ազգանվան կրճատում, 2. Թուրյան-

Տուրյան այլալեզու անցում: Քոչյան, Քյոշ բաղադրիչ ունեցող (Քյոշկամբարյան, Քյոշկյան) որևէ ազգանվան կրճատում: Այդ ազգանուններից սերված ենք համարում նաև Քուշկյան, Քուշյան ձևերը: Քցյան, Քեթցյան, Արարքեցյան ազգանունների կրճատում և հնչյունափոխություն, Օսյան 1. -ոս-ով վերջացող (Կիրակոսյան, Մարկոսյան, Փիլիպոսյան, Փիլոսյան և այլն) ազգանվանական հիմքի կրճատում, 2. Հովսեփ անձնանվան ժողովրդախոսակցական տարբերակ, Ֆիլյան 1. Փիլ-ով սկսվող ազգանունների կրճատում Փիլյան և այլալեզու հնչյունափոխություն, 2. -ֆիլ-ով վերջացող (Գարանֆիլյան) որևէ ազգանվանական հիմքի կրճատում, Ջանյան 1. Ջան -բաղադրիչով (Ջանիբեկյան, Ջանփոլադյան և այլն) սկսվող որևէ ազգանվան կրճատում, 2. -ջան բաղադրիչով (Միրզաջանյան, Հախիջանյան, Պապիջանյան և այլն) վերջացող որևէ ազգանվան կրճատում, 3. Ջահանյան-Ջանյան այլալեզու անցում: Ռումյան 1. Ռոստոմյան-Ռումյան, 2. Ուոում նոմենից, որ մեզանում, ինչպես հայտնի է, նշանակել է ոչ միայն հույն, այլև արտահայտել է «այդ կողմերից» իմաստը և տվյալ դեպքում տեղանվանական երանգ ունի: Սադյան 1. Սաթյան, Սադյան, 2. Մանդերջանյան, Մանդերջյան, Սադյան, Սալյան, Սալվադորյան, Սալվարյան, Սալթինյան: Քեյլան-Քեքիկյան, Քելիկյան: Բեդյան Բեդլույան, Բեդլյան: Բոքյան Բոքիկյան: Նալյան Նամալյան և այլն:

Մեկուկես և երկվանկանի կրճատված հիմքերի և սերող հիմքի կապը գտնելը համեմատաբար դյուրին է, քանի որ նրանք ավելի հարազատ են մնացել հիմքի հնչյունական պատկերին՝ Սիրադարյան-Սիրտարյան, Սովբաթյան-Սվաթյան, Վարդապետյան-Վարպետյան⁵⁵, Տավարածյան-Տավարյան⁵⁶, Տեպանոսյան-Տեպիսյան, Քիլիսյան⁵⁷, Քրիստոստուրյան-Քրիստորյան, Ֆրանգուլյան-Ֆրանգյան⁵⁸, Քելսյան 1. անձնանուն + քյոխվա կաղապարով ազգանվան (Գյուլիքևիսյան, Հակոբքյոխվյան և սրանց հնչյունափոխված տարբերակներ) կրճատում, 2. քյոխվա նոմենից կազմություն: Պատրյան-Պատրիկյան, Բահադրյան, Սակայան-Աքնակալյան⁵⁹, Փալանջյան-Փալջյան⁶⁰, Զիլփո-

⁵⁵ Չի բացառվում նաև վարպետ նոմենից կազմված լինելը:

⁵⁶ Այս ազգանվան մականվանական մեկնաբանությունը խիստ անվանական ենք համարում իմաստի ընդգծված բացասական լինելու պատճառով:

⁵⁷ + քիլիսա կաղապարով կազմված տեղանվան կրճատում:

⁵⁸ Հնարավոր է նաև Ֆրանց նոմենիվ հիմքի առկայություն:

⁵⁹ Հնարավոր է թվում նաև Սաքոյան-Սակայան այլալեզու անցումը:

⁶⁰ Բուլլատրիլի է նաև Ֆալջյան-Փալջյան անցումը:

դարյան-Փողճարյան, Բուլանիկյան, Բուլանյան, Էլիկույան-Էլիկյան⁶¹ և այլն:

Ամփոփման կամ հապտոլոգիայի երևույթը ևս նոր ազգանունների գոյացման պատճառ է դարձել: Ինչպես հայտնի է, հնչյունափոխական այս երևույթի դեպքում կրկնվող հնչյուններից և հատկապես վանկերից մեկը սղվում է:

Այստեղ առանձնանում են -ջան բաղադրիչ ունեցող հիմքերով ազգանունները, որոնց ան հնչյունակապակցության և ազգանվանակերտ ածանցի նույն հնչյունակապակցության կրկնությունը, մեծ մասամբ, առիթ է տալիս ազգանվանական հիմքի ան-ի սղման, որից հետո հաճախ ջ-ն պահպանվում է, տեղիք տալով «գործող անձ» իմաստով -ջ(ի) ածանցի հետ շփոթի՝ Սաղերջանյան-Սաղերջյան, Սարկիսջանյան-Սարկիջյան⁶², Ֆիլջանյան-Ֆիլջյան և այլն:

Առանձնանում են կրկնվող ան հնչյունակապակցության սղման հետևյալ դեպքեր և՛ Տալանյան-Տալայան, Քորոզլանյան-Քորոզլյան, Խանուշյան-Խանուշյան, Բողոզլանյան-Բողոզլյան, Լալախանյան-Լալախյան, Ղանալանյան-Ղանալյան, Ղազանճյան-Ղազճյան, Մանդանյան-Մանդյան, Մնացականյան-Մնակյան, Հորդանանյան-Հորդանյան, Անթանոսյան-Անթոսյան, Բարխանաշյան-Բարխանյան, Սուրմանեկյան-Սուրմեկյան, Քանանյան-Քանայան, Աղանեկյան-Աղալյան-Աղեկյան և այլն:

Ինչպես ցույց են տալիս փաստերը ամփոփման կարող են ենթարկվել ինչպես հիմքավերջ կամ ածանցանախորդ դիրքի, նույնպես և մյուս դիրքերի ան հնչյունակապակցությունները:

Հանդիպող մյուս օրինակները ամփոփման՝ մասնագիտական գրականության մեջ նկարագրված դրսևորումներ են՝ Սուրմենեկյան-Սուրմենյան, Սուրմեկյան, Կոշկակարյան⁶³-Կոշկարյան, Ջահանգիրյան-Ջանգիրյան⁶⁴, Քեփենեկյան-Քեփեկյան⁶⁵, Թամամշյան-Թամաշյան, Անանիկյան-

⁶¹ Չի բացառվում նաև էլ-ով սկսվող անձնանունների փաղաքշական տարբերակից ձևավորված լինելը:

⁶² Այս դեպքում ջ-ին նախորդող ս-ն նույնպես սղվել է իբրև արդյունք տարնմանության ըստ արտաբերման տեղի:

⁶³ Հնարավոր է նաև Քյոշկերյան-Կոշկարյան այլալեզու անցումը:

⁶⁴ Չի բացառվում «այլալեզու տարբերակ» մեկնաբանությունը:

⁶⁵ Քեփեկյան ազգանունը կարելի է հատկացնել նաև «մականուն» իմաստային խրմբին, սակայն ի նկատի ունենալով հիմքի ընդգծված բացասական իմաստը, ավելի հավանական ենք համարում տվյալ մեկնաբանությունը:

Անիկյան⁶⁶, Սուլուիկյան-Սուլիկյան, Սարիղուլումչյան-Սարիղումչյան, Պանջարջյան-Պանջարյան, Փայտահատյան-Փայտյան, Քեքիկյան-Քեիկյան, Քեմենչաջյան-Քեմենչյան, Բաղջիջյան-Բաղջյան, Աժդահարյան-Աժդարյան նաև էժդարյան, Բաբալարյան-Բաբլարյան, Բահանդուրյան-Բանդուրյան, Գյուրջինյան-Գյուրջյան, Իգրարյան-Իգարյան, Զինավարյան-Զինարյան, էլիազարյան-էլիազյան, Թամամչյան-Թամաչյան, Գյուլվելյան-Գյուլվելյան, Խարմանդանյան-Խարմանյան, Խաղարջյան-Խաղրրյան, Խուդադյան-Խուդայան, Զորաբաբելյան-Զորբելյան, Նալչաջյան-Նալաջյան, Բոլբոլջյան-Բոլոջյան, Զենտերեջյան-Զենտերջյան⁶⁷, Քամանչաջյան-Քամանչյան, Աքշեհերյան-Աքշերյան, Եղյայան-Եղյան, Դիլդիլյան-Դիդիլյան և այլն:

Մի խումբ ազգանունների դոցությունը պայմանավորված է հնչյունափոխության մեկից ավելի երևույթների գործունեությամբ՝ Գյոզյան-Կոկչյան (յո > ո և ձայնեղների խլացում), Կուրանտիլյան-Կուրատյան (ամփոփում և նա-ի տարնմանական սղում), Հովասափյան-Հովապյան (ամփոփում և շնչեղ խուլի ապաշնչեղացում), Կիրակոսյան-Կարկոսյան (ամփոփում և տարնմանություն), Մելիֆսեդեկյան-Մելսեդեկյան (ամփոփում, տարնմանություն), Մելիֆրեկյան-Մեկրեկյան (ամփոփում, այլալեզու հնչյունափոխություն), Միրզարունյան-Միզարունյան (բ-ի տարնմանական սղում և այլալեզու թ > տ հնչյունափոխություն), Մրվան-ձայան-Մրվաստյան (ն-ի տարնմանական սղում և կիսաշփականի շփականություն նախաբաղաձայնական դիրքում), Սուրբնջանյան-Սուրնիջանյան (բաղաձայնի սղում և ը-ի լիաձայնություն), Բանդուղանյան-Պանդուկյան (բառասկզբում ձայնեղի խլացում, ամփոփում և դ > կ այլալեզու հնչյունափոխություն), Զավահիրյան-Զիվարյան (ամփոփում, ա-ի տարնմանական հնչյունափոխություն և հ-ի այլալեզու սղում), Աֆսակալյան-Սախկալյան (ամփոփում և կ-ի բաղարկային հավելում), Ծառատակյան-Ցարտիկյան (այլալեզու ծ > ց, տարնմանական ա > ի և շեշտակիր վանկին նախորդող ձայնավորի սղում), Փամբուխչյան-Փաբբուխչյան (-մ-ի և չ- տարնմանական սղում), Փեշտմալջյան-Փեշմաջյան (տ-ի և լ-ի տարնմանական սղում), Փեշտմալջյան-Բեստմալջյան (շնչեղ խուլի ձայնեղացում և շ > ս տարնմանական հնչյունափոխություն), Բեթխենեմյան-Բետխեմյան (թ > տ այլալեզու հնչյունափոխություն և

⁶⁶ Այս դեպքում խիստ հավանական է, որ դեր է խաղացել իգական անձնանվան Անիկ փաղաքական տարբերակի հետ բաղարկությունը:

⁶⁷ Հնարավոր է նաև Զուհարյան-Զիվարյան անցումը:

ամփոփում), Չարբհանայան-Չարբանեյան (շնչեղի ապաշնչեցում և տարնմանություն), Հեֆիմբաշյան-Հեկբաշյան ($բ > կ$ այլալեզու հնչյունափոխություն, մ-յ տարնմանական սղում և ի-ի բաշ-ից առաջ սղում), Քրիստոսաուրյան-Խիստոստուրյան ($բ > խ$ այլալեզու հնչյունափոխություն և բ-ի սղում) - Խոջա-էյնաթյան-Խոջանեթյան ($էյ > ա$ հնչյունափոխություն, ա-ի տարնմանական սղում, ածանցանախորդ ա-ի տարնմանական հնչյունափոխություն, Խոջանեթյան-Խոջնիաթյան (ա-ի սղում և ե-ի բարձրացող երկբարբառային արտասանություն), Խոց լեդյան-Խոստեղյան (կիսաշփականի շփականություն՝ $ց > ս$ և դ-ի առնմանական հնչյունափոխություն), Մրմաֆեշխանյան-Մրմաֆեշյան (ամփոփում, ածանցանախորդ և ն-ին հաջորդող դիրքում լ-ի անկում), Կարա-Արբենյան-Կարարտենյան (ա-ի տարնմանական սղում, $թ > տ$ այլալեզու հնչյունափոխություն), Ալագոզյան-Ալագոզյան (-Գյոզ-ից առաջ ա-ի սղում, յո կամ $ո > ո$), Քուրդոլյան-Քուրդոլյան (դ-ի սղում և առնմանություն), Ջիչակյան-Ջիժիկյան (բաղարկություն, տարնմանություն) և այլն:

Բաղարկային հնչյունափոխություն

Նոր ազգանունների հանդես դալուն նպաստել է նաև բաղարկային (կոնտամինացիոն) հնչյունափոխությունը: Ինչպես հայտնի է այսպիսի դեպքերում երկու, հաճախ միմյանց հետ կապ չունեցող երևույթների շփոթը պատճառ է դառնում մի երրորդի երևան գալու համար: Ազգանունների դեպքում նման հնարավորությունները բավականին շատ են: Բերենք հետևյալ օրինակները՝ Եզեկյան + (-իկ)-ով ձևեր և՛ Եզիկյան⁶⁸, Եզիկեկյան, Բոզդանյան + Բուզդանյան > Բոզդանյան, Գարուշյան + (-ոշ) -ով ձևեր > Գարոշյան, Մասումյան + Մաքսիմ - Մասիմյան, Եղնուկյան + (-ակ)-ով ձևեր > Եղնակյան, Անանիկյան + Ժողովրդախոսակցական Անիկ-Աննիկ և՛ Աննիկյան⁶⁹, Առավանյան + Աղվանյան > Առվանյան⁷⁰, Արաբաշյան + Աբաջյան > Արբաջյան⁷¹, Վալեսյան + Վլաս > Վլաս-

⁶⁸ Նաև Եզեկեկյան-ի պարզեցված տարբերակ:

⁶⁹ Հնարավոր է նաև շեշտից կախված հնչյունափոխություն՝ Անանիկյան, Աննիկյան:

⁷⁰ Ջի բացառվում նաև տարնմանական հնչյունափոխությունը:

⁷¹ Ենթադրելի է նաև իմաստային (արաբա և արբա), ինչպես նաև շեշտից կախված հնչյունափոխություն:

յան, Գառնակերյան + Գառնիկ (յան) > Գառնիկերյան, էլլակյան + էլլի-
յան > էլլիկյան, Արդենյան + Այդինյան > Արդինյան, Բուլեդյան + (-ուտ)
-ով ձևեր < Բուլուտյան, Պլլտիկյան + Պետիկյան > Պելտիկյան⁷², Սաքան-
յան + Սքև, Սքո, Սքեյան, Սքոյան > Սքանյան, Յանիկյան + «ուկ»-ով
ձևեր < Յանուկյան, էխտիարյան + Եղթարյան > Եղթիարյան, Ամբիկ-
յան + Ամբրիկա > Ամբրիկյան, էփրիկյան + էֆրիկյան + Աֆրիկա > Աֆ-
րիկյան, Աթանեսյան + (-ոս)-ով ձևեր Անթանոսյան, Աոնաոտյան —
Աոնուդ-Աոնուդյան, Բաշբերուկյան-Բաշիբոզուկ-Բաշիբուկյան, Բարի-
րույան — Բարևույան, Գարսանյան — Գարսևանյան⁷³, Գեղամյան +
(-ում)-ով ձևեր > Գեղումյան, ըստ երևույթին դեր է խաղացել նաև տար-
նմանություն գործոնը, Զոհրաբյան + Զահրադ > Զոհրադ, Զրվանդյան +
(-վարդ)-ով ձևեր > Զրվարդյան⁷⁴, Թարիոշյան + (փաշա)-ով ձևեր >
Թարփաշյան, Թուխմանուկյան + Թաք > Թաքմանուկյան, Թոփլադալ-
յան + (խան)-ով ձևեր > Թոփլախանյան⁷⁵, Իգնատիոսյան + Թևոս >
Իգնատիևոսյան, Իգնատիոս + (-նդս)-ով ձևեր-Իգնատինոսյան, Խաղա-
դորդյան + (-գործ)-ով ձևեր > Խաղագործյան, Խոջագորդյան + (գործ)-ով
ձևեր > Խոջագործյան, Խոցատուրյան + (տար)-ով ձևեր > Խոցատուրյան⁷⁶,
Մադիկյան + Յողիկ > Մողիկյան, Յափուճյան + յափունճի > Յափունջյան,
Յուլլյան-Յոլլյան⁷⁷ + յուղ > Յուղջյան, Նորեկյան + Նորիկ > Նորիկյան⁷⁸,
Շաղավաթյան + Շաղբաթ, Շահբաթ և այլն > Շաղբաթյան, Շահմանյան
+ Շահբազ < Շահմադյան⁷⁹, Շերբեկյան-Շերբուկյան, Շահինյան-Ջահան-
յան, Ջահինյան: Անհավանական է թվում Ջանազյան-Ջոնազյան և Ջանո-
յան-Ջոնոյան անցումների դեպքում բաղարկությունը Ջոն-ձևի հետ: Ավելի
հավանական է բացատրել այլալեզու գործոնի ազդեցությամբ, սակայն
այս մասին ավելի ուշ: Բաղարկությամբ հնչյունափոխության դեպքեր են
նույն Ռեթևոսյան + Մաթևոսյան — Ռաթևոսյան⁸⁰, Ռեսյան և նման

72 Չլ բացառվում նաև տարնմանական հնչյունափոխությունը
73 Գարսևան-Գարսևանյան, մեկնաբանությունը բացառվում է, քանի որ այդ անձ-
նանունը նոր է, ինչպես նաև վկայված չէ ՀԱԲ-ում.
74 Անկասկած են նաև արնմանության և տարնմանության գործոնները:
75 Նույնը:
76 Նույնը:
77 Այլալեզու՝ Юла բառի բաղարկությունը:
78 Քիչ հավանական, բայց հնարավոր է Նորայր-Նորիկ-Նորիկյան ուղին ևս.
79 Անկասկած են նաև արնմանության և տարնմանության գործոնները:
80 Այս դեպքում ևս չի բացառվում տարնմանական գործոնի ազդեցությունը:

ձևեր + ուս > Ռուսյան⁸¹, Սանասարյան + (-սուր) բաղադրիչով որևէ
 ձև > Սանասուրյան, Սարիգուլումջյան + Գյուլում > Սարիգուլումջյան,
 Սիմավոնյան-Սիմավորյան, Սվեչնիկյան-Սվերչիկյան, Սրճարարյան-
 Սրճարանյան, Փարթամյան + (-ում) ձևեր > Փարթումյան, Համարյան +
 հարմար > Հարմարյան⁸², Քանանյան-Քանոնյան, Քառյան-Քեռյան, Քեռ-
 յան-Քեռիյան⁸³, Օղաբաշյան + (րաշխ) > Օղաբաշխյան, Օղանյան + Օս-
 մանյան > Օղմանյան, Այդինյան + Արդենյան > Արդինյան, էվանգուլյան-
 Իվան-Իվանգուլյան⁸⁴, Գառնակերյան-Գառնիկ-Գառնիկերյան, Ղազազ-
 յան + ազիզ > Ղազիզյան⁸⁵, Յանիկյան-Մանուկ և (-ով)-ով այլ ձևեր
 -Յանուկյան, Յաղջյան + (Յուղ-) -ով ձևեր Յուղջյան, Չիշակյան, Չիժիկ-
 յան:

2. ԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՆՈՐ

Հայկական ազգանուններում զույգ ևն կազմում այնպիսի ձևեր, որոնք կապվում են «արտասանական մեկ անփոփոխակի գրային տարբերակներ» սկզբունքով:

Զայնավորական փոփոխակների դեպքում առանձին նշանակություն է ստանում քմայնացած ձայնավորի առկայությունը անփոփոխակի մեջ և այդ ձայնավորների հնարավոր դրային դրսևորումները տարբերակներում՝ էլիբակյան-էլրակյան, էլբեկյան, Ափրիկյան-Ափրիկյան, էփրիկյան, Մալարյան-Մալարյան, Մալերյան, Թասալյան-Թասալյան, Խասիլյան, Դանաղյան-Դանաղյան, Դանեղյան, Իփանկյան-Իփակյան, Իփեկյան, Բաքարյան-Բաքարյան, Բեքերյան և Մաղչյան-Մաղչյան, Մեղչյան, Բարաղամյան-Բարեղամյան, Բարաղամյան, Բաքարյան-Բաքարյան, Բեքարյան, Բաքրաջյան-Բարրաջյան, Բեքերջյան, Բաղալյան-Բաղալյան-Բեղելյան, Խանգալդյան-Խանգալդյան, Խանգելդյան, Ամիրզյան-Ամիրզյան, էմիրզյան, Ասկարյան-Ասկերյան, Ասկարյան, Բաղամյան-Բաղամյան, Բաղեմյան, Դաղայան-Դաղայան, Դաղեյան, Բազոյան-Բազոյան, Բեզոյան, Բնզարյան-Բազարյան, Բեզարյան, Բազարջյան-Բազարջյան,

⁸¹ Հավանական է նաև Լոռիս-Ռուսովից առաջացած լինելը:

⁸² Մեզանում բնորոշված է ձկուն, պայմաններին հարմարվող մարդկանց Հարմարյան մականունը տալ նաև այլալեզու գործոնի ազդեցություն:

⁸³ Նաև և-ի դիմաց ի:

